Ս. ՄՈՆՈՍՈՎ

1756

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ԱԿԿՆԻԳԱ

30 MAY 2011

Գ(4)
Մ-88

Գ:323.2
18 AUG 2006

Ս. ՄՈՆՈՍՈՎ

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ հրատարակություն

ԹԱՐԳՄԱՆԵՑ Հ. ՍԱՐԻԿՅԱՆ

ՁԱԿԿՆԻԳԱ

04 JUL 2013

1256

С. МОНОСОВ
История революционных движений
„ЗАККНИГА“

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

42793.63

1930

I

# XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տասնիններորդ և քսաներորդ դարերի սահմանագծում Յեվրոպայում պայթեց պրոլետարական փառահեղ հեղափոխությունը, որ վերջացավ պրոլետարների հաղթանակով: Յերկրագնդի $1/6$ մասը պրոլետարիատի իշխանության տակ անցավ: Իսկ դրանից 128 տարի առաջ, XVIII և XIX դարերի սահմանագծում, Յեվրոպայում աղմկեց բուրժուական հեղափոխությունը, որ նույնպես ցնցեց այդ աշխարհամասը և հող պատրաստեց հետագա պրոլետարական հեղափոխության համար: Այս յերկու պատմական դեպքերի ընդմիջումներին հեղափոխական ալիքը մի քանի անգամ բարձրացավ ու ընկավ: Այս հեղափոխական բռնկումներից մի քանիսը XVIII դարի հեղափոխության շարունակությունն եյին և միայն բուրժուազիայի տիրապետությունն եյին ամրապնդում, մի քանիսն ել նախանշաններ եյին մեր ժամանակի պրոլետարական հաղթական յելույթների: Հեղափոխական շարժումների մեր այս քննությունն սկսենք XVIII դարի մեծ հեղաշրջումից, որի թատերաբեմը Ֆրանսիան հանդիսացավ:

Ֆրանսիայի ամբողջ պատմությունն եր պատրաստել այն հեղափոխական հեղաշրջումը, որի մասին խոսելու յենք: Յեվրոպական ցամաքի այս հզորագույն պետության մեջ XVIII դարի վերջերին դասակարգային հակամարտությունններն այնքան եյին արվել, որ միայն հեղափոխական պոռթկումը կարող եր լուծել նրան: Ֆրանսիան կա՛մ պիտի առաջադիմեր, յեթե հեղափոխությունն ընդգրկեր, կա՛մ պիտի քարանար ու մեռներ, յեթե հեղափոխություն տեղի չունենար:

Այդ ժամանակ Ֆրանսիան իր քաղաքական կազմակերպությամբ բացարձակ (աբսոլյուտ) միապետություն եր: Սակայն

կոպիտ սխալ արած կլինենք, յեթե կարծենք, թե Ֆրանսիական միապետի անսահման իշխանությունն ազգաբնակության բոլոր դասակարգերի վրա միատեսակ եր ծանրանում և գոյություն ուներ ինքն իրեն կամ ինքն իր համար: Ֆրանսիական թագավորների անսահման միապետությունը, նրա հսկայական բյուրոկրատական ապարատը, վորով թագավորները կառավարում եյին յերկիրը, միայն տիրապետող խմբակների—պալատական ազնվականների և մի բուռն վաշխառու ու առևտրական բուրժուազիայի շահերին եյին ծառայում: Այդ ապարատն ազգաբնակության մեծամասնության հյութերը քամելու մի հզոր մեքենա յեր: Ահա հենց վերը հիշած խմբակների շահերի համար յել գոյություն ուներ Ֆրանսիական միապետությունը, ուր պաշտոնապես իշխում եր թագավորը:

Վորպես առաջնակարգ դասակարգեր հանդիսանում եյին ազնվականությունն ու հոգևորականությունը՝ առանձնաշնորհված արքայական վողորմածությամբ և ապահովված բազմաթիվ իրավունքներով ու արտոնություններով: Ազգաբնակության մնացած զանգվածը, վոր ձևականորեն իրավազուրկ եր, յերրորդ դասի անունն եր կրում: Առաջինն ու յերկրորդ համարվում եյին ազնվականությունն ու հոգևորականությունը:

Այս զանգվածի մեծ մասը գյուղացիությունն եր: Հենց սա յել այն հիմքն եր, վորի արյան ու վոսկորների վրա հանգում եյին պալատի ճոխությունն ու վաշխառուների հարստությունը:

Ֆրանսիայում այդ գյուղացիության թիվը հասնում եր 20 միլլիոնի: Մեր զննած ժամանակաշրջանում գյուղացիք համարյա ամենուրեք ազատ եյին ճորտատիրական դրությունից և սեփականատեր համարվում այն հողի, վորի վրա ապրում եյին: Ճիշտ ե՝ բարձր դասի ներկայացուցիչները հսկայական հողեր ունեյին, սակայն բոլոր հողերի 30—60% այնուամենայնիվ գյուղացիության ձեռքումն եր: Պետությունը գյուղացիությունից—ըստ մեծի մասին սակավահող—ուժից վեր հարկեր եր գանձում: Գլխավոր հարկերը, վորից ի դեպ ասած՝ ազատ եյին բարձր դասերը, յերեք եյին—տալիա, գլխահարկ կամ կապիտացիա (caput—լատիներեն գլուխ) և յեկամուտի մի քանիերորդ մասը: Այս յերեք տեսակի ուղղակի հարկերին պիտի ավելացնել նաև մի անուղղակի հարկ ևս*, վորն անուղղակի պիտի անվանել մեծ

* Անուղղակի կոչվում ե այն հարկը, վոր պետությունը վերցնում ե վոչ թե ազգաբնակությունից ժողովելով, այլ վաճառվող մթերքների գների ավելացնելով:



բացառությամբ: Նկատի ունենք աղի հարկը: Այս անհրաժեշտ մթերքի վաճառքը մենաշնորհ եր պետության ձեռքում և մեծ շահ եր նրա համար, վորովհետև աղ գործ եր ածում ամբողջ ազգաբնակությունը: Բայց պետության համար դա յել քիչ եր:

Վախենալով, թե միգուցե ազգաբնակությունը պակաս աղ գործ ածի, նա սահմանել եր վորոշ չափ, նորմա, վորից պակաս գործ ածել չեր կարելի: Սառ ու ծախսի համար աղ կարելի յեր ձեռք բերել միայն պետությունից: Չքավոր դասի համար պակաս ծանր չեր նաև գինու հարկը:

Սակայն հողագործ-գյուղացու վրա ընկնող հարկերը սրանով չեյին վերջանում: Պետական ծառայողին՝ հարկահավաքին հետևում եր ագահ կղերը: Սա յել իր բաժինն եր պահանջում—բերքի $^1/_{10}$-ը:

Այս տուրքերի շնորհիվ գյուղացին պետությանն ու հոգևորականությանն եր վճարում իր տարեկան յեկամտի $^2/_3$-ը: Դրությունը վատթարանում եր նրանով, վոր միշտ նյութական կարոտ պետություն աշխատում եր իրեն հարկավոր գումարը՝ վոր քան կարելի յե՝ շուտ ստանալ, ուստի հարկերի ու տուրքերի գանձումը վաճառում եր վաշխառու-հարուստներին, վորոնք ավանսով վորոշ գումար եյին տալիս պետությանը և այնուհետև ամեն կերպ աշխատում իրենց տված գումարը ազգաբնակությունից ավելցուկով վերադարձնել: Հենց այս պատճառով յել բոլոր հարկերը գանձվում եյին ամենայն դաժանությամբ ու անխնա «Տուրքերը գանձվում եյին ավելի քան պատերազմական խստությամբ: Հարկահավաքները, վորոնց դատական կատարածուներ ու փականագործներ եյին ուղեկցում, բանում եյին դռները, տանում և քառորդ գնով վաճառում եյին տնային կարասիները··· Հարկը վճարելու համար գյուղացիք ստիպված եյին լինում իրենց և յերեխաների բերանի հացը կտրել···

Դեպքեր են յեղել, յերբ տուգանել են աղաջրից գոլորշիացման միջոցով աղ ստանալու կամ աղքատին մի բաժակ գինի տալու համար: Սա պետական մենաշնորհը խախտել եր համարվում:

Սակայն պաշտոնյաներին ու տերտերներին իրենց հասույթը վճարելով, գյուղացին այնուամենայնիվ հանգիստ չեր մնում: Նրա գլխին հիմա յել անխիղճ սենյոր ազնվականն եր կանգնում ու աղքատիկ յեկամուտից բաժին պահանջում: Թեպետ, ինչպես ասացինք, գյուղացին իր հողի տերն եր, սակայն հողի ձևական տերը համարվում եր ազնվական-սենյորը: Ասացվածք կար, թե «առանց սենյորի հող չկա»: Գյուղացին այս սենյորին, իբր

նրա հողից օգտվելու համար, պետք է վորոշ գումար վճարեր և կոռ քաշեր։ Բազմաթիվ ու բազմատեսակ եր այդ կոռը։ Ամենից առաջ յուրաքանչյուր տարի սենյորը վորոշ տուրք՝ ցենզ եր ստանում, այնուհետև հողատերը յեթե փոխում եր տվյալ հողամասը՝ ու գնված լիներ այդ, թե ժառանգաբար ստացած՝ միևնույն է, սենյորը դարձյալ վորոշ գումար եր ստանում, ու այդ՝ հողամասը վաճառելիս վորոշ գումար եր ստացվում նաև վաճառողից։ Դրամական ցենզը հաճախ փոխարինվում եր բերքի վորոշ մասով, վոր յերբեմն հնձի $1/10$, $1/8$, յերբեմն $1/4$-ին եր հասնում։

Հնումը սենյորները մի շարք արտոնություններ ունեյին, վորոնց ուժով տվյալ սենյորին պատկանող գյուղերի բնակիչները պարտավոր եյին իրենց հացը նրա փռնում թխել, խաղողը նրա սեղմիչով քամել, նրա շինած կամուրջով յերթևեկել. ի հարկե, ամեն անգամ առանձին վճարում։

Մեր նկարագրած ժամանակ սենյորներն այլ ևս վո՛չ փռներ ունեյին, վո՛չ էլ պարոմներ, բայց անցյալում դրանցից օգտվելու համար սահմանված վճարը շարունակում եյին գանձել։ Բացի դրանից՝ տուրք եյին վերցնում ճանապարհից կամ շուկայի հրապարակից օգտվելու համար։ Պահպանվել եր նաև հին ճորտատիրական կոռը, այսինքն կալվածատիրոջ համար տարեկան մի քանի օր ձրի աշխատելու պարտավորությունը։ Գյուղացիք յերբեմն իրենց սենյորի համար շատ պարտավորություններ եյին կատարում՝ վիրավորական իրենց անձի համար, օրինակ, նրա ուսը համբուրել, գորտերը քշել, վորպեսզի սրանք բարեծնունդ աղայի քունը չխանգարեն և այլն։ Այս բոլոր մանր ու վիրավորական պարտականություններից կարելի յեր փրկանքով ազատվել։

Վորսի իրավունքը վերապահված եր բացառապես բարեծնունդ ազնվականությանը։ Այդ իրավունքը շատ լայն եր բացատրվում. գյուղացին վո՛չ միայն չեր կարող փայտով քշել իր ցանքերը փչացնող աղավնիներին ու ճագարներին (բազմացնում եյին վորսի համար), այլ և իրավունք չուներ շներ պահելու կամ այն գայլերի սպանելու, վորոնք նրա հոտի վրա եյին ընկնում, յերբեմն էլ յերեխաներին հոշոտում։

Այսպիսով՝ այս ըստ յերևույթին անմեղ արտոնությունը գյուղացու համար մեծագույն դժվարություն եր հանդիսանում։ Այս բոլոր ծանրությունները խոր-հնության, համարյա անհետացող ֆեոդալական կարգերի մնացորդներ եյին, բայց գյուղացու համար պակաս ծանր չեյին նաև նոր կարգերի սաղմերը—գալիք կապիտալիստական դարաշրջանի նախանշանները։



Դրամական տնտեսության խորանալու հետ սենյորների համար ավելի շահավետ եր դառնում ըստ կարելույն շատ հող ունենալը՝ յեթե վո՛չ սեփական տնտեսություն կառավարելու, գոնե կուլակ-ֆերմերներին կապալով տալու, վորոնք իրենց հերթին սակավահող չքավորությանն եյին տալիս։ Այս եր պատճառը, վոր սենյորները տվյալ գյուղի բնակիչների տրամադրության տակ գտնվող հողերի վրա ագահաբար նայում եյին վորպես՝ այսպես կոչված համայնական հողերի վրա, ու աշխատում եյին իրենց ձեռքը գցել։ Նրանք չեյին թույլ տալիս, վոր գյուղացին օգտվի անտառի թափվածքներից (валежник), հնձից մնացած հասկերը ժողովել և բռնի կերպով յուրացնում եյին հասարակական խոտհարքներն, ազատ հողերն ու արոտատեղերը։ Այս բոլորից ամենաշատ տուժողը գյուղական չքավորությունն եր։

Այս բոլորից զատ՝ գյուղացիք պետության համար էլ պարտավոր եյին վորոշ կոռ քաշել։ Օրինակ, նրանք պետք սայլ ու ձի տային արքայական շքախմբի կամ զորքերի տեղափոխության ժամանակ, կամուրջներն ու ճանապարհները նորոգեյին, թագավորական բանակին զինվոր տային։

Պարզ չե՞ միթե, վոր գյուղացիությունն այսքան ծանրությունների տակ մի թշվառ գոյություն եր միայն քարշ տալիս։ Նա վո՛չ թե ապրում, այլ բուսական կյանք եր վարում։ Նրա մեծ մասը չքավորությունն եր, վոր զուրկ եր ինքնուրույն տնտեսություն վարելու հնարավորությունից։ Մի քանի տեղ գյուղացիության 45%-ը մի քառորդ դեսյատինից էլ պակաս հող ուներ։

Միանգամայն պարզ է, վոր այս դրության մեջ գտնվող գյուղացիությունը միտք ու հնարավորություն չուներ ընդարձակելու և լավացնելու իր տնտեսությունը, մեծացնելու ցանքը և այլն։ Այս պատճառով սովը Ֆրանսիայում սովորական յերևույթ եր։

XVIII դարի 90 տարիների ընթացքում Ֆրանսիայում մինչև 30 անբերրի տարիներ են հաշվում։ Այս բոլորից հետո մեզ չպիտի զարմացնի ֆրանսիական գյուղացու հետևյալ նկարագիրը, վոր անում է այդ ժամանակի մի գրող. «Լավ նայելով մեր դաշտերին, տեսնում ենք, վոր նրանք ծածկված են ինչ վոր վայրի կենդանիներով—արու և էգ, - կաշվի թուխ կապույտ գույնով, հողի հետ խառնված ու կասես արևից այրված։ Նրանք կարծես կպել են հողին ու անասելի համառությամբ չանգռում ու քանդում են այդ հողը։ Նրանք օժտված են մարդկային լեզվով խոսելու կարողությամբ. յերբ նրանք ուղղում, կանգնում են, ա–

ջեզ մարդկային կերպարանք ես տեսնում: Հիրավի, դրանք մարդիկ են: Գիշերները թաքնվում են իրենց վորջերում, ուր նրանց սնունդը՝ սև հացը, ջուրն ու արմատիքն են:

«Մեր գյուղերի ժողովուրդը,—պատմում է մի այլ ժամանակագիր,—ապրում է սարսափելի չքավորության մեջ, առանց անկողնի, առանց տան իրերի... Մեծամասնությունը տարվա մեծ մասը զուրկ է նույնիսկ գարու և հաճարի հացից, վոր միակ սնունդն է»:

Հեղափոխության նախօրյակին մի գավառի գյուղացիներ իրենք իրենց մասին այսպես եյին գրում... «Մենք հիմք ունենք ցավելու, վոր նախկին ստրկությունն ու ճորտատիրությունը վերացել են, այդ ժամանակ տերերը պարտավոր եյին իրենց ստրուկներին կերակրելու ու հագցնելու և, վերջապես հիվանդության դեպքերում՝ օգնելու: Իսկ մեր առերևույթ ազատությունը մեզ համար միայն անթիվ հարկեր բերեց, վորի ծանրության տակ տառապում ենք»:

Մի ուրիշ գավառից մենք տեղեկություն ունենք, վոր գյուղացիք վո՛չ յեզն ունեն, վո՛չ ձի. հաճախ գութանին կով եյին լծում:

Գյուղացիք սովից մեռնում եյին խմբերով. հաշվում են, վոր միայն 1715 թվին 6 միլիոն մարդ է մեռել: Մուրացկաններն ու շրջմոլիկները վխտում եյին ճանապարհներին. միայն 1796 թվին 50 հազար մուրացկան ու շրջմոլիկ են բանտարկվել. իսկ XVIII դարի 70-ական թվականների վերջում մուրացկանների թիվը 1·200·000-ի յեր հասնում: Բավական է միայն մի հայացք գցել Ֆրանսիայի գյուղատնտեսության, հողագործ-գյուղացու վիճակի վրա, վոր հասկանալի լինի ֆրանսիական թագավորների արտաքուստ հզոր յերևացող իշխանության անկայունությունն ու յերերուն վիճակը: Իրոք, հնարավոր չեր վոչ մի պրոգրեսս ժողովրդական տնտեսության մեջ. ամենաբազմամարդ դասակարգը, վոր ամբողջ պետության հիմքն եր, սովի ու վոչնչացման եր դատապարտված: Գյուղացիության աղքատացումը նվազեցնում եր հարկերի գանձումը, վորի հետևանքով պետության ույժն եր թուլանում: Դրությունը փրկելու համր մնում եր նորեն հարկերն ավելացնել, իսկ դա աղքատության վիճակն ավելի յեր վատթարացնում: Կախարդական շրջան եր, վորից յելք չկար: Տնտեսության զարգացմանը պակաս վնաս չեյին տալիս նաև հին սովորույթների մնացորդները, վորոնցից չեյին ուզում հրաժարվել վո՛չ պետությունը, վո՛չ տիրող դասակարգերը, վորովհետև դրանցից վորոշ օգուտ ունեյին:



Բավական է հիշել, վոր հողատիրականության օգտին ստացվող յեկամուտը սահմանված եր այն հացահատիկներով, վորոնք հնումն եյին ցանվում, այդ պատճառով էլ գյուղացին հնարավորություն չուներ նոր կուլտուրաներ զարգացնելու:

Սակայն պետական սղմիչը (պրեսս) միայն գյուղացուն չեր ճնշում: Հասարակական մյուս դասակարգերի վիճակն ևս մխիթարական չեր:

Հեղափոխության նախօրյակին Ֆրանսիայի արդյունաբերությունը բացառապես մանր արդյունաբերություն եր: Նա ըստ մեծի մասին գյուղերում եր կենտրոնացած և մի տեսակ նեցուկ եր գյուղատնտեսական խղճուկ յեկամուտ ունեցող գյուղացու համար: Իսկ քաղաքներում արդյունաբերությամբ պարապում եյին միայն մանր արհեստավորները: Նրանց վոսկե դարը վաղուց եր անցել. կապիտալիզմը նրանցում իր ավերիչ աշխատանքը վաղուց եր սկսել: Ճիշտ է, հին հիմնարկությունները՝ համքարությունները, դեռ գոյություն ունեյին, սակայն պետությունն եր, վոր արհեստական կերպով պահպանում եր նրանց, այն էլ զանազան տուրքեր գջլելու համար: Նրանք այլ ևս չեյին կատարում իրենց նախկին դերը՝ մանր արհեստավոր-տերերի ինքնուրույնության պահպանությունը: Այս արհեստավորների թվից այժմ դուրս եյին գալիս ավելի հարուստները, վորոնք 6—8, նույն իսկ ավելի յենթավարպետներ ունեյին, և իրենց եյին յենթարկել իրենց ավելի չքավոր ընկերներին՝ նրանց 1—2 յենթավարպետների հետ միասին: Իսկ այս յենթավարպետների վիճակն առանձնապես ծանր եր: Սրանք այժմ, կորցրած անկախ տերեր դառնալու վաղեմի հույսը, սովորական վարձու բանվորներ եյին, կատարելապես յենթակա իրենց վարպետին և մինչև ծերություն համարվում եյին մի տեսակ անչափահասներ:

Սրանցից բացի, գոյություն ունեյին մեծ քանակությամբ անհատ բանվորներ, վորոնք սպասարկում եյին չքավոր դասին և վերջապես յերևան յեկած բուրժուազիայի ապագա գերեզմանահաների՝ պրոլետարիատի սաղմերը:

Մեծ քաղաքների արվարձաններում ձեռագործարաններ սկսեցին յերևալ, վորտեղ մի քանի հարյուրական բանվորներ եյին աշխատում: Այս բանվորները մինչև չքավորության դուռը հասած արհեստավորներից և նյութապես քայքայված գյուղացիներից եյին առնվում: Նրանց վիճակն աննախանձելի յեր՝ նրանց էլ գյուղական տնային արդյունաբերության մրցումն անխնա կերպով ճնշում եր, վորովհետև գյուղացին դրան օժանդակիչ միջոց համարելով, նվազագույն վարձատրությամբ եր բավականա-

նում: Քաղաքի չքավորությունը տառապում էր նաև կենսամըթերքների, մանավանդ հացի բարձր գներից, ինչպես նաև պետական հարկերից ու տուրքերից:

Քայքայված արհեստավորներն ու քաղցած բանվորներն ամեն տեսակ անկարգությունների ու հեղափոխական բռնկումների համար հրաշալի նյութ էին: Զուր չէր, վոր Փարիզի Սեն-Մորսո և Սեն-Ժերմեն արվարձանները, վորոնց բնակիչները բացառապես այդ արհեստավորներն ու բանվորներն էին, հեղափոխության ժամանակ շարժման կենտրոնավայրեր հանդիսացան: Սակայն մեր օրերի պրոլետարիատի այս նախորդներն, իրենց հեղափոխական ելույթների հակումներով հանդերձ՝ իսկական հեղափոխական նպատակների չէին ձգտում: Ամենաշատը, վոր յերազում էին, կենսամթերքների արժանացումն էր, ինչպես նաև նախկին բարեկեցիկ վիճակի վերադարձը. այսինքն վերադարձ դեպի այն ժամանակները, յերբ իրենք փոքրիկ անկախ տերեր էին:

Արդյունաբերության մեջ մանր արտադրության և յերկրագործության մեջ մանր տնտեսության գերակշռությունը դեռ ապացույց չէր, թե Ֆրանսիայում խոշոր կապիտալ գոյություն չուներ: Ընդհակառակը, բուրժուազիան արդեն հզոր, իր շահերը գիտակցող դասակարգ էր դառնում: Առևտրով ու վաշխառությամբ նա իր համար հսկայական կապիտալներ է կազմել: Նրա վերնաշերտը կապվել էր տիրող խմբակի՝ ազնվականության հետ: Պետությանը դրամ հայթայթելով — կապալի, հարկերի գանձման, փոխառությունների միջոցով—նա ազնվականության հետ բաժանում էր բոլոր այն յեկամուտները, վոր ստացվում էր ազգաբնակությունը շահագործելով: Գնելով կառավարությունից զանազան մենաշնորհներ, մանավանդ շահավետ արտաքին առևտրի, ինչպես նաև ամենալայն գործածություն ունեցող իրերի—օրինակ հացի, մենաշնորհը (այս պատճառով էլ քաղաքի չքավորությունը տառապում էր հացի անօրինակ թանգությունից), նա կողոպտում էր ազգաբնակությանը՝ կառավարության թույլտվությամբ, յերբեմն էլ թագավորական տան անդամների ընկերակցությամբ: Առևտրական բուրժուազիայի և վաշխառուների այս վերնախավից մի աստիճան ցած միջին առևտրական բուրժուազիան էր: Սրան էլ ճնշում էին առևտրական ընկերությունները, կազմված առևտրական ու վաշխառուական կապիտալի վերը հիշած տերերից, վորոնք առևտրի մենաշնորհներ ու արտոնություններ էին զավթել: Սրանից բացի, առևտրի զարգացման համար պակաս խոչընդոտ չէին նաև բազմաթիվ մաքսային



սահմանները, ամեն տեսակ առևտրական հարաբերությունների այդ ֆիսկական արգելակները: Ֆրանսիան բաժանված էր մի շարք գավառների, վորոնցից յուրաքանչյուրը՝ բացի մաքսային սահմաններից՝ ուներ նաև իր սովորությունները, օրենքները, չափերը, նույնիսկ դրամը: Ի հարկե, այս հանգամանքն ևս չէր կարող նպաստել առևտրի ընդարձակ զարգանալուն:

Ֆրանսիայի մի քանի, գլխավորապես ծովափնյա, քաղաքներում սկսեց կուտակվել արդյունաբերական բուրժուազիան: Վորքան նախահեղափոխական կարգերն արգելք էին հանդիսանում տնտեսական զարգացմանը, նույնքան էլ արդյունաբերության զարգացումը մինչ հեղափոխական պայմաններում ուղղակի անկարելի յեր: Հիրավի, ինչպե՞ս կարելի յեր մեծ քանակությամբ մթերք շուկա նետել, յերբ այդ շուկան գոյություն չուներ, չէ՞ վոր ազգաբնակության մեծամասնությունը կիսաքաղց վիճակ էր քարշ տալիս և վորևէ բան գնելու հնարավորություն չուներ: Արդյունաբերությունն ինչպե՞ս հույս դներ ընդարձակ վաճառքի վրա, քանի վոր այդ վաճառքը, ինչպես նաև ամեն տեսակ առևտրական գործառքներ կաշկանդված էին մաքսատների առատությամբ, սահմանների բազմությամբ և անթիվ ու ամեն տեսակ տուրքերով ու մաքսերով: Վերջապես արդյունաբերությունը կաշկանդված էր դեռ շատ հնուց սահմանված կանոններով ու նորմաներով, վորոնք յերբեմն վորոշ նշանակություն ունեյին, սակայն ներկայումս կորցրած ամեն տեսակ իմաստ, միայն կառավարության գործն էին դյուրացնում՝ տուրքեր գանձելում: Այստեղից հետևում է, վոր պետության առևտրական, հարկային ու արդյունաբերական քաղաքականությունն արտադրական ուժերի նկատմամբ մի անխորտակելի խոչընդոտ էր և բուրժուազիան—այն դասակարգը, վոր այդ զարգացման հետևանքով պիտի առաջին տեղը գրավեր, մնաց օպպոզիցիայում՝ Ֆրանսիայի կառավարության նկատմամբ:

Նույն իսկ առևտրական ու ֆինանսական բուրժուազիայի վերնաշերտերը, վորոնք իրենց շահերով այնքան մոտ էին կառավարող ազնվականությանը, կառավարությունից դժգոհ լինելու հիմք ունեյին: Թեպետ պալատական ազնվականության խմբակի գիշատիչ տիրապետությունը կառավարությանը դրել էր կախյալ վիճակում ֆինանսական խոշոր հարուստներից, բայց և այնպես փոխարենը հենց նա յեր, վոր պետությունը դեպի կատարյալ սնանկություն էր տանում, մի հանգամանք, վոր բնավ ձեռնտու չէր նրա վարկատուներին (кредитор) — դրամատերերին: Այս պատճառով նրանք դեմ չէին պալատի ծախսերի նը-

կատմամբ վորոշ վերահսկողություն ունենալուն և պետության ֆինանսները մի փոքր կանոնավորելուն։ Ինչ վերաբերում է առևտրական բուրժուազիային, պիտի ասել, վոր նրա ցանկությունն էր լուծարքի յենթարկել մենաշնորհներն ու վոչնչացնել արտոնությունները, առևտրի ներքին ճնշումները—մաքսային սահմանները։ Իսկ արդյունաբերական բուրժուազիան վրդովվում էր հարկերի ծանրությունից, վոր ազգաբնակությանը զրկում էր գնողունակությունից․ սա պահանջում էր արդյունաբերությունը ճնշող անհեթեթ կանոնների վոչնչացումը։ Սա ևս վրդովվում էր արտահանությունների մենաշնորհներից ու ներքին մաքսերից։ Բայց մյուս կողմից նրան, այդ արդյունաբերական բուրժուազիային, վոր արդեն դեմ առ դեմ էր գալիս շահագործվող պրոլետարիատին, անհրաժեշտ էր ամուր պետական իշխանություն, ուժեղ զորք ու վոստիկանություն՝ ճնշելու ամեն տեսակ բանվորական շարժման փորձեր։ Իսկ այդպիսի փորձեր արդեն կային։ Հենց հեղափոխության նախօրյակին մի խռովություն տեղի ունեցավ Ռավելյոնի Ֆաբրիկայում, վոր Փարիզի արվարձաններից մեկումն էր գտնվում։ Հեղափոխությունից 40 տարի առաջ Ֆրանսիայի ամենաարդյունաբերական Լիոն քաղաքը մի քանի սրով գրավեցին ապստամբ արհեստավորներն ու բանվորները, իսկ 3 տարի հեղափոխությունից առաջ նույն Լիոնի բանվորներն աշխատավարձի հավելում պահանջելով, վորպես ցույց, թողին քաղաքը։ Նրանց վերադարձրին միայն զինված ուժով։

Միջին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայից ավելի հեղափոխականորեն էր տրամադրված մանր բուրժուազիան։ Նա տանջվում էր մենաշնորհներից ու արտոնություններից։ Բազմաթիվ հարկերն ու տուրքերը նրան ճնշում էին, բայց թագավորական իշխանության կարիքը խոշոր բուրժուազիայից ավելի պակաս էր զգում։ Իր շահերով ու պահանջներով նրան ավելի մոտ էր բուրժուական ինտելլիգենցիան, վոր նոր էր սկսում յերևան գալ։ Նա ամենից շատ էր տանջվում քաղաքական կատարյալ իրավազրկությունից, առաջ գնալու, կարիերա ստեղծելու անկարելիությունից և այն բազմաթիվ արգելքներից, վորոնք հնարավորություն չէին տալիս նրան հայտաբերելու իր տաղանդն ու ընդունակությունները։ Ազգաբնակության այս յերկու ավելի հեղափոխական խմբակները՝ մանր բուրժուազիան և ինտելլիգենցիան թվով առանձնապես շատ էին Փարիզում, վորոնք հենց այս պատճառով էլ հեղափոխական շարժման կենտրոնը դարձան։

Գալով հենց նոր հիշած քաղաքական իրավազրկության, պիտի ասենք, վոր նա միայն մանր բուրժուազիայի վրա չէր անդրադառնում․ ամենաքաջառողջ կապալառուն, վոր հազարավոր լիվր* ուներ, քաղաքական և իրավաբանական իրավունքներով վոչինչ էր ամենավողորմելի ազնվականի առաջ։ Չնայած այն հսկայական տնտեսական նշանակությանը, վոր արդեն ձեռք էր բերել բուրժուազիան, նա զուրկ էր ամեն տեսակ քաղաքական և իրավաբանական իրավունքներից։ Նրա ներկայացուցիչները չը նայելով իրենց հայտնաբերած տաղանդին, կարող էին միայն պետական յերկրորդական պաշտոններ ստանալ… Հասկանալի յե ուրեմն, թե ինչո՞ւ ամբողջ բուրժուազիան, այսինքն փաստորեն ամբողջ հասարակությունը, բացառությամբ արտոնյալների, թշնամաբար էր տրամադրված դեպի կառավարությունը, դեպի այն արտոնված կարգերը, վորոնք պահպանվում էին բացառապես նրանց շահերի համար։ Նոր յելնող դասակարգը՝ բուրժուազիան, հանձին իր տաղանդավոր ներկայացուցիչների՝ գրողների, հրապարակախոսների, բանաստեղծների ու փիլիսոփաների, իր հայացքների, շահերի ու սպասելիքների լավագույն մունետիկներն ունեցավ։ Այս նոր դասակարգի պահանջների արտահայտիչները դուրս էին գալիս արտոնությունների դեմ, անխնա հարվածում էին կրոնն ու հոգևորականությունը—հին իրավակարգի այս հոգևոր մարտկոցները, մարտնչում էին խավարի ու տգիտության դեմ, փառաբանում էին գիտակցությունն ու առողջ միտքը—բուրժուազիայի միակ զենքն՝ իր արտոնյալ ու ծագումավոր հակառակորդի դեմ վարած պայքարում։ Թե բուրժուազիան իր հեղափոխական հասկացողությամբ վո՛րքան էր հեռու գնացել, յերևում է նրանից, վոր նրա լավագույն ներկայացուցիչները բարձրանում էին մինչև աշխարհն ու հասարակությունը մատերիալիստորեն ըմբռնելու աստիճան։ Զուր չէր հեղափոխության գործիչներից մեկը, Բարնավը, հենց հեղափոխության նախօրյակին այն միտքը հայտնում, թե «հարստության նոր ձևի բաշխումը կբերի նաև իշխանության նորատեսակ բաշխում»… «Ինչպես հողին տիրելը, գրում էր Բարնավը, արիստոկրատիա ստեղծեց ու մեծացրեց, այնպես էլ ինդուստրիալ սեփականատիրությունը կհասցնի ժողովրդապետության»։ Պարզ է, վոր իր շահերը գիտակցելում այսքան հասունացած բուրժուազիան ամբողջ հոգով պիտի ատեր արտոնված կաստաներին—ազնվականությանն ու հոգևորականությանը։ Սակայն, ի՞նչ էին ներկայացնում այս արտոնյալները։

*) Լիվր—հին ֆրանսիական արծաթ դրամ—20 սու արժեքի։

Հեղափոխությունից առաջ նրանց թիվը 270 հազար եր, վորից 140 հազարն ազնվականներ: Հենց այս 140 հազարն էլ այն խմբակն եր, վոր կառավարում ու շահագործում եր ամբողջ հասարակությանը: Սրանցից առանձնապես աչքի յեր ընկնում պալատական ազնվականությունը: Նրա ապրուստի միջոցներն եյին կենսաթոշակը, ռոճիկը, վոր չգիտես, թե ինչո՞ւ եյին ստանում, և կառավարությունից ստացած ընծաները: Ժամանակակից մի գրող այս դարի դրությունն այսպես եր նկարագրում. «Ֆրանսիան նման ե մի հսկայական գոմի, ուր տեսակավոր ձիերը յերկու տեսակ, յերեք տեսակ կերաբաժին են ստանում, սակայն միշտ կատարելապես անգործ են, վորովհետև աշխատանքին միայն կիսով չափ են մասնակցում... բայց մի արտոնված խմբակ ևս կա, վոր ծնված լինելով հենց ախոռներին մոտ, քշում ե այդ տեղից իր՛ նմաններին միմիայն նրա համար, վորպեսզի ամբողջ վարսակն ինքը խժռի լիաբերան: Կարելի յե ասել, վոր այս խմբի ձիերը—պարարտ, փայլուն, թավշանման բրդով—այնպիսիներից եյին, վորոնք կանգնում եյին գարմանի փռվածքի վրա, վոր համարյա մինչև նրանց փորն եր հասնում, ուրիշ բան ու գործ չունեյին, բայց յեթե՝ իրենց կողմը քաշել ամեն տեսակ կեր»:

Այս «պարարտներին, փայլուններին ու յուղոտ բուրդ ունեցողներին» կերակրելու համար ստեղծել եյին անթիվ, անհամար պաշտոններ, վորոնց համար 15 հազար մարդ եր հարկավոր: Այս պայծառափայլ պալատականների տարեկան ռոճիկը հասնում եր 40 միլ. լիվրի, վոր քամվում եր ժողովրդից: Բացի ռոճկից, պալատական ազնվականությունը, գոնե նրա վերնախավը, մեծամեծ ընծաներ ու կենսաթոշակ էլ եր ստանում: Թե ի՞նչպես եյին բաշխվում այս վերջինները, ժողովուրդն իմացավ միայն հեղափոխության ժամանակ, յերբ նրա ձեռքն անցան պալատի յել ու մուտքի մատյանները: Այդ ժամանակ միայն իմացվեց, վոր այս իսկական «ժողովրդական տզրուկներից» մեկը չորս կենսաթոշակ եր ստանում.—մեկը «հոր ծառայության համար», յերկրորդը «նույնպես», յերրորդը «նույն պատճառներով», չորրորդը «նույն առթիվ»: Յերկրորդ մի տիպ յերեք կենսաթոշակ ուներ.—«իբրև առաջին նախագահ և ինտենդանտ», «իբրև ինտենդանտ և առաջին նախագահ» և «վերոհիշյալ հիմունքներով»... Յերրորդը բավական պատկառելի փայ (կուշ) եր ստացել միայն այն նկատառումներով, «վոր նրա հայրն էլ այդքան եր ստացել»: Թե ինչ քանակի եյին այդ փայերը, յերևում ե նրանից, վոր այդպիսով 1774—1789 թիվը բաժանվել եր 220 միլ. լիվր: Դուքս Պոլինյակին նշանակված եր տարեկան 700 հազար լիվր կենսաթոշակ, միանվագ էլ տրվել եր 1·200·000 լիվր: Կոմս դ՚Արտուան միանվագ 1·500·000 լիվր ստացավ:

Ազնվականության փափուկ տեղեր տալու և պետական յեկամուտներին մոտ թողնելու ձևերից մինն էլ նրա ներկայացուցիչներին նահանգապետական պատվավոր պաշտոն տալն եր: Պիտի նկատել. վոր այդ պաշտոնները նրանց համար լոկ բուտաֆորական եյին, վորովհետև փաստորեն նահանգը կառավարողը լինում եր ինտենդանտը—բուրժուական ծագումից: Վերջապես ազնվականությունն եր լցնում սպայական պաշտոնները, վորն այնքան մեծ եր և տարեկան 46 միլ. լիվր ծախս եր պահանջում: Իր շահերով ազնվականությանն ամենամոտ կանգնածը հոգևորականությունն եր, գոնե նրա բարձր դասը: Այդ տերտեր-պաշտոնյաներից վոմանք հրեշավոր ռոճիկներ եյին ստանում՝ 100·000 լիվրից ավելի: Մի քանի հոգևոր հայրեր միաժամանակ մի քանի վանքերի վանահոր պաշտոն վարելով, իրենց համար պատկառելի գումարներ եյին դիզել: Իսկ ստորին հոգևորականությունն ընդհակառակն եր. նա կառավարվում եր տարեկան մոտ 200 լիվրով: Յերբեմն բարձր հոգևորականներն իրենց հոգևոր պարտականությունները կատարելու համար աննշան վարձատրությամբ վարձում եյին աղքատ քահանաներին: Այս եր պատճառը, վոր ստորին հոգևորականությունը բավական մոտ եր ժողովրդին, հասկանում եր նրա ցավերը և հաճախ նրա կողմն եր անցնում: Սրանց շարքերից մի քանի հեղափոխական առաջնորդներ յելան, վորոնք քաղաքական ու սոցիալական ամենաարմատական պահանջներ դրին:

Ինչպես հոգևորականության մեջ վորոշ շերտավորում գոյություն ուներ, նույնն եր նաև ազնվականության մեջ: Չե՞ վոր բոլոր ազնվականներն էլ արքունիք չեյին ընկնում: Նրանցից վոմանք մնում եյին գավառներում, իրենց կալվածքներում և առաջվա նման փոքրիկ թագավորներ չեյին, այլ լոկ նորին մեծության հպատակներ: Այս գավառային ազնվականության յեկամուտները նվազել եյին, վորովհետև կառավարությունն եր թաթ դրել այն գյուղացիության վրա, վորին առաջ այդ ազնվականներն եյին շահագործում: Հենց այս պատճառով էլ այս ազնվականությունն ևս ոպոզիցիայումն եր՝ պալատական հոգևորականության և ազնվականության նկատմամբ: Նա գաղտնի յերազում եր մի որ իր վաղեմի կամայականություններն ու գործունեյությունը վերականգնել:

II

Այս բոլոր հակասությունները սրվեցին ամբողջ տասնութերորդ դարի ընթացքում և նրա վերջին քառորդում այնպես խճճվեցին, վոր խաղաղ միջոցներով լուծելն այլևս անկարելի յեր: Պալատական արիստոկրատիայի և վաշխառուների ընկերակցության գիշատիչ տիրապետությունը Ֆրանսիան հասցրեց անդունդի ծայրին և ֆինանսական աղետի: Կառավարությունն առժամապես կարողացավ թաքցնել դրա անխուսափելիությունը, մանավանդ վոր Լյուդովիկոս XVI յերբ գահ բարձրացավ, հասարակության մեջ քաղաքական բարենորոգումների հույսի նշաններ ծնեցին: Սակայն այդ ուղղության բոլոր փորձերը փշրվում եյին, զարնվելով տիրող խմբակների դասակարգային յեսասիրությանը:

Նրանք չեյին ցանկանում—վո՛չ հարկերի լուծը մեղմել, վո՛չ էլ հարկի տակ մտնել: Ստեղծված դրությունից յելք փնտրելով կառավարությունը մի քայլ արավ, վոր մինչ այդ չլսված բան եր: Ամենամեծ ու կարևոր նախարարության գլուխ կարգեց մի բուրժուայի—Շվեյցարիայի բանկիր Հեկկերին: Ֆրանսիայի այս առաջին բուրժուա նախարարն իր բարձր պաշտոնի գնով մի այնպիսի քայլ արավ, վոր պետական ֆինանսների դրության նկատմամբ հասարակության աչքերը մեկեն բացեց: Հեկկերն առաջին անգամ հրապարակեց պետական բյուջետը, և բոլորի համար պարզ պատկերացավ հսկայական բացը, վոր հասնում եր 46 միլ. լիվրի կամ ամբողջ բյուջետի 16%-ին: Բուրժուազիան, վոր պետության փոխառությունների միջոցով դրամ տվողն եր, սարսափով տեսավ, վոր այդ պետությունը սնանկացման ե մոտենում, հարկ տվողները խորին դայրույթով տեսան, թե իրենց արյուն քրտինքով վաստակած դրամներն ի՛նչ անհատակ տակառ են մտնում: Բոլորի համար ակնհայտնի դարձավ, վոր միապետությամբ գլխավորված հին իրավակարգի հետագա գոյությունն այլ ևս անկարելի յե: Սակայն ի՞նչ պիտի փոխարիներ այդ միապետությանը: Միակ ներկայացուցչական հիմնարկությունը, վոր հայտնի յեր Ֆրանսիային, հին Գլխավոր Դասային ժողովն եր—այսպես կոչված Etats generaux: Այս անդրջրհեղեղյան հիմնարկը վաղուց եր արխիվ ընկել և 1614 թ. հետո այլևս չեր հրավիրվել: Ազնվական թագավորներն իրենց ուժի ծաղկման շրջանում այդ պաշտոնյաների կարիքը բնավ չեյին զգում, ուստի դրանց հլու կամակատարներից մինն իր ժամանակին այսպես ե արտահայտվել. «Ժողովրդական ներկայացուցիչների արտաքինում, իրենց կարիքների մասին



թագավորին դիմում տալում մի այնպիսի թշվառ բան կա, վոր յուրաքանչյուր մեծ թագավոր այդ բոլորը պիտի վանե իրենից»:

Այժմ «մեծ թագավորն» էլ եր յերկնչում դրանց հրավիրելուց, աշխատելով ըստ կարելույն ձգձգել ժամանակը և դրանց փոխարեն այսպես կոչված նոտաբլներ ու կցեր հրավիրել: Բայց դրանիկների այս ժողովում ևս ձայներ լսվեցին Դասերը հրավիրելու ոգտին: Յերկիրը կառավարությանն իր վերջին նախազգուշացումն եր անում: 1788 թվի անբերրիությունը դրությունն ավելի վատթարացրեց: Փարիզի փողոցներում թռուցիկներ փակցվեցին, վորոնք կառավարությանն սպառնում եյին խռովություններով. հեղափոխական բրոշյուրները վողողում եյին յերկիրը: «Դողացե՛ք, բռնակալնե՛ր, ձեր թագավորության վերջն ե հասել,—գրած եր պալատին փակցրած մի տոմսում:

Կառավարությունը պիտի զիջեր: 1789 թ. մայիսի 1-ին նշանակվեց Գլխավոր Դասերի բացումը, իսկ ֆինանսների նախարարի պաշտոնին նորից հրավիրվեց պաշտոնազուրկ Հեկկերը:

Ի՞նչ պիտի ներկայացնեյին այդ վաղուց մոռացված և այժմ միայն վերականգնած Դասերը, վոչ վոք լավ չգիտեր: Կառավարության ցանկությունն եր, վոր սրանք ըստ հնույն ժողովվեն, զատ-զատ նիստեր ունենան և հլու համաձայնություն տան նոր հարկերին, ուրիշ վոչինչ: Իսկ յերկիրը, վորին ղեկավարում եր համեստ կերպով իրեն յերրորդ դասակարգ անվանող բուրժուազիան, յենթադրում եր, վոր Դասերը վո՛չ թե առանձին դասերի, այլ ամբողջ ազգի ներկայացուցիչները պիտի հանդիսանան և պիտի փոխեն գոյություն ունեցող իրավակարգը: Կառավարությունը Դասերը հրավիրելու համար տված իր հրովարտակում այս հարցի վրայով լռությամբ եր անցել, բայց նշանակել եր, վոր յերրորդ դասակարգն այնքան ներկայացուցիչ պիտի ունենա, վորքան մյուս յերկուսը միասին:

Գլխավոր Դասերը հրավիրելուց առաջ՝ Ֆրանսիան ընտրությունների ժամանակ ակնհայտնի կերպով գծված ազատության մեղրամիսն եր ապրում: Նախընտրական գրականության ամբողջ հեղեղ եր բռնել յերկիրը, վոստիկանության ու գրաքննության ձեռքով յերկար ժամանակ սանձված կյանքը զարկում եր ուժգին: Դասերն ի՞նչպես պիտի նիստեր ունենան՝ ինչի՞ պիտի ձգտեն—ահա հարցեր, վոր արծարծում եր նախընտրական գրականությունը: Այս բոլոր գրքերում ու բրոշյուրներում յերրորդ դասակարգը հակադրվում եր արտոնյալ ազնվականների ու կղերականների խմբակին: «Դուք յերկու հարյուր հազար եք,—գոչում եյին ամեն կողմից,—իսկ մենք 25 միլիոն»: «Դուք հարցնում եք—

4 2783-63
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

ի՞նչ է ֆրանսիական ժողովուրդը,—ասված էր բրոշյուրներից մեկում.—նայեցե՛ք մեր գյուղերին, մեր արհեստանոցներին, գործարաններին, նավահանգիստներին, զորքին, դատարաններին ու ճեմարաններին և ասացե՛ք—արդյոք ֆրանսիական ժողովուրդն առանց ձեզ մի բան ներկայացնո՞ւմ է, թե՞ վոչ»:

Սիեսն իր հռչակ տպագրած բրոշյուրում հայտարարում էր, թե հին ռեժիմի որոք վոչինչ համարված յերրորդ դասակարգն այժմ վորևէ բան պիտի դառնա: Բայց բուրժուազիայի հեղափոխությունը շատ էլ չպիտի գերեգնահատել: Նրա այդ ժամանակի հայացքները յերևում են այն «պատվերներից», վոր տալիս եյին ընտրողներն իրենց ընտրածներին՝ Գլխավոր Դասերին ուղարկելիս: Յեվ թեպետ բուրժուազիան յերբեմն այնքան էր բարձրանում, վոր ամբողջ յերկրի անունից էր խոսում, այնուամենայնիվ նրա բոլոր «պատվերները» միայն չարտոնված ազգաբնակության վերին խավերի պահանջներն եյին արտացոլում: Այդպես էր, վորովհետև այն սիստեմը, վորով Գլխավոր Դասերի ընտրություններն եյին կատարվում, ընտրություններին անմասն էր թողնում չքավոր ազգաբնակության լայն մասսաները: Միայն նրա՛նք կարող եյին ընտրել, վորոնք ընտրական շրջանի նստակյաց բնակիչներ եյին, ունեյին այդտեղ կացարան, տիտղոս, վորոշ պաշտոն, արհեստավորի կոչում, կամ նա՛, ով կներկայացներ անդորրագիր՝ մուծած ուղղակի հարկի մասին, այն էլ խոշոր գումարի: Սրան պիտի ավելացնել նաև ընտրությունների բազմաստիճան լինելը՝ գյուղացոց և քաղաքացոց համար, ազգաբնակության մեծ մասի կատարյալ անպատրաստությունն ու անգրագիտությունը, և հասկանալի կլինի, թե ինչո՞ւ վո՛չ տրված պատվերներում, վո՛չ ընտրություններին չէր յերևում լայն մասսաների կամքը:

Իսկ ի՞նչ ցանկություններ եյին առաջադրում յերրորդ դասակարգի «պատվերները»: Նրանցից վո՛չ մեկով ընդհանուր ընտրական իրավունք չէր պահանջվում: Այդ «պատվերների» մեծ մասը պահանջում և պնդում էր, վոր ընտրական իրավունք տրվի սեփականատերերին և այն անձանց, վորոնք աչքի ընկնող հարկեր են վճարում: Դրանից բացի, յերրորդ դասակարգը խոսում էր դատական գործը կարգավորելու, քաղաքային կառավարության մեջ ժառանգական պաշտոնների վերացման, ֆեոդալական իրավունքների և տասանորդի աստիճանական սահմանափակման և վոչնչացման, շուկային արտոնությունների և առևտրական մենաշնորհների վոչնչացման, զինվորներին տների վրա ցրելու սովորության (постой) վերացման մասին: Ստորին խավերի կարիքների մասին համարյա վո՛չ մի հիշատակություն:



Ընդհակառակը, շատ հաճախ է հիշվում սեփականատիրական իրավունքների անձեռնմխելիության մասին, և այդ իրավունքը կոչվում է «բնական իրավունքներից առաջինը»:

Այսպիսով հեղափոխության հենց առաջին քայլերից բուրժուազիան սկսեց ցույց տալ իր իսկական դեմքը: Պիտի ասել, վոր Գլխավոր Դասերի գոյության առաջին մոմենտներին ամբողջ յերկրի համակրանքը յերրորդ դասի ներկայացուցիչների կողմն էր: Պատճառն այն էր, վոր այդ ներկայացուցիչները հենց առաջին որից հարկադրված եյին պայքարել պալատի և արտոնվածների ներկայացուցիչների դեմ: Վերջիններս, ինչպես և կառավարությունն, ուզում եյին այդ ժողովում միայն դասային ներկայացուցիչներ տեսնել, իսկ յերրորդ դասի ներկայացուցիչները պահանջում եյին, վոր նրանց նիստերը վո՛չ թե դաս-դաս տեղի ունենան, այլ բոլորը միասին, իբրև մի ներկայացուցչական ժողով: Արքունիքի ցանկությունն էր, վոր նրան փող տան, թույլ տան հարկեր ժողովել: Յերրորդ դասի ներկայացուցիչներն ուզում եյին որենքներ սահմանել, վորով ամբողջ պետությունը կառավարվեր: Հենց այս պատճառներով էլ առաջին իսկ մոմենտից պայքար առաջացավ, վորից յերրորդ դասի պատգամավորները վերջ ի վերջո հաղթող դուրս յեկան:

Նրանք առաջին հերթին հաջողեցրին հոգևորականության ներկայացուցիչներից բաժանել գյուղական աղքատ քահանաներին, վորոնք միացան յերրորդ դասի պատգամավորներին, հետո նրանց միացան ազնվականության ներկայացուցիչները և Գլխավոր Դասերի փոխարեն առաջ յեկավ միասնական Ազգային Ժողով, վորն, ի հարկե, բուրժուազիայի մեծագույն հաղթանակն էր: Բացի սրանից, յերրորդ դասի պատգամավորները վորոշում հանեցին—առաջիկայում՝ առանց ժողովի համաձայնության՝ թույլ չտալ վո՛չ մի տուրք գանձել:

Թագավորն ու արքունիքը նոր միայն հասկացան, թե ի՞նչ են արել: Լյուդովիկոս XVI փորձեց դասակարգերի վրա ազդել իր հեղինակությամբ: Իր ամբողջ շքախմբով ու արքայական մեծության ամբողջ փայլով ժողովի գալով, դասակարգերին առաջարկեց առանձնանալ և դաս-դաս նիստեր ունենալ, սակայն բուրժուազիայի ներկայացուցիչները չենթարկվեցին այս թագավորական հրամանին: Յերրորդ դասի պարագլուխ Միրաբոն, վոր արդեն մեծ ժողովրդականություն էր ստացել, այն թագավորական պաշտոնյային, վոր առաջարկում էր հնազանդվել միապետի կամքին, պատասխանեց. «Գնացե՛ք ձեզ ուղարկողների մոտ և

տացե՛ք, որ մենք այստեղ ժողովրդի կամքով ենք և մեզ կարելի կլինի հեռացնել միայն սվինների ուժով»:

Ինչպես յերևաց, թագավորն ու արքունիքը հաշտվել եյին այն մտքի հետ, որ դասային ներկայացուցչությունը դառնա Ազգային ժողով և Սահմանադիր ժողով, այսինքն նպատակ դնի պետական վարչ և՝ սահմանադրություն մշակել: Սակայն կառավարական վերնախավերի զիջողությունը միայն առերես եր:

Թագավորի տրամադրության տակ եր զինվորական ուժը, այն ուժը, որ շատ անգամ եր ցրել ժողովրդական ներկայացուցիչների ժողովը: Շատ հավանական ե, որ այս վիճակին կենթարկվեր նաև Ֆրանսիայի Սահմանադիր ժողովը, յեթե կառավարության և ժողովրդական ներկայացուցիչների կռվին չմիջամտեր մի յերրորդ ուժ, որին կարծես մոռացել եյին պառլամենտական ճառերի աղմուկի և բանձևերի ճռճռոցի տակ:

Այս յերրորդ ուժը Փարիզի հեղափոխական մասսաներն եյին, որոնց միջամտությունն իսպառ փոխեց ուժերի փոխհարաբերությունը և խառնեց, շփոթեց բոլոր ֆիգուրները քաղաքական շախմատային տախտակի:

Ինչպես արդեն գիտենք, 1788 թ. բազմաթիվ անբերրի տարիներից մեկն եր: Փարիզի ազգաբնակությունն ամբողջ գարնանն ու ամռանը քաղցած եր և խուլ կերպով դժգոհում, հուզվում եր: Հենց Դասերը հրավիրելու նախորյակին բանվորական թաղամասերից մեկում խառնակություններ առաջացան և մի ամբողջ ֆաբրիկա հիմնովին կործանվեց: Իսկ յերբ «ժողովրդական ներկայացուցիչները» ժողովվեցին, չքավորությունն ատամները սեղմած՝ սպասեց նրանց գործունեության հետևանքներին: Չքավորությունը միամտորեն կարծում եր, թե Գլխավոր Դասերը կբուժեն բոլոր վերքերը: Մեկ ել համառ լուրեր տարածվեցին, թե Ազգային ժողովն առաջիկայում ցրելու յեն: Փարիզը հուզվեց: Մասսայական յելույթների գործում ահագին դեր խաղացին ագիտատորները՝ յելած չքավոր և անգործ ինտելլիգենտներից, որոնց թիվը Փարիզում փոքր չեր: Նրանց գործունեության կենտրոնը Պալե-Ռոյալ այգին եր:

Այդպիսի խոշոր ագիտատորներից մեկը, հեղափոխության ապագա խոշոր գործիչ Դեմուլենը, մի կրակոտ ճառ արտասանեց, որ վերջացրեց զենքի դիմելու առաջարկով:

Ամբոխը բռնելով այս լոզունգը, զինվեց՝ ով ինչով կարող եր, առաջին հերթին՝ իրենց շինած նիզակներով, և իր զայրույթը թափեց նախ քաղաքների մուտքերի վրա, ուր քաղաք բերվող մթերքներից տուրքեր եյին ժողովում, որի հետևանքով



էլ այդ մթերքները թանկանում եյին: Այնուհետև գրոհ տվավ սպառնալիքի տակ պահվող բանվորական արվարձան Բաստիլիա ամրոցի վրա, որ անցյալում պետական բանտ եր յեղել և այդպիսով կարծես թե ատելի հին ռեժիմի խորհրդանշանն եր դարձել: Զինապահեստից հրացաններ ու թնդանոթներ խլելով, ամբոխն անպատմելի հերոսությամբ և մինչ այդ միանգամայն անհայտ առաջնորդների ղեկավարությամբ գրոհ տվավ և գրավեց միապետության ատելի մարտկոցը:

Այսպիսով ապստամբած հաղթական ժողովուրդը դրության տերը դարձավ: Թագավորին մնում եր հրաժարվել ժողովը ցրելու մտքից:

Այս նոր յերևացած դաշնակցին ի՞նչպես վերաբերվեցին ժողովը և նրա մեջի դասակարգերը: Տարորինակ ե, բայց փաստ ե, որ նրանք ավելի վախեցան, քան ուրախացան: Միրաբոն, որ նոր այնպիսի փայլուն պատասխան տվավ թագավորական բյուրոկրատին, այժմ ժողովին նախազգուշացրեց վարկաբեկող համախոհներից — փարիզյան հեղափոխականներից: Փարիզյան բուրժուազիան կազմակերպվեց և ամեն կերպ աշխատեց խանգարել ապստամբած մասսաների հաղթանակը: Բուրժուական միլիցիա կազմակերպվեց՝ հակադրելու զինված չքավորությանը: Բուրժուազիայի ներկայացուցիչները բանակցելով բերդի կոմենդանտի հետ, մինչև վերջին րոպեն աշխատում եյին կասեցնել նրա անկումը: Ինչ ել լիներ, ժողովուրդը հաղթանակեց, և թագավորն ստիպված յեղավ Փարիզ գալ՝ կարծես ներողության, իսկ Դասերը հնարավորություն ստացան իրենց գործով զբաղվելու — նոր իրավակարգի հիմունքները մշակելու: Սակայն արքունիքը շարունակում եր փայփայել ատելի ներկայացուցչությունը ցրելու միտքը: Նոր սահմանադրությունը քննելու հետ կապված վիճաբանությունների աղմուկի տակ թագավորը նորից սկսեց զորքը ժողովել: Մինչդեռ Փարիզը շարունակում եր առաջվա նման տառապել կարիքի ճիրաններում: Քաղաքային վարչությունը՝ լցված բուրժուազիայի ներկայացուցիչներով՝ որ օգտագործում եր հեղափոխությունն՝ իր իշխանությունն ամրացնելու, բնավ չեր մտածում օգնելու չքավորներին: Ժողովի ներկայացուցիչները սահմանադրության համար սակարկում եյին թագավորի ու իրար հետ և ահա Փարիզի չքավորությունը, գլխավորապես կանայք, հոկտեմբերի 5-ին շարժվեցին դեպի թագավորանիստ Վերսալը՝ թագավորին Փարիզ փոխադրելու:

Բուրժուական յերկրապահ զորքը (ополченец) — ազգային գվարդիան, անզոր եր խանգարելու այդ դիտավորությանը: Ժո-

ղովը հեռացրեց միապետին և նույնպես փոխադրվեց Փարիզ։ Սեփականատերերի խմբակի համար ժողովրդի այս նոր հաղթանակը չափազանց վտանգավոր էր, ուստի հոկտեմբերյան որերին անմիջապես մեծագույն խստություններ որերը հաջորդեցին, վորոնք ուղղված էյին ազգաբնակության լայն մասսաների դեմ՝ նոր հեղափոխական յելույթները կանխելու։ Այս վայրկյանից դեպքերը բավական յերկար ժամանակ ընթանում էյին ռեակցիոն հունով։ Հեղափոխական լրագրերը, և ամենից առաջ անկեղծ ու կրակոտ «Ժողովրդի Բարեկամը», վոր հրատարակում էր Մարատը—հալածվեցին ու արգելվեցին։ Զինվորական դրության օրենք հրապարակվեց, վորի հիման վրա քաղաքացիների ամեն տեսակ համախմբում պետք էր ցրել զինված ուժով, այդպիսի խմբակների առաջնորդներին բանտարկել, իսկ յեթե խմբակցությունը զինված լիներ, այդպիսիները մահվան պիտի դատապարտվեյին։ Նույն վիճակն էր սպասում յուրաքանչյուր զինվորականի, յեթե նա մասնակցեր նման ժողովի։

Բուրժուազիան, վոր այդ ժամանակ այնքան սիրահար էր էֆֆեկտավոր ազատության, հավասարության և յեղբայրության լոզունգներին, այսպես հատուցեց այն մասսաներին, վորոնց յելույթի շնորհիվ ինքն ազնվական–ռեակցիայի վորսը լինելուց ազատվեց։

Սահմանադիր ժողովի նոր մշակած սահմանադրությունը շատ վատ էր պաշտպանում լայն մասսաների շահերը։ Նա քաղաքացիներին ակտիվների և պասսիվների բաժանելով, նրան իսպառ հեռացրեց քաղաքական կյանքից։ Ակտիվներ էյին համարվում նրանք, վորոնք որավարձով աշխատողի յերեք որվա աշխատավարձի չափով հարկ էյին վճարում, մի ամբողջ տարի ապրել էյին նույն տեղում և չէյին գտնվում ծառայական դրության մեջ։ Մի խոսքով՝ ազգաբնակության ¾ պասսիվացված՝ այսինքն հեռացված էր քաղաքական կյանքից։ Ժողովում՝ սահմանադրությունը քննելու ժամանակ հռետորներից մեկն ասաց. «Ով վոչինչ չունի, նա հասարակության անդամ չէ։ Վարչություն և որենսդրություն—սրանք սեփականատիրոջ գործն են, վորովհետև միայն նրանք են շահագրգռված դրանով»։ Մի քանի դեմոկրատ–պատ–
նրանք են շահագործված դրանով»։ Մի քանի դեմոկրատ–պատ–
գամավորներ, նրանց թվում եվ Ռոբեսպյերը, իզուր էյին առարկում ցենզ սահմանելու դեմ, ասելով թե՝ ցենզի շնորհիվ իշխանությունը ծնունդով արտոնյալներից անցնում է հարստությամբ արտոնյալներին։

Քաղաքացիներին բացի ակտիվների և պասսիվների բաժանելուց, նոր սահմանադրությունը դնում էր ընտրությունների



յերկաստիճան ձև, առ այդ ընտրել կարող էր բանվորի տասն որվա որավարձի չափով հարկ վճարողը, իսկ պատգամավոր կարող էր լինել միայն 54 ֆրանկից ավելի հարկ վճարողը և անշարժ կայք ունեցողը։

Այսպիսով ժողովը պարզ ցույց տվավ, վոր ինքը խոշոր պայատականների պալատ է, և միայն այդ դասի շահերն էլ պաշտպանում է։

Ապագա Որենսդիր ժողովի ընտրությունների համար սահմանված ցենզն անհրաժեշտ էր նաև քաղաքային ընտրական պաշտոններ գրավելու և յերկրապահ զորքի — ազգային գվարդիայի մեջ մտնելու համար։ Այսպիսով բուրժուազիան տիրապետող էր հանդիսանում և՛ համապետական քաղաքական կյանքում, և՛ քաղաքները կառավարելու գործում, և՛ իր սեփական զինված ուժն էր ստեղծում։

Վորքան նրան ուժեղ թագավորական իշխանություն էր պետք՝ վորպես խոչընդոտ լայն մասսաների դրոհին, այնքան թագավորին իշխանության ու նշանակության պատկառելի մասն էր մնում։ Նրան էր վերապահված առնվազն յերկու տարով պահել ժողովի այն վորոշումները, վորոնք նրա համար անհաճո էյին, նրա տրամադրության տակ էր զորքը, նրան էր թողնված արտաքին քաղաքականությունը։

Դրա հետ միասին նոր վարչաձևը խաչ էր դնում հին ֆեոդալական վարչաձևի վրա, վոր կաշկանդել էր յերկրի տնտեսական զարգացումը։ Նոր սահմանադրությանը նախորդեց այդ որից հռչակ ստացած «Մարդու և քաղաքական իրավունքների դեկլարացիան», վորտեղ նշանակված էյին բուրժուական հասարակության հանրային ու քաղաքական կյանքի բոլոր հիմունքները։ Դեկլարացիան հայտարարում էր. «մարդիկ իրենց իրավունքներում ազատ են ծնվում ու մնում. հասարակական գնահատականի հիմքը նրան տված ոգուտն է... Որենքը մեկ պիտի լինի բոլորի համար»։ Այնուհետև դեկլարացիան բոլորի համար ապահովում էր «մարդու բնական և անկապտելի իրավունքները», վորպիսիք էյին՝ խոսքի, մամուլի, կրոնական համոզմունքների ազատությունը, անձի անձեռնմխելիությունը, հարկադրման հավասարություն և այդ հարկադրումը վերստուգելու իրավունք։ Դեկլարացիայի հեղինակները կարծում էյին, թե իրենց մշակած ճշմարտությունները հավիտենական են, իսկ որենքները պիտանի էյին բոլոր դարաշրջանների, ժամանակների համար։

Բայց իրոք՝ դեկլարացիան պարունակում էր իր մեջ միայն բուրժուական հասարակության գոյության նորմաներ։ Նրա այս

բնույթը շատ ցայտուն յերևում է 2 և 17 հոդվածներում: Այդ հոդվածներով սեփականատիրական իրավունքը հավասարազոր է «մարդու մյուս անկապտելի իրավունքներին» և «սուրբ եր ու անխախտելի»: Ըստ 17-րդ հոդվածի՝ սեփականությունից զրկվել կարելի յեր միայն «հասարակական անհրաժեշտության պահանջի զորությամբ, վոր պիտի հաստատված լիներ որինական կարգով և միմիայն վարձատրելու պայմանով»:

Բացի նոր բուրժուական հասարակության համար այս հիմունքները հայտարարելուց, ժողովը քիչ բան չարավ՝ ֆեոդալական կարգերը լուծարքի յենթարկելու համար: Փոխարեն շրջանների կամ գավառների, վորոնք տարբերվում եյին իրարից իրենց որենքներով, սովորույթներով և նույնիսկ դրամներով, նա ստեղծեց 83 դեպարտամենտ կամ նահանգ՝ բոլորովին մի տեսակ վարչաձևով, որենքներով, չափերով և այլն: Աստիճանավոր բյուրոկրատիան ամեն տեղ փոխարինվեց ինքնավարությամբ, վոր այնուամենայնիվ հենվում եր ակտիվ քաղաքացիների վրա: Նման դատարանին փոխարինեց յերդվյալների դատարանը, վոչնչացվեցին համքարությունները, բոլոր արտոնությունները, առևտրական ու արդյունաբերական միությունները և արդյունաբերության տնորինումն (регламентация): Վերջապես միջնադարի այնպիսի մնացորդ, ինչպիսին հոգևորականության նյութական հզորությունն եր, արմատից խլվեց:

Պետությունը ֆինանսական ծանր դրությունից հանելու համար, ժողովը վճռեց բռնագրավել հոգևորականության հողերը: Այդ հողերն անցնում եյին պետության տրամադրությանը, վոր վաճառքի հանելով, նրանցով ապահովում եր պետական պարտքերը: Իսկ իր կյանքից զրկված հոգևորականությունը պետական ռոճիկի յեր կապվում և այդպիսով սոսկ պետական պաշտոնյաներ դառնում: Թե՛ քահանաներ, թե՛ յեպիսկոպոսները, մյուս պաշտոնյաների նման պիտի ընտրվեյին ակտիվ քաղաքացիների կողմից: Այս կամ այն անձի յեպիսկոպոս ընտրվելու մասին միայն հայտնվում եր Հռոմի պապին, իբրև կաթոլիկ յեկեղեցու պետի: Այս միջոցն ամենառեակցիոն դասակարգին զրկում եր նյութական միջոցներից, վոչնչացնում եր նրա անմատչելիությունն ու կորպորատիվ բացառիկ վիճակը և անցյալում նրան պատկանող հողերը տրամադրում հեղափոխություն առաջ բերող դասակարգին: Այսպիսով նա ամրացնում եր հեղափոխությունը:

Սակայն Սահմանադիր ժողովը նույն վճռականությամբ չկարողացավ վոչնչացնել ֆեոդալական պարտավորությունները, վորոնք ծանրացած եյին գյուղացիության վրա:



Գլխավոր Դասերի հրավիրման նախորյակին գյուղացիությունն սկսեց հուզվել և այրել կալվածատերերի տնտեսությունները, իսկ յերբ Դասերը ժողովվեցին, նրանք, ինչպես նաև քաղաքի չքավորությունը, դադարեցրին անկարգությունը ու սպասեցին իրենց վիճակի բարեփոխվելուն: Սակայն ժողովի պատգամավորներն զբաղված քաղաքական պայքարով, չեյին մտածում գյուղի կարիքների մասին: Համբերությունը կորցրած գյուղը մի խիստ հիշեցում արավ որենսդիրներին: Նորից կրակի մատնվեցին տնտեսություններն ու ամրոցները, նորից ամբողջ Ֆրանսիայում բարձրացավ գյուղացիական անկարգությունների ալիքը:

Հուլիսի վերջերին գավառներից սկսեցին անհանգստացնող տեղեկություններ ստացվել:

Ազնվական պատգամավորները խուճապի մատնվեցին: Գավառներից հասնող սարսափելի լուրերի ազդեցության տակ՝ նրանք մտածեցին վորոշ իրավունքներից հրաժարվել և այդպիսով ընդառաջել գյուղացիության պահանջներին: Այս հրաժարումը տեղի ունեցավ ժողովի ոգոստոսի 4-ի (1789) գիշերային նիստում: Ի դեպ՝ ազնվականության ու հոգևորականության ներկայացուցիչները գլխավորապես այնպիսի իրավունքներից եյին հրաժարվում, վորոնք իրենցն ել չեյին: Ազնվականությունը դժգոհում եր տասանորդի ծանրությունից, վոր քահանաներին եր հասնում. հոգևորականությանը վրդովողն ել ազնվականությանը պատկանող վորսի իրավունքն եր: Այսպես թե այնպես՝ այդ գիշեր գյուղացիության համար վոչինչ չարվեց. և մի քանի որ հազիվ միայն անց, յերկար սակարկությունից հետո, վոչնչացվեցին՝ տասանորդը, վորսի իրավունքը և ելի ազնվականությանը պատկանող մի քանի մանր մունր ու իսպառ հնացած իրավունքներ՝ գյուղացիների նկատմամբ: Ֆեոդալական պարտավորություններն իսպառ վոչնչացնելուց դեռ շատ եյին հեռու: Հենց իրենց, յերրորդ դասի շահն եր, վոր այդ պարտավորությունները գոյություն ունենան, վորովհետև շատ ֆեոդալական տուրքերի գանձումներ նրանց եյին անցել՝ վաճառքի միջոցով կամ ժառանգաբար: Այս պատճառով յերկար խորհրդակցություններից ու ձգձգումներից հետո, գյուղացիներին իրավունք վերապահվեց՝ վորոշ փրկանքով ազատվել «որենքով» նրա վրա դրված բոլոր պարտականություններից, իսկ անվճար կերպով վոչնչացվում եյին միայն այն պարտավորությունները, վոր կալվածատերերն «ապորինաբար կապել եյին»: Իսկ այս կամ այն պարտավորության որինասահման կամ կապված լինելը պիտի հաստատեր գյուղացին. հետևաբար բոլորովին անկարելի յեր դառնում: Փրկանքի գումարը շատ բարձր եր:

Գյուղացին տարեկան տուրքից 20–25 անգամ ավելի պիտի վճարեր: Բոլոր պարտավորություններից կարելի յեր ազատվել մեկեն և ամբողջ գյուղով: Այդ տուրքերից ազատվել ցանկացող գյուղացիներին պետությունը վոչնչով չեր օգնում: Այլ կերպ ասած՝ ամեն բան ցույց եր տալիս, վոր ցանկություն կա ֆեոդալական կարգերը պահպանել գյուղում: Ժողովի բուրժուա պատգամավորները նույնպես եյին վերաբերվում նաև կալվածատերերի կողմից բռնագրավված համայնական հողերի հարցում: Այդ հողերը մնում եյին ապորինաբար յուրացրած սենյորներին, իսկ այն գյուղացիներին, վորոնք անկարգությունների ժամանակ կարողացել եյին այդ հողերի գոնե մի մասը խլել, ամենախիստ պատժի սպառնալիքով առաջարկում եր վերադարձնել գրավածը:

Միանգամայն հասկանալի յե, թե ինչո՛ւ գյուղացիները վորպես պատասխան այդ բոլորի, շարունակում եյին հուզվել, հրաժարվել ֆեոդալական պարտավորությունները կատարելուց և նորից գրավել կալվածատերերի հողերը: Կառավարությունը պատասխանում եր խստություններով, անկարգությունները ճնշելու համար դաժան հրահանգ մշակվեց, իսկ պարտավորություններից հրաժարվելը հավասար համարվեց «որենքի և սեփականության դեմ խռովություն հարուցելուն»: Այսպես եր Ազգային ժողովի գյուղացիական քաղաքականությունը: Նրան ամբողջապես բնորոշելու համար՝ մի քանի խոսք ել ասենք նրա բանվորական քաղաքականության մասին:

Փարիզի ազգաբնակության տնտեսական դրությունն ամբողջ 1789 թ. և հաջորդ տարում շարունակում եր փայլուն լինելուց շատ հեռու մնալ: Հեղափոխությունն յերերելով յերկրի տնտեսական կյանքը, զգալի գործազրկություն ստեղծեց: Բուրժուական քաղաքային վարչությունը, վախենալով նոր մասսայական յելույթներից, աշխատում եր գործազուրկներին զբաղմունք տալ: Մյուս կողմից ել՝ չնայած, վոր գործազուրկներն այդ զբաղմունքներից աննշան վարձատրություն եյին ստանում, բուրժուազիան եր վրդովվում, վորովհետև այդպիսով բանվորներն ազատվում եյին մասնավոր ձեռնարկատերերի մոտ չնչին արժեքով աշխատելու անհրաժեշտությունից: Այս պատճառով ել բուրժուական թերթերը կատաղի հարձակում սկսեցին գործազուրկների դեմ, նրանց համար կազմակերպված աշխատանքները դադարեցին, և գործազուրկները փողոց նետվեցին:

Հենց այդ ժամանակ ել յերկրի ու Փարիզի տնտեսական կյանքը վորոշ չափով կենդանացավ: Առանձնապես լավ եյին կառուցողական աշխատանքները, վորովհետև իշխանության անցած



բուրժուազիան աշխատում եր փոխարինել այժմ յերկրորդական տեղ բռնող ազնվականությանն ու սկսեց փառահեղ շենքեր կառուցել: Կառուցողները կազմակերպեցին «ատաղձագործների փոոգնության ընկերություն»․ 1791 թվի շինասեզոնի ամենատաք խոգնության ընկերություն»․ 1791 թվի շինասեզոնի ամենատաք ժամանակ մի քանի գործադուլներ բռնկեցին: Լեղապատառ ձեռնարկատերերն ու կապալառուներն ընկան քաղաքային վարչության, այնտեղից ել Ազգային ժողովի: Առաջինը թռուցիկ թողնելուց ավելի լավ բան չգտավ: Այդ թռուցիկով ուզում եր բանվորներին ապացուցել որավարձը բարձրացնելու նրանց ցանկության վողջ անբարոյականությունը: Յերկրորդն ավելի հեռու գնաց և հրատարակեց Լե–Շապելյեի հռչակավոր որենքը, վոր այդպես եր կոչվում իր հեղինակի անունով: Այս որենքով ամենախիստ կերպով, դաժան պատիժների սպառնալիքով, արգելվում եյին բոլոր բանվորական կազմակերպությունները:

Ճիշտ ե՝ արգելքի տակ դրվեցին նաև ձեռնարկատերերի կազմակերպությունները, սակայն այդ որենքի զեկուցողն ինքը, պատգամավոր Լե–Շապելյեն պարզաբանեց, վոր որենսդիրները բնավ ցանկություն չունեն խանգարելու, յեթե առևտրականներն իրենց գործերի շուրջը վորոշ համաձայնության գալու լինեն: Այսպես, հեղափոխության շնորհիվ իշխանության բարձրացած բուրժուազիան, հենց վոր բանվորները տնտեսական պայքարի առաջին փորձին դիմեցին, զրկեց նրանց՝ այդ պայքարի համար այնքան անհրաժեշտ միությունից: Ազգային ժողովի հրատարակած որենքն անձեռնմխելի մնաց մինչև 1864 թիվը: Չնայելով Սահմանադիր ժողովի այսքան չափավոր լինելուն, թագավորն ու պալատական կլիկան չեյին դադարում այդ ժողովը ցրելու մասին մտածելուց: Լյուդովիկոս XVI տված յերդումը — հավատարիմ մնալ նոր սահմանադրությանը, չեր խանգարում, վոր նա համարձակվեր մի նոր հակահեղափոխական ծրագիր կազմելու: 1791 թ. ամառը թագավորը փախավ հյուսիս, ուր կենտրոնացած եր զորքը՝ հակահեղափոխական հրամանատարության տակ:

Բայց այս բոլոր հնարներն անհաջող անցան, վորովհետև թագավորին ճանապարհից վերադարձրին: Այս մոմենտից ել սկսվում ե մի հասարակապետական ջերմ ագիտացիա, վորի կենտրոն դարձան այն բազմաթիվ ընկերություններն ու ակումբները, վորոնք բուսել եյին հեղափոխության ընթացքում: Այդ ակումբներից առանձնապես աչքի ընկավ չքավորների մասում այնքան հեղինակավոր կորդելյերների ակումբը:

Խոշոր բուրժուազիան հասարակապետական շարժման աճումից վախեցած, նորից ալեկոծվեց: Նա չմեղադրեց թագավորին՝

իր յերդումը դրժելում և պատրաստ եր նույնիսկ նրան պաշտպան կանգնել. այն, ինչ վոր շուտով արավ՝ նույնիսկ ժողովրդական արյան գնով: Յերբ 1791 թ. հուլիսի 17-ին Մարսյան դաշտում հսկայական ամբոխ խմբվեց՝ թագավորին դատի տալու պետիցիան ստորագրելու, բուրժուական ազգային գվարդիան այդ ամբոխի վրա կրակ բացեց:

Սրանից հետո ռեակցիան ծավալվել սկսեց. ավելի տաք դեմոկրատներ՝ Մարատը, Դանտոնը հարկադրված յեղան անլեգալ դրության անցնել: Յակոբինների ակումբում, վոր միացնում եր մանր, միջին և խոշոր բուրժուազիայի առաջավոր ներկայացուցիչներին, բնորոշ պառակտում առաջացավ.—բուրժուազիայի բոլոր չափավոր ներկայացուցիչները, վորոնք թագավորի անմեղությունն եյին պնդում, դուրս յեկան այդ ընկերության շարքերից ու կազմեցին նոր ակումբ, — ֆելյանների ակումբը: Այս պառակտումով յերրորդ դասի մինչև այդ միաձույլ ղեկավարող մասն եր պառակտման յենթարկվում:

Ռեակցիան գլուխն ավելի ու ավելի յեր բարձրացնում: Սահմանադիր ժողովը ցրվելուց առաջ Լյուդովիկոս XVI իր ճառի վերջում հայտարարեց, թե «հեղափոխությունը վերջացած ե և ժողովուրդը պիտի դառնա իր նախկին բախտավոր տրամադրությանը»: Սրան վորպես պատասխան ամբոխն ովացիա սարքեց դեմոկրատիայի մարտնչողներ Ռոբեսպյերին և Պետիոնին...

III

Սահմանադիր ժողովը կատարելով իր անելիքը—սահմանադրության մշակումը, ցրվեց: Նրա փոխարեն, նոր սահմանադրության հիմունքներով հրավիրվեց Օրենսդիր Ժողով: Ընտրությունների նոր ձևն արդարացնում եր այն հույսերը, վոր դրել եր նրա վրա ունևոր բուրժուազիան,—պատգամավորների մեծ մասն ազգաբնակության հենց այդ խավին եր պատկանում: Ամբողջ ժողովում միայն յերեք գյուղացի և չորս արհեստավոր կային: Զգալի մեծամասնությունը ժիրոնդիստ * պատգամավորներ եյին, վորոնք խոշոր գավառային առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շահերն եյին ներկայացնում:

Ժողովրդական մասսաները հետզհետե ավելի ու ավելի եյին դժգոհում նոր իրավակարգից, վորից շահվեց միայն հարուստ բուրժուազիան: Քաղաքներում թանգության և կենսամթերքների

* Այս անունն առաջ ե գալիս Ժիրոնդա դեպարտամենտի անունից: Այս խմբակի ամենաաչքի ընկնող գործիչներն այդտեղից եյին:



պակասության հողի վրա նոր խլրտումներ են սկսվում: Գյուղացիները շարունակում են հուզվել և թշնամական յելույթներ ունենալ վո՛չ միայն ազնվականության, այլ և խոշոր բուրժուազիայի դեմ, վորը չեր արդարացրել նրա ցանկությունները:

Նոր պատերազմ սկսվեց, վորից դրությունն ավելի բարդացավ: Վերջին հաշվով այս բոլոր հանգամանքները հեղափոխական յելույթների տարան Փարիզի ազգաբնակության մեծամասնությանը, վորն այս անգամ կատարյալ հաղթանակ տարավ: Հեղափոխական վորոտի հենց առաջին ճարճատյունից պալատական ազնվականության և մեծատունների մեծ մասն արտասահման փախավ: Այնտեղ նրանք ոտար պալատներում ժողովվելով, դավեր եյին լարում Ֆրանսիայի դեմ, դրդում եյին ոտար պետություններին, մանավանդ Ավստրիային (Լյուդովիկ XVI կինն ավստրիական իշխանուհի յեր): Այս հանգամանքը հնարավորություն տվավ Ֆրանսիայում ապրող այն խմբակներին, վորոնք պատերազմի կողմնակից եյին, պատերազմի մասին ճառել: Պատերազմ եյին ցանկանում ամենից առաջ թագավորը և նրան շրջապատող կլիկան: Նրանք հույս ունեյին, վոր հեղափոխական Ֆրանսիայի պարտության հետ կվերջանա նաև հեղափոխությունը:

Պատերազմի կողմնակիցներ եյին նաև ժիրոնդիստները—վորպես առաջադեմ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շահերի ներկայացուցիչներ: Նրանց կարծիքով պատերազմը Ֆրանսիայի համար պիտի ոտար շուկաներ բանար և վոչնչացներ Ֆրանսիայի համար միանգամայն աննպաստ առևտրական պայմանագիրը՝ կնքած Ավստրիայի հետ 1756 թվին: Բացի սրանից՝ ժիրոնդիստներն իբրև Օրենսդիր Ժողովի ամենաազդեցիկ կուսակցության ներկայացուցիչներ, հույս ունեյին, վոր պատերազմն սկսելուն պես իշխանությունն իրենց ձեռքը կանցնի: Ինչ խոսք, վոր բոլոր այս միանգամայն նյութական նկատառումները փետրավորվում եյին «Յեվրոպան ազատելու» եֆեկտավոր ֆրազներով:

Ռոբեսպյերն ու յակոբինների՝ նրան մոտիկ անդամների մի խմբակ իզուր եյին աշխատում ապացուցել, վոր հակահեղափոխական կառավարության և սև հարյուրակային գեներալների սրով ֆրանսիական զինվորի սվիններով Յեվրոպայի ժողովուրդներին ազատություն բերելն անկարելի յե:

1792 թ. գարնանն Ավստրիային պատերազմ հայտարարվեց, վոր հենց առաջին քայլերից չափազանց անհաջող յեղավ ֆրանսիական բանակի համար:

Ինչպիսի հեղափոխություն էլ լիներ, նա քայքայում էր զինվորական ապարատն այն պետության, որին ավերել է հեղափոխությունը: Բանակի սպայության ճիշտ ⅔ փախավ արտասահման, մնացածները չէին ուզում կռվել նոր Ֆրանսիայի համար: Զինվորները չէին հավատում սպայակազմին:

Բացի դրանից՝ թագավորն ու արքունիքը բանակցություններ էին վարում Ֆրանսիայի թշնամիների հետ՝ նրանց ձեռքը տալով իրենց զինվորական գաղտնիքները: Ցեվ թեպետ ժիրոնդիստների հույսերն արդարացան ու իշխանության կանչվեց նրանց նախարարությունը, սակայն այդ նախարարությունը երկարատև չեղավ: Թագավորը սիրտ առած ֆրանսիական բանակի անհաջողություններից, պայքար սկսեց Օրենսդրական ժողովի դեմ, մերժելով նրա առաջարկը — Փարիզը պաշտպանելու նպատակով 20 հազարանոց կամավորական բանակ կազմակերպել և խստորեն հետապնդել այն հակահեղափոխական քահանաներին, որոնք չէին հաշտվում եկեղեցու քաղաքացիական կառուցվածքի հետ: Ժիրոնդիստական նախարարությունը հեռացվեց: Ֆրանսիայի գլխին նորից կախվեց հակահեղափոխական հեղաշրջման սպառնալիքը: Բանակի հրամանատար Լաֆայետ-ֆելյանը * դիմելով Օրենսդիր ժողովին, պահանջեց վերջ դնել յակոբինների չարիքին, այդ անվան տակ Փարիզի հեղափոխական տրամադրությունը հասկանալով: Այս դեպքերի ազդեցության տակ հունիսի 20-ին (1792) Փարիզի արվարձանները փորձեցին խիստ ուժեղ ցույց կազմակերպել, սակայն ժիրոնդիստները, որպես խոշոր սեփականատերեր, յերկյուղ կրելով մասսայական յելույթներից, աշխատեցին խաղաղ բնույթ տալ այդ ցույցին: Դրա շնորհիվ էլ ցույցը կատարյալ անհաջողություն կրեց, իսկ բնակչիան ամրացավ ու հաղթանակեց:

Սակայն հեղափոխական ալիքը շարունակում էր ուռճանալ: Գավառներից կամավորները գալիս ու գալիս էին: Նրանց տրամադրությունը շատ էր վճռական: Ակումբներից ու քաղաքացիների զանազան խմբակցություններից բանաձևեր էին ստացվում, որոնք դավաճան-թագավորի գահընկեցությունն էին պահանջում:

Այս շարժումը կազմակերպելու գործում մեծ դեր խաղացին Փարիզի սեկցիաները կամ բաժինները: Ամբողջ քաղաքն այդպիսի բաժինների յեր բաժանված: Այդ սեկցիաները, մանավանդ բանվորական ու արհեստավորական մասերում, դառնում են միապե-

* Այդպես էին կոչվում թագավորի կողմնակիցները՝ ֆելյանների ակումբի անդամները:



տության և 1791 թ. ցենզավոր սահմանադրության թշնամի չարժման կենտրոններ:

Մի քանի սեկցիաներ հենց իրենք վոչնչացրին քաղաքացիներին ակտիվների և պասսիվների բաժանելու օրենքը և այդ աղմըկալից ժողովներում բուռն կերպով քննության յենթարկեցին առօրյա քաղաքական խնդիրները: Այստեղ Սահմանադիր ժողովը ցրելու և Կոնվենտ հրավիրելու պահանջներ էին առաջադրվում: Բոլոր սեկցիաների գործունեությունը միացնող կոմիտե ընտըրվեց՝ բաղկացած սեկցիաների ներկայացուցիչներից — կոմիսարներից:

Օգոստոսի սկզբին 30 սեկցիաներ (բոլորը 48 էին) դիմեցին Օրենսդիր ժողովին և ապստամբություն առաջացնելու սպառնալիքով պահանջեցին վորոշ ժամանակում վճռել թագավորի բախտը: Իրոք, ապստամբությունը տեղի ունեցավ օգոստոսի 9—10-ի գիշերը: Այս շարժման կենտրոն դարձավ քաղաքային վարչությունը, վորին փոխարինում էին նախօրոք ընտրված սեկցիական կոմիսարները:

Ամբոխը գրոհ տվավ պալատի վրա և մեծ արյունահեղությունից հետո (միայն յերկու կողմից սպանվածների թիվը մոտ 5 հազար էր) գրավեց: Թագավորն ապաստանեց Օրենսդիր ժողովի պաշտպանությանը: Մինչև ամբոխի հաղթանակի լուրն առնելը՝ ժողովի դիրքն անորոշ էր: Այդ ժամանակ նա թագավորին իշխանությունից հրաժարեցրեց, քաղաքացիներին ակտիվների և պասսիվների բաժանելու օրենքը վոչնչացրեց և վճռեց Կոնվենտ հրավիրել՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Միաժամանակ բոլոր քաղաքացիք անխտիր իրավունք ստացան ազգային գվարդիա մտնելու:

Օգոստոսի 10-ի հեղափոխությունը, վոր առաջ բերին լայն մասսաները, իշխանությունը տվավ Օրենսդիր ժողովի ամենաուժեղ կուսակցության-ժիրոնդիստների ձեռքը: Վերջինները կարծում էին, թե այդ ահեղ դեպքերի իմաստն էլ հենց այդ էր: Սակայն հենց առաջին քայլերից Օրենսդիր ժողովի ժիրոնդիստներն ընդհարվեցին հեղափոխական քաղաքային խորհրդի—«կոմմունայի» հետ: Այս կոմմունայի մեջ էին՝ բացի 90 սեկցիաների նախագահ կոմիսարներից՝ նաև յակոբինների աչքի ընկնող ղեկավարները՝ Ռոբեսպյերի գլխավորությամբ, այստեղ էր նաև «Ժողովրդի Բարեկամ» թերթի հրատարակիչ Մարատը՝ վորպես նրանց գաղափարների մունետիկ:

Փարիզի ինքնավարությունը դեմոկրատացնելու, հակահեղափոխության դեմ պայքարելու և ազգային մասսայական գվարդիա ստեղծելու գործում կոմմունան հսկայական ջանք հայտնաբերեց:

Փարիզի հեղաշրջման լուրն անասելի խանդավառությամբ լցրեց ֆրանսիական զինվորների սրտերը: Չնայելով գլխ. հրամանատար Լաֆայետի փախուստին, վորը միապետության անկումից հետո հակառակորդի կողմն անցավ, բանակները հարձակման անցան և մի շարք հաղթություններ տարան (1792-ի վերջին): Սեպտեմբերին նիստի յեկավ Ազգային Կոնվենտը: Իսկույն յերևաց, վոր նրանում յերկու հակամարտ կուսակցություններ կան. խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչ ժիրոնդիստները, վորոնք հենվում եյին գավառի, գլխավորապես հարավային դեպարտամենտների վրա և յակոբինները, վորոնք արտահայտում եյին մանր բուրժուազիայի յերազներն ու ցանկությունները: Սրանց թիվը մեծ եր Փարիզում: Պիտի նկատել, վոր ժիրոնդիստները հաղթական մասսայական յելույթների ժամանակ չատ առաջացան և ակնհայտնի կերպով գործակցեցին սև հարյուրակայիններին: Նրանք կարծում եյին, թե օգոստոսի 10-ի հեղաշրջումով հեղափոխությունը վերջացավ: Իսկ յակոբինները, վորպես ազգաբնակության ավելի լայն խավերի արտահայտիչներ, չեյին կարող օգոստոսի 10-ը հեղափոխության վերջն ու սահմանը համարել: Յեվ իրոք, բազմաթիվ հարցեր, վոր հերթական եր դարձրել հեղափոխությունը, դեռ լուծում չեյին ստացել: Գյուղացիք հալումաշ եյին լինում ֆեոդալական պարտականությունների ծանրության տակ, քաղաքային մասսան տառապում եր կենսամթերքների պակասությունից: Հեղափոխական միջոցներ եյին պահանջվում, վորոնց ընդունակ չեյին ժիրոնդիստները:

Փարիզում իրենց մշտապես մանր-բուրժուական սպառնալիքի տակ զգալով, ժիրոնդիստները Կոնվենտի պաշտպանության պատրվակով ուզեցին իրենց համար զինված ույժ պատրաստել՝ բերված գավառներից: Յակոբիններն իսկույն հասկացան ժիրոնդիստների փորացավը և յեռանդուն դիմադրություն ցույց տվին նրանց ծրագրին, վոր վերջ ի վերջո մերժվեց նաև Կոնվենտի կողմից:

Տարաձայնության մի այլ պատճառ էլ թագավորի հարցն եր: Յակոբինները լայն մասսաների ցանկության համաձայն պահանջում եյին նրա գլխատումը (Ռոբեսպյերը նույնիսկ գլխատումն եր պահանջում՝—առանց դատի), ժիրոնդիստները յերկյուղ կրելով այդքան հեղափոխական ձևով անցյալի հետ հաշիվ մաքրելուց, ուզում եյին ձգձգել, իսկ յերբ տեսան, վոր նրան փրկելն այլևս անկարելի յե դառնում, սկսեցին պնդել ամբողջ ազգաբնակությանը հարցնելու վրա:



Դեպարտամենտների պակաս-հեղափոխական և պակաս-գիտակից ազգաբնակությանը դիմելով, ժիրոնդիստները նպատակ ունեյին սանձել շատ հեռու գնացած Փարիզը։ Հաղթանակը դարձյալ յակոբինները տարան։ Թագավորը դատվեց և գլխատվեց 1793 թ. հունվարին։

Այս պառլամենտական ճակատամարտներում յակոբինները հաղթեցին, վորովհետև միշտ նրանց հետ եր քվեարկում Կոնվենտի անկուսակցական մասսան կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, «ճահիճը»։ Իսկ «ճահիճն» իր ձայնը յակոբիններին եր տալիս, վորովհետև փարիզյան մասսաներն իրենց դիմումներով ու ցույցերով ճնշում եյին գործ դնում Կոնվենտի վրա։

Մենք արդեն խոսել ենք այն ահագին նշանակության մասին, վոր լայն մասսաների համար ուներ կենսամթերքների խնդիրը, խնդիր, վոր գնալով ավելի ու ավելի յեր սրվում։ Սրա պատճառը նախ՝ մի քանի մթերքների հրապարակից իսպառ չքվելն եր, ինչպես օրինակ՝ գաղութներից ներմուծվող մթերքները, յերկրորդ՝ թղթադրամի արժեքի անասելի անկումը։ Սրա հետևանքով հացի ֆունտը հասավ 8 սուի, մինչդեռ բանվորի օրավարձը 30—50 սուից չեր անցնում։ Այսպիսով՝ միջին բանվորական ընտանիքը միայն հացի վրա օրական պիտի ծախսեր իր օրավարձի յերեք հինգերորդը։ Այսպիսի յերևույթների ազդեցության տակ մթերքների խնդիրը վճռելու համար քաղաքի ազգաբնակության մասսաները զանազան ծրագրեր եյին առաջարկում։ Վորովհետև հեղափոխության հետ կապված տնտեսական քայքայման հետևանքով առաջացած գործազրկության շնորհիվ, ինչպես նաև բանվորական միությունների արգելող օրենքների շնորհիվ, աշխատավորականները մտածել անգամ չեյին կարող իրենց աշխատավարձը բարձրացնելու մասին, ուստի նրանք յեկան այն յեզրակացության, վոր բոլոր մթերքները, հատկապես հացը, պիտի ամուր գին կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, «մաքսիմում» ունենան։

Քանի վոր ժիրոնդիստների կառավարող կուսակցությունը խոշոր բուրժուազիայի հայացքներն եր արտահայտում, այսինքն այն դասի, վոր վոչ միայն չեր տառապում մթերքների թանկությունից, այլ և հարստանում եր նրանից, հարկ էլ չկար քաղաքի չքավորության ցանկությունները բավարարելու մասին մտածել։ Իսկ Կոնվենտում ժիրոնդիստների ներկայացուցիչներն եյին։ Ինչպես թագավորի դեմ մղած պայքարում, այնպես էլ ժիրոնդիստների դեմ պայքարում առաջապահներ հանդիսացան փարիզյան սեկցիաները։ Հրապարակ յեկան փարիզյան չքավորության պերճախոս ու յեռանդուն առաջնորդներ—Վարլե, Ռու, վորոնք գզգզում եյին «ագահ հարուստներին ու մեծաքանակ գնորդներին»։

ժիրոնդիստներն ու նրանց կողմնակիցները սրանց «կատաղիներ» անունը տվին։

Առևտրի նկատմամբ «կատաղիների» այս վերաբերմունքն ատելի յեր ժիրոնդիստներին։ «Կազմալուծողներ են նրանք, ասում եր նրանց առաջնորդներից մեկը, ովքեր ցանկանում են հավասարեցնել սեփականությունն ու կարողությունը, կենսամթերքների կայուն գին սահմանել, հասարակության մատուցած անձնական ծառայության արժեքը վորոշել. ովքեր ցանկանում են, վոր բանվորն ու որենսդիրը հավասար ստանան»։ Ժիրոնդիստների աչքում «կատաղիներն» այնպիսի մարդիկ եյին, վորոնք «անկարգությունները մեծացնելու նպատակով հասարակությունը բաժանում եյին յերկու դասի՝ ունեորների և չքավորների, այդ յերկուսին իրար դեմ հանում»։

«Նրանք շարունակ, ասում եր մի ժիրոնդիստ, սեկցիաների անվան տակ ձանձրացնում են Կոնվենտը դիմումներով, վորոնցով պահանջում են հացահատիկների համար առավելագույն գին սահմանել, 10 հազար հոգի դիմում են կազմակերպում, սպառնում են ապստամբությամբ, յեթե սակագին չսահմանվի։ Քաղաքացինե՛ր, գիտակցեցեք այն մեծ ճշմարտությունը, թե առևտուրը միմիայն ամենաազատ պայմաններում կարող ե զարգանալ»։

1792 թվի դեկտեմբերին ժիրոնդիստները կարողացան առևտրի կատարյալ ազատության որենք անց կացնել. սակայն հաջորդ տարվա փետրվարին արդեն Կոնվենտի գլխին թափված դիմումների կույտը և անհամար պատգամավորությունները սակագին եյին պահանջում։ Այդ մոմենտում յակոբինները դեռ չեն համաձայնում սակագնի յենթարկել մթերքները։ Չե՞ վոր սրանց մեջ ել բազմաթիվ առևտրականներ ու միջին արհեստավորներ կային, վորոնց համար սակագինը ձեռնտու չեր։ Սակայն դեպքերի հետագա ընթացքը մոտեցրեց յակոբիններին ու «կատաղիներին»։

Այնինչ հեղափոխության նվաճումները նորից վտանգի մեջ եյին։ Գործերը ռազմաճակատներում գնալով՝ վատթարանում եյին։

Թագավորի գլխատումից հետո Ֆրանսիայի դեմ մի ահեղ դաշինք կազմվեց՝ Անգլիայի գլխավորությամբ, վորին անհանգստացնողն ավելի շուտ Բելգիայի գրավումն եր ֆրանսիական զորքերի կողմից, քան թագավորի գլխատումը։

Տրամադրությունը բանակներում նորից ընկավ, կազմալուծման նշաններ յերևացին, զինվորների անվստահությունը դեպի իրենց սպաները կատարելապես արդարացավ.—ժիրոնդիստ հրամանատար գեներալ Դյումուրյեն իր նախորդ Լաֆայետի որինակին հետևելով և իր հեղափոխական հայրենիքին դավաճանելով, անձնատուր յեղավ հակառակորդին։



Ֆրանսիայի ամենահետամնաց գավառ Վանդեան, ուր դեռ պահպանվում եյին կալվածատերերի և գյուղացիների նահապետական փոխհարաբերությունները, քահանաների ագիտացիայի ազդեցության տակ վոտքի յելավ՝ պաշտպանելու թագավորին ու կրոնը։

Այսպիսի պայմաններում պետք եր հեղափոխական ուժերի առավելագույն լարումն, վորպեսզի կարելի լիներ պաշտպանել հեղափոխության նվաճումները, պետք եր մի քանի գերհեղափոխական միջոցներ կիրառել։ Իսկ ժիրոնդիստները դրան ընդունակ չեյին. ընդհակառակը՝ նրանք կատաղի պայքար եյին տանում այնպիսի հեղափոխական մարմնի դեմ, ինչպիսին փարիզյան կոմմունան եր, և դատական գործեր սկսեցին ականավոր յակոբինների դեմ։

Հենց այդ ժամանակ յակոբինները—մանր բուրժուազիայի շահերի պաշտպաններն ու «կատաղիները»—քաղաքի չքավորության տրամադրությունների արտահայտիչները—սերտ դաշինք կռեցին։ «Կատաղիների» հետ առաջին համաձայնության յեկողը յեղավ կոմմունան, վոր Կոնվենտին տված պետիցիայում պահանջում եր հացի սակագին նշանակել։

Կոնվենտում այժմ յակոբիններն ել սկսեցին հոգուտ մաքսիմումի արտահայտվել, և չնայած ժիրոնդիստների կատաղի դիմադրությանը, մայիսի 3-ին քաղաքացիների լայն մասսաների համար ցանկալի այդ որենքն ընդունվում ե Կոնվենտի կողմից։ Մայիսի 20-ին բավարարվեց չքավորության մի այլ պահանջը.— սահմանվեց պրոգրեսիվ հարկ։ Այնուհետև հարուստներին՝ արգելվեց զորակոչից փրկանքով ազատվելը։

Այս ամենն անսովոր դրության հասցրեց դասակարգային պայքարը, վորն առանձին թափ ընդունեց սեկցիաներում և վերջացավ հեղափոխական խմբակների հաղթանակով։ Մասսաներում ժողովրդականություն ե ստանում ժիրոնդիստ-պատգամավորներին Կոնվենտից արտաքսելու լոզունգը։ Վերջիններս ոգնության են կանչում նահանգները, վորոնք իրենց հերթին զինված ուժ են խոստանում։ Ժիրոնդիստ Իսնարը փարիզցիներին սպառնում ե սրբել հողի յերեսից նրանց քաղաքը, յեթե քաղաքի ներկայացուցիչներին թեկուզ մի հարված հասնելու լինի։

Դեպարտամենտներից մեկից գրում եյին ժիրոնդիստներին. «Բոլոր չարաբաստիկ դեպքերի ու անիշխանական վիճակի միակ պատասխանատուներն արյունոտ Ռոբեսպյերը, Դանտոնը և Մարատն են», և առաջարկում եյին վոչնչացնել այդ «տնզգամներին, վորոնք խառնակություններ են ծնեցնում. նրանք վոչընչացման են արժանի»։

Ապավինած դեպարտամենտների պաշտպանությանը, ժիրոնդիստներն ստեղծեցին «տասներկուսի հանձնաժողով», որը պիտի քններ ազատության ու օրենքին սպառնացող դավադրությունները և հրաման տվին ձերբակալել «կատաղիների» առաջնորդ Վարլեյին և կոմմունայի ազդեցիկ անդամ և մասսաներում հեղինակություն վայելող «Պեռ Դյուշեն» թերթի հրատարակիչ Հեբերին։ Սրան որպես պատասխան մի կոմիտե ընտրվեց ապստամբություն կազմակերպելու։ Այդ ապստամբությունը տեղի ունեցավ 1793 թվի մայիսի 31։ Ինքը Մարատն ահազանգ տվավ։ Զինված մասսաները շրջապատեցին Կոնվենտը և քառասունութ սեկցիաների պատվիրակության միջոցով պահանջեցին «տասներկուսի հանձնաժողովի» ցրումը և ականավոր ժիրոնդիստ պատգամավորների արտաքսումը։ Այդ պահանջներից առաջինն իսկույն կատարվեց, իսկ յերկրորդն իրագործելու համար պետք յեղավ, որ փարիզյան մասսաները նոր յելույթ ունենան։ Այդ յելույթը տեղի ունեցավ յերկու օր հետո։ Ժիրոնդիստ պատգամավորներն արտաքսվեցին Կոնվենտից։

Այսպես վերջացավ տիրապետությունը խոշոր բուրժուազիայի և սկսվեց մանր բուրժուազիայի դիկտատուրայի շրջանը։ Սրանց ներկայացուցիչները յակոբիններն եյին։

## IV

Յակոբինները, որ լայն մասսաների յելույթի շնորհիվ իշխանություն ստացան, ըստ յերևույթին անլուծելի խնդիրների առաջ եյին կանգնած.—պետք եր հեղափոխությունն ամրացնել, փրկելով նրան կորստից այն ժամանակ, յերբ այդ կորուստը կարծես անխուսափելի յեր։

Գլխավոր հրամանատարի դավաճանության և փախուստի շնորհիվ զորքը կազմալուծված եր։ Թշնամիներն առաջանում եյին ամեն կողմից։ Յերկրի ներսում քաղաքացիական կռիվ եր պայթել, ժիրոնդիստներին պաշտպանելու եյին յելել դեպարտամենտները։ Ամբողջ պտղավետ ու հարուստ հարավը բռնված եր խռովությունների բոցով։ Ապստամբել եյին բոլոր խոշոր և առևտրական քաղաքները։ Տուլոնն անցավ անգլիացիների կողմը և հռչակեց Լյուդովիկոս XVII, Լյուդովիկոս XVI որդուն։ Վայրկյան յեղավ, յերբ ութսունյերեք դեպարտամենտներից 60 բռնված եյին ապստամբությամբ։

Հակահեղափոխությունն այնքան յերես առավ, որ նրա ձեռքից հենց Փարիզում ընկավ փարիզյան չքավորության կուռք Մարատը, որին ժիրոնդիստներն ատում եյին։



Սովը շարունակում եր ավերածը, ֆինանսները սարսափելի դրության մեջ եյին։

Գերմարդկային հեղափոխական եներգիա յեր պետք, որպեսզի կարելի լիներ վերացնել այդ արգելքները, և իշխանության անցած յակոբինները կարողացան այդ մոմենտի համար անհրաժեշտ եներգիան հայտնաբերել։

Ամենից առաջ, որպեսզի կարելի լիներ ամուր կապ ունենալ լայն մասսաների հետ, որ իրենց հաղթություն եր տվել, յակոբիններն արտակարգ ձևով մշակեցին և Կոնվենտում անց կացրին այսպես կոչված 1793 թվի սահմանադրությունը։ Սա ամենադեմոկրատ սահմանադրությունն եր, որ յերբևե տեսել եր Ֆրանսիան։ Նա օրինականացնում եր ընդհանուր ընտրական օրենքը՝ 21 տարեկանից վեր բոլոր քաղաքացիների համար։ Բոլոր ընդունված օրենքները պիտի անմիջականորեն հաստատվեյին ժողովրդից։ Քաղաքացիներին իրավունք եր տրվում ժողովրդական ընկերություններ* ստեղծելու, պետիցիաներ տալ, ազատ կրոնական պաշտամունք ունենալ և այլն։

Բայց տվյալ պայմաններում այդ դեմոկրատիկ սահմանադրությունը կիրառելը՝ նշանակում եր սպանել հեղափոխությունը։ Յակոբիններն այդ շատ լավ եյին հասկանում, ուստի 1793 թ. սահմանադրությունը դեռ կյանքի մեջ չկիրառվեց, այլ յերկրի կառավարությունը կազմակերպվեց նրա ապրած արտակարգ պայմաններին համապատասխան՝ դիկտատուրայի կարգով։ Ամբողջ իշխանությունը տրվեց Հասարակաց Փրկության Կոմիտեյին, որ գոյություն ուներ դեռ ժիրոնդիստների օրով, իսկ այժմ միայն վերանորոգվեց։ Փաստորեն նրան հանձնվեց ներքին և արտաքին քաղաքականության ղեկավարությունը։ Իսկ պաշտոնապես նրա իշխանությունը բղխում եր Կոնվենտից, որին նա հաշվետու յեր իր գործունեության մասին։

Հակահեղափոխության դեմ պայքարի և անբարեհույս ու հեղափոխությանը թշնամի տարրերին հետևելու կարևոր գործը դրվեց Հասարակաց Ապահովության Կոմիտեի վրա։

Գավառների հետ կապ պահվում եր այն լիազոր-կոմիսարների միջոցով, որոնց այդ գավառներն եյին գործուղում Փրկության Կոմիտեն կամ Կոնվենտը։ Կոմիսարներին անսահման իրավունքներ եյին տրված. նրանք պարտավոր եյին ճնշել հակահեղափոխական քայլերը և բարձրացնել գավառական հայրենա-

* Քաղաքական կազմակերպություններ, նման մեր կուսակցական կազմակերպություններին։

սերների * վոգին։ Կոմիսարներն իհարկե այս բազմակողմանի պարտականությունները կարող եյին կատարել միայն տեղական հեղափոխական տարրերի հետ կատարյալ համաձայնությամբ։ Այս վերջիններն այժմ դարձել եյին ժողովրդական ընկերություններ, վորոնք վոչ թե պետական, այլ կուսակցական կազմակերպություններ եյին։ Այսպիսի ժողովրդական ընկերությունների թիվը Ֆրանսիայում հասնում եր 44.000։ Իբրև հեղափոխականների միացման կենտրոն, նրանք հակահեղափոխությունը ճնշելու և հեղափոխությունն ամրացնելու համար չափազանց շատ բան արին։ Չնայելով, վոր նրանք պետական հիմնարկություններ չեյին, այնուամենայնիվ յերբեմն վարչական ֆունկցիաներ եյին կատարում... օրինակ՝ հսկել հակահեղափոխականների վրա, ադմինիստրացիան զտել հեղափոխությանը թշնամի տարրերից և այլն։

Ամբողջ Ֆրանսիայում ցրված այս ժողովրդական ընկերություններն իրենց կենտրոնն ունեյին՝ յակոբինների ակումբը, վորի հետ կապ պահելու համար ակումբը «վորդեգրում եր» այս կամ այն ընկերությունը։ Բոլոր «վորդեգրած» ընկերություններն իրենց փարիզյան կենտրոնից ստանում եյին հրահանգներ, ադրեսներ, արձանագրությունների քաղվածքներ և այլ տեսակի ինֆորմացիա. իրենց հերթին այնտեղ եյին ուղարկում իրենց ադրեսները, կոչերը և դիմումները։ Մի խոսքով—յակոբինների ակումբը բոլոր ժողովրդական ընկերությունների համար գաղափարական ու կազմակերպչական կենտրոն եր։

Նա միաժամանակ վողջ քաղաքական ու պետական կյանքի կենտրոնն եր։ Նրա շարքերից եյին դուրս գալիս կարևորագույն գործիչները, բոլոր ամենախոշոր օրգանների և հիմնարկների համար պատասխանատու աշխատակիցներ։ Մի խոսքով, նրա նշանակությունը հսկայական եր և կարող եր հավասարվել պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում միայն կուսակցական կազմակերպության նշանակությանը։ Պրոլետարիատի դիկտատուրայի մի այլ նմանությունն ել կայանում եր նրանում, վոր յակոբինների ակումբն այն պայմաններում, վորոնցում նրան աշխատել վիճակվեց, պիտի շարժման մեջ դներ ահաբեկման (террор) սարսափելի մեքենան։

Կոնվենտը և Հասարակաց Փրկության Կոմիտեն մի շարք դաժան օրենքներ հրատարակեցին եմիգրանտների, սպեկուլյանտների և հակահեղափոխական քահանաների դեմ։ Հին արքայական տան

* Այդ ժամանակ հայրենասերներ եյին կոչվում բոլոր հեղափոխականորեն տրամադրված քաղաքացիները։



ներկայացուցիչները, հակահեղափոխական գեներալներն ու խոշոր աստիճանավորները Հեղափոխական Տրիբունալի կողմից դատվում ու անխնա կերպով մահապատժի եյին յենթարկվում։ Հակահեղափոխության դեմ պայքարելու համար կոմմունաներից յուրաքանչյուրում հեղափոխական կոմիտեներ ստեղծվեցին։ Փարիզում նրանք յուրաքանչյուր սեկցիայում գոյություն ունեյին և հեղափոխության թշնամիների համար կատարյալ սարսափ եյին։ Տերրոր գործադրելու համար յակոբիններին շատ հաճախ վորպես արյունառուշտներ են ներկայացնում՝ սրանց հակադրելով մարդասեր ժիրոնդիստներին։ Բայց փաստն այն է, վոր տերրորի սկիզբը դնողներն իրենք ժիրոնդիստներն են։ Այսպես Հեղափոխական Տրիբունալ կազմվել է հենց նրանց օրով, սակայն ճիշտ է, վոր յակոբիններն այդ միջոցներին իսկական հեղափոխական թափ տվին։ Բացի դրանից դասակարգերի և կուսակցությունների պայքարի ընթացքում միջոցների խտրություն լինել չի կարող։ Ժիրոնդիստներն իրենք այդպես եյին և այդ բանը շատ լավ գիտեյին։ Նրանց առաջնորդներից մինը պնդում եր, թե՝ բոլոր պարտված քաղաքական կուսակցությունները պիտի վոչնչանան։ Մի ուրիշն առաջարկում եր մահապատիժ սահմանել բոլոր նրանց համար, վորոնք իրենց հույսը հասարակապետության փրկության վրա չեն դնում։ Յերրորդը՝ տեղի ունեցող կուսակցական պայքարի մասին ասում եր. «Մեր թշնամիների հետ մենք պայքարի մեջ ենք. կամ մենք կընկնենք նրանց ձեռքից, կամ նրանք մերինից»։

Ինչպես պարզ յերևում է, տերրորիստական դաժանությունները միայն յակոբիններին չեյին հատուկ։ Յակոբինների կիրառած տերրորի լավագույն արդարացումն այն է, վոր նա հեղափոխական նպատակներ ուներ. այլ և այն, վոր նրանց տերրորական գործողությունները հաճախ պատասխան եյին հեղափոխականների լայն մասսաների պահանջին։

Ամեն անգամ, յերբ հասարակապետության դրությունը վատանում եր, այդ մասսաներն անընդհատ պահանջում եյին, վոր հանուն Հանրապետության փրկության տերրորը կիրառվի. «Օրենսդիրներ, տերրորն օրակարգում դրեք», հայտարարեցին 48 սեկցիաների ներկայացուցիչները՝ 1793 թվին ներկայանալով Կոնվենտին, յերբ Հասարակապետությունը դժվարին օրեր եր ապրում։

Ինչ վերաբերում է արտաքին թշնամու հետ ունեցած կռվին, այստեղ ևս յակոբինները մի շարք կազմակերպչական, ագիտացիոն և ահաբեկիչ միջոցներով բանակները կարգի բերին և հարկադրեցին հաղթել թշնամուն։ Ի միջի այլոց՝ ընտրական

դարձավ ստորին հրամանատարական կազմը և զինվորական մասնագետները զրկվեցին Հասարակաց Փրկության Կոմիտեի կամ Կոնվենտի ներկայացուցիչների տրամադրության տակ, վորոնք բանակ ուղարկվեցին անսահման լիազորություններով...

Բացի ներքին և արտաքին թշնամիների հետ ունեցած կռիվներից, յակոբիններն, իշխանություն ձեռք բերած այս մանր բուրժուաները, բացի սահմանադրություն հրատարակելուց, մի շարք միջոցներ ես պիտի իրականացնեյին՝ բավարարելու լայն մասսաներին և իրականացնելու իրենց մանր բուրժուական տենչերը։

Իհարկե յակոբինները, վորպես մանր բուրժուական կուսակցություն, հաստատուն ծրագիր չունեյին, սակայն վորոշ մանր բուրժուական իդեալ ունեյին։ Ամենից առաջ նրանց, վորպես մանր բուրժուական ներկայացուցիչների, բնավ հաճելի չեր կապիտալի կուտակումը խոշոր բուրժուազիայի ձեռքում։

Յակոբիններն ընդունում եյին, վոր թագավորելու յեն հարուստ հավասարությունը և առատությունը։

Այս տեսակետից ամենից բնորոշը ժառանգության որենքի սահմանափակումն եր։ Այդ որենքով յուրաքանչյուր սեփականատեր՝ ժառանգություն թողնելիս, կարող եր տնօրինել իր ստացվածքի միայն 1/10 մասը։ Մնացածը պիտի հավասար բաժանվեր բոլոր ժառանգների մեջ։ Նվիրելու իրավունքը նույնպես սահմանափակված եր. 200 հազար ֆրանկից ավելի նվիրել չեր կարելի։

Ընդհանրապես յակոբիններն իրենց սոցիալական ձեռնարկումներում շատ եյին անվճռական։ Ճիշտ ե՝ նրանք որենք մշակեցին պրոգրեսիվ տուրքի մասին, վոր սկզբում միայն իր ընդհանուր գծերով եր գրավիչ։ Այս որենքով տարեկան 10 հազարից ավելի բոլոր յեկամուտները բանագրավման եյին յենթակա, իսկ մեկ հազար ֆրանկի և պակաս յեկամուտներն ազատվում եյին հարկից։ Բայց և այնպես՝ յակոբինները սիրտ չեյին անում սահման դնել կապիտալի մի ձեռքում կենտրոնանալուն. այս պատճառով պրոգրեսիվ տուրքի մասին յեղած որենքը լոկ ժամանակավոր միջոց եր։

Ինչ վերաբերում ե քաղաքի չքավորության լայն մասսաների պահանջներին համապատասխանող ձեռնարկումներին, դրանց շարքում պիտի դնել սեկցիաների նիստերին հաճախելու համար սահմանած վճարը, վորի շնորհիվ այդ նիստերին կարող եյին հաճախել բանվորներն ու արհեստավորները՝ առանց աշխատավարձը կորցնելու։ Առավելագույն գին նշանակվեց վոչ միայն հացի ու ալյուրի վրա, այլ և առանց բացառության բոլոր մթերքների վրա։ Համայնական հողերը վերադարձվեցին գյուղական մասսաներին. իսկ ֆեոդալական կարգերը վերջնականապես վերացվեցին առանց վորևե յետգնման*։

Սակայն լայն աշխատավոր մասսաներին այս բոլորը կարող եր բավարարել։ Ճիշտ ե, մաքսիմումի որենքն ոգնեց զորքի մատակարարման գործին և թեթևացրեց չքավորության դրությունը, սակայն նա չկարողացավ իսպառ վերացնել պարենավորման դժվարությունները։ Այս որենքի խստության շնորհիվ շատ մթերքներ իսպառ չքացան շուկայից։

Բացի դրանից՝ բոլոր մթերքների սակագին սահմանելով և առևտուրը վորոշ կարգի տակ դնելով, յակոբինները սակագին նշանակեցին նաև աշխատանքի համար, այն էլ այնքան աննշան, վոր բանվորը սովամահ կարող եր լինել։ Աշխատավարձը 1790 թվի յեղածից միայն $2\frac{1}{2}$ անգամ եր ավելի. այնինչ՝ մթերքների գներն առնվազն 10 անգամ եյին ավելացել։ Աշխատավարձի չափը վորոշելը հանձնարարվեց քաղաքային ինքնավարություններին, ուր գործերը վարողները մանր բուրժուազիայի ներկայացուցիչներն եյին։ Ինչ խոսք, վոր վարձու բանվորների շահերը դրանից շատ եյին տուժում։

Գյուղի չքավորությունը, վոր յերազում եր, թե հոգևորականությունից ու ազնվականությունից խլած հողերն իրեն կտան, կամ գոնե արտոնյալ պայմաններով իրեն կվաճառեն, այդ հողերի յերեսն անգամ չտեսավ, վորովհետև կառավարությունն ինքը փողի կարիք ունենալով, ստիպված եր այդ հողերը ծախել իրեն համար ձեռնտու պայմաններով։ Այսպիսով այս հողի գնումը մատչելի յեր միայն քաղաքի բուրժուազիային և գյուղի բռնցքներին։ Գյուղացիության ունևոր մասը հեղափոխությունը ծառայեցնելով իր հողերն ընդարձակելու գործին, այնուհետև այլ ևս այդ հեղափոխությամբ չհետաքրքրվեց, ընդհակառակն՝ սկսեց վախենալ նրա հետագա զարգացումից, վորովհետև այդ զարգացման պրոցեսում նա կարող եր ձեռք բերածը կորցնել։

Գյուղացիությունը թշնամացավ հեղափոխությանը նաև այն պատճառով, վոր մթերքների վրա սակագին սահմանելուց

* Պետք ե ասել, վոր Որենսդիր Ժողովը, վոր բաղկացած եր գլխավորապես գավառային առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչներից կամ մանր բուրժուազիայից, այսինքն այնպիսի խավերից, վորոնք առանձնապես շահագրգռված չեյին ֆեոդալական պարտավորություններն ամբողջովին պահպանելում, ճեղքվածք առաջացրեց Սահմանադիր Ժողովի որենքներում, վորոնք այդ պարտավորությունները պահպանում եյին։ Որենսդիր Ժողովի դեկրետով վերացվում եր ամբողջ գյուղով յետգնում կատարելու անհրաժեշտությունը և յետգնման գումարի վճարման համար 2 տարի և 10 ամսվա տարեկտում (рассрочка) եր թույլատրվում։ Բացի դրանից սենյորն ինքը պիտի ապացուցեր այս կամ այն պարտավորությունից օգտվելու օրինական լինելը։

դարձավ ստորին հրամանատարական կազմը և զինվորական մասնագետները դրվեցին Հասարակաց Փրկության Կոմիտեի կամ Կոնվենտի ներկայացուցիչների տրամադրության տակ, վորոնք բանակ ուղարկվեցին անսահման լիազորություններով...

Բացի ներքին և արտաքին թշնամիների հետ ունեցած կռիվներից, յակոբինները, իշխանություն ձեռք բերած այս մանր բուրժուաները, բացի սահմանադրություն հրատարակելուց, մի շարք միջոցներ ևս պիտի իրականացնեյին՝ բավարարելու լայն մասսաներին և իրականացնելու իրենց մանր բուրժուական տենչերը:

Իհարկե յակոբինները, վորպես մանր բուրժուական կուսակցություն, հաստատուն ծրագիր չունեյին, սակայն վորոշ մանր բուրժուական իդեալ ունեյին: Ամենից առաջ նրանց, վորպես մանր բուրժուական ներկայացուցիչների, բնավ հաճելի չեր կապիտալի կուտակումը խոշոր բուրժուազիայի ձեռքում:

Յակոբիններն ընդունում եյին, վոր թագավորելու յեն հարուստ հավասարությունը և ազատությունը:

Այս տեսակետից ամենից բնորոշը ժառանգության որենքի սահմանափակումն եր: Այդ որենքով յուրաքանչյուր սեփականատեր՝ ժառանգություն թողնելիս, կարող եր տնորինել իր ստացվածքի միայն 1/10 մասը: Մնացածը պիտի հավասար բաժանվեր բոլոր ժառանգների մեջ: Նվիրելու իրավունքը նույնպես սահմանափակված եր. 200 հազար ֆրանկից ավելի նվիրել չեր կարելի:

Ընդհանրապես յակոբիններն իրենց սոցիալական ձեռնարկումներում շատ եյին անվճռական: Ճիշտ ե՝ նրանք որենք մշակեցին պրոգրեսիվ տուրքի մասին, վոր սկզբում միայն իր ընդհանուր գծերով եր գրավիչ: Այս որենքով տարեկան 10 հազարից ավելի բոլոր յեկամուտները բռնագրավման եյին յենթակա, իսկ մեկ հազար ֆրանկի և պակաս յեկամուտներն ազատվում եյին հարկից: Բայց և այնպես՝ յակոբինները սիրտ չեյին անում սահման դնել կապիտալի մի ձեռքում կենտրոնանալուն. այս պատճառով պրոգրեսիվ տուրքի մասին յեղած որենքը լոկ ժամանակավոր միջոց եր:

Ինչ վերաբերում ե քաղաքի չքավորության լայն մասսաների պահանջներին համապատասխանող ձեռնարկումներին, դըրանց շարքում պիտի դնել սեկցիաների նիստերին հաճախելու համար սահմանած վճարը, վորի շնորհիվ այդ նիստերին կարող եյին հաճախել բանվորներն ու արհեստավորները՝ առանց աշխատավարձը կորցնելու: Առավելագույն գին նշանակվեց վոչ միայն հացի ու ալյուրի վրա, այլ և առանց բացառության բոլոր մըթերքների վրա: Համայնական հողերը վերադարձվեցին գյուղա-



կան մասսաներին. իսկ ֆեոդալական կարգերը վերջնականապես վերացվեցին առանց վորևե յետգնման*:

Սակայն լայն աշխատավոր մասսաներին այս բոլորը կարող եր բավարարել: Ճիշտ ե, մաքսիմումի որենքն ոգնեց զորքի մատակարարման գործին և թեթևացրեց չքավորության դրությունը, սակայն նա չկարողացավ իսպառ վերացնել պարենավորման դըժվարությունները: Այս որենքի խստության շնորհիվ շատ մթերքներ իսպառ չքացան շուկայից:

Բացի սրանից՝ բոլոր մթերքների սակագին սահմանելով և առևտուրը վորոշ կարգի տակ դնելով, յակոբինները սակագին նշանակեցին նաև աշխատանքի համար, այն ել այնքան աննշան, վոր բանվորը սովամահ կարող եր լինել: Աշխատավարձը 1790 թվի յեղածից միայն $2\frac{1}{2}$ անգամ եր ավելի. այնինչ՝ մթերքների գներն առնվազն 10 անգամ եյին ավելացել: Աշխատավարձի չափը վորոշելը հանձնարարվեց քաղաքային ինքնավարություններին, ուր գործերը վարողները մանր բուրժուազիայի ներկայացուցիչներն եյին: Ինչ խոսք, վոր վարձու բանվորների շահերը սրանից շատ եյին տուժում:

Գյուղի չքավորությունը, վոր յերազում եր, թե հոգևորականությունից ու ազնվականությունից խլած հողերն իրեն կտան, կամ գոնե արտոնյալ պայմաններով իրեն կվաճառեն, այդ հողերի յերեսն անգամ չտեսավ, վորովհետև կառավարությունն ինքը փողի կարիք ունենալով, ստիպված եր այդ հողերը ծախել իրեն համար ձեռնտու պայմաններով: Այսպիսով այս հողի գնումը մատչելի յեր միայն քաղաքի բուրժուազիային և գյուղի բռունցքներին: Գյուղացիության ունևոր մասը հեղափոխությունը ծառայեցնելով իր հողերն ընդարձակելու գործին, այնուհետև այլ ևս այդ հեղափոխությամբ չհետաքրքրվեց, ընդհակառակն՝ սկսեց վախենալ նրա հետագա զարգացումից, վորովհետև այդ զարգացման պրոցեսում նա կարող եր ձեռք բերածը կորցնել:

Գյուղացիությունը թշնամացավ հեղափոխությանը նաև այն պատճառով, վոր մթերքների վրա սակագին սահմանելուց

* Պետք ե ասել, վոր Որենսդիր ժողովը, վոր բաղկացած եր գլխավորապես գավառային առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչներից կամ մանր բուրժուազիայից, այսինքն այնպիսի խավերից, վորոնք առանձնապես շահագրգռված չեյին ֆեոդալական պարտավորություններն ամբողջովին պահպանելում, ճեղքվածք առաջացրեց Սահմանադիր ժողովի որենքներում, վորոնք այդ պարտավորությունները պահպանում եյին: Որենսդիր ժողովի դեկրետով վերացվում եր ամբողջ գյուղով յետգնում կատարելու անհրաժեշտությունը և յետգնման գումարի վճարման համար 2 տարի և 10 ամսվա տարեկետում (рассрочка) եր թույլատրվում: Բացի սրանից սենյորն ինքը պիտի ապացուցեր այս կամ այն պարտավորությունից ոգտվելու որինական լինելը:

հետո պետությունը բոլոր գյուղատնտեսական մթերքներն ամուր գներով բռնագրավեց զորքի և քաղաքացիների պետքերի համար։ Իհարկե՝ դրանից տուժում էին գյուղացիների շահերը։ Գյուղացիությունը հուզվում, յերբեմն էլ ուղղակի ապստամբում էր։

Գիտենք, որ յակոբինները հաղթեցին ժիրոնդիստներին։ Նրանք դաշնակցել էին «կատաղիների» հետ։ Այժմ այդ դաշինքը ճեղքվածք էր տալիս։ «Կատաղիները» պաշտպանելով քաղաքի չքավորության, աղքատացած արհեստավորության, տնային արդյունաբերության մեջ գտնվող վարձու բանվորների շահերը, չէին կարող բավարարվել այն միջոցներով, որ կիրառում էին յակոբինները՝ որպես պետական կուսակցություն։ Խոշոր կապիտալի կուտակման դեմ նրանք ամենակատաղի պայքարն էին ցանկանում, սպեկուլյացիայով ու դրամաճուրդով (ажиотаж) ձեռք բերած հարստության բռնագրավումն էին պահանջում։ Որովհետև վարձական բանվորների շարքերն այդ ժամանակ լրացվում էին ըստ մեծի մասին աղքատացած արհեստավորներով, ուստի «կատաղիները» պահանջում էին սուբսիդիա և անտոկոս փոխառություն տալ այն յենթավարպետներին, որոնք սեփական գործ բանալու ցանկություն ունեին։ «Կատաղիները» խուլ չմնացին նաև գյուղական չքավորության պայանջներին, որոնք պնդում էին հոգևորականությունից ու արտոնյալներից ազգայնացրած հողերն ամենաչքավոր գյուղացիներին բաժանելու վրա։

Ինչպես տեսնում ենք, «կատաղիները» սոցիալիստներ չէին, արտադրական միջոցները համայնացնելու մասին այն ժամանակի բանվորները հասկացողություն չունեին. միակ բանը, որի վրա նրանք կարող էին պնդել, դա ստացվածքը բաժանելը, մանր սեփականությունը վերականգնելն էր. հետևաբար յակոբինների և «կատաղիների» մեջ առանձին տարբերություն չկար։ Սակայն վերջիններս առաջիններից շատ առաջ գնացին և այնպիսի քայլեր էին առաջարկում, որ յակոբինները կիրառել չէին կարող՝ առանց վնասելու այն խմբերին, որոնց ներկայացուցիչներն էին։

Հենց նոր սահմանադրությունն ընդունվելուց հետո «կատաղիների» առաջնորդ Ռուն գնաց Կոնվենտ և բողոքեց այդպիսի սահմանադրության դեմ, որ չէր արգելում սպեկուլյացիան և չէր ապահովում չքավորի որապահիկը։ Այս մոմենտից էլ կատաղի պայքար է սկսվում «կատաղիների» և յակոբինների միջև։ Հաղթանակը յակոբինները տարան։ Բայց այդ հաղթանակը շատ թանգ գնով ձեռք բերվեց, որովհետև Փարիզի չքավորության շատ լայն մասսաներ հեռացան յակոբիններից։ Այնուհետև յակոբինների մեջ ներքին պայքար սկսվեց։ Այդ գաղտնիքի լուծումը, ի հարկե, յակոբինների առանձին առաջնորդների անհատական անձնասիրության մեջ չէ, այլ այդ քաղաքական կուսակցության խայտաբղետության մեջ։ Այդ խայտաբղետության պատճառն այն մանր բուրժուազիան էր, որի շահերի արտահայտիչներն էին յակոբինները։ Հաճախ մանր բուրժուազիան տարբեր շահեր ունեցող մանր խմբավորումների յե բաժանվում. և այդ շահերը յերբեմն փոխադարձաբար միմյանց հակասում էին։

Այսպես՝ մանր բուրժուազիայի ամենաչքավոր խավը, որի ներկայացուցիչն ու ղեկավարն էին փարիզյան կոմմունայի դատախազ Շոմետը և իր օգնական Հեբերը, պահանջում էին հասարակական աշխատանքներ կազմակերպել, ազգաբնակչության աժան հացով ապահովել, վաշխառության դեմ անխնա կռիվ մղել, հիմնել հիվանդանոցներ, աղքատանոցներ և սոցիալական օգնության այլ հիմնարկներ։ Մանր բուրժուազիայի չքավոր խավերի այս բոլոր պահանջները բավարարելու համար անհրաժեշտ էին միջոցներ, որ կարելի յեր ստանալ մանր բուրժուազիայի ունևոր մասից վերցնելով (խոշոր բուրժուազիան յերբեք Փարիզում բազմաթիվ չի յեղել, իսկ այժմ էլ փախել էր, ինչպես նաև ազնվականությունը)։ Այս պատճառով էլ մանր բուրժուազիայի համեմատաբար ունևոր մասի առաջնորդները՝ Ռոբեսպյերը, Դանտոնը թշնամաբար վերաբերվեցին Շոմետի խմբակին, շոմետիստներին գերհեղափոխականներ անվանեցին և ժողովրդին առաջարկեցին չհավատալ նրանց, ովքեր ուզում են նրան «հեղափոխությունից էլ դենը տանել»։

Հեբերտիստների կողմից ապստամբության անհաջող փորձ յեղավ, որից հետո յակոբինների այս խմբակը ջախջախվեց Ռոբեսպյերից, որ մոտ դաշնակից էր Դանտոնին, փարիզյան կոմմունայի իշխանությունը խիստ խուզվեց, որովհետև հենց դա յեր հենակետը Հեբերի և Շոմետի։ Այս անգամ նրան իրենց վերաստուգմանը յենթարկեցին և շարքերը լրացրին իրենց մարդկանցով։

Դրանից հետո պայքար սկսվեց Դանտոնի և Ռոբեսպյերի խմբերի մեջ։ Առաջինը, որ արտահայտիչն էր բարձրորակ մտավորականության, իր համակրանքով մոտ էր տապալված ժիրոնդիստներին։ Դանտոնիստները կարծում էին, թե հեղափոխությունն ավարտված է, ուստի դարձան—ըստ արտահայտության Ռոբեսպյերի կողմնակիցներից մեկի,—«բոլոր ռեակցիոն ուժերի միացման կետ»։ Նրանց հաղթանակը հավասարազոր կլիներ ռեակցիայի հաղթանակին։ Դանտոնիստների և Ռոբեսպյերների կռվից հաղթող դուրս յեկան վերջինները։

Այստեղ մենք համառոտակի տվինք միայն այն սոցիալական աստառը, վոր բաժանում եր յակոբիններին։ Ինչ վերաբերում է այն արտաքին լոզունգներին, վորոնցով այդ պայքարն եր ընթանում, դրանց մասին կխոսենք առանձին.

Այսպես՝ հեբերտիստների և Դանտոնի ու Ռոբեսպյերի կողմնակիցների մեջ կռիվը տեղի ուներ հակակրոնական քաղաքականության դեմ, վոր վարում եր փարիզյան կոմմունան։ Դանտոնիստների և ռոբեսպյերիստների կռիվը տերրորի շուրջն եր։ Դանտոնիստների համոզմունքով հեղափոխությունն իրենց շահերի պահանջածից դենն եր անցնում, ուստի հակառակորդներ դարձան այնպիսի հեղափոխական միջոցների, ինչպիսին տերրորն եր, թեպետ իր ժամանակ ինքը Դանտոնը մեկն եր տերրորական միջոցների կողմնակիցներից։

Յեվ այսպես՝ այդ բոլոր մենամարտներից հաղթական դուրս յեկան ռոբեսպյերյանները. դրա փոխարեն յակոբինների յերբեմնի այնքան ուժեղ դիկտատուրան տատանվեց, վորովհետև այժմ նա հենվում եր վոչ թե ամբողջ մանր բուրժուազիայի, այլ միայն նրա մի խմբակի—ունևորների վրա, վորոնց շահերի մարմնացնողը Ռոբեսպյերն եր։

Այժմ նրա դեմ դավադրություն կազմվեց, վորին մասնակցեցին արդեն ջախջախված բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները։ Իսկ փարիզցիների լայն մասսաները, վորոնք չեյին մոռացել իրենց շահերի պաշտպան «կատաղիների» մահապատիժները, Ռոբեսպյերի և նրա կողմնակիցների վիճակի նկատմամբ լավագույն դեպքում անտարբեր մնացին...

Հրապարակ յեկավ նաև մինչև այժմ լուռ մնացած կոնվենտային «ճահիճը»։ Նա խոսեց այն խոշոր բուրժուազիայի անունից, վորին յակոբիններն իզուր փորձում եյին խեղդել. և վորը, չնայած յակոբինների հրապարակած սահմանափակող որենքներին, այնուամենայնիվ ծաղկում, փարթամանում եր՝ շնորհիվ զինվորական մատակարարումներում, հողերի գնման գործում ունեցած սպեկուլյացիայի։

Այս բոլորի հետևանքն այն յեղավ, վոր Ռոբեսպյերը տապալվեց և մեռավ գիլյոտինի վրա 1794 թվի հուլիսի 27-ին (հեղափոխության որացույցով թերմիդորի 9) *։

* Ցանկանալով իսպառ խզվել անցյալից, հեղափոխական յակոբինները հին որացույցը փոխեցին նոր հեղափոխական որացույցի, վորի ամիսների անունները համապատասխանում եյին բնության յերևույթներին—բնորոշ տվյալ ամսի համար։ Տերմիդորը տաքության ամիսն եր և համապատասխանում եր հուլիսի և օգոստոսի կեսերին։



Հաղթանակը մնաց խոշոր բուրժուազիային, վորի թագավորությունը նորից սկսվեց։

V

Բուրժուազիայի նորից իշխանության գալը հասարակական ու քաղաքական կյանքում նշանավոր դարձավ մեծագույն ռեակցիայով։ Ներքին կռիվներով ուժասպառված մանր բուրժուազիան չկարողացավ դիմադրավել այդ ռեակցիային։ Հին հեղափոխականներն այժմ մոռացվեցին։ Հեղափոխական որենքներն իրար հետևից վոչնչանում եյին։ Փակեցին յակոբինների ակումբը, վերացրին մաքսիմումի և սեկցիոն նիստերի մուտքավճարի որենքը, տերերին վերադարձրին նրանցից խլած համայնական հողերը, արձակեցին Հեղափոխական Տրիբունալը, թուլացրին տերրորը։ Յեվ դրա փոխարեն փարթամ կերպով ծաղկեց սպիտակ տերրորը, վոր նախկին հեղափոխականների, գլխավորապես յակոբինների դեմ գործադրում եյին ունևոր յերիտասարդների բանդաները։ Հեղափոխության առաջնորդներից շատերին դատի ու մահապատժի տվին, լավագույն դեպքում աքսորեցին։

Իրերի այս դրությունն արձանագրված է նոր սահմանադրության մեջ, վոր Կոնվենտը մշակեց 1795 թվին, իր ցրումից առաջ։ Այս սահմանադրությունից միանգամայն պարզ է, վոր իր գոյության վերջին տարիներում Կոնվենտն այլ ևս հեղափոխական ժողով չեր, այլ պարզ ռեակցիոն մի մարմին։

Սահմանադրությունը վերացնելով ընդհանուր ընտրական իրավունքը, նորից ցենզ մտցրեց, այն ել բավական պատկառելի, և վերականգնեց յերկաստիճան ընտրություններն ու յերկպալատյան սիստեմը։

Վորովհետև նոր սահմանադրության համաձայն գործադիր իշխանությունը պատկանում եր հին դիրեկտորներին, այդ պատճառով ել այս ռեժիմը կոչվեց Դ ի ր ե կ տ ո ր ի ա։

Հափշտակիչ և սպեկուլյանտ խոշոր բուրժուազիայի համար Դիրեկտորիայի շրջանը վոսկեդար եր։ Ինչ խոսք, վոր այս դասակարգի տիրապետությունը չափազանց ծանր յեղավ լայն աշխատավոր մասսաների համար։ Անսանձ փարթամության և զեղխության ֆոնի վրա, վոր ապրում եր նոր հասարակության վերնաշերտը, վառ կերպով աչքի յեր ընկնում մասսաների չքավորությունը, վոր իսկապես սոսկալի յեր։

Հափշտակիչ բուրժուազիան ի վիճակի չեր կանոնավորելու յերկրի տնտեսական կյանքը. ուստի դրամն սկսեց ընկնել, իսկ

սահմանված սակագները, որոնք գոնե փոքր չափով պահպանում եյին չքավորության շահերը, վերացվեցին։

Զարմանալի չէ, վոր այսպիսի պայմաններում բանվորական թաղամասերը յերկու անգամ ապստամբեցին նոր տերերի դեմ։ Նրանց լոզունգն եր. «Հաց և 1793 թվի սահմանադրությունը»։

Անցյալի դառն փորձից խրատված, յակոբինների մնացորդները միացան ապստամբած մասսային, ուստի վոչնչացվեցին՝ ապստամբության ճնշումից հետո...

Դիրեկտորիայի գոյությունը չափազանց խախուտ եր։ Նա պահվում եր սեփական սահմանադրության անվերջ փոփոխությունների շնորհիվ։ Մասսաները շարունակում եյին հուզվել. դա նրանց ծանր կացության հետևանքն եր։ Բանվորն ստանում եր օրական 100—120 լիվր. այնինչ հացի փունտն արժեր 50 լիվր։ Իսկ յերբ 1796 թվին թղթադրամը վոչնչացրին, բանվորների ռոճիկը շարունակեցին այդ թղթադրամով վճարել, մինչդեռ մթերքների համար նրանցից հնչուն դրամ եյին պահանջում։

Չպիտի զարմանալ, վոր 1796 թվին մի ահեղ դավադրություն բացվեց, վորի նպատակը գոյություն ունեցող ռեժիմի հիմնովին վերակազմությունն եր։ Այս դավադրության հոգին ու ղեկավարը Գրակխ Բաբյոֆն եր։ Մասսաների աղքատությունը և կառավարող տարրերի փարթամությունը նրան համոզեցին, վոր իզուր ե հուսալ, թե միայն քաղաքական միջոցներով կարելի յե վերակազմել հասարակությունը՝ հօգուտ մասսաների, ուստի հրապարակ յեկավ կոմմունիստական հեղափոխության ծրագրով...

«Ժողովուրդը զրկված ամենաանհրաժեշտից, քաղցած ե,— գրում եր Բաբյոֆը,—իսկ նրա բարության շնորհիվ խնայված հարուստը զվարճանում ե»։ Բաբյոֆի կարծիքով ֆրանսիական հեղափոխությունը նախակարապետն եր մի այլ հեղափոխության, վոր լինելու յե ավելի մեծ, ավելի հաղթական ու վերջնական։

Բաբյոֆի գործակիցներից ու բարեկամներից մեկը գրում եր. «Մենք ուզում ենք ապրել ու հավասար ապրել, ինչպես ծնվել ենք. մենք իսկական հավասարություն կամ մահ ենք պահանջում...» Իսկական հավասարությունն անկարելի յե, քանի գոյություն ունի մասնավոր սեփականությունը. ուստի այդ սեփականությունը պիտի վոչնչանա, նրան պիտի փոխարինի կոլլեկտիվ սեփականությունը։ Այս սկզբունքի և ընդհանուր աշխատանքային պարտականության վրա պիտի հիմնվի նոր հասարակությունը։

Կոմմունիստական գաղափարները Բաբյոֆից առաջ ել եյին արտահայտվել, բայց նրա արժանիքը նրանումն ե կայանում, վոր կարողացավ այդ գաղափարների քարոզը միացնել հեղափոխության



քարոզի հետ՝ վոր այդ քարոզով դիմեց մասսաներին և ապագա կոմմունիստական հասարակության համար ուղիներ հարթեց։

Այսպես՝ «ապստամբության ակտում», վոր պիտի հրատարակվեր հեղաշրջման հենց սկզբում, ասված եր բոլոր պարենխանութների, գանձարանի և փոստի գրավման մասին՝ ապստամբների կողմից, ազգաբնակությանը հաց բաժանելու մասին, հարուստների տներում չքավորներին բնակեցնելու և փոխառության գանձարկղներում յեղած գրավականները նրանց բաժանելու մասին։

Իհարկե՝ քանի վոր այս շրջանում դեռ չեր հասունացել պրոլետարիատը՝ սոցիալիստական գաղափարների իսկական կրողը, Բաբյոֆի ուսմունքում ևս տհաս բաներ շատ կային. այսպես՝ նա այնքան ել պարզ չեր հասկանում դասակարգային պայքարի նշանակությունը, չեր կապում նրա հետ կոմմունիզմի իրագործումը և վոչ մի միտք չեր տեսնում այն կռվում, վոր այդ ժամանակ մղում եյին վարձու բանվորները, թեպետ՝ թե Բաբյոֆը, թե նրա կողմնակիցներն իրենց յենթադրած ապստամբության մեջ հույս եյին դնում թաղամասերի պաշտպանության վրա։

Յեվ ինչպես յերևում ե, դավադրությունը կարող եր հույս դնել Փարիզի բանվորական թաղերի բազմաթիվ բնակչության վրա։ Գոնե վոստիկանատանը ներկայացրած զեկուցումներից մինը խոսում ե Բաբյոֆի բազմաթիվ կողմնակիցների մասին, վորոնք կային արհեստանոցներում։ Ասենք, դավադիրներն ավելի մեծ հույս զորամասերի վրա ունեյին, վորոնց մեջ ել գլխավորապես ագիտացիա եյին տանում։

Ամբողջ կազմակերպությունը բացվեց և ջախջախվեց մի լրտես պրովակատորի շնորհիվ։ Դավադրության առաջնորդները մահապատժի յենթարկվեցին։ Բայց և այնպես Դիրեկտորիայի պես տիրող սպեկուլյանտ խմբակի դրությունը դրանով չամրացավ։ Բուրժուազիայի մասսայական յելույթներից բացի, վոր տիրացել եր հեղափոխության բոլոր բարիքներին, յելույթներ եյին սպառնում նաև միապետականները, վորոնք ավելի ու ավելի եյին գլուխ բարձրացնում։ Այժմ յելույթները վտանգավոր եյին բուրժուազիայի ստացած բարորության և նրա գրաված դրության համար։ Այդ պատճառով բուրժուազիան խորապես տենչում եր ամուր իշխանության ու կարգի, վորոնք նրա համար կապահովեյին այն բոլորն, ինչ վոր ձեռք եր գցել հեղափոխության պրոցեսում,

Այդ փափագն ավելի ևս ամրացավ ռազմաճակատներում կրած մի քանի պարտություններից հետո, ուր մինչ այժմ, սկսած 1794 թվից, հաղթություն հաղթության հետևից եյին տանում։

Այս պարտությունների շնորհիվ Ֆրանսիայի գլխին ստարերկրյա բռնակցիչ զորքերի ներխուժման վտանգը կախվեց։

Այսպես պատրաստվեց նոր հեղաշրջման և միապետության վերականգնման հնարավորությունը։

Մյուս կողմից այն փայլուն հաղթանակները, որ տանում եյին հասարակապետական զորքերը, այդ զորքի կտրված լինելը հասարակական կյանքից, նրանց՝ համարյա առանձին կորպորացիա դառնալը, ասում եյին, թե այդ միապետությունը զինվորական դիկտատուրայի բնույթ պիտի կրի։ Իրոք՝ իրենց հաղթություններով պահպանելով Հանրապետությունը և լսելով յերկրի ներսում կատարվող քաղաքական կռվի մասին, զինվորներն սկըսեցին խորին արհամարհանքով նայել քաղաքական գործիչների վրա, միայն իրենց համարել պետության հենակետ ու պաշտպան։ Նրանց հաղթական գեներալները նրանց աչքում այնպիսի մարդիկ եյին համարվում, վորոնց ինքը բախտն էր նախորոշել իշխելու։ Այժմ այլ ևս այս կամ այն զորաբանակի զինվորներ չկային, այլ կային միայն Հոշի զինվորներ, Կլեբերի զինվորներ, Բոնապարտի զինվորներ։ Պատերազմը նրանց տեսակետից այլ ևս հեղափոխական հայրենիքի համար չեր, այլ միայն հարստության ու փառքի։ Պարզ եր, վոր այսպես դասավորված պայմաններում այս կամ այն հաջողակ գեներալը վաղ թե ուշ՝ կարող եր իշխանությունը ձեռք գցել։ Այդպես էլ արավ ամենատաղանդավոր ու հաջողակ գեներալ Բոնապարտը 1799 թվին։ Այստեղից էլ սկիզբն է առնում Նապոլեոնյան կայսրությունը։ Ճիշտ է, իշխանությունը գրավելով՝ Նապոլեոնն սկզբում պահպանեց սահմանադրական վարչաձևը, և նա միայն յերեք կոնսուլներից մինն եր՝ գործադիր իշխանության լիակատար իրավունքներով, բայց այս սահմանադրական ձևն անկայուն ու շատ թափանցիկ դեկորացիա եր միապետության համար։

Ինչ վերաբերում է սոցիալական հենարանին, վոր պաշտպանություն եր ցույց տալիս Բոնապարտին, պետք է ասել, վոր նրան խանդավառությամբ դիմավորեց կարգի և ուժեղ իշխանության կարոտ բուրժուազիան և հարուստ, հեղափոխության ժամանակ հողերի ամենամեծ մասին տիրացած գյուղացիությունը։

Նոր սահմանադրության մեջ արդեն արձանագրված եր, վոր ազգային ունեցվածքը վոչ մի դեպքում չի կարելի խլել տերերից։ Իսկ հեղափոխության մյուս նվաճումները, վոր ստացել եր բուրժուազիան, նրա վրա հաստատել եր Նապոլեոնյան որենսդրությունը։ Նա որինականացրեց հասարակության բուրժուական կարգը, վորի հիմքը կազմում եյին բուրժուական ընտանիքի ու սեփականությունը։ Այս վերջինին եյին նվիրված Նապոլեոնյան կոդեքսի 2200 հոդվածներից ամբողջ ութհարյուրը։

Իր քրեյական որենսդրությամբ Նապոլեոնն այնպիսի որենքներ հրատարակեց, վորոնք արգելում եյին գործադուլները. իսկ զանազան վոստիկանական կարգադրություններով նա հետզհետե նեղել սկսեց բանվորներին ու արհեստավորներին։

Իր վողջ արտաքին քաղաքականությամբ նա իրագործեց խոշոր բուրժուազիայի սպասելիքները։ Նրա զորքերի հաղթանակները նոր շուկաներ բացեցին ֆրանսիական ապրանքների համար։ Այդ ամբողջ կռվի նպատակը, վոր ունեցավ Նապոլեոնն իր թագավորության ընթացքում, Անգլիային կոտրելն եր. Անգլիային, վոր ֆրանսիական վաճառականների ու ֆաբրիկանտների մշտնջենավոր մրցակիցն եր։ Յեվ մինչդեռ Նապոլեոնը լավ ու հաջող եր տանում այն ամենը, ինչ վոր խոշոր բուրժուազիան եր պահանջում, այսինքն հաղթանակներ դուրսը և ներսում՝ մասսաների սանձահարում, նա այդ բուրժուազիայի սիրելին եր։

Բայց յերբ ռազմական պայքարի փայտը թեքվեց մյուս կողմը, և բուրժուազիան ավելի շատ տուժեց, քան շահվեց, յերբ դրա հետ միաժամանակ խոշոր կենտրոններում գործազրկությունն սպառնական չափերի հասավ, բուրժուազիան իր կուռքը հանգիստ խղճով հանձնեց դաշնակիցներին՝ անգլիացիներին, պրուսացիներին և ռուսներին։

Դաշնակիցներն իրենց զինվորների սվինների օգնությամբ Ֆրանսիայի գահը բարձրացրին գլխատված Լյուդովիկոս XVI յեղբորը, Լյուդովիկոս XVIII, վորին հեղափոխությունն արտաքսել եր։ Այսպես կատարվեց մինչև հեղափոխությունը թագավորող Բուրբոնների արքայական տան ռ ե ս տ ա վ ր ա ց ի ա ն։ Սակայն այս ռեստավրացիան բնավ նախահեղափոխական շրջանի կարգերի ռեստավրացիա չեր։ Հեղափոխության կատարած գործն սպանելն այլևս անկարելի յեր, ինչպես և նրա նվաճումների վրա խաչ դնելը։

---

## II

# 1830 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Յեվ այսպես՝ Նապոլեոնին փոխարինեցին Բուրբոնները, այն արքայատոհմը, վորի ներկայացուցիչն ընկավ հեղափոխության հարվածների տակ։ Թվում եր, թե հեղափոխության նվաճումները վերջացան։ Բուրբոններից անմիջապես հետո յեկող հակահեղափոխական ազնվականները, վորոնք մինչ այդ եմիգրանտներ եյին, հենց այդպես ել կարծում եյին։ Այս մարդիկ «վոչինչ չսովորեցին և վոչինչ չմոռացան»։ Բայց նույնիսկ ամենաբութ ռեակցիոներներն անուժ եյին յետ տալու պատմական զարգացման անիվը։ Բուրժուազիան՝ արդեն աչքի ընկնող ուժ եր, ուստի նույնիսկ Բուրբոնների կառավարությունը նրան հաշվի յեր առնում։ Նոր սահմանադրությամբ ամենախոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներն իշխանությունը բաժանում եյին հողատերերի հետ։ Այս սահմանադրության համաձայն յերկրի քաղաքական կյանքին մասնակցել կարող եյին միայն 90 հազար մարդ, այնքան բարձր եր ընտրական ցենզը։ Իսկ ըստ նոր սահմանադրության կամ, ինչպես կոչվում եր, «խարտիայի»՝ պալատի անդամ կարող եյին ընտրվել միայն 15 հազար հոգի։

Ազնվականության ռեակցիայի վերահաստատումից խոշոր բուրժուազիան քիչ բան եր կորցնում։ Հաշտությունը, վոր հաջորդեց Նապոլեոնի անկմանը, առևտուրը կենդանացրեց։ Կառավարության կնքած փոխառությունները մեծ գումարներ լցրին հարուստների գրպանները, իսկ դաշնակից զորքերի* հետ Փարիզ յեկած հարուստները նրա համար բառի բուն նշանակությամբ վոսկու աղբյուր եյին։

Ռեստավրացիայի ժամանակը խոշոր արդյունաբերության յերևալու սկիզբն եր Ֆրանսիայում. ինչպես նաև մեքենաներ ներմուծելու, տեխնիկական կատարելագործությունների սկիզբն՝ ընդհանրապես։ Այս պրոգրեսն իր ամբողջ ծանրությամբ, հարկավ, բանվորների և արհեստավորների ուսերին եր ընկնում, վորովհետև մեքենաները կրճատեցին զբաղված բանվորների թիվը և իջեցրին նրանց որավարձը։

* Ռուս մեծ իշխան Կոնստանդինն իր յեղբոր հետ միասին քառասուն որում ծախսեց մեկ ու կես միլլիոն ռուբլի։



Նույն լայն մասսաների ուսերին եյին ընկած նաև այն գումարները, վորոնցով պատմությունն աշխատում եր, ինչպես այն ժամանակ եյին ասում, «բուժել վերքերը» հեղափոխությունից տուժած ազնվականության՝ վորևե կերպ փոխարինելով ֆեոդալական տուրքերն ու յեկամուտները—վաղուց իսպառ վերացված։ Վերջ ի վերջո ազնվականությունը հաջողեցրեց պետությունից մեկ միլլիարդ ֆրանկ պոկել՝ վորպես վարձատրություն հեղափոխության որոք իրենցից խլված հողերի։

Խաղաղությունն ել ոգուտ չբերավ բանվորներին ու արհեստավորներին, վորովհետև պատերազմների վերջանալու հետ մեծ քանակությամբ բանվորական ուժ հրապարակ նետվեց, վորի հետևանքով որավարձն ընկավ։

Բայց տնտեսական ձախորդություններից, բանվորների ու արհեստավորների և ընդհանրապես ազգաբնակության՝ լայն խավերի վրա կատարյալ քաղաքական իրավազրկություն ծանրացավ։ Անհանդուրժելի եյին նաև հին կրոնական խավարամտության պտուղները։ Սրան նպաստում եր այն հանգամանքը, վոր հին ազնվականության հետ միասին վերադարձել եր նաև քահանաների նախկին նշանակությունը։ Սրանց ձեռքն եյին անցել դպրոցն ու գրականությունը։ Պետք ե զարմանալ, վոր այդքան հակասություններով բզկտված մի հասարակության մեջ, վորի անդամների մեծ մասը զրկված եր քաղաքական իրավունքներից, այնպիսի մտածողներ յերևան յեկան, վորոնք անխնա քննադատում եյին այդ հասարակությունը. մտածողներ, վորոնք պարզ կերպով տեսնում եյին արդյունաբերական-կապիտալիստական շրջանի հենց առաջին քայլերի թերությունները։

Սրանցից առաջին հերթին պիտի հիշել Սեն-Սիմոնին։ Նրան զարմացնում եր, վոր հասարակության «անգործ դասակարգերն (ազնվականներն ու աստիճանավորները) իշխում եյին արտադրող դասակարգերին»։ Նա վերջինների մեջ հասկանում եր ինչպես բուրժուազիային, այնպես ել բանվորներին ու արհեստավորներին։ «Արդյունաբերողն, ասում եր Սեն-Սիմոնը, նա յե, ով աշխատում ե այն նպատակով, վոր կարողանա հասարակության անդամներին մեկ կամ մի քանի նյութական միջոց տալ՝ իրենց պետքերը հոգալու համար»։ Այս պատճառով Սեն-Սիմոնն այն-

պլիսի հասարակության անհրաժեշտություն եր նախանշում, ուր «արդյունաբերողներն» առաջին դասակարգը պիտի դառնային։ Այս հասարակությունը նա «արդյունաբերական սիստեմ» եր անվանում։

Արդյունաբերության սիստեմում տնտեսական բնագավառի ամբողջ իշխանությունը պետք է պատկաներ արդյունաբերողներին, իսկ մտավոր կյանքի բնագավառում՝—գիտուններին։ Ապագա հասարակության հիմնական սկզբունքն աշխատանքը պիտի լինի. բոլոր արտոնություններն ու ժառանգական իրավունքները պիտի վերանան և փոխարինվեն վարձատրությամբ՝ ըստ ընդունակությունների։ «Արդյունաբերական սիստեմի» հասարակության ամբողջ տնտեսական կյանքը պիտի ընթանա վորոշ ծրագրով և ղեկավարվի մի կենտրոնից—«ինդուստրիալների խորհրդից», ուր պիտի մտնեն «ամենանշանավոր հողատերերը, ֆաբրիկանտները, վաճառականներն ու բանկիրները»։ Ամբողջ տնտեսական կյանքի պլանավորելն ապագա հասարակությանը հնարավորություն կտա խուսափել միջոցների անօգուտ վատնումից, վերացնելու մրցումը և ազգաբնակության մի մասի պայքարը մյուսի դեմ։ Այս հասարակակարգում վարչական ադմինիստրատիվ աշխատանքը զրոյի կհասնի, «վորովհետև ամբողջ քաղաքական ու հասարակական սիստեմը կձգտի ընդհանուր ծաղկած վիճակի»։ «Արդյունաբերական ռեժիմն, ասում է Սեն-Սիմոնը, այնպիսի ռեժիմ է, վոր կարող է մարդկանց ամենամեծ ազատությունը տալ—ընդհանուր անհատական։

Իր նոր հասարակության կառուցման գործում Սեն Սիմոնը սոցիալիստ* չեր և միայն ռացիոնալիզացիայի յենթարկված ու բարելավված կապիտալիստական հասարակակարգ եր քարոզում։ Ինչ վերաբերում եր նրա այն հարաբերությանը, թե արդյունաբերական սիստեմը պրոլետարիատի բարեկեցությունը կլավացնի», պիտի ասել, վոր նա չեր հակասում Սեն-Սիմոնի ծրագրով առաջանալիք հասարակության դասակարգային բնույթին, վորովհետև այդտեղ պիտի պահպանված լինեն և՛ շահը, և՛ արդյունքը, և՛ «լավագույն արդյունաբերողների» տիրապետությունը։

Սեն-Սիմոնն արդյունաբերական դասակարգերը հակադրելով անգործ, պարապ դասակարգերին, արդյունաբերական դասակարգերի ներսում հակասություններ չեր տեսնում։ Այստեղ, անշուշտ,

* Սեն-Սիմոնի վարդապետության մեջ յեղած մի քանի սոցիալիստական ելեմենտներն ընդգծեցին և ուժեղացրին նրա աշակերտները, սեն-սիմոնիստները, վորոնք Սեն-Սիմոնի թեորիայից զգալի կերպով տարբերվող վարդապետություն ստեղծեցին։



դեր եյին խաղում ռեստավրացիայի ժամանակի պայմանները, յերբ՝ և՛ բանվոր դասակարգը, և՛ համարյա ամբողջ բուրժուազիան միատեսակ իրավազուրկ վիճակ ունեյին։ Պրոլետարիատի և նրա պայքարի նշանակությունը Սեն-Սիմոնը չեր հասկանում։ Սա, անշուշտ, առաջանում եր նրանից, վոր Սեն-Սիմոնի ժամանակի պրոլետարիատը—խեղճ, ճզմված վոստիկանական ռեժիմի սղմիչում, գործազրկությունից տառապած, անկազմակերպ և քաղաքական մեծագույն ապատիայի՝ անտարբերության մատնված—այնպիսի տարր չեր հանդիսանում, վոր գործունեությունը հիմք ընդունելով, այն ժամանակի մտածողը, նույնիսկ կապիտալիստական հասարակության բոլոր ցավերն ու թշվառությունները պարզ տեսնող մտածողը, կարողանար նոր հասարակություն կառուցել։ Հենց այս հանգամանքն էլ ամբողջովին ազդեց այդ ժամանակի մի այլ սոցիալական մտածողի՝ Ֆուրյեյի կառուցվածքի վրա։ Ֆուրյեն անխնա քննադատում է ժամանակակից հասարակությունը։ Նրա քննադատությունն անհամեմատ ավելի կծու յե, սուր ու մանրազնին, քան Սեն-Սիմոնինը։ Ֆուրյեյի կարծիքով՝ կապիտալիստական հասարակության գլխավոր չարիքը կայանում է նրանում, վոր հասարակությունն իր գլխավոր նպատակը—մարդկանց յերջանկություն տալ—չի իրագործում։ Սա առաջանում է նրանից, վոր մարդու մեջ բուն դրած բուռն ցանկությունները կապիտալիստական հասարակության խորքերում չեն դրսեվորվում ու զարգանում։ Այս հանգամանքի պատճառն աշխատանքի կազմակերպությունն է, վոր հիմնված է անհատական կամ, լավագույն դեպքում, ընտանեկան սկզբունքի վրա։ Այս պատճառներով ժամանակակից իրավակարգը, վորին Ֆուրյեն քաղաքակրթության իրավակարգ է անվանում, պիտի փոխարինե համերաշխության (гармония) իրավակարգը՝ կառուցված ասսոցիացիայի սկզբունքի վրա՝ աշխատանքի բնագավառում։ Այս իրավակարգում, վորի ըջիջը պիտի կազմեն աշխատանքային կազմակերպությունները, 1,500—1,600 մարդ փալանգները*, աշխատանքը բազմազան և գրավիչ կլինի ու կնպաստի մարդկային բուռն ցանկությունների յերևան գալուն և զարգանալուն։ Դրա շնորհիվ այդ ցանկությունները, վորոնք ներկա հասարակության մեջ չարիքի և արատների աղբյուր են, կդառնան բախտավորության և վայելքի աղբյուր։

Ֆուրյեյի ամբողջ ուսմունքը միանգամայն համակրանքով ու կարեկցությամբ է ներշնչված դեպի ստորին աշխատավորա-

* Հին Հունաստանում փ ա լ ա ն գ ա կոչվում եր սեղմ ռազմական շարքը, վոր ավերիչ կերպով գրոհ եր տալիս հակառակորդի վրա։ Ֆուրյեն կարծում եր, վոր իր փալանգաներն ել ավերիչ գրոհ կտան կապիտալիստական իրավակարգին։

կան դասակարգերը: Ֆուրյեն յենթադրում է, վոր շնորհիվ աշխատանքի զարհուրելի կազմակերպության և շահագործման սարսափելի ձևերի, քաղաքակիրթ հասարակության աշխատավորներն ավելի վատթար վիճակ ունեն, քան վայրենին, վոր անհոգ է, ազատ և հակառակ ժամանակակից բանվորի, պարապում է գրավիչ և առողջության համար ոգտակար գործով: Մրցություն, բոլորի հավիտենական կռիվ՝ բոլորի դեմ, մարմինն ավերող և հոգին բթացնող աշխատանք, տնտեսական կյանքի քաոս և այս բոլորի հետևանք կազմող ճգնաժամեր, հասարակության մի բևեռում հարստության կուտակումն, մյուսում՝ աղքատություն. ահա այն հիմնական գծերը, վորոնք բնորոշում են քաղաքակրթության իրավակարգը: Բայց Ֆուրյեն ես լավ տեսնելով իրեն ժամանակակից հասարակության բոլոր ցավերը, չէր հասկանում նրա զարգացման տենդենցները: Ճիշտ է, նա հստակությամբ նախագուշակում էր սոցիալիստական հասարակության անցնելու անհրաժեշտությունը, վորովհետև նրա փալանգաները պիտի հիմնվեյին արտադրողական միջոցները համայնացնելու և կոլեկտիվ աշխատանքի վրա, բայց կապիտալիստական հասարակության ամենագլխավոր չարիքը նա տեսնում էր առևտրի մեջ, աչքաթող անելով արդյունաբերական շահագործումը: Այստեղ, անշուշտ, յերևում է այդ շրջանի Ֆրանսիայի տնտեսական հարաբերությունների տհասությունը: Առևտրական դրամագլխի շահագործումը մանր արտադրողին և սպառողին ավելի շուտ էր յերևում, քան խոշոր արդյունաբերության շահագործումը՝ պրոլետարիատին:

Մենք արդեն ասել ենք, վոր իր կառուցումներում Ֆուրյեն պրոլետարիատի աշխատանքից չէր յելնում, ուստի իր ծրագրերի իրագործումն էլ չէր կապում՝ վոչ հեղափոխական շարժման, վոչ էլ բանվորների վիճակը բարելավելու համար մղված կռվի հետ: Քիչ է այս. անկարող լինելով իր քննադատած հասարակության խորքերում տեսնել այն դասակարգը, վորին պետք է վոր դիմեր իր պրոպագանդայով, Ֆուրյեն ցանկանում էր իր նախագծած իրավակարգը գրավիչ դարձնել բոլորին: Այս պատճառով՝ լինելով սոցիալիստական հասարակության քարոզիչ, Ֆուրյեն նրանում պահպանել է ուզում կապիտալիստներին վարձատրելը: Անտարբեր լինելով դեպի քաղաքական իշխանության խնդիրները, Ֆուրյեն պահպանում է փայլուն տիտղոսներն ու կոչումները: Այս բոլորն արվում է, վորպեսզի կարելի լինի դեպի ապագա հասարակության նախագիծը գրավել հարուստ իշխանավոր մարդկանց:

Ֆուրյեյի վարդապետության այս բոլոր առանձնահատկությունները, նրա կառուցվածքի ամբողջ նրբությունը պիտի բացատրել նրանով, վոր նրա որոք կապիտալիզմը դեռ իր զարգացման տենդենցները չէր դրսևորել, պրոլետարիատն իբրև կապիտալիստական հասարակության գերեզմանափոր դեռ չէր կազմակերպվել: Այս պատճառով Ֆուրյեն փոխանակ ապագա իրավակարգը նկարագրելու, ստիպված էր իր յերևակայության ուժին դիմելու. իսկ նրա ստեղծագործման ճանապարհները գծելու համար ստիպված էր մասնավոր նախաձեռնության վրա հենվել:

Մանր բուրժուազիայի և բանվորների անբավականությունն սկսեց յերևան գալ XIX դարի քսանական թվականներից: Այդ անբավականությունն արտահայտվում էր ցույցերով, յերբեմն նաև հեղափոխական բռնկումներով, վորոնց ղեկավարողը բազմաթիվ գաղտնի հասարակապետական ընկերություններն էին:

Հարկ կա ասելու, վոր այդ ժամանակի պրոլետարիատը չափազանց անգիտակից էր: Այս պատճառով հասարակապետական ընկերությունները լրացվում էին գլխավորապես ինտելիգենցիայի ներկայացուցիչներով և մանր բուրժուազիայից յելածներով: Ընդհատակյա հասարակապետականների իդեալը, վորին ձգտում էին, 1793 թ. հասարակապետությունն էր:

Ռեստավրացիայի առաջին թագավորի որոք խոշոր բուրժուազիան և ազնվականությունն՝ այսպես թե այնպես, իրար հետ հաշտվում էին: Նրա մահով և Կարլոս X գահ բարձրանալով, վոր ամբողջապես սև հարյուրակային տերտերների ազդեցության տակ էր գտնվում, պայմանները փոխվեցին: Թագավորն ու նրա շրջապատող կլիկան վորոշեցին պատմության հակառակ գնալ: Նրանց ցանկությունն էր վերականգնել մինչ հեղափոխական ռեժիմը:

Վորովհետև վոչ մի դասավորում և ճնշում, վոր պալատի ընտրությունների ժամանակ կիրառեց կառավարությունը, չոգնեցին, և պալատը բուրժուազիայի ներկայացուցիչներ անցան, վորոնք ռեակցիոն կառավարության նկատմամբ ոպոզիցիոն կերպով էին տրամադրված, ուստի Կարլոս X վորոշեց հեղաշրջում առաջ բերել:

1830 թվի հունիսին թագավորական հրամանի կարգով արձակվեց նորընտիր, բայց դեռ վոչ մի նիստ չունեցած պալատը, վոչնչացվեց առանց այն էլ մամուլի աննշան ազատությունը և հրատարակվեց ընտրական նոր որենք, վորի ուժով ընտրողներ կարող էին լինել միայն հողատերերը: Պիտի նկատել, վոր դրանից դեռ յերեք տարի առաջ կառավարությունը վոչնչացրել էր բուրժուական ազգային գվարդիան:

Սա մարտահրավեր էր խոշոր բուրժուազիային. բայց պիտի ասել, վոր վերջինս այնքան էլ թեթև սրտով չդիմեց հեղափոխու-

թյան։ Բաստիլիան գրավելու սարսափելի որերը՝ ոգոստոսի 10-ը և մայիսի 31-ը, փարիզյան չքավորության մասսայական յելույթները նրանց աչքի առաջ եյին։

Սակայն մինչև բուրժուազիայի մի մասը պատրաստ եր՝ յեթե վոչ անձամբ անցնելու բարրիկադները, գոնե իր բանվորներին ու արհեստավորներին ուղարկելու այնտեղ։ Առանձնապես ռազմատենչ եյին ուսանողներն ու լրագրերի հրատարակիչները, վորովհետև մամուլի մասին յեղած դաժան որենքը զրկել եր նրանց յեկամտից, ուստի հենց սրանք ել առաջինն արձակեցին իրենց գրաշարներին, վորոնք ուսանողական յերիտասարդության հետ միասին կազմեցին փողոցային կռվի մասնակիցների առաջին կադրը։

Յերբ կռիվն արդեն բորբքված եր, յերբ ամեն տեղ պայթում եյին հրազեններն ու վորոտում եյին՝ «Կորչի՜ Կարլոսը, կորչե՜ն Բուրբոնները», բուրժուական քաղաքագետները խորհրդակցում և ստեղծված դրությունից որինական յելք եյին վորոնում։ Այս խորհրդակցությունները շարունակվեցին ամբողջ յերեք որ, և այդ յերեք որն ել կռիվ եր փողոցներում։ Պոլիտիկանները մտածում եյին լեգալ բողոքի մասին, այլ և ա՛յն մասին, թե ի՞նչ անեն, վոր հեղափոխությունը լայն ծավալ չընդունի։

Յերբ յերեք որյա փողոցային կռիվը վերջացավ ժողովրդի հաղթությամբ և թագավորի փախուստով, պոլիտիկան բուրժուաներն ամեն կերպ աշխատեցին իրենց շահերին ծառայեցնել այն հաղթությունը, վորն իրենց տարածը չեր։ Առաջին հերթին նրանք աշխատեցին զինաթափել բարրիկադային մարտիկներին։ «Նշանազգեստ կրող բուրժուաները (ազգային գվարդիան) բանտարկում եյին կուրտկավոր բանվորներին, նույնիսկ նշանազգեստ չունեցող բուրժուաներին»։

Սիրտ չարին ժամանակավոր կառավարություն ստեղծել, վորովհետև դա խիստ հեղափոխական քայլ եր համարվում. ամենաչափավոր մարդկանցից քաղաքային հանձնաժողով կազմեցին. իսկ ազ աբնակությանը դիմեցին հետևյալ կոչով, վոր չափազանց վիրավորական եր հաղթող հեղափոխականների համար. «Փարիզում ներկա յեղող պատգամավորները պիտի ժողովվեյին կասեցնելու անձի անձեռնմխելիության ու սեփականության (!) սպառնացող լուրջ վտանգը։ Հանձնաժողով ե կազմված, վորին, վորև կանոնավոր կազմակերպություն չլինելու պատճառով, հանձնված ե բոլորի շահերը պաշտպանելու գործը...»։

Վորովհետև այս հանձնաժողովը չեր կարող առ միշտ գոյություն ունենալ, բուրժուական քաղաքագետները պիտի մտածեյին



մշտական իշխանություն կազմելու մասին։ Պահեստում գահի թեկնածու ունեյին. մի մարդ, վոր շատ սերտ կերպով եր կապված խոշոր ֆինանսիստների հետ, դա հեղափոխության ձեռքով գահընկեց յեղած թագավորի ազգական Որլեանի դուքսն եր։ Թռուցիկներ կազմեցին, վորոնց մեջ Տյերը, կոմմունայի ապագա դահիճը, փառաբանում եր նոր թեկնածուին, վորին առաջ եյին քաշել բիրժևիկները, փառաբանում եր նրան՝ վաճառողի ճարպիկությամբ, վոր լավորակ ապրանք ե առաջարկում։

Այդ թռուցիկից յերևում եր, վոր Ֆրանսիայում հասարակապետություն անկարելի յե, վորովհետև նա յերկիրը կմատներ սարսափելի խռովությունների, վոր Որլեանի դուքսը լցված ե առաքինի հատկություններով, նվիրված ե հեղափոխությանը և մի ժամանակ կռվել ե ժեմապի տակ*։

Հասարակապետականները փորձեցին ընդդիմանալ, ժողովուրդը և բարրիկադային մարտիկները զայրագին փնթփնթում եյին, նրանց շրջանում թռուցիկ եր պտտում, վորտեղ ասված եր, թե Ֆրանսիան ազատ ե և սահմանադրություն ե ուզում, թագավորական իշխանություն այլևս չկա և թե յերկիրը պիտի կառավարեն ժողովրդից ընտրվածները... Յերբ դուքսն իր համաձայնությունը տվավ՝ գրավելու ֆրանսիական գահը, և յերբ այս մտքով կոչ ուղղեց փարիզցիներին, կոչը ցրող մարդկանց ժողովուրդն ամեն տեղ շատ անբարյացակամ վերաբերվեց։ Նոր յերևացող թագավորն իր հանդիսավոր մուտքի ժամանակ բանվորների և արվարձանների կողմից նույնպես անբարյացակամ վերաբերմունքի հանդիպեց։ Բայց պիտի ասել, վոր իրենց արքայական իշխանությունը մի կողմ նետող ժողովուրդը շատ եր անկազմակերպ։ Հասարակապետականները սակավաթիվ եյին, իսկ գործունյա բուրժուազիան, վոր նոր թագավորին նոր եր գահ բարձրացրել, իր ծրագիրն իրագործելում շատ եր համառ։

«Մենք զիջեցինք, հայտարարեց հասարակապետականների առաջնորդներից մեկը, — վորովհետև անուժ եյինք. դժվար եր «կեցցե խարտիան» աղաղակող ժողովրդին ներշնչել, թե հաղթությունից հետո նրա առաջին գործը պիտի լիներ զինվել՝ այդ խարտիան վոչնչացնելու» (վոր որինականացրել եր սահմանադիր միապետությունը)։

Իրոք վոր ի նկատի ունենալով հասարակապետականների սակավաթիվ լինելը և ժողովրդի անգիտակցությունը, դժվար եր

* Ժեմապի տակ հեղափոխական զորքերն առաջին խոշոր հաղթանակը տարան։

համոզել ժողովրդին՝ դուրս գալու հենց այն սահմանադրական խարտիայի դեմ, վորի օգտին նա մի փոքր առաջ արյուն էր թափել:

Յեվ այսպես 1830 թ. հեղափոխությունը Ֆրանսիայի համար լրումն էր այն բոլորի, վորի հիմքը դրված էր 1789 թվին: Այս հեղափոխությունը միայն ամրացրեց բուրժուազիայի իշխանությունը, իսկ Յեվրոպայի մյուս յերկրների համար բուրժուական հեղափոխությունների սկզբնավորության յելակետ դարձավ: Նապոլեոնի անկումից հետո ամբողջ Յեվրոպայում ուժգին ֆեոդալ-ազնվապետական ռեակցիա սկսվեց, վոր հենց Ֆրանսիայում ամենից թույլ արտահայտվեց, այնինչ մյուս յերկրներում նրա ծանրությունը զարհուրելի յեղավ:

Ռեակցիայի ուժի արտաքին արտահայտությունն էր բոլոր յեվրոպական թագավորների կազմած «սրբազան դաշինքը». Դաշինք, վորի հոգին Մետերնիխն էր—Յեվրոպայի ամենառեակցիոն յերկրի—Ավստրիայի կառավարության գլուխը, կազմակերպողը՝ ռուսական Ալեքսանդր I թագավորը, իսկ նպատակը՝ նախահեղափոխական շրջանի կարգերի պահպանությունը: Այս ռեակցիոն ամրության մեջ 1830 թ. հեղափոխությունն առաջին ճեղքվածքն էր: Այնուհետև իտալացիք գլուխ բարձրացրին իրենց հարստահարողների՝ ավստրիացիների դեմ, լեհերը՝ ռուսների դեմ, բելգիացիք բաժանվեցին Հոլանդիայից, վորին միացրել էին առանց իրենց համաձայնության և այլն: Խառնակություններ առաջացան նաև Գերմանիայում:

Այս ելույթների ազգային բնույթը թող մեզ չշփոթեցնի. բուրժուական հեղափոխությունը միաժամանակ պետք է լիներ նաև ազգային և պետք է ստեղծեր ազգային-բուրժուական պետություններ: Ֆրանսիայի հասարակապետականների և առաջադեմ բուրժուազիայի առաջ դրվեց հեղափոխականների օգտին միջամտելու խնդիրը:

Վորովհետև Լուի-Ֆիլիպ Օռլեանցու թագավորության օրոք բարրիկադային զինված մարտիկների ներկայությամբ չէր կարելի միայն դրամական քսակներից (խոշոր հարուստներից) կառավարություն կազմել, ուստի նոր թագավորի առաջին նախարարությունը կազմված էր ինչպես խոշոր, այնպես էլ միջին բուրժուազիայի ներկայացուցիչներից: Այս նախարարության կազմի մեջ փոփոխություն առաջ յեկավ յերեք ամսից հետո, յերբ փարիզյան մասսաները նորից իրենց ձայնը տվին: Խոշոր անկարգություններ տեղի ունեցան, վորից հետո խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները հրաժարական տվին: Միջին բուրժուազիայի



ներկայացուցիչներով մնացած նախարարությունը պատրաստ էր պաշտպանելու յելնել մյուս յերկրներում կատարվող հեղափոխությանը:

Բայց խոշոր բուրժուազիան և նրա արբանյակ թագավորը հեղափոխական պատերազմ բնավ չէյին ցանկանում: Այս պատճառով վորպես պատասխան նախարարության ցանկությանը՝ սկսել այդ պատերազմը, բորսան պետական թղթերի գներն իջեցրեց, վոր աչքի ընկնող շփոթություն առաջ բերեց բոլոր գործերում՝ ընդհանրապես և տնտեսական կյանքում՝ մասնավորապես: Գործազրկության աճումն ուժգին հարված հասցրեց բանվորներին, տնտեսական կյանքը կանգ առավ, վորից գյուղացիությունն էլ մեծ չափով տուժեց. ուստի այս յերկու դասակարգերն էլ խիստ թշնամաբար տրամադրվեցին դեպի կառավարությունը: Մի խոսքով՝ միջին բուրժուազիայի կառավարությունն ընդհանուր անբավականության սպառնալիքի տակ ստիպված յեղավ հրաժարական տալ (մարտ, 1831 թ.) և իշխանությունն անցավ խոշոր բուրժուազիային:

Հարևան յերկրների հեղափոխականների օգտին միջամտելու հարցն անմիջապես մի կողմ թողնվեց և այնպիսի ընտրական օրենք հրատարակվեց, վորով քաղաքական կյանքը մատչելի էր դառնում միայն խոշոր բուրժուազիային:

Սրանով էլ վերջացավ Ֆրանսիայի 1830 թվի հեղափոխությունը, վոր առաջացրին բանվորները, արհեստավորները, մասամբ էլ ուսանող յերիտասարդությունը: Նա գահընկեց արավ ազնվականության թագավորին, բայց ամբողջովին օգտագործվեց խոշոր բուրժուազիայի կողմից՝ հօգուտ սրա տիրապետության ամրապնդման:

## III

# ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

## I

Այն ժամանակ, յերբ Ֆրանսիան յերկու հեղափոխությունների միջոցով յեկավ հանգավ բուրժուական պետության, հարևան Անգլիայում արդեն թնդում եյին բանվորական հեղափոխական վորոտի առաջին դղրդյունները: Ճիշտ է, պրոլետարական հեղափոխության առաջին բռնկումները հետևանքներ չունեցան, նրանց վիճակված եր մարել, վորպեսզի շատ յերկար ընդմիջումից հետո նորից բռնկվեն: Բայց ինչ ել լինի, յերեսնական թվականների յերկրորդ կեսում Անգլիայում մենք բանվորական շաժման լայնածավալ ալիք ունինք:

Սրանում, ի հարկե, հրաշագործ ու անհասկանալի վոչինչ չկա: Յեվրոպական մյուս պետությունների շարքում Անգլիան տնտեսական ու քաղաքական տեսակետից բոլորովին բացառիկ դիրք ուներ: Նրա տնտեսական դրության առանձնահատկությունները կախված եյին այն աշխարհագրական առանձնահատուկ պայմաններից, վորոնց մեջ գտնվում եր Անգլիան: Ընկած լինելով հարմար նավահանգիստներով հարուստ կղզու վրա, Ամերիկայի գյուտից հետո Անգլիան հայտնվեց առևտրական ճանապարհների հանգույցի վրա, և շատ շուտով, ճիշտ է, վոչ առանց կռվի, առաջին տեղը գրավեց այն յերկրների շարքում, վորոնք շահագործում ու կողոպտում են ուրիշներին:

Գաղութները կողոպտելու շնորհիվ անգլիական առևտրականների ձեռքում հսկայական կապիտալ կենտրոնացավ, վորոնք բառի բուն նշանակությամբ այրում եյին նրանց գրպանները՝ գործադրություն վորոնելով: Այս կապիտալներն անհրաժեշտ հիմք հանդիսացան խոշոր ինդուստրիայի շենքը կառուցելու համար:

Բայց ազատ, խոշոր կապիտալների (այսպես կոչված սկզբնական կուտակում) առաջ գալու պրոցեսսին զուգընթաց՝ տեղի ունե-



ցան նաև ուրիշ պրոցեսսներ, վորոնք տնտեսական կարգեր առաջ բերելու համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին: Այդ տնտեսական կարգերն ուրիշ յերկրներում յեղածներից տարբեր եյին: Այստեղ ամենից առաջ պետք է մատնանշել հեղաշրջումը՝ հողային հարաբերությունների բնագավառում: Անգլիայի կլիմայական պայմաններով պետք է բացատրել նրա գեղեցիկ արոտները՝ հյութեղ և մշտադալար խոտերով:

Այս հանգամանքը դեր խաղաց այն ժամանակ, յերբ հարևան Ֆլանդրիայում (ներկայիս Բելգիան) զարգացավ մահուդի արդյունաբերությունը: Հենց այդ ժամանակ ել Անգլիայում ձեռնտու դարձավ վոչխարաբուծությունը՝ բրդի համար, վոր պետք եր ֆլանդրիական մահուդի արդյունաբերությանը:

Սրանից ամենամեծ ոգուտն ստանում եյին անգլիական խոշոր յերկրագործները, վորոնք սկսեցին խլել հողը մանր հողատերերից: Ամբողջ գյուղեր ու ավաններ վոչնչացան և փոխարինվեցին վոչխարների հոտերով, ինչպես այդ ժամանակի գրողներից մեկն եր վողբում՝ «վոչխարներն ուտում եյին մարդկանց»:

Այստեղից է սկսվում ազատ անգլիական գյուղացիության վոչնչացման պրոցեսսը, գյուղացու արտադրության միջոցից (հողից) զրկվելու պրոցեսսը և ըստ Մարքսի՝ նրա «թռչունի պես ազատ պրոլետար դառնալը»:

Սրա հետ միաժամանակ ավելի ու ավելի եյին զարգանում առևտուրն ու արդյունաբերությունը, ավելի ու ավելի յեն բազմանում այն մարդիկ, վորոնք գյուղատնտեսական մթերքների կարիք են զգում: Իբրև այս դրության հետևանք՝ մեծ մասշտաբի գյուղատնտեսությամբ պարապելը հետզհետե ավելի ու ավելի ձեռնտու զբաղմունք եր դառնում: Միանգամայն բնական է, վոր կալվածատերը պետք է աշխատեր իր հողերն ավելացնել՝ այս կամ այն ձևով խլելով գյուղացիներից: Վերջիններս, թեպետ անձամբ ազատ եյին, սակայն խոշոր հողատերերի հանդեպ բոլորովին անզոր եյին, վորովհետև սրանց կողմն եր պարլամենտը, վոր Անգլիայի իսկական կառավարությունն եր՝ կազմված նույն կալվածատերերից և խոշոր առևտրականներից: Այսպիսով՝ խոշոր կապիտալիստների կողքին, վոր անհրաժեշտ եր խոշոր արդյունաբերություն ստեղծելու համար, հանդես յեկան ազատ, արտադրության միջոցներից զուրկ մարդիկ—բանվորական ույժ վաճառողները,—ապագա պրոլետարները:

Մանր, ինքնուրույն արտադրողների արտադրական միջոցներից զրկվելը կատարվեց վոչ միայն գյուղատնտեսության բնագավառում, այլ և արդյունաբերական աշխատանքի բնագավառում:

## III

# ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

## I

*Այն ժամանակ, յերբ Ֆրանսիան յերկու հեղափոխությունների միջոցով յեկավ հանգավ բուրժուական պետության, հարևան Անգլիայում արդեն թնդում եյին բանվորական հեղափոխական վորոտի առաջին դղրդյունները։ Ճիշտ ե, պրոլետարական հեղափոխության առաջին բռնկումները հետևանքներ չունեցան, նրանց վիճակված եր մարել, վորպեսզի շատ յերկար ընդմիջումից հետո նորից բռնկվեն։ Բայց ինչ ել լինի, յերեսնական թվականների յերկրորդ կիսում Անգլիայում մենք բանվորական շարժման լայնածավալ ալիք ունեինք։*

*Սրանում, ի հարկե, հրաշագործ ու անհասկանալի վոչինչ չկա։ Յեվրոպական մյուս պետությունների շարքում Անգլիան տնտեսական ու քաղաքական տեսակետից բոլորովին բացառիկ դիրք ուներ։ Նրա տնտեսական դրության առանձնահատկությունները կախված եյին այն աշխարհագրական առանձնահատուկ պայմաններից, վորոնց մեջ գտնվում եր Անգլիան։ Ընկած լինելով հարմար նավահանգիստներով հարուստ կղզու վրա, Ամերիկայի գյուտից հետո Անգլիան հայտնվեց առևտրական ճանապարհների հանգույցի վրա, և շատ շուտով, ճիշտ ե, վոչ առանց կռվի, առաջին տեղը գրավեց այն յերկրների շարքում, վորոնք շահագործում ու կողոպտում են ուրիշներին։*

*Գաղութները կողոպտելու շնորհիվ անգլիական առևտրականների ձեռքում հսկայական կապիտալ կենտրոնացավ, վորոնք բառի բուն նշանակությամբ այրում եյին նրանց գրպանները՝ գործադրություն վորոնելով։ Այս կապիտալներն անհրաժեշտ հիմք հանդիսացան խոշոր ինդուստրիայի շենքը կառուցելու համար։*

*Բայց ազատ, խոշոր կապիտալների (այսպես կոչված սկզբնական կուտակում) առաջ գալու պրոցեսսին զուգընթաց՝ տեղի ունե-*



*ցան նաև ուրիշ պրոցեսսներ, վորոնք տնտեսական կարգեր առաջ բերելու համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին։ Այդ տնտեսական կարգերն ուրիշ յերկրներում յեղածներից տարբեր եյին։ Այստեղ ամենից առաջ պիտի մատնանշել հեղաշրջումը՝ հողային հարաբերությունների բնագավառում։ Անգլիայի կլիմայական պայմաններով պիտի բացատրել նրա գեղեցիկ արոտները՝ հյութեղ և մշտադալար խոտերով։*

*Այս հանգամանքը դեր խաղաց այն ժամանակ, յերբ հարևան Ֆլանդրիայում (ներկայիս Բելգիան) զարգացավ մահուդի արդյունաբերությունը։ Հենց այդ ժամանակ ել Անգլիայում ձեռնտու դարձավ վոչխարաբուծությունը՝ բրդի համար, վոր պետք եր ֆլանդրիական մահուդի արդյունաբերությանը։*

*Սրանից ամենամեծ ոգուտն ստանում եյին անգլիական խոշոր յերկրագործները, վորոնք սկսեցին խլել հողը մանր հողատերերից։ Ամբողջ գյուղեր ու ավաններ վոչնչացան և փոխարինվեցին վոչխարների հոտերով, ինչպես այդ ժամանակի գրողներից մեկն եր վողբում՝ «վոչխարներն ուտում եյին մարդկանց»։*

*Այստեղից ե սկսվում ազատ անգլիական գյուղացիության վոչնչացման պրոցեսսը, գյուղացու արտադրության միջոցից (հողից) զրկվելու պրոցեսսը և ըստ Մարքսի՝ նրա «թռչունի պես ազատ պրոլետար դառնալը»։*

*Սրա հետ միաժամանակ ավելի ու ավելի եյին զարգանում առևտուրն ու արդյունաբերությունը, ավելի ու ավելի յեն բազմանում այն մարդիկ, վորոնք գյուղատնտեսական մթերքների կարիք են զգում։ Իբրև այս դրության հետևանք՝ մեծ մասշտաբի գյուղատնտեսությամբ պարապելը հետզհետե ավելի ու ավելի ձեռնտու զբաղմունք եր դառնում։ Միանգամայն բնական ե, վոր կալվածատերը պիտի աշխատեր իր հողերն ավելացնել՝ այս կամ այն ձևով խլելով գյուղացիներից։ Վերջիններս, թեպետ անձամբ ազատ եյին, սակայն խոշոր հողատերերի հանդեպ բոլորովին անզոր եյին, վորովհետև սրանց կողմն եր պարլամենտը, վոր Անգլիայի իսկական կառավարությունն եր՝ կազմված նույն կալվածատերերից և խոշոր առևտրականներից։ Այսպիսով՝ խոշոր կապիտալիստների կողքին, վոր անհրաժեշտ եր խոշոր արդյունաբերություն ստեղծելու համար, հանդես յեկան ազատ, արտադրության միջոցներից զուրկ մարդիկ—բանվորական ուժ վաճառողները,—ապագա պրոլետարները։*

*Մանր, ինքնուրույն արտադրողների արտադրական միջոցներից զրկվելը կատարվեց վոչ միայն գյուղատնտեսության բնագավառում, այլ և արդյունաբերական աշխատանքի բնագավառում։*

Այստեղ աճող առևտրական կապիտալը մանր արհեստավորին ավելի ու ավելի յեր զրկում ինքնուրույնությունից՝ գերելով նրան և հետզհետե վարձկան բանվոր դարձնելով։ Այս պրոցեսի վերջին ետապն եր ձեռագործարանների—ժամանակակից ֆաբրիկների նախորդների առաջ գալը, հայտնվելը։

Այն ել պիտի ասել, վոր այդ ձեռագործարանները չեյին կարող իսպառ խլել հողը մանր արհեստների վոտքի տակից։ Միայն ֆաբրիկաների, այսինքն մեքենաներով զինված խոշոր ձեռնարկության, յերևան գալով եր, վոր մանր արդյունաբերության վիճակն անհուսալի դարձավ և խոշոր արդյունաբերության հաղթանակն ապահովվեց։

Ինչո՞վ բացատրել մեքենաների յերևան գալը։ Վերն ասացինք, վոր անգլիացիք վոչխարը բազմացրին, վորպեսզի բուրդ ունենան ֆլանդրիական մահուդի արդյունաբերության համար։ Բայց յերբ ֆլանդրիական արդյունաբերությունն՝ ամբողջ մի շարք պատճառներով, անկման հասավ, Անգլիայում սեփական բրդի արդյունաբերությունը զարգացավ. սա վերջ ի վերջո այնքան ծաղկեց, վոր համարյա թե անգլիական եկոնոմիկայի սիրտը, միջուկը, առանցքը դարձավ։ Անգլիայի այդ ժամանակի հեղինակների գրվածքներում ամբողջ յերեսներ կգտնենք, ուր փառաբանվում են անգլիական բուրդն ու մահուդը, իբրև ազգի բարեկցության հաստատուն աղբյուրներ։

Այս արդյունաբերությունը, վոր իր արտադրանքն սպառում եր համարյա ամբողջ աշխարհում, և այնպիսի արդյունաբերություն եր, վոր լայն գործածության համար եր ապրանք շուկա հանում, յոլա յեր գնում արտադրության արհեստավորական յեղանակով։ Այսպիսով անհամապատասխանություն եր ստացվում բրդի ապրանքների պահանջի, նրանց շուկայի և այդ պահանջը բավարարելու հնարավորության մեջ։ Մի խոսքով XVIII դարի յերկրորդ կեսին մոտ՝ մեքենային արտադրության անցնելու անհրաժեշտությունն արդեն վերջնականապես հասունացած խնդիր եր։

Հասնելով իր զարգացման բարձր աստիճանին, բրդի արդյունաբերությունն, իբրև հին արդյունաբերություն, կաշկանդված եր՝ ճիշտ ե, հնացած, բայց դեռ ևս կիրառվող կանոնների և ռեգլամենտների ամբողջ ցանցով, վորոնք համքարական կարգերի մնացորդներն եյին։ Կարճ ասած, հնության սրբ- միչը չեր թույլ տալիս, վոր նա ծավալվի և խոշոր արդյունաբերության փոխվի։ Այս պատճառով խոշոր արդյունաբերության անցնելը կատարվեց նախ արտադրության նոր ճյու-



դում՝ բամբակի արդյունաբերության մեջ, վորի զարգացման սկիզբը պիտի համարել XVIII դարի առաջին տասնամյակը։ Հենց այստեղ ել առաջին անգամ յերևացին մեքենաները։ Այդ յերևալու մեջ ել վորոշ հաջորդականություն ե նկատվում։ Այդ հաջորդականությունը կայանում եր նրանում, վոր արդյունաբերության մի ճյուղի մեջ տեղի ունեցած կատարելագործումը՝ համապատասխան կատարելագործման անհրաժեշտություն ե առաջ բերում մի այլ ճյուղում։

Ժամանակագրական կարգով առաջինն ինքնաշարժ մաքուքի (челнок) գյուտն եր (1738 թ.)։ Այս գյուտը, վոր կատարելագործության հասցրեց ջուլհակությունը, մանածագործության մեջ մի շարք բարելավումներ առաջ բերեց, վորը պսակվեց «մյուլի» մանելու մեքենայի գյուտով, վոր իհարկե վորոշ փոփոխություններով մինչև որս ել գործ ե ածվում։ Այժմ ջուլհակության բնագավառում նոր կատարելագործումների պահանջ հասունացավ։ Այդ ել կատարվեց, յերբ հնարվեց ջուլհակագործական դազգյահը։ Սրան հաջորդում են մի շարք կատարելագործումներ՝ նյութերը ներկելու գործում և ուրիշ արտադրողական պրոցեսներում։ Բամբակագործական արդյունաբերության մեջ ամուր տեղ գրավելով՝ մեքենաներն արտադրության այլ ճյուղերում են ծավալվում ու նվաճում են վուշի և բրդի արդյունաբերությունը։ Մեծ մեքենաների յերևալը հերթական դարձրեց շարժիչ ուժի հարցը։ Այս պրոբլեմը լուծեց Ուատտը, վոր ի մի գումարելով իրենից առաջ կատարված մի ամբողջ շարք գյուտերը, ստեղծեց ունիվերսալ շարժիչ շոգեմեքենան։ Այս մոմենտից ել (XVIII դ. 80-ական թվականներին) խոշոր արդյունաբերության զարգացումը լայն ուղի յե բռնում։

Շոգեմեքենան փոխարինեց ջրաշարժիչին, վոր մինչ այդ գործ եր ածվում միայն սրընթաց ջրերի ափերին, ուր հնարավոր եր դառնում ֆաբրիկաներ կառուցելը։ Այժմ կարելի յեր ֆաբրիկա կառուցել ուզած տեղում՝ շուկաներին, ազատ բանվորական ձեռքեր կուտակված տեղերին մոտ։ Շոգեմեքենան ստեղծեց մեքենայաշինությունը.—արդյունաբերության մի ճյուղ, վոր անխուսափելիորեն խոշոր արդյունաբերության մի ճյուղն ե։ Խոշոր մեքենաների յերևան գալը մեծաքանակ մետաղանյութերի պահանջ առաջադրեց, վորով մետաղագործական արդյունաբերության մեջ մեծ հեղաշրջում առաջացավ։ Հարկ զգացվեց քարածուխով թուջ հալել սովորել.—մի կարևոր պրոբլեմ, վորովհետև մինչ այդ միայն փայտի վառելիք եր կիրառվում։ Այս վերջին հանգամանքը փայտով աղքատ Անգլիային հասցրեց մետաղագոր-

քական արդյունաբերության գլխավոր անկման շեմքին: Հարկ յեղավ թուջից կատարելագործված և արագ ձևով յերկաթ ստանալ: Արդյունաբերության բնագավառում տեղի ունեցած բարեփոխությունները անշուշտ պիտի ազդեյին նաև փոխադրական միջոցների վրա. և ահա XVII դարի վերջերից սկսում են ջրանցքներ կառուցել. XVIII դարի կեսից՝ ճանապարհներ, իսկ XIX դարի 30-ական թվականներից արդեն՝ յերկաթուղիներ:

Մատնանշած բոլոր հանգամանքները հիմնովին փոխեցին Անգլիայի դեմքը և նրա տնտեսական ու սոցիալական կյանքի բնույթը: Գյուղական ազգաբնակությամբ գերակշռող յերկիրը դառնում է քաղաքացիների յերկիր, ագրարականից՝ արդյունաբերական յերկիր:

Յեթե XVII դարի վերջում Անգլիայի ազգաբնակության 4/5 մասն ապրում եր գյուղերում, XVIII դարի յոթանասնական թվերին ազգաբնակությունը գյուղում և քաղաքում մոտավորապես հավասար եր. 1811 թվին գյուղում մնացել եր Անգլիայի բնակչության 35%-ից վոչ ավելին, իսկ 20 տարուց հետո այդ տոկոսն իջել եր 28-ի: Կուտակված ու բազմաթիվ բնակչություն ունեցող խոշոր արդյունաբերական քաղաքները սունկի արագությամբ են բուսնում:

XIX դարի սկզբում Անգլիան ուներ 50,000-ից ավելի ազգաբնակություն ունեցող 9 քաղաք, նույն դարի յերկրորդ տասնամյակի սկզբին նման քաղաքների թիվը տասնմեկ եր, վորոնցից չորսը 100,000-ից ավելի բնակիչներով. յերրորդ տասնամյակի սկզբում 15 քաղաքներ 50,000-ից ավելի բնակիչներ ունեյին, 6-ը՝ 100,000-ից ավելի:

Անգլիայի տնտեսական ույժն անօրինակ կերպով եր աճում: Համեմատած XVIII դարի կեսերի արտահանության և ներմուծման հետ, 1800 թվի սկզբին նրա արտահանությունն աճել եր՝ չորս, իսկ ներմուծումը՝ յերեք անգամ: Համաշխարհային շուկայի խոշոր արդյունաբերական նյութեր մատակարարելու գործում Անգլիան համարյա մենաշնորհավոր եր և ամբողջ աշխարհի գործարանը:

Խոշոր արդյունաբերության երևան գալու ամենակարևոր հետեվանքը յերկու նոր դասակարգերի—արդյունաբերական բուրժուազիայի և նրա ձեռքով շահագործվող պրոլետարիատի յերևան գալն եր: Հենց առաջին քայլերից այս դասակարգերը հրապարակ են գալիս իբրև այնպիսի դասակարգեր, վորոնք բոլորովին տարբեր դրություն և տարբեր շահեր ունեին: Ճիշտ է, սկզբում նրանց շահերի տարբերությունը հարթվում եր, վորովհետև հակառակ իրենց



տնտեսական դրության կարևորության, յերկու նոր դասակարգերը բոլորովին իրավազուրկ եյին և քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորությունից զրկված:

Մեր պատմած յերևույթների գումարն ընդունված է արդյունաբերական հեղափոխություն անվանել: Բայց պիտի գիտենալ, վոր տնտեսական կյանքի հեղաշրջումը վայրկենապես չկատարվեց, այլ, ընդհակառակը, մանր արդյունաբերությունից խոշորին անցնելը տասնյակ տարիներ տևեց և Անգլիայում միայն 50-ական թվականների սկզբներում վերջացավ:

Ինչպես տեսանք, Ֆրանսիայում արդյունաբերական կապիտալիզմին անցնելու համար քաղաքական հեղափոխություն անհրաժեշտ յեղավ: Իսկ Անգլիայում բուրժուական ազատությունների և արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ պայմանների մինիմումն արդեն գոյություն ուներ, շնորհիվ XVII դարի հեղափոխության, վոր առաջ եր յեկել առևտրական կապիտալի ժամանակի տարբեր սոցիալական խմբերի պայքարի պայմաններում: Հենց այս պատճառներով ել՝ չնայելով սոցիալական տնտեսական կյանքի մի շարք փոփոխություններին, Անգլիայի քաղաքական իրավակարգը յերկար ժամանակ անփոփոխ մնաց, վորովհետև նա այդ փոփոխություններին խոչընդոտ չեր:

Անգլիայում XVIII դարի վերջերից տիրող դասակարգ հանդիսանում են խոշոր հողատերերը և ֆինանսային-առևտրական տուզերը: Առաջինները իրենց հողերում կապիտալիստական տընտեսություն եյին տանում: Այս յերկու դասակարգերի մեջ աշխատանքի յուրատեսակ բաժանումն տեղի ուներ: Հողային իշխանությունն եր թողնված հատկապես Անգլիան Իռլանդիայի հետ միասին, վորոնց ազգաբնակությունն ել եյին շահագործում հողատերերը: Ֆինանսային-առևտրական տուզերի տրամադրությանն եյին թողնված գաղութները, վորոնք աստիճանաբար խլելով Հոլլանդիայից և Ֆրանսիայից, կենտրոնացած եյին Անգլիայի ձեռքում: Խոշոր առևտրական ու վաշխառուական կապիտալի տերերն այդ գաղութներն անխղճորեն կողոպտելուց՝ հսկայական վաստակ եյին ստանում:

Անգլիական պարլամենտը, վոր հարևան Ֆրանսիայի առաջադեմ բուրժուազիայի նախանձի առարկան եր, բնավ դեմոկրատական հիմնարկություն չեր: Իր անդամների կազմով՝ նա տիրող դասակարգերի կամքն եր ցոլացնում, ուրիշ վոչինչ: Փաստորեն նրա մեջ միայն հողային արիստոկրատիայի և գաղութային կողոպտիչների ներկայացուցիչներն եյին:

քական արդյունաբերության գլխովին անկման շեմքին: Հարկ յեղավ թուջից կատարելագործված և արագ ձևով յերկաթ ստանալ: Արդյունաբերության բնագավառում տեղի ունեցած բարեփոխությունները անշուշտ պիտի ազդեյին նաև փոխադրական միջոցների վրա. և ահա XVII դարի վերջերից սկսում են ջրանցքներ կառուցել. XVIII դարի կեսից՝ ճանապարհներ, իսկ XIX դարի 30-ական թվականներից արդեն՝ յերկաթուղիներ:

Մասնանշած բոլոր հանգամանքները հիմնովին փոխեցին Անգլիայի դեմքը և նրա տնտեսական ու սոցիալական կյանքի ընթացքը: Գյուղական ազգաբնակությամբ գերակշռող յերկիրը դառնում է քաղաքացիների յերկիր, ագրարականից՝ արդյունաբերական յերկիր:

Յեթե XVII դարի վերջում Անգլիայի ազգաբնակության 4/5 մասն ապրում էր գյուղերում, XVIII դարի յոթանասնական թվերին ազգաբնակությունը գյուղում և քաղաքում մոտավորապես հավասար էր. 1811 թվին գյուղում մնացել էր Անգլիայի բնակչության 35%-ից վոչ ավելին, իսկ 20 տարուց հետո այդ տոկոսն իջել էր 28-ի: Կուտակված ու բազմաթիվ բնակչություն ունեցող խոշոր արդյունաբերական քաղաքները սունկի արագությամբ են բուսնում:

XIX դարի սկզբում Անգլիան ուներ 50,000-ից ավելի ազգաբնակություն ունեցող 9 քաղաք, նույն դարի յերկրորդ տասնամյակի սկզբին նման քաղաքների թիվը տասնմեկ էր, վորոնցից չորսը 100,000-ից ավելի բնակիչներով. յերրորդ տասնամյակի սկզբում 15 քաղաքներ 50,000-ից ավելի բնակիչներ ունեյին, 6-ը՝ 100,000-ից ավելի:

Անգլիայի տնտեսական ուժն անսովոր կերպով էր աճում: 1800 թվի սկզբին նրա արտահանությունն աճել էր՝ չորս, իսկ ներմուծումը՝ յերեք անգամ, համեմատած XVIII դարի կեսերի արտահանության և ներմուծման հետ: Համաշխարհային շուկայի խոշոր արդյունաբերական նյութեր մատակարարելու գործում Անգլիան համարյա մենաշնորհավոր էր և ամբողջ աշխարհի գործարանը:

Խոշոր արդյունաբերության երևան գալու ամենակարևոր հետևանքը յերկու նոր դասակարգերի—արդյունաբերական բուրժուազիայի և նրա ձեռքով շահագործվող պրոլետարիատի յերևան գալն էր: Հենց առաջին քայլերից այս դասակարգերը հրապարակ են գալիս իբրև այնպիսի դասակարգեր, վորոնք բոլորովին տարբեր դրություն և տարբեր շահեր ունեին: Ճիշտ է, սկզբում նրանց շահերի տարբերությունը հարթվում էր, վորովհետև հակառակ իրենց



տնտեսական դրության կարևորության, յերկու նոր դասակարգերը բոլորովին իրավազուրկ եյին և քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորությունից զրկված:

Մեր պատմած յերևույթների գումարն ընդունված է արդյունաբերական հեղափոխություն անվանել: Բայց պիտի գիտենալ, վոր տնտեսական կյանքի հեղաշրջումը վայրկենապես չկատարվեց, այլ, ընդհակառակը, մանր արդյունաբերությունից խոշորին անցնելը տասնյակ տարիներ տևեց և Անգլիայում միայն 50-ական թվականների սկզբներում վերջացավ:

Ինչպես տեսանք, Ֆրանսիայում արդյունաբերական կապիտալիզմին անցնելու համար քաղաքական հեղափոխություն անհրաժեշտ յեղավ: Իսկ Անգլիայում բուրժուական ազատությունների և արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ պայմանների մինիմումն արդեն գոյություն ուներ, շնորհիվ XVII դարի հեղափոխության, վոր առաջ էր յեկել առևտրական կապիտալի ժամանակի տարբեր սոցիալական խմբերի պայքարի պայմաններում: Հենց այս պատճառներով էլ՝ չնայելով սոցիալական տնտեսական կյանքի մի շարք փոփոխություններին, Անգլիայի քաղաքական իրավակարգը յերկար ժամանակ անփոփոխ մնաց, վորովհետև նա այդ փոփոխություններին խոչընդոտ չէր:

Անգլիայում XVIII դարի վերջերից տիրող դասակարգ հանդիսանում են խոշոր հողատերերը և ֆինանսային-առևտրական տուզերը: Առաջինները իրենց հողերում կապիտալիստական տնտեսություն եյին տանում: Այս յերկու դասակարգերի մեջ աշխատանքի յուրատեսակ բաժանում տեղի ուներ: Հողային իշխանությունն էր թողնված հատկապես Անգլիան Իռլանդիայի հետ միասին, վորոնց ազգաբնակությունն էլ եյին շահագործում հողատերերը: Ֆինանսային-առևտրական տուզերի տրամադրությանն եյին թողնված գաղութները, վորոնք աստիճանաբար խլելով Հոլլանդիայից և Ֆրանսիայից, կենտրոնացած եյին Անգլիայի ձեռքում: Խոշոր առևտրական ու վաշխառուական կապիտալի տերերն այդ գաղութներն անխղճորեն կողոպտելուց՝ հսկայական վաստակ եյին ստանում:

Անգլիական պարլամենտը, վոր հարևան Ֆրանսիայի առաջադեմ բուրժուազիայի նախանձի առարկան էր, բնավ դեմոկրատական հիմնարկություն չէր: Իր անդամների կազմով՝ նա տիրող դասակարգերի կամքն էր ցոլացնում, ուրիշ վոչինչ: Փաստորեն նրա մեջ միայն հողային արիստոկրատիայի և գաղութային կողոպտիչների ներկայացուցիչներն եյին:

Մինչ այդ՝ խոշոր հողատերերի հետ վարած անհավասար պայքարում վոչնչացել եր ինքնուրույն մանր ազատ հողատերերի դասակարգը: Իսկ նոր արդյունաբերական քաղաքները, ուր բնակչություն եյին հաստատել այն նախկին մանր հողատերերը և յերկրագործները, պարլամենտական ընտրություններին մասնակցելու իրավունք չունեյին: Այս իրավունքից ոգտվում եյին հին, յերբեմնի խիտ ազգաբնակչություն ունեցող գյուղերը, վորոնք ներկայումս դատարկված «փթած ավաններ» եյին (այդ ժամանակ այդպես եյին անվանում նրանց), վորոնք դատարկվելով՝ յերկու յերեք ծխի եյին հասել:

Միանգամայն պարզ է, վոր այդպիսի ավանը, վորի բնակչությունը կատարյալ կախման մեջ եր այս կամ այն հողային մագնատից, պարլամենտ եր ուղարկում հենց իրեն մագնատին, կամ նրա հաճելի մարդուն: Դեպքեր են յեղել, յերբ գյուղն իսպառ սրբվել է հողի յերեսից, որինակ՝ ծովը ծածկել է, այնուամենայնիվ հարևան ծովափնյա հողաշերտի յերկու–յերեք բնակիչներն ընտրության իրավունք են ունեցել: Նրանք այդ իրավունքն իրականացնում եյին՝ գնալով հենց այն տեղ, ուր առաջ ջրասույզ գյուղն եր: Այս դրության հետևանքով յուրաքանչյուր խոշոր հողատեր իր ձեռքի տակ պատգամավորների մի խմբակ ուներ: Այսպես, լորդ Լոնդրուեյն ինը պատգամավոր եր ուղարկում պարլամենտ, լորդ Դեռլինգտոնը՝ յոթ, իսկ լորդ Նորֆոլկը՝ տասն և մեկ:

Իսկ հին առևտրական քաղաքներում ընտրական իրավունքը պատկանում եր միայն քաղաքային արիստոկրատիայի վերնաշերտերին, այսինքն՝ առևտրա–ֆինանսական ջոջերին: Այս պատճառով էլ այդ քաղաքներում ընտրողների թիվը շատ աննշան եր՝ Եդինբուրգում—33, Բատում—10, Սոլսբերիում—50 և այլն: Դեպք է յեղել, յերբ շոտլանդական մի քաղաքում ընտրության է յեկել միայն մեկ ընտրող, վոր իրեն ժողովի նախագահ է ընտրել, համապատասխան ճառ արտասանել, ինքն իր թեկնածությունն է դրել, իրեն էլ պատգամավոր է ընտրել:

Այս պայմաններում անձնական կապերն ու ծախված մարդ լինելը գլխավոր դերն եյին խաղում: Բանը նրան եր հասել, վոր ընտրությունների սակագին եր նշանակված: Այսպես, Իորքում պատգամավոր ընտրելու համար պետք եր 150 հազար ֆունտ ստերլինգ ծախսել:

Յեթե հիշենք, վոր կոմսությունների (մեր նահանգները) ինքնավարություններում, ինչպես նաև դատարաններում, տիրապետում, իշխում եյին նույն դասակարգերը, այն էլ՝ առաջին հերթին հողատերերը, հասկանալի կլինի, վոր չնայած ամենատեսակ ազատություններին, Անգլիայի ազգաբնակչության մեծ մասն իրավազուրկ եր և ամբողջովին կախումն ուներ յերկու տիրող դասակարգերից, վորոնց իշխանության տակ էլ գտնվում եր: Հենց այս դասակարգերի սահմաններում էլ վողջ քաղաքական կյանքն եր ընթանում: Այս դասակարգերի շահերն արտացոլող յերկու կուսակցություններն իշխանության գլխին իրար եյին հաջորդում: Այդ կուսակցություններն եյին—տորիները՝ հողատերերը և վիգերն առևտրա–ֆինանսական բուրժուազիան:

Խոշոր արդյունաբերության զարգացման շնորհիվ քայքայված մանր բուրժուազիան XVIII դարի յերրորդ քառորդում իրերի այս դրության դեմ սկսում է ձայն բարձրացնել: Առաջ է գալիս արմատական վիգերի կուսակցությունը, վոր ընտրական բարեփոխումներ է պահանջում: Ընտրական իրավունքի ոգտին շարժումն առանձնապես ուժեղացավ ֆրանսիական հեղափոխության ժամանակ: Իրենց անդրջրանցքյան յեղբայրների որինակից խրախուսված, անգլիական մանր բուրժուազիան հեղափոխություն է պատրաստում: Բազմաթիվ գաղտնի ընկերություններ են կազմվում, վորոնք «թղթակիցների ընկերություն» անմեղ անունն են բրում: Այդ ընկերություններին բանվորներն ևս մասնակցում են: Շոտլանդիայում, ֆրանսիականի որինակով, կոնվենտ է կազմվում: Ունևոր դասերը վախենում են: Տորիներն ու վիգերը, մոռացան փոխադարձ մրցակցությունը, չքավոր դասի դեմ ուղղած պայքարի գործում միաբանեցին... Մի շարք դաժան միջոցներով հեղափոխական շարժումը խեղդվեց, բուրժուական ազատությունների յերաշխիքը վերացվեց, ակումբներն ու ընկերությունները փակվեցին, իսկ բանվորների հենց նոր կազմակերպվել սկսող արհեստակցական միությունները արգելվեցին: Այնուհետև տիրող դասակարգերը պայքարի մտան հեղափոխական Ֆրանսիայի դեմ: Այս պայքարը հետագայում դարձավ պատերազմ Նապոլեոնի հետ: Նապոլեոնյան պատերազմների ժամանակ Անգլիան ամբողջովին ռեակցիայի իշխանության տակ եր: Պատերազմից շահվեցին միայն ունևոր դասերը, մանավանդ հողատերերը, վորոնց իշխանությունն ևս առավել ամրապնդվեց: Ազգաբնակչության լայն խավերը նրա ծանրության տակ տնքում եյին: Այդ դրությունը՝ պատերազմը վերջանալուց հետո, ավելի ծանրացավ, յերբ պետք զգացվեց ամբողջ արդյունաբերությունը խաղաղ վիճակի փոխել: Չքավորների դրությունն ավելի ևս ծանրացավ դարձյալ նրանով, վոր տորիները, պատերազմը վերջանալուց հետո, կարողացան ընդունել տալ «հացի որենքները»: Այդ որենքներով ոտարյերկրյա հացի մուտքն Անգլիա արգելվում եր մինչև այն մոմենտը, յերբ

Հացի գները հասնում եյին վորոշած ամենաբարձր չափի: Այսպիսով արիստոկրատ հողատերերը հաջողեցրին անգլիական հացի շուկայից հեռացնել ոտարյերկրյա մրցակիցներին և այդ շուկայում մենաշնորհվածներ դարձան:

Ի՛նչ զարմանք, վոր Նապոլեոնյան պատերազմները վերջանալու հենց առաջին տարիներում անընդհատ անկարգություններ ու խռովություններ եյին տեղի ունենում: Կառավարությունը հարկավոր համարեց նորից կանգնեցնել քաղաքական ազատությունների բոլոր յերաշխիքները և ժողովրդական հավաքույթների դեմ զինվորական ույժ գործ դնել:

Հացի որենքները բնավ հաճելի չեյին բուրժուական վիգերին, վորոնց կազմի մեջ եյին մտել նաև նոր արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները: Հացի թանկության դեպքում բանվորներին ել պիտի բարձր գին վճարեյին: Քանի վոր պետության մեջ իշխում եյին հողատերերը, հացի որենքները փոխելու մասին մտածելն անգամ ավելորդ եր: Հետևաբար արդյունաբերական բուրժուազիայի շահն եր, վոր ամբողջ քաղաքական կարգերը փոխվեն:

Սակայն հետպատերազմյան տնտեսական անշարժությունը բուրժուազիային առ այժմ կատարյալ անգործության եր մատնում: Դրությունը մի փոքր փոխվեց XIX դարի 20-ական թվականներին: Այդ ժամանակ Հարավային Ամերիկայում մի քանի հեղափոխություններ տեղի ունեցան: Պորտուգալական և իսպանական գաղութներն ապստամբեցին և իրենց յեվրոպական մետրոպոլիայից բաժանվելով՝ անկախացան: Նոր պետություններին դրամ և զանազան ապրանքներ եյին պետք, որա շնորհիվ ել Անգլիայի մինչև այժմ կանգ առած տնտեսական կյանքը չափազանց կենդանացավ: Այս կենդանացման շնորհիվ բարձրացավ հասարակության առաջադեմ դասակարգի՝ բուրժուազիայի և նրա կուսակցության վիգերի նշանակությունը:

Հենց այդ ժամանակ ել նորից ագիտացիա սկսվեց հօգուտ ընտրական բարեփոխումների: Այս ագիտացիան առանձին համակրանք է գտնում արդյունաբերական հեղափոխության հետևանքով առաջ յեկած դասակարգի—արդյունաբերական պրոլետարիատի կողմից: Չնայած իր տնտեսական նշանակությանը, բանվոր դասակարգը զուրկ եր ընտրական իրավունքից: Ինչպես գիտենք, այս ժամանակաշրջանում բանվոր դասի դրությունը սոսկալի յեր: Միություններ կազմելու իրավունքից զրկված, կազմված համերաշխ գործելու անսովոր տարրերից—արհեստավորներից, քայքայված գյուղացիներից կամ կանանցից ու յերեխաներից, նոր



պրոլետարիատն ամբողջովին իր ագահ տերերի իրավունքի տակ եր: Մեքենան հնարավոր դարձնելով կանանց, յերեխաներին ու դեռահասներին գործի քաշելն, իջեցրեց աշխատավարձը: Արդյունաբերական ազգաբնակության աճումն անյերևակայելի կերպով բարձրացրեց մթերքների ու բնակարանների գները: Արդյունաբերական կապիտալը, դեռ իր մանուկ հասակից դուրս չեկած, արդեն տառապում եր իր հիվանդությամբ՝ ճգնաժամերով (кризис), արդյունաբերության արտադրած նյութերի վաճառքի ժամանակավորապես կանգ առնելով: Այս տագնապների մոմենտներում հազարավոր բանվորներ փողոց նետվեցին ու սովածության դատապարտվեցին:

Նոր արդյունաբերական կենտրոնները պրոլետարիատի կյանքի մղձավանջային պատկեր եյին ներկայացնում: Կեղտ, նեղվածություն, զարշահոտություն—ահա թե ինչ կարելի յեր տեսնել նոր արդյունաբերական քաղաքների՝ Մանչեստերի, Լիդսի կամ Բոլտոնի բանվորական թաղամասերում: Հաճախ բանվորների կերակուրը միայն թափթփուկներ եյին, իսկ հագուստն այնպիսի պատառոտած ցնցոտիներ, վոր նրանց հանել-հագնելը «շատ դըժվար խնդիր եր, վոր կատարում եյին միայն տոներին»:

Այս բոլորից հետո չպիտի զարմանալ, վոր մեր նկարագրած շրջանում միջին մահացությունն Անգլիայում 2¼% եր, այսինքն յուրաքանչյուր 45 մարդուց մեռնում եր մեկը, գործարանական քաղաքներում մի մեռածը գալիս եր 32, նույն իսկ 22 բնակչին: Բանվորի կյանքի միջին տևողությունը հավասար եր 15 տարու, այն ժամանակ, յերբ հարուստ դասակարգի մարդկանցը՝ 35 եր: Բանվորների յերեխաների 75% մեռնում եր չհասած 5 տ. հասակին, այն ժամանակ, յերբ մյուս դասակարգերում այդ հասակի չեր հասնում միայն յերեխաների 20%-ը: Մի խոսք՝ Անգլիայի բանվոր դասակարգն այլասերման կամ վոչնչացման եր դատապարտված: Բնական է, վոր բանվորներից չեր կարելի պահանջել, վոր նրանք ամբողջ քաղաքական սիստեմի կողմնակից լինեն. այդ պատճառով ել առաջադեմ արմատական բուրժուազիայի ագիտացիան մեծ համակրանքով ընդունվեց Անգլիայի գործարանական շրջաններում. ուստի բուրժուազիան բանվորներին դիմեց ընտրողական բարեփոխումների պրոպագանդով:

Մի այլ հանգամանք ևս կար, վոր բանվորներին դեպի քաղաքական պայքար մղեց: Բանը նրանումն է, վոր 1824–25 թ. բանվորներին հաջողվեց՝ մանր-բուրժուական արմատականների օգնությամբ փոխել տալ հեղափոխական շարժման դեմ մղած կռվի շրջանում բանվորական միությունների վրա դրված արգելքը: Բանվորներն օգտվելով այդ արգելքի վերացումից՝ տարերային

կերպով դիմեցին դեպի արհմիութենական շարժումը, և ինչ խոսք՝ շնորհիվ իրենց անկազմակերպ վիճակի, սկզբներում կատարյալ անհաջողության հանդիպեցին: Զուտ տնտեսական շարժման վրա դրած հույսերի խորտակումը՝ կյանքի կոչեց բանվոր դասակարգի քաղաքական շարժումը:

Բանվոր դասակարգի քաղաքական ելույթն ինքնուրույն պրոլետարական շարժում չէր: Անգլիայի բանվոր դասակարգն այդ մոմենտին դնում էր իր սանձը բուրժուազիայի ձեռքում, վոր շահագործում էր նրան՝ վորպես հարվածային զորասյունի, վորին զրոհի յեր նետել հողային արիստոկրատիայի մարտկոցի վրա: Վորպեսզի կարելի լինի բանվորական շարժումը բուրժուազիայի համար վորոշ ու ցանկալի հուն մտցնել, արմատական Պլեսը «Ազգային դաշինք» ստեղծեց: Բուրժուական վիգերը յերբեք չէյին հաղթել արիստոկրատ տորիներին, յեթե նրանց հետևից բանվոր դասակարգը չգնար:

Ազատամիտների առաջնորդ Ռասելն ընտրողական բարեփոխության համար մղված ամենակատաղի կռվի մոմենտում անհաշտ լորդերին ուղղակի սպառնաց հյուսիսային արդյունաբերական շրջանների յերկու հարյուր հազար զինված բանվորներով: Հիրավի՝ արդյունաբերական շրջանները գրգռված եյին անօրինակ կերպով. տեղ-տեղ լուրջ անկարգություններ եյին տեղի ունենում: Սարսափահար տորիները զիջումներ արին և վորոշ կոմպրոմիս կայացավ նրանց և բուրժուա վիգերի միջև: Այդ կոմպրոմիսի հետևանքը 1832 թվի ընտրողական ռեֆորմն յեղավ:

Չնայած բուրժուազիայի տված խոստումներին, այդ ռեֆորմներից բանվորությունը բառի բուն նշանակությամբ վոչինչ չշահեց: Ճիշտ է՝ շատ «փթած ավաններ» զրկվեցին պատգամավորելու իրավունքից և նրանց պատկանող տեղերը բաշխվեցին նոր գործարանային կենտրոններին, սակայն քաղաքներում ձայնի իրավունք միայն նրանք ստացան, վորոնք բնակարանի վարձ տարեկան 10 ֆ. ստերլինգից պակաս չէյին վճարում: Բանվորները, վորոնք ապաստան եյին գտել վողորմելի խրճիթներում մի քանի ընտանիք միասին, այդպիսի ընտրական ցենզ չունեյին: Ցեվ թեպետ ընտրողների թիվը հարյուրյերեսուն հազարով ավելացավ, այնուամենայնիվ այդ ավելցուկն ընկավ հարուստ և միջին դասակարգերին: Մի խոսքով՝ բուրժուազիան այստեղ ևս, ինչպես և Ֆրանսիայում, կարողացավ կրակից շագանակ հանել ուրիշ՝ բանվորների ձեռքով, վորն իր հերթին մնաց կոտրած տաշտակի մոտ:

Մեծ եր բանվորների հիասթափությունը: Դրա առաջին արտահայտությունն եր՝ անտարբեր վերաբերմունք դեպի քաղաքա-



կան պայքարը և նորից զուտ տնտեսական խնդիրներ լուծելու ցանկություն: Սրան նպաստեց նաև այն հանգամանքը, վոր այժմ, բուրժուազիայի վերջին դավաճանությունից և քաղաքական իրավունքներ ձեռք բերելուց հետո՝ նրա և բանվոր դասակարգի շահերի ներհակությունները ավելի վառ գույներով հրապարակ յեկան:

Այս շրջանի բանվորական շարժումը, բանվոր դասակարգի հույսերն ու սպասելիքները սերտ կապված են Ռոբերտ Ովենի անվան հետ: Հենց նրա գաղափարներն եյին, վոր անսովոր ժողովրդականություն ստացան բանվորների և արհեստավորների մեջ:

Ռոբերտ Ովենը վկա լինելով Անգլիայի մանր արտադրությունից խոշորին անցնելուն, տեսավ այն բոլոր սարսափները, վոր ապրեցին չքավոր դասը, ավերված արհեստավորներն ու բանվորները, նրանց բոլոր տառապանքը, վոր յեղավ հատուցումն այս տնտեսական կյանքի պրոգրեսի:

Այս բոլոր տեսածների ազդեցության տակ նրանում հասունացավ այն միտքը, թե իրեն ժամանակակից այս ամբողջ տնտեսական սիստեմը վոչնչի պետք չի, ու նրան պիտի փոխարինել նոր տնտեսական սիստեմ, վորի հիմքում աշխատավորական համայնքները պիտի լինեն: Սրանցում պիտի տիրապետեր արտադրողական միջոցների կատարելապես համայնական լինելը: Նախագծելով մի այդպիսի համայնք Ամերիկայում, Ովենը գրում եր. «Ասոցիացիայի նպատակն այն չէ, վոր հարուստները հավասարվեն աղքատների մակարդակին, այլ այն, վոր բոլորի համար էլ ֆիզիքական և հոգեկան հարստության մի փոքրիկ գումար ապահովվի»: Ռոբերտ Ովենի նախագծած համայնքում պետք է լիներ «սեփականության ընդհանրություն՝ բոլոր հողերի, տների, և ամեն կարգի անշարժ ստացվածքի, ինչպես նաև բոլոր գործիքների, արտադրության համար անհրաժեշտ հում նյութերի, և այլ առարկաների, վորոնք հայտնի յեն կապիտալ անվան տակ՝ այս բառի ամենաընդարձակ իմաստով»:

Այսպիսի իրավակարգի օրոք,—ասում եր Ռոբերտ Ովենը,— «հարստության անհամաչափ բաշխումը կամ նրա անհատական կուտակումը նույնպես անօգուտ ու անմիտ կդառնա, ինչպես բաշխումը ջրի և օդի անհավասար բաժիններով»:

Տեսնելով տիրող իրավակարգի մի ուրիշով փոխարինելու անհրաժեշտությունը, Ռոբերտ Ովենը, ինչպես և Ֆուրյեն Ֆրանսիայում, այս փոխարինումը չեր կապում դասակարգերի հեղափոխական պայքարի հետ: Նա խղճում եր բանվորներին, սակայն չեր ըմբռնում պրոլետարիատի նշանակությունը: Առաջին հեր-

թին սա բացատրվում է այդ ժամանակի պրոլետարիատի անկազմակերպվածությամբ և բանվորական շարժման թուլությամբ։

Այս հիման վրա հենց բանվորների շարքերում Օուենի շատ կողմնակիցներ յերևացին։ Սկսեցին կազմակերպվել մեծ քանակությամբ նման արտելներ և փոխանակման շուկաներ, ուր բանվորներն ու արհեստավորներն առանց փողի կարող էյին իրար հետ փոխանակել իրենց անհրաժեշտ մթերքները։

Սրա հետ միաժամանակ վերածնվում է, կարծես, արդեն խեղդված արհեստակցական շարժումը։ Այս անգամ նա բոլորովին այլ բնույթ է ստանում։ Հսկայական արհեստակցական կազմակերպություններ են առաջ գալիս, վորոնք հավակնում են ամբողջ բանվորական մասսան միացնել։ Այս կազմակերպությունների ամբողջ հասարակությունը վերակազմելու հրաշալի նպատակին են ձգտում։ Մտածում են նույն իսկ տիրող իրավակարգի դեմ պայքարի մասին՝ ընդհանուր գործադուլի միջոցով։ Այս առթիվ բանվորական համագումարներից մեկում ասվել է. «Բավական է միայն մի պասսիվություն, գործադուլ մի շաբաթ կամ ամիս, լավ դաս կլինի... Հասարակությունը միացնող շղթան կքայքայվի՝ շնորհիվ չքավորների մի պասսիվ վերաբերմունքի՝ հարուստների նկատմամբ...»։

Այս հսկայական նպատակները բնավ չէյին համապատասխանում այդ ժամանակի բանվոր դասակարգի շահերին։ Բանվորական այդ ահագին միությունները նույն արագությամբ էլ քայքայվեցին, վորով ծնունդ էյին առել։ Այդ միություններից մեկն ընդունել էր Օուենի նախագիծը և այդպիսով միացրել էր այդ ժամանակի բանվորական շարժման յերկու հոսանքները, բայց այդ էլ չօգնեց։ Անգլիայի բանվորներին նոր հիասթափումն էր սպասում։

Այդ ժամանակ բուրժուազիան, վոր իշխանություն էր ստացել բանվորների շնորհիվ, այդ դասակարգի դեմ ուղղված մի նոր միջոց կիրառեց. վերացրեց չքավորների օգտին սահմանված տուրքը և աշխատանքի տներ հիմնեց։

Անգլիայում 300 տարիների ընթացքում մի սովորույթ էր հաստատվել. այն, վոր աղքատները խնամվում էյին այն ծխից ստացված յեկամուտների հաշվին, վորի մեջ ապրում էյին, իսկ այդ յեկամուտը գոյանում էր այն տուրքերից, վոր ստացվում էյին չքավորների օգտին՝ ըստ մեծի մասին կոմսության հողագործ ազգաբնակությունից։ Ուստի այս տուրքը, վոր ընկնում էր վոչ բուրժուազիայի վրա, վերջինիս հաճելի չէր՝ բոլորովին այլ պատճառներով։ Բանը նրանումն է, վոր շնորհիվ ստացած աջակցության, չքավորները հնարավորություն ունեյին հրաժարվելու աշ-



յեթե դրա համար նրան չափազանց ցածր վարձ առաջարկեյին։ Այս պատճառով էլ բուրժուազիան աշխատեց հենց այժմ դրամական նպաստ տալը փոխարինել աշխատանքի տներով՝ այդտեղ չքավորներին աշխատանքի տաժանելի և ստորացուցիչ պայմաններում պահելով։

Միանգամայն պարզ է, վոր այս նոր օրենսդրական ակտը հսկայական դայրույթ պիտի առաջացներ բանվոր ազգաբնակչության մեջ և բանվորական նոր շարժման ալիքի պատճառներից մեկը պիտի դառնար։ Իսկ այդ նոր շարժման համար խթան հանդիսացավ այն նոր արդյունաբերական ճգնաժամը, որ պայթեց Անգլիայում 1837 թվին։

## II

Նոր արդյունաբերական տագնապը տասնյակ հազար բանվորներ փողոց նետեց՝ սովի մատնելով նրանց։ Բանվորների այս նոր շարժումը, վորքան նրանք հենց նոր էյին հիասթափվել՝ արհեստակցական կազմակերպություններում, արտելներում, կոոպերատիվներում և փոխանակային շուկաներում, քաղաքական շարժման բնույթ պիտի ստանար։ Իսկ վորքան այժմ քաղաքական կյանքը բուրժուազիային էր պատկանում, այնքան էլ վերջինիս դեմ ուղղված շարժումը դարձավ ինքնուրույն պրոլետարական շարժում։

Այսպես ծագեց չարտիզմը՝ հեղափոխական բանվորական շարժումը, վոր ամբողջ 15 տարի ցնցեց Անգլիան։ Իր անունը նա ստացավ այն խարտիայից (անգլիերեն—չարտեր), վոր տիրող կարգերի դեմ պայքարող բանվորների համար միացնող լոզունգ դարձավ։ Այս հռչակավոր խարտիան իր մեջ միայն վեց կետ էր պարունակում, վորոնք բոլորն էլ ընդհանուր ընտրական իրավունք մտցնելու պահանջին էյին հանգում։

Թվումէ, թե սա զուտ քաղաքական շարժում էր, սակայն իրականում բանվորներին այս շարժմանը մասնակցելուն հարկադրեցին նրանց գոյության տնտեսական տանջող պայմանները. պայմաններ, վորոնք, շնորհիվ վերահաս տագնապի, կրկնակի ծանրացան։ Այս պատճառով միանգամայն իրավացի յեր չարտիստ հռետորներից մեկը, վոր ասաց. «չարտիզմը դանակի և պատառաքաղի խնդիր է. նա հաց ու պանրի խնդիր է»։ Նույն ժամանակի մի գրքույկ նույնպես ճիշտ էր բնորոշում շարժման բնույթը՝ հարուստ դասերին ուղղված իր կոչի մեջ ասելով. «կերակրե՛ք չարտիստներին կամ աշխատանք տալով հնարավորություն տվեք, վոր իրենք իրենց կերակրեն. այդ դեպքում նրանցից վա-

թին սա բացատրվում է այդ ժամանակի պրոլետարիատի անկազմակերպությամբ և բանվորական շարժման թուլությամբ:

Այս հիման վրա հենց բանվորների շարքերում Ոուենի շատ կողմնակիցներ յերևացին: Սկսեցին կազմակերպվել մեծ քանակությամբ նման արտելներ և փոխանակման շուկաներ, ուր բանվորներն ու արհեստավորներն առանց փողի կարող եյին իրար հետ փոխանակել իրենց անհրաժեշտ մթերքները:

Սրա հետ միաժամանակ վերածնվում է, կարծես, արդեն խեղդված արհեստակցական շարժումը: Այս անգամ նա բոլորովին այլ բնույթ է ստանում: Հսկայական արհեստակցական կազմակերպություններ են առաջ գալիս, վորոնք հավակնում են ամբողջ բանվորական մասսան միացնել: Այս կազմակերպությունները ամբողջ հասարակությունը վերակազմելու հրաշալի նպատակին են ձգտում: Մտածում են նույն իսկ տիրող իրավակարգի դեմ պայքարի մասին՝ ընդհանուր գործադուլի միջոցով: Այս առթիվ բանվորական համագումարներից մեկում ասվել է. «Բավական է միայն մի պասսիվություն, գործադուլի մի շաբաթը կամ ամիսը, լավ դաս կլինի... Հասարակությունը միացնող շղթան կքայքայվի՝ շնորհիվ չքավորների մի պասսիվ վերաբերմունքի՝ հարուստների նկատմամբ...»:

Այս հսկայական նպատակները բնավ չեյին համապատասխանում այդ ժամանակի բանվոր դասակարգի շահերին: Բանվորական այդ ահագին միությունները նույն արագությամբ ել քայքայվեցին, վորով ծնունդ եյին առել: Այդ միություններից մեկն ընդունել եր Ոուենի նախագիծը և այդպիսով միացրել եր ժամանակի բանվորական շարժման յերկու հոսանքները, բայց այդ ել չոգնեց: Անգլիայի բանվորներին նոր հիասթափումն եր սպասում:

Այդ ժամանակ բուրժուազիան, վոր իշխանություն եր ստացել բանվորների շնորհիվ, այդ դասակարգի դեմ ուղղված մի նոր միջոց կիրառեց. վերացրեց չքավորների ոգտին սահմանված տուրքը և աշխատանքի տներ հիմնեց:

Անգլիայում 300 տարիների ընթացքում մի սովորույթ եր հաստատվել. այն, վոր աղքատները խնամվում եյին այն ծխից ստացված յեկամուտների հաշվին, վորի մեջ ապրում եյին, իսկ այդ յեկամուտը գոյանում եր այն տուրքերից, վոր ստացվում եյին չքավորների ոգտին՝ ըստ մեծի մասին կոմսության հողագործ ազգաբնակչությունից: Ուստի այս տուրքը, վոր ընկնում եր վոչ բուրժուազիայի վրա, վերջինիս հաճելի չեր՝ բոլորովին այլ պատճառներով: Բանը նրանումն է, վոր շնորհիվ ստացած աջակցության, չքավորները հնարավորություն ունեյին հրաժարվելու աշ-



յեն դրա համար նրան չափազանց ցած վարձ տաջարկեյին: Այս պատճառով ել բուրժուազիան աշխատեց հենց այժմ դրամական նպաստ տալը փոխարինել աշխատանքի տներով՝ այդտեղ չքավորներին աշխատանքի տաժանելի և ստորացուցիչ պայմաններում պահելով:

Միանգամայն պարզ է, վոր այս նոր օրենսդրական ակտը հսկայական դայրույթ պիտի առաջացներ բանվոր ազգաբնակչության մեջ և բանվորական նոր շարժման ալիքի պատճառներից մեկը պիտի դառնար: Իսկ այդ նոր շարժման համար խթան հանդիսացավ այն նոր արդյունաբերական ճգնաժամը, որ պայթեց Անգլիայում 1837 թվին:

## II

Նոր արդյունաբերական տագնապը տասնյակ հազար բանվորներ փողոց նետեց՝ սովի մատնելով նրանց: Բանվորների այս նոր շարժումը, վորքան նրանք հենց նոր էին հիասթափվել՝ արհեստակցական կազմակերպություններում, արտելներում, կոոպերատիվներում և փոխանակային շուկաներում, քաղաքական շարժման բնույթ պիտի ստանար: Իսկ վորքան այժմ քաղաքական կյանքը բուրժուազիային եր պատկանում, այնքան ել վերջինիս դեմ ուղղած շարժումը դարձավ ինքնուրույն պրոլետարական շարժում:

Այսպես ծագեց չարտիզմը՝ հեղափոխական բանվորական շարժումը, վոր ամբողջ 15 տարի ցնցեց Անգլիան: Իր անունը նա ստացավ այն խարտիայից (անգլիերեն—չարտեր), վոր տիրող կարգերի դեմ պայքարող բանվորների համար միացնող լոզունգ դարձավ: Այս հռչակավոր խարտիան իր մեջ միայն վեց կետ եր պարունակում, վորոնք բոլորն ել ընդհանուր ընտրական իրավունք մտցնելու պահանջին եյին հանգում:

Թվում է, թե սա զուտ քաղաքական շարժում եր, սակայն իրականում բանվորներին այս շարժմանը մասնակցելուն հարկադրեցին նրանց գոյության տնտեսական տանջող պայմանները. պայմաններ, վորոնք, շնորհիվ վերահաս տագնապի, կրկնակի ծանրացան: Այս պատճառով միանգամայն իրավացի յեր չարտիստ հռետորներից մեկը, վոր ասաց. «չարտիզմը դանակի և պատառաքաղի խնդիր է. նա հաց ու պանրի խնդիր է»: Նույն ժամանակի մի գրքույկ նույնպես ճիշտ եր բնորոշում շարժման բնույթը՝ հարուստ դասերին ուղղած իր կոչի մեջ ասելով. «կերակրեցե՛ք չարտիստներին կամ աշխատանք տալով հնարավորություն տվեք, վոր իրենք իրենց կերակրեն. այդ դեպքում նրանցից վա-

խենալու կարիք չի լինի...»: Չարտիստական շարժման առաջնորդներից մեկն այսպես եր բնորոշում այդ շարժումը. «Ժողովրդական խարտիան լոկ մեխանիզմ ե, վորը միջոց պիտի տա վերջնական նպատակին հասնելու: Այդ միջոցը պարլամենտի ռեֆորմն ե, վերջնական նպատակը՝ սոցիալական ռեֆորմը...»:

Ենգելսն իր «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքի մեջ, վոր գրված ե հենց չարտիզմի ժամանակ, այսպես ե բնութագրում այս շարժումը. «Չարտիզմն իր եությամբ սոցիալական բնույթի յերևույթ ե: Արմատական բուրժուազիայի համար այն բոլորը և ամենագլխավորը, վորին պիտի տանի հասցնի կուսակցությունը, սահմանադրության վորոշ ռեֆորմներն են. պրոլետարիատի համար այդ վեց կետը լոկ միջոց են: Քաղաքական իշխանությունը մեր միջոցն ե, իսկ սոցիալական շարժումը՝ մեր նպատակը: Ահա թե ներկայումս վորն ե չարտիստների պարզ արտահայտած դեվիզը»:

Այսպես ահա՝ ընտրական իրավունք ձեռք բերելու մեջ չարտիստները և նրանց պաշտպանող ամբողջ բանվոր դասակարգը վողջ սոցիալական իրավակարգի փոփոխությունն եյին տեսնում: Այդ՝ պիտի ասել, վոր հազիվ թե նրանք պարզ պատկերացնելիս լինեյին, թե ինչպես պիտի փոխվի այդ իրավակարգը: Բայց վոր այդ փոփոխությունը պիտի գար՝ չարտիստների համար անկասկած եր: Չարտիստների առաջնորդներից մեկը—բանվոր Հարնեյը զուր չեր գրում. «Յեթե ժողովրդական խարտիայի կյանքի պայմաններն ընդհանուր հավասարացման միջոցներ չհաջորդեն, այդ դեպքում արտադրող դասակարգերն առաջվա նման ճնշված կը մնան»:

Յեթե իրենց դրության առանձնապես վատթարացած մոմենտներին բանվորական մասսաները հետևեցին չարտիստներին, այնուամենայնիվ այս շարժումը զուտ պրոլետարական անվանել չի կարելի: Նախ այդ ժամանակի պրոլետարները դեռ բոլորովին չեյին կտրված արհեստավորներից ու գյուղական տնտեսությունից. յերկրորդ՝ իսկական բանվորների հետ միասին չարտիստների շարքերը լցնում եյին և մանր բուրժուազիայի ներկայացուցիչները, և նրանց մոտ կանգնած բանվորական արիստոկրատիան, վոր բավարար վարձատրվում և տանելի պայմաններում եր ապրում, և վերջապես չարտիստների հետևից եյին գնում քայքայված ու աղքատացած բանվորները: Չարտիզմով բռնված ազգաբնակությունն աչքի յեր ընկնում իր խայտաբղետությամբ: Այս խայտաբղետությունն եր պատճառը գլխավոր տարաձայնությունների, վորոնք բաժան-բաժան եյին անում չարտիստներին, այլ և վերջին հաշվով շարժման կատարյալ անհաջողության պատճառը:



Չարտիստների տարաձայնություններն առաջին հերթին պտտում եյին տաքտիկայի հարցերի շուրջը, այն հարցի շուրջը, թե ինչպես պիտի հասնել ընդհանուր ընտրական կանոններ սահմանելուն: Չարտիստների մի մասը, նրանց չափավոր խմբակը, կողմնակից եր խաղաղ տաքտիկայի, խաղաղ ագիտացիայի և պրոպագանդի: Այս խմբակը հենվում եր Լոնդոնի հարուստ արհեստավորների և բանվորական արիստոկրատիայի վրա: Սրանց առաջնորդն եր արդեն մեզ ծանոթ արմատական Պլեսի աշակերտ և բարեկամ Լովետը: Լովետն առաջինն եր, վոր գործադրության թողեց խարտիան և նրա ոգտին պայքար մղելու համար հիմնեց «Բանվորների լոնդոնյան ասոցիացիան», վոր իրոք՝ վոչ թե բանվորական, այլ միայն բանվորական արիստոկրատիայի կազմակերպություն հանդիսացավ: Բանվորական մասսաներում այս կազմակերպությունը մեծ հեղինակություն չեր վայելում: Այդ մասսան, վոր կենտրոնացած եր հյուսիսի մանուֆակտուրային քաղաքներում, իր յելույթներում ավելի հեռու գնաց, քան այդ կուզեր «Լոնդոնյան ասոցիացիան»:

Հյուսիսի բանվորների կուռքն եր փայլուն հռետոր, կրակոտ հեղափոխական իռլանդացի Ո'Կոննորը: Նա Լովետի թշնամին եր և առաջնորդը «Ֆիզիքական ույժ» խմբակի. այսինքն այն չարտիստների, վորոնք կողմնակից եյին վճռական կռվի՝ կառավարության դեմ և հեղափոխական միջոցների՝ այդ կռվում:

Ո'Կոննորի ժողովրդականությունն ու ազդեցությունը զարմանալի եյին բանվորների շրջանում: Այդ բանն ինքն ել գիտակցում եր: Նա իր վրա նայում եր վորպես այդ պրոլետարների իսկական առաջնորդի վրա: Այդ պրոլետարիատը նա հակադրում եր Լոնդոնի բանվորական արիստոկրատիային: «Թող միայն, ասում եր նա, բանվորները—յես ի նկատի ունեմ կոշտավոր ձեռքերով, չափրած կզակներով և պլիսե (չիլարեգի, ծ. թ.) կուրտկաներով բանվորներին, թող նրանք միայն կարդան լոնդոնցիների գրածը, և սապնի պղպջակը կպայթի...»: Սրանից բացի՝ չարտիստների շարքերում գերադանցորեն գիտակից բանվորների մի փոքրիկ խումբ ել կար, վորոնց թվին եր պատկանում մեր վերը հիշած Հարնեյը: Այս խմբակը շատ շուտ անջատվեց «Լոնդոնյան ասոցիացիայից» և կազմեց իր «Դեմոկրատական ասոցիացիան», վոր նման «Լոնդոնյան ասոցիացիայի»՝ բանվորական լայն մասսաներում ժողովրդականություն չեր վայելում.—բայց արդեն բոլորովին այլ պատճառներով: «Շրջապատող պայմանները և ստեղծված հանգամանքները հասկանալու գործում «Դեմոկրատական

ասոցիացիան» շատ ավելի հեռու գնաց, քան այդ մատչելի յեր ժամանակի բանվորական մասսաներին:

«Դեմոկրատական ասոցիացիայի» ներկայացուցիչները աչքի եյին ընկնում իրենց գերազանցապես բարձր դասակարգային գիտակցությամբ: Նրանք բուրժուազիայի շահերն իրենց համար շատ պարզ կերպով եյին հակադրում պրոլետարիատի շահերին և ասում եյին, թե պրոլետարներն իրենց դասակարգային թշնամիների հետ տարած պայքարում պիտի հույսը դնեն «իրենց, միա՛յն իրենց վրա»: Այսպիսով նրանք կարծես նախորդում եյին Մարքսի խոսքերին, թե «բանվորների ազատությունն իրենց բանվորների ձեռքերի գործն է»:

Ինչպես արդեն ասել ենք, չարտիստներին եյին հարում նաև մանր բուրժուական արմատականները, ինչպես օրինակ բանկիր Ատվուդը՝ գաղթած Բիրմինգամի մանր բուրժուական կենտրոնից, ի հարկե, այս մանր բուրժուական արմատականները լոկ «ուղեկիցներ» եյին, վորոնք շուտ ել լքում եյին չարտիստներին:

Յեթե տակտիկական խնդիրներում մեծ եյին չարտիստների մեջ յեղած տարաձայնությունները, ծրագրային հարցերում—ինչ պետք եր անել իշխանությունը ձեռք գցելու դեպքում—նրանցում կատարյալ անորոշություն եր տիրում: Յեվ Ռոբերտ Օուենի նախկին աշակերտներն ու հեղափոխական պրոֆեսիոնալիստները—«սրբազան ամսի» (ընդհանուր գործադուլի) քարոզիչներն ապաստան եյին գտել չարտիստների մեջ: Ավելի գիտակից բանվորների մի մասը (Հարնեյ) սոցիալիստական հայացքներ եր արտահայտում, թեպետ վոչ այնքան ել պարզ:

Օ'Կոնները, հյուսիսի բանվորների ճանաչված առաջնորդն ու կուռքը, սոցիալիստ չեր և ինքն ել ասում եր. «Սոցիալիզմի ու կոմմունիզմի սկզբունքները հակասում են մարդու բնությանը...»: «Իրագործեցեք, գրում եր Օ'Կոնները, կոմմունիզմի սիստեմը և դուք կկործանեք ինդուստրիան, կոչնչացնեք մասնավոր մրցումը ու կստեղծեք ծույլերի և ուժեղների կռիվ՝ ընդդեմ աշխատավորների և թույլերի...»:

Միակ բանը, վոր ընդունում եր Օ'Կոններն՝ եր համատեղ աշխատանք և համերաշխ ոգտագործումն գյուղատնտեսական ինվենտարի: Նրա այս աշխարհայացքում ամբողջովին ցոլանում եր այն դասակարգի ազդեցությունը, վորին նա իր ծագումով պատկանում եր և ամենից մոտն եր—ավերված սակավահող գյուղացիների դասակարգին: Հենց նրանք ել վախենում են սոցիալիզմից, վորովհետև նա կորստաբեր է թվում իրենց մանր սեփականության մնացորդների համար, վորի վրա նրանք դողում են:



Հենց դրանք ել պետք ունեյին միատեղ ոգտվելու բանվորական անասուններից ու ինվենտարից, վորոնք իրենց արժեքով անմատչելի յեն առանձին անհատներին:

Չարտիստների մյուս առաջնորդն—Օ'Բրայենը սոցիալիստ եր, սակայն պաշտպանում եր միայն հողային սեփականության ընդհանրացումն, այսինքն հետևում եր XVIII դարի սոցիալիստներին:

Ընդհանուր առմամբ Օ'Կոնների և Օ'Բրայենի աշխարհայացքի վրա անդրադառնում եր կապիտալիզմի զարգացման վորոշ շրջանը: Կապիտալիզմը դեռ չեր հասել այն աստիճանին, յերբ ակնհայտնի յե դառնում, թե նոր սոցիալիստական հասարակության աշխարհ գալն է պատրաստվում: Չարտիզմի շրջանում կապիտալիզմը լոկ իր բացասական կողմերն եր յերևան բերում, ուստի թվում եր, թե աշխատավորության համար միակ յելքն է՝ վերադարձ դեպի նախակապիտալիստական շրջանը, դեպի անցած ժամանակը, դեպի այն ժամանակը, յերբ գյուղատնտեսությունը գերակշռում եր արտադրության մյուս ձևերի նկատմամբ:

Այս եր պատճառը, վոր Օ'Կոնների յերազն եր—բանվորներին հողաբաժիններ տալ և նրանց մանր հողատերեր դարձնել: Այս պատճառով ել Օ'Բրայենը հայտարարում եր, թե ինքը «թշնամի յե այն սիստեմին, վոր գործարանի գերակշռությունն է ստեղծում գյուղատնտեսության հանդեպ, այն սիստեմին, վորի ոգնությամբ բանվոր դասի հարստահարիչները յերկրագործներին գործարանային բանվորներ դարձրին»:

Հետևաբար՝ դեպի արդյունաբերական կապիտալիզմն ունեցած իրենց բացասական վերաբերմունքով համակարծիք են սոցիալիստ Օ'Բրայենը և սոցիալիզմի թշնամի Օ'Կոնները: Դեռ չհասունացած կապիտալիզմն իր հետևից բերեց բանվորական շարժման ձևերի տհասություն և այդ շարժման առաջնորդների խակություն:

Ինչ վերաբերում է չարտիստական շարժմանը, նա հեշտ ու հարմար կերպով կարող է բաժանվել յերեք շրջանների: Ինչպես արդեն ասել ենք, չարտիզմի առաջին բռնկումը կապված է արդյունաբերական ճգնաժամի հետ, վոր պայթեց Անգլիայի գլխին 1837 թվին: Մյուս յերկու բռնկումները կապված են անգլիական արդյունաբերության հասած յերկու այլ տագնապների հետ:

Ամեն անգամ, հեղափոխական շարժման ալիքը բարձրանալու ժամանակում՝ չարտիստները միևնույն գիծն են անց կացնում: Նրանք բազմահազարանոց միտինգներ եյին հրավիրում, և այդ միտինգներին յեկողներին առաջարկում եյին ու դիմում պետիցիա

ստորագրել՝ պարլամենտին տալու։ Այդ դիմումին ույժ տալու համար միտինգներում «կոնվենտի» պատգամավորներ եյին ընտրում, որ պիտի ժողովվեր դիմում տալու մոմենտում և գաղափարով փոխարիներ ցենզավոր պարլամենտին։

Շարժումը, մանավանդ բանվորական ռայոններում, լարվածության անսովոր վիճակի յեր հասնում. միտինգների եյին գալիս յերբեմն հարյուր հազարավոր մարդիկ՝ շատ հաճախ զինված։ Առանձնապես եֆֆեկտավոր ու սպառնալից եյին լինում գիշերային միտինգները, ուր բանվորները գալիս եյին ուղղակի աշխատանքից՝ կեղտոտ շորերով, ջահերը ձեռքերին։ Չարտիստական լրագրները տարածվում եյին տասնյակ հազար օրինակներով, չարտիստական առաջնորդներն ու հռետորներն ընդունվում եյին խանդավառությամբ և հսկայական ժողովրդականություն ունեյին։

Յեվ այնուամենայնիվ, չնայած այս բոլորին, պարլամենտը մերժում եր պետիցիան, իսկ ժողովված կոնվենտը չեր վստահանում ապստամբության դրոշ պարզել և իրեն հեղափոխական պարլամենտ հայտարարել. մի բան, որ թվում ե, թե նա պարտավոր եր անել։ Ինչո՞վ բացատրել այս յերևույթը։

Ամենից առաջ՝ առաջին կոչի կոնվենտը նո՛ւյնքան խայտաբղետ եր, որքան և կուսակցության դրոշակի տակ գնացողները։ Նա տակտիկական մեծ սխալ եր գործում՝ ժողովվելով Լոնդոնում, և ո՛չ թե հյուսիսում, ուր կարող եր հենվել հեղափոխականորեն տրամադրված բանվորական մասսաների վրա։ Հետագայում Լոնդոնից նա Բիրմինգամ անցավ, որ նույնպես ոչ պրոլետարական, այլ մանր բուրժուական քաղաք եր։

Յերբ կառավարության ձեռք առած խստությունների շնորհիվ մթնոլորտն այնքան շիկացավ, որ արդյունաբերական հյուսիսում պատրաստ եր ապստամբություն պայթելու, կոնվենտը, շնորհիվ Լովետի կողմնակիցների ներկայության, սիրտ չարավ այդ ապստամբության ղեկավարությունն իր ձեռքն առնել։ Հայտնաբերած այսպիսի ակնհայտնի թուլությունից հետո պարլամենտն այնքան հանդուգն դարձավ, որ մերժեց իրեն տված պետիցիան, չնայելով նրա վրայի 1¼ միլլիոն ստորագրություններին։

Այսպիսի ծանր պարտություն կրելով, շարժումն սկսեց թուլանալ։ Չարտիստների գլխին կատաղի հալածանք թափվեց։ Բանվորական մասսան սառավ չարտիզմից, որովհետև այն դադարը ((застой), որ համակել եր արդյունաբերությունը, սկսեց հետզհետե անցնել, և բանվորների դրությունը մի փոքր լավացավ։



Այս բոլորի շնորհիվ չարտիստների «ուղեկիցները»—մանր բուրժուական և ինտելլիգենտական տարրերը—չարտիզմից յետ մղվեցին։ Սակայն իսկական հեղափոխականները չհուսահատվեցին։ Ընդհակառակը, նրանք լարեցին իրենց բոլոր ուժերը, որպեսզի փրկեն շարժումը և առանձին խմբերից ու խմբակներից ստեղծեցին «Չարտիստական ասոցիացիան»—առաջին հեղափոխական քաղաքական կուսակցությունը, որ ուներ ընտրված գործադիր կոմիտե, անդամավճարներ և անդամատոմսեր։ Իր ժամանակներում նա մինչև 40·000 անդամ ուներ։

Տեսնելով, որ բանվորական շարժումը չի մեռնում, այլ, ընդհակարակը, վերածննդի նշաններ ե հայտնաբերում, բուրժուա ազատամիտները նորից փորձեցին բանվորներին յետ քաշել իսկական հեղափոխական նպատակներից ու իրենց շահերին ծառայեցնել։ Հացի օրենքները փոխելու համար բանվորների մեջ ագիտացիա սկսվեց։ Առ այդ բանվորների ծանր դրության գլխավոր պատճառը հացի օրենքներն եյին համարում։ Այս ճանապարհով բուրժուազիան, որ կարիք եր զգում հողային սեփականատերերի օգտին յեղած օրենքները փոխելու, ուզում եր այս սեփականատերերի դեմ ուղղել բանվորներին և բանվորական շարժման սպառնալիքով վախեցնել նրանց՝ ճիշտ այնպես, ինչպես արդեն մի անգամ վախեցնելով՝ նրանց համաձայնությունն եր կորզել հօգուտ ընտրական ռեֆորմի։ Չարտիստների առաջնորդներից լավագույնները շատ լավ եյին հասկանում բուրժուազիայի այս տակտիկան և ամեն կերպ աշխատում եյին խանգարել բանվորներին՝ հացի օրենքների դեմ մղված պայքարին միջամտելուց։

Շուտով նոր տագնապ վրա հասավ, և բուրժուազիան նորից ցանկացավ այդ տագնապն ևս իր օգտին ծառայեցնել։ Վորովհետև արտադրությունները, միևնույն ե, կրճատվում եյին, տերերն սկսեցին ֆաբրիկաները փակել և բանվորներին փողոց նետել։ Ֆաբրիկաներում մնացած բանվորների օրավարձն իջեցրին, այդպիսով բանվորներին գործադուլի մղելով, որով արդյունաբերողները հույս ունեյին վախեցնել համառ հողային արիստոկրատներին։ Գործադուլն իրոք որ պայթեց, բայց շարժումը մեկեն հեղափոխական բնույթ ստացավ։ Ազատամիտներն իզուր հացի օրենքների վրա մատ դնելով՝ փորձում եյին շարժումն իրենց համար ցանկալի հունի մեջ դնել, բանվորներն ընդհանուր ընտրական իրավունք եյին պահանջում։

Բանվորները չափազանց գրգռված եյին, գործադուլները ծավալվում ու նորանոր ռայոններ եյին ընդգրկում, թվում եր, թե «սրբազան ամսի» քարոզիչների հին յերազներն իրականանալու

մատ են։ Բայց իրենք չարտիստներն այդ շարժումից հանկարծակիի յեկան, դրա համար նրանք հարկավոր չափով պատրաստված չեյին և այս անգամ ել չկարողացան ղեկավարությունն իրենց ձեռքն առնել։ Վերջապես հարավային կոմսություններն ու Լոնդոնը անմասն մնացին հյուսիսային մանուֆակտուրային շրջանների պայքարին, և գործադուլը վիժեց։ Ինչ վերաբերում է պարլամենտին տված նոր պետիցիային՝ նա յել մերժվեց, չնայելով, վոր յերեք միլլիոնից ավելի քաղաքացիներ եյին ստորագրել։

Հաջորդ տարիներն աչքի ընկան հինգ տարվա տևողություն ունեցող տնտեսական հաջողությամբ, վորի շնորհիվ հեղափոխական շարժման ալիքը նորից նստեց։

Ինչպես արդեն ասացինք, չարտիստական շարժման առաջին ալիքի նստելուց հետո «ուղեկիցներն» սկսեցին նրանից յետ նահանջել, այդ պատճառով ել յերկրորդ շրջանում նա ավելի ամբողջական բնույթ եր կրում։ Այս բանը շատ պարզ կարելի յե տեսնել պարլամենտին տված յերկու պետիցիաներից—առաջինը 1839 թվին, յերկրորդը 1842 թվին։

Առաջին պետիցիան խոսում եր ինչպես սովից մեռնող բանվորների մասին, այնպես ել «մեր արդյունաբերողների մասին», վորոնք դողում եյին սնանկության դուռը հասնելուց, և «արդյունք չտվող կապիտալի մասին»։ 1832 թվի ռեֆորմը նա անվանում եր «խելացի միջոց՝ արժանավոր նպատակ իրագործելու համար»։ Իսկ յերկրորդ պետիցիան մատնանշում եր «կաշառքը, սարսափեցնելը, անառակությունը, սուտ վկայություններն ու զանազան ընդհարումները, վորոնք դերակշռել են բոլոր պարլամենտական ընտրությունների ժամանակ»․ Նա խոսում եր նաև «սուր կարիքի մասին, վորից հազարավորներ են մեռնում Անգլիայում, Շոտլանդիայում և Ուելլսում»։ Նա ցույց եր տալիս այն «զայրույթը, վորով պետիցիա տվողները նայում են աղքատների մասին յեղած օրենքներն ուժի մեջ թողնելու վրա»։ Այս պետիցիան առանց քաշվելու՝ համեմատում եր Նորին մեծության* օրական յեկամուտը (167 ֆունտ, 17 շիլ․ և 6 պենս) բանվորի օրավարձի հետ (3¾ պենս) և գանգատվում եր, վոր «բանվորական օրը, մանավանդ ֆաբրիկային բանվորներինը, մարդկային ուժերի բոլոր սահմաններից անցնում է, վոր այս գերմարդկային աշխատանքի համար վճարած օրավարձը շատ է անբավարար՝ բանվորի ֆիզիքական ուժերը պահպանելու համար»․ հիշում եր նաև «գյուղական բատրակների աննշան վարձատրության մասին, այս մարդկանց չնչին յեկամուտի մասին, վորոնց աշխատանքը սնունդ է տալիս

* Խոսքը Վիկտորիա թագուհու ժամանակին է վերաբերում։



ժողովրդին»։ Այս պետիցիայում չեյին մոռացված նաև գլխավոր մթերքների վրա դրված տուրքերի մասին*։

Պարլամենտի ունևոր դասի ներկայացուցիչները շատ լավ հասկացան այս պետիցիայի պրոլետարական բնույթը։ Զուր չեր պարլամենտի բուրժուական պատմաբան Մակոլեյն իր յելույթում (այս պետիցիայի առթիվ) ահազանգ խփում՝ ասելով, վոր պետիցիայով պահանջվող ընդհանուր ընտրական իրավունքը վոչնչացնում է լավագույնների տիրապետությունը և քանդում է քաղաքակրթության հիմքերը»։ Մակոլեյն յենթադրում եր, վոր պետիցիան ուղղված է «հողի, մեքենաների, հաղորդակցության միջոցների մենաշնորհումների դեմ, վորոնք մասնավոր սեփականություն պիտի հանդիսանան»։

Հազար ութհարյուր քառասուն յերկու թվի վերելքից հետո՝ չարտիզմը նորից անկման շրջան է ապրում։ Վերջինս, ինչպես ասել ենք, զուգադիպում է արդյունաբերական վերելքի շրջանին։ Այս վերելքի ժամանակ չարտիզմի կյանքում յերկու հետաքրքիր յերևույթներ են տեղի ունենում։ Նախ՝ չարտիզմն ինքն իրեն հանդես բերավ վորպես միջազգային շարժում։ Լոնդոնում կազմվեց միություն այն բոլոր հեղափոխական-եմիգրանտների, վորոնք իրենց կառավարությունների հետապնդումից Լոնդոն եյին փախել։ Միությունն ընդունեց «Յեղբայրական դեմոկրատների» անունը։ Նրա կազմակերպման գործում գլխավոր դեր խաղաց չարտիստ Հարնեյը։

Չարտիստական կազմակերպությանը մրցակից չդառնալու համար «Յեղբայրական դեմոկրատները» կուսակցություն չկազմեցին, այլ մնացին լոկ իբրև ագիտատոր պրոպագանդիստների խմբակ։ Այս կազմակերպության վրայով են ձգվում այն թելերը, վորոնք չարտիստներին կապում են ավելի ուշացած բանվորական շարժման հետ։ Հենց այստեղ ել Մարքսն ու Ենգելսը հանդիպեցին չարտիստներին, վորոնց վորակեցին վորպես իսկական պրոլետարական շարժման ներկայացուցիչների։ Այն կազմակերպչական ձևերը, վոր ընդունել եյին «Յեղբայրական դեմոկրատները» 1847 թվին, օրինակ ծառայեցին Առաջին Ինտերնացիոնալը կազմելու համար։

Չարտիզմի այս յերևույթներն ավելի շատ ապագայի նախընթացիկներ, քան տվյալ մոմենտները բնորոշող գծեր եյին։ Սրա

* 1832 թ. հեղափոխությունից հետո իշխանության անցած բուրժուազիան բարձր տուրքատրման եր յենթարկել լայն գործածության առարկաները։

հետ միասին՝ նա այդ ժամանակի բանվորական շարժման ուրիշ կողմերն էլ յերևան բերեց: Բանվորների շրջանում սկսեց արտասովոր հաջողություն ստանալ Օ'Կոննորի հողային պլանը: Պլանը շատ էր ֆանտաստիկ և կայանում էր հետևյալում. բանվորները իրենց աշխատավարձից կոպեկներ խնայելով, վորոշ գումար են ժողովում. դրանով հողամաս են ձեռք բերում: Մշակման և մելիորացիայի (բարելավման) միջոցով հողի արժեքը բարձրանում է, այնուհետև այդ հողը գրավ է դրվում: Այդ ձևով ձեռք բերած գումարին նոր խնայողություն է ավելանում. գնվում է նոր հողամաս, վորի հետ նույն բանն է կատարվում: Յեվ այսպես մինչև այն ժամանակ, յերբ բոլոր բանվորները հող կունենան և կսկսեն գյուղատնտեսությամբ պարապել:

Չնայելով այս ծրագրի ֆանտաստիկ լինելուն, ինչպես ասացինք, բանվորների շրջանում նա հսկայական ժողովրդականություն ստացավ: Բացատրվում էր այս բացառապես նրանով, վոր բանվորների աշխարհայացքը դեռ չէր հասունացել, այլ և նրանով, վոր նրանցից շատերը դեռ նոր էին կտրվել հողից, գյուղատնտեսական աշխատանքներից կամ արհեստներից, այսինքն՝ բոլորովին նոր էին կորցրել իրենց մանր սեփականությունը:

Սրա հետ միասին՝ պետք է մատնանշել նաև բանվորներին հեղափոխությունից յետ քաշելու նոր փորձը. փորձ, վոր կայանում էր բանվորներին կռվի քաշելու՝ տասժամյա բանվորական օր սահմանելու օգտին: Տասժամյա բանվորական օրի օգտին պայքարը տարվում էր բարեգործորեն տրամադրված տորիների ղեկավարությամբ, վորոնք այս անգամ յերկու նպատակ էին հետապնդում—անախորժություն պատճառել իրենց բուրժուա թշնամիներին՝ վրեժ առնելով 1864 թ. հացի օրենքները փոխելու համար և բանվորներին հաշտեցնել տիրող իրավակարգի հետ: Տորիները պայքար սկսելով տասժամյա բանվորական օրվա օգտին, բանվորների հետ պայման կնքեցին, վոր «ագիտացիան ամենախաղաղ միջոցներով տարվի»:

Հիրավի՝ տասժամյա բանվորական օրն օրենք դարձավ 1847 թվին, և չնայելով նրա ամբողջ շահավետությանը՝ բանվորների համար, բանվորական շարժման համար վնասակար հետևանքներ ունեցավ: Այս օրենքը բանվորական վորոշ խավերի վրա հաշտարար կերպով ազդեց տիրող իրավակարգի նկատմամբ և բթացրեց նրանց հեղափոխական վոգին: Այնուամենայնիվ անհնար յեղավ կանխել չարտիզմի նոր յերրորդ ալիքի առաջացումը:



Հազար ութհարյուր քառասուն և յոթ թվականի վերջը նոր արդյունաբերական տագնապ բերեց: Նորից կանգ առան ֆաբրիկաները, գործարանները, նորից սկսվեցին միտինգները, ցույցերն ու մանիֆեստացիաները: Գործարանական քաղաքների փողոցներում «Հաց կամ հեղափոխություն» աղաղակներ էին հնչում: Այս հանգամանքներում չարտիստները վճռեցին պարլամենտին յերրորդ պետիցիա տալ և կոնվենտը նորից հրավիրել:

Ֆրանսիայում կատարված հեղափոխության լուրը կրակի վրա յուղ ածեց: Միտինգներում սկսում են բանաձևեր հանել, վորոնցով ողջունում էին ֆրանսիական հասարակապետությունն ու սպառնում անգլիական կառավարությանը՝ գահընկեց Լյուդովիկ–Ֆիլիպպի վիճակով:

Սակայն 1848 թվին ժողովված կոնվենտը նորից նույն սխալը կրկնեց: Նախ՝ վոր ժողովվեց Լոնդոնում, այնուհետև պարլամենտի կողմից յենթադրյալ մերժման դեպքում, կոնվենտը վորոշեց փոխանակ ապստամբության կոչի, նոր ժողով հրավիրել, վորը... դիմում պիտի տար կառավարությանը՝ պետիցիան մերժելու առթիվ:

Անհամեմատ ավելի վճռական կերպով էր գործում ինքը կառավարությունը: Նա ժողովեց իր բոլոր ուժերը, հսկայական զորք և բուրժուական խավերից առած կամավոր ոստիկաններ ժողովեց, կարգ ու հանգստություն պահելու համար բացառիկ օրենքներ հրատարակեց և չարտիստական մանիֆեստացիան արգելեց:

Չարտիստները, վորոնք յերբեք չէին կարող հույս դնել Լոնդոնի ազգաբնակության վրա, վորը յերբեք չէր համակրել հեղափոխական միջոցները, ստիպված էին հրաժարվել յենթադրած ցույցից, վորը պարլամենտին տված պետիցիան պաշտպանելու համար մասսայական յելույթ պիտի լիներ:

Այս հանգամանքներից խրախուսված, պարլամենտը վո՛չ միայն նորից մերժեց պետիցիան, այլ և նրա յերևալը ծաղրով ընդունեց: Ապրիլի 10 (1848 թ.), այն օրը, յերբ յերրորդ պետիցիան մերժվեց, չարտիստական շարժման մեծագույն անհաջողության օրն էր:

Շարժումն այդպիսի ուժով այլևս չկրկնվեց: Ճիշտ է, 50-ական թվականներին նորից փորձեր յեղան նրան վերսկսել, սակայն այդ բոլոր փորձերն անհաջողության հանդիպեցին:

Վորպեսզի մեզ համար պարզ լինի չարտիստական շարժման անհաջողությունների պատճառը, պետք է հիշենք, վոր այդ շարժումը ծնունդ էր վորոշ շրջանի, կապիտալիստական հարաբերություն–

ների կատաղի աճման շրջանի, պրիմիտիվ, անզարգացած կապիտալիզմի գոյության շրջանի: Ճիշտ է, այդ շրջանում բանվորների դրությունը սարսափելի էր, ճգնաժամերի ազդեցությունը քայքայիչ, սակայն մյուս կողմից նույն այդ ժամանակի կապիտալիզմը գտնվում էր հասունացման շրջանում, և նրա ուժգին թափով առաջացող ճգնաժամներն ավելի շուտ աճման հիվանդություններ էին, քան զառամության ցավեր: Ճգնաժամերի շրջաններն ու արդյունաբերության ծաղկումներն անասելի արագությամբ հաջորդում էին իրար, նույնպիսի արագությամբ փոխվում էր բանվորի վիճակը, փոխվում էր նաև նրա հեղափոխականության աստիճանը:

Կապիտալիստական հարաբերությունների տհասության արդյունք էր նաև չարտիստական շարժմանը հարած շերտերի խայտաբղետությունը. խայտաբղետություն, որ այնքան ճակատագրական դեր խաղաց այդ շարժման բախտում:

Նույն այդ խայտաբղետությամբ էլ բացատրվում է այն անսովոր տարբերությունը, որ կար տաքտիկական տեսակետներում, և ո՛չ թե բանվորական շարժման դեռ ևս չհասունացած լինելով, ինչպես նաև ծրագրային խնդիրներում գոյություն ունեցող խառնափնթորությունը և ռեակցիոն ուղղությունների գերակշռությունը, որ պրոլետարիատը հողին վերադարձնելուն էին հանգում:

Ճիշտ է, չարտիստական ծրագիրը մոտ էր ազգաբնակության լայն խավերին, սակայն նրանց առօրյա շահերի հետ քիչ կապ ուներ. ընդհակառակը՝ հանգամանքներն այնպես էին դասավորվել, որ չարտիստներն ստիպված յեղան թշնամի դառնալ հացի օրենքների դեմ մղվող պայքարին, թեպետ այդ օրենքի գոյությունը թանկացնում էր բանվորի համար ամենաանհրաժեշտ մթերքը—հացը: Նույնպես հարկադրված էին մի կողմ քաշվել տասժամյա բանվորական օրի համար մղվող պայքարից, որովհետև յերկու կամպանիան էլ մղվում էին այնպիսի դասակարգերի ղեկավարությամբ, որոնք թշնամի էին բանվորական շարժմանը և չարտիզմին:

Այնուամենայնիվ չարտիզմի մատուցած ծառայությունը հսկայական է: Նա առաջին ընդարձակ բանվորական շարժումն յեղավ: Չարտիզմի գլխավոր կադրերը վարձկան բանվորներն էին և նոր դասակարգի՝ պրոլետարիատի ներկայացուցիչները: Չարտիստների վերջնական նպատակն էր ժամանակակից տնտեսական իրավակարգի փոփոխումն մի ուրիշով, որը թեպետ դեռ պարզ չէին ներկայացնում իրենց, բայց որը որոշակի կերպով կապիտալիստական չպիտի լիներ:



Չարտիստները միացրին արտաքինով քաղաքական բնույթի շարժումը՝ տնտեսական նպատակների հետ, նրանք ստեղծեցին պատմության մեջ առաջին բանվորական քաղաքական կուսակցությունը: Սրանով նրանք կարծես գծեցին բանվորական շարժման հեռավորագույն ձևը, և վերջապես նույն չարտիստների մոտ ենք տեսնում բանվորական շարժման միջազգայնության ընձյուղները, այսինքն ընձյուղներն այն յերևույթի, որ իր մեջ ունի ժամանակակից պրոլետարական շարժման հզորագույն ույժն ու կարողությունը:

Մեր առաջ ծառանում է խնդիրն այն պատճառների, որոնց շնորհիվ չարտիզմի յերրորդ ալիքի անկումից հետո՝ նա այլևս չվերակենդանացավ: Սրա պատճառները հետևյալներն էին:

40-ական թվականների վերջում և 50-ականի սկզբներում Անգլիայում խոշոր արտադրությունը վերջնականապես հաղթեց մանր արտադրությանը, և Անգլիան դուրս յեկավ տնտեսական ծաղկման լայն ճանապարհը, որովհետև նա այժմ մոնոպոլիստ դարձած՝ համաշխարհային շուկային արդյունաբերության նյութեր էր մատակարարում:

Անգլիական արդյունաբերության մենաշնորհված դրությունը հնարավորություն էր տալիս անգլիական արդյունաբերողներին իրենց հսկայական վաստակից փշրանքներ տալ բանվորներին, այդ պատճառով էլ վերջիններիս դրությունը 50—60 թվերին համեմատաբար ավելի լավ էր, քան 30—40 թվականներին: Սրա շնորհիվ, այլ և շնորհիվ բանվորների վտարանդիանալուն, որ հետևանք էր Ավստրալիայի և Կալիֆորնիայի ոսկու հանքերի հայտնագործման, անգլիական բանվորները կորցնում են իրենց հեղափոխականությունը: Նրանք դառնում են սուս ու հանգիստ և իրենց պայքարում բավականանում են միայն նեղ, զուտ տնտեսական խնդիրների վճռով: Մի խոսքով՝ նրանք փակվում են իրենց բուրժուազիայի ամուր ձեռքերում: Այդ բուրժուազիան իր ազդեցությունը բանվորների վրա իրագործում է նոր արհեստակցական միությունների միջոցով:

Այս պայմանները դառնագին վողբում էր չարտիստական ամենահեղափոխական առաջնորդներից մեկը—Ջոնսը: «Այս արհեստակցական միությունները բանվորներին ստիպեցին պաշտպանել և պահել տնտեսության ներկա սիստեմը, հավատ ներշնչելով նրանց, թե բանվորական օրավարձը բարձր կմնա առանց որևէ քաղաքական փոփոխության», ասում էր Ջոնսը:

Պիտի ասել, որ անգլիական պրոլետարիատը մինչև օրս էլ չի ազատվել բուրժուական գաղափարների և հասկացողություն–

ների զերումթյունից։ Մինչև օրս էլ դեռ նրա սանձն իր բուրժուազիայի ձեռքումն է։ Ներկայումս իսկական հեղափոխականների, չարտիստների ժառանգներ համարվում են ․ վո՛չ թե հոկայական արհեստակցական միությունները—նրանք մինչև օրս էլ քաշ են գալիս ազատամիտների հետևից․ հեղափոխական չարտիստների իսկական ժառանգ համարվում է փոքրիկ, բայց ամուր և իսկական հեղափոխական բրիտանական կոմմունիստական կուսակցությունը։

---



# IV

# 1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

## I

Բանվորների և արհեստավորների ձեռքով կատարած հեղափոխությունը ֆրանսիական գահը բարձրացրեց բանկիրների և բորսայինների թագավոր Լուի-Ֆիլիպպին։ Սրա գահ բարձրանալու ժամանակ զուր չէր «հեղափոխական» նախարար Լաֆիտը հայտարարում․ «Բանկիրների թագավորության օրը հասավ»։ Լաֆիտըն իրավացի յեր։ Նոր թագավորը շատ սերտ կերպով եր կապված խոշոր բուրժուազիայի հետ․ սրա շահերի յել պաշտպան հանդիսացավ։

Խոշոր բուրժուազիայի տիրապետությունը քաղաքականապես ապահովված եր բարձր ընտրական ցենզով։ Ընտրողի իրավունք ձեռք բերելու համար տարեկան յերկու հարյուր ֆրանկ հարկ պետք եր վճարել․ իսկ ընտրված լինելու համար՝ հինգ հարյուր ֆրանկ։ Այսպիսով վո՛չ միայն բարրիկադների վրա կռվող բանվորներն ու արհեստավորներն եյին հեռացված քաղաքական կյանքից, այլ և 225·000 ընտրողների ցուցակը կարող եյին մտնել միայն խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները․ իսկ միջին և մանր բուրժուազիան դուրս եր մնում քաղաքական կյանքից։

Խոշոր ֆինանսական բուրժուազիան փայլուն կերպով եր օգտագործում իրեն մնացած քաղաքական կյանքը՝ Ֆրանսիան իր կթի կովը դարձնելով։ Դրամի կարիք ունեցող պետության փոխառությունների միջոցով դրամ տալով, ֆինանսիստները տոկոսներ եյին կորզում։ Այդ տոկոսները վճարվում եյին ազգաբնակությունից ժողովվող տուրքերով։ Վորովհետև յուրաքանչյուր նոր բյուջեն դեֆիցիտով եր փակվում, ուստի այդ դեֆիցիտները ծածկելու համար նոր փոխառությունների կարիք եր զգացվում, դրանից էլ ֆինանսիստները նոր վաստակ եյին ստանում։ Սրան պիտի ավելացնել նաև բորսային սպեկուլյատիվ գործարքները, վորոնց կատարումը շատ եր հեշտանում շնորհիվ կառավարության մեջ նստած իրենց մարդկանց։ Հենց նոր յերկաթուղիների

կառուցումն սկսվեց, այս արդյունավոր ձեռնարկությունն ես ֆինանսական տուզերի ձեռքն անցավ...

Ֆինանսիստների մի խմբակի տիրապետությունից տուժում եր մնացած ամբողջ ազգաբնակությունը:

Այս բոլորից բացի ֆինանսիստները տեր եյին այդ ժամանակ գոյություն ունեցող խոշորագույն արդյունաբերական ձեռնարկների՝ փայատերեր եյին խոշոր ակցիոներական ընկերությունների: Այս պատճառով պետության մաքսային քաղաքականությունն ընթանում եր խոշորագույն ֆինանս-արդյունաբերական տուզերին ձեռնտու հունով: Պարզ ե, վոր սրանից տուժում եր միջին արդյունաբերական բուրժուազիան: Այսպես թուջի, յերկաթի և քարածուխի արգելիչ մաքսերն «արդյունաբերական ֆեոդալների» հարստությունն ավելացնելով, չափազանց ծանր կերպով եյին ազդում ֆրանսիական արդյունաբերության վրա՝ թանկացնելով հումույթն ու վառելիքը: Այն ժամանակ, յերբ ածուխի հեկտոլիտրը Անգլիայում արժեր 0,55 ֆրանկ, Ֆրանսիայում արժեր 5,2 ֆր., իսկ անգլիական յերկաթը Ֆրանսիայում յերկու անգամ ավելի թանգ եր, քան Անգլիայում:

Այս բոլորի հետևանքն այն յեղավ, վոր միջին և մանր բուրժուազիան սկսեց թշնամաբար տրամադրվել դեպի կառավարությունը:

Հեշտ չեր նաև գյուղացիության դրությունը: Կապիտալը թափանցելով գյուղը, խորացնում ե գյուղացիության շերտավորումը: Հարյուր հազար խոշոր հողատերերին, վորոնք առնվազն 120 հեկտար հող ունեյին, ընկնում եյին 3·500 հազար միջակ հողատերեր՝ 35 հեկտարից պակաս հողով և 3·750 հազար հողատերեր, վորոնք 5 հեկտարի չնչին քանակություն ունեյին:

Այս միջին ու մանր հողատերերը խեղդվում եյին հարկերի ծանրությունից և հարկադրված եյին մի քանի անգամ գրավ դնել իրենց չնչին հողամասերը: Սրանից հետո մեզ համար պարզ պիտի լինի, թե ինչու հողատերերի վրա ընկած գրավի պարտքերը 11,25 միլլ. ֆրանկի եյին հասնում, իսկ սրանց տոկոսը վճարելու համար տարեկան ծախսվում եր 560 միլլ., այսինքն՝ յերկրագործի մաքուր յեկամտի ⅓ մասը: «Անհատ կապիտալիստներն, ասում ե Մարքսը—գրավի պարտքերով ու վաշխառությամբ են շահագործում անհատ գյուղացիներին: Կապիտալիստների դասակարգը գյուղացիներին պետական հարկերով ե շահագործում»:

Սակայն ամենից ծանրը բանվորների և արհեստավորների վիճակն եր: Յերեսնական և քառասնական թվականները մանր արտադրումից խոշորի անցնելու շրջանն եր, վոր սկսվել եր Ռեստավրացիայի ժամանակ: Մենք արդեն գիտենք, վոր տնտեսական կյանքի այս պրոգրեսի համար բանվորն իր կողերով եր վճարում:



Հիրավի, հուլիսյան միապետության ժամանակ Ֆրանսիայի կատարած տնտեսական պրոգրեսը շատ եր խոշոր: Այսպես, յերկաթի արդյունաբերությունը բարձրացավ յերկու անգամ (1833-ին 714·000 տոնն, 1847-ին՝ 1·683·000 տոնն), քարածուխինը՝ 3½ անգամ (1831 թ.—2·000·000 տոնն, 1897-ից—7·000·000 տոնն):

Մեքենաների գործածությունն ավելի ու ավելի յեր տարածվում. և խոշոր բուրժուազիան այս բոլորում վոսկու կույտեր եր վաստակում, իսկ քաղաքական իշխանությունը, վոր նրա ձեռքումն եր, ամենաանխիղճ շահագործման հնարավորություն եր տալիս նրան:

Ինչպես և Անգլիայում, մեքենան գործարան քաշեց կանանց ու յերեխաներին, վորի շնորհիվ տղամարդկանց գործազրկության և որավարձի անկում առաջ յեկավ: Աշխատանքի պայմանները սոսկալի եյին. որական—15, 17 և 18 ժամ աշխատանքն ամենասովորական յերևույթ եր: Աշխատանքի աննշան վարձատրությանը զուգընթաց եյին մթերքների բարձր գները: Այս հանգամանքների շնորհիվ յուրաքանչյուր 29 բանվորից ու արհեստավորից մեկն ապրում եր ի հաշիվ բարեգործության, իսկ զինվորական ծառայության կանչված 10·000 հոգուց 8·900 այդ ծառայությանն անընդունակ դուրս յեկան: Մի խոսքով, Ֆրանսիայի աշխատավորությունը ֆիզիքական մարումի և բարոյական այլասերման եր դատապարտված: Ծանր եր նաև արհեստավորների վիճակը, վորոնք տնքում եյին խոշոր արդյունաբերության կրունկի տակ: Հուլիսյան որերի հերոսները—այն մարդիկ, վորոնց ձեռքով ստեղծվեց հուլիսյան միապետությունը, սովի, չքավորության և իրավազուրկ վիճակի եյին դատապարտված:

Ի հարկե՝ պետական ապարատում պինդ նստած բուրժուազիան կատարելապես անտարբեր եր դեպի ստորին դասակարգերի տառապանքը: «Մեր գործն ե որենքներ հրատարակել և վո՛չ թե մտածել բանվորների աշխատանքի մասին»-ասվել ե պատգամավորների պալատում՝ շաքարի արդյունաբերության բանվորների աղքատիկ ու ծանր դրության առթիվ: Գիզոն, վոր յերկար ժամանակ բուրժուա-թագավորի կառավարության գլուխ եր, ասաց. «Չքավոր դասակարգի կամայականություններից մեզ ապահովելու համար մի միջոց միայն ունենք.—աշխատանք և հարատև աշխատելու անհրաժեշտություն նրա համար»:

Ի՞նչ զարմանք, ուրեմն, վոր իրերի այս դրությամբ հուլի-

սյան միապետության գոյության առաջին տարիներն աչքի ընկան մի շարք ապստամբություններով։ Հանրապետականները, վորոնք տանուլ էին տվել 1830 թ. հեղափոխությունը, չկարողացան դրա հետ հաշտվել. ամբողջ Ֆրանսիայում ցրված նրանց գաղտնի ընկերությունները ընդհատակյա ուժեղ աշխատանք էին տանում։

Սակայն առաջին ապստամբությունը, վոր տեղի ունեցավ Լիոնում, զուտ տնտեսական բնույթի յեր։ Լիոնը մետաքսի արդյունաբերության կենտրոնն էր։ Այնտեղ ֆաբրիկաներ չկային, հազարավոր փոքրիկ տերեր աշխատում էին հարուստ վաճառականների պատվերով։ Իրենք հարստահարվում էին վերջիններից, իրենց հերթին էլ շահագործում էին բանվորներին ու յենթավարպետներին։ Ինչպես այս յենթավարպետների, այնպես էլ փոքրիկ տերերի դրությունը չափազանց ծանր էր, վորովհետև ամբողջ շահը և բարիքը մնում էր հարուստ պատվիրատուներին։ Շքեղության իրերի, դրանց թվում նաև մետաքսեղենի, պահանջը՝ շնորհիվ 1830 թ. հեղափոխության՝ զգալի կերպով կրճատվեց և Լիոնի բանվորների ու արհեստավորների համար սև որեր յեկան։ Այդ ժամանակ այդ փոքրիկ տեր արհեստավորների գլխում միտք հղացավ՝ թույլ չտալ, վոր աներևակայելի ցած մակարդակի հասած որավարձը շարունակի ընկնել։ Դրա համար հարկավոր էին համարում սակագին՝ տարիֆ սահմանել, վոր պարտադիր պիտի լիներ վաճառականների համար։

Բանվորական ցույցերի ազդեցության տակ վաճառականները համաձայնեցին այդ տարիֆներին, սակայն հետագայում դադարեցին նրան հաշվի առնել։ Վրդովված ու զայրացած բանվորներն ապստամբեցին։ Քաղաքում քիչ զորք կար, բանվորական «Շեկ թաղամասն» իշխում էր մնացած քաղաքի վրա և բանվորները հաղթեցին։ Լիոնը նրանց ձեռքն ընկավ։

Հենց այստեղ յերևաց բանվորների ամբողջովին անգիտակից ու անկազմակերպ լինելը։ Քաղաքի տերերը դառնալով, նրանք բառի բուն իմաստով վոչինչ չկարողացան անել՝ վո՛չ իշխանությունն իրենց ձեռքում պահելու, վո՛չ այդ իշխանությունն իրենց ոգտին ծառայեցնելու։ Նրանք խուլ մնացին հանրապետականների կոչին, վորոնք աշխատում էին ոգտագործել հեղաշրջումը՝ իրենց գաղափարներն իրականացնելու։ Բանվորները կատարելապես լոյալ մնացին կառավարության նկատմամբ։ Հետևանքն այն յեղավ, վոր թագավորական զորքերը թագավորի տղայի և մարշալ Սուլտի գլխավորությամբ քաղաք մտան՝ առանց վորևէ դիմադրության, արհեստավորները նույնիսկ վողջունեցին նրանց։



Լիոնցիների յելույթի իմաստը բուրժուազիան ավելի լավ գնահատեց, քան բանվորությունը։ Այս դեռ ևս լավ չհասունացած փորձում նա պրոլետարիատի ապագա ահեղ յելույթների նախանշաններն էր տեսնում։ Ապստամբությունը ճնշելուց հետո պատգամավորների պալատը դիմեց կառավարությանը՝ շնորհակալական ադրեսով, ուր ասված էր, թե «կառավարությունն ամեն տեսակ անիշխանություն ճնշելու և սրբազան սկզբունքներ ամրացնելու գործում կարող է հույս դնել բոլոր դասակարգերի պաշտպանության վրա, վորովհետև այդ սկզբունքների վրա յե հիմնվում հասարակության գոյությունը»։

Այդ ժամանակ ընդհատակյա հանրապետականներն սկսել էին թափանցել սոցիալիստական գաղափարների շուրջը և ուշադրություն դարձնել բանվոր դասակարգի դրության վրա։ Հանրապետական ընկերությունները, վորոնք առաջ լեցուն էին մանր բուրժուաներով և չքավոր ինտելլիգենտներով, այժմ սկսեցին ավելի գիտակից բանվորներով լցվել։ Արդեն 1832 թվին հանրապետական առաջնորդներից մեկը դատավարության ժամանակ հայտարարեց, թե իր խմբակը «ձգտում է աշխատանքի կազմակերպման և բացասաբար է վերաբերվում, յերբ տեսնում է կապիտալի շահագործելը բանվորներին»։ Հանրապետական «Մարդկային իրավունքների ընկերությունը» իր կոչի մեջ հայտարարում էր. «Մենք վոչ այնքան քաղաքական, վորքան սոցիալական վերաշինության ենք ձգտում»։ Հենց Լիոնում հրատարակվող հանրապետական լրագիրն իր հոդվածներից մեկում գրում էր. «Հանրապետականը կենդանի զգացմունքով է շարժվում և միշտ պատրաստ է ամեն տեսակ զոհաբերության, վոր կարողանա բարելավել աշխատավորների, յերկրագործների և վերջապես պրոլետարիատի դրությունը, վորոնք հասարակության ահագին մեծամասնությունն են կազմում»։

Այդ ժամանակին է վերաբերում նաև մեծ հեղափոխական կոմմունիստ Բլանկիի գործունեության սկիզբը։ Հենց նա, վոր դատի յեր տրվել «անթույլատրելի ընկերություն» կազմելու համար, դատավարության ժամանակ հայտնեց, թե «ժամանակակից հասարակության մեջ գոյություն ունի հարուստների և աղքատների կռիվ. կռիվ, վորի պատճառը հարուստներն են, արտոնվածները կերակրվում ու պարարտանում, ճարպակալում են չքավորների հաշվին։ Պատգամավորների պալատը մի անխիղճ մեքենա յե, վոր ճնշում է 5·000·000 բանվորների և 25·000·000 գյուղացիների։ Նա ճնշում է, վորպեսզի նրանցից հյութ—հարկեր քամի... Սա իսկական կողոպուտ է»։

Այսպիսի տրամադրություններով տարված հասարակապետական ընկերություններն ապստամբությունն ապստամբության հետևից էին առաջ բերում։ Կառավարությունն այս բոլորին պատասխանում էր խստություններով, մամուլը ճնշելով և վերջապես բոլոր միությունների ու ընկերությունների դեմ դաժան որենք հրատարակելով։

Այդ ժամանակ Լիոնը նորից գլուխ բարձրացրեց (1834 թ. ապրիլ)։ Այդտեղ այդ ժամանակ՝ հասարակապետական պրոպագանդայի և զանազան բանվորական միությունների աշխատանքի շնորհիվ աշխատավորների գիտակցությունը բավական բարձրացել էր, իսկ միություններն ու փոխօգնության կազմակերպություններն սկսել էին աչքի ընկնող դեր կատարել։ Իրենք՝ բանվորներն էին զինված ելույթ պահանջում՝ ի պաշտպանություն իրենց կազմակերպությունների, վորոնց նոր որենքը հարվածի տակ էր դրել։ Հասարակապետական գաղտնի ընկերություններն իրենց վրա վերցրին այն սակավ-պատրաստված ապստամբության ղեկավարությունը։ Այս ապստամբությունը շատ արյունահեղ եղավ։ Ապստամբները մեծ արիություն հանդես բերին, սակայն ուժերի և տեխնիկայի գիտակցությունը կառավարական զորքերի կողմն էր, վորոնք մի ամբողջ շաբաթ փողոցներում կռվելուց հետո՝ հաղթանակ տարան։

Լիոնին հետևեցին Փարիզն ու մի քանի այլ արդյունաբերական քաղաքներ՝ բոլորն էլ նույն վողբերգական հետևանքներով։ Վերջին ապստամբությունը ծագեց 1839 թվին, վորից հետո բուրժուական թագավորի միապետությունն ամբողջ ինը տարի արտաքուստ կատարյալ խաղաղություն էր վայելում։ Այդ ժամանակ Փարիզում ապրող բանաստեղծ հեղափոխական Հեյնեն գրում էր. «Ֆրանսիայում մեծագույն հանդարտություն է տիրում։ Դժգույն, քնկոտ ու հորանջող խաղաղություն—ամեն ինչ լուռ է, ինչպես ձմեռային ձյունոտ գիշերին։ Մի բան միալար կաթում է. դա տոկոսն է, վոր կաթում է դրամագլխի վրա։ Պարզ լսվում է, թե ինչպես աճում է հարուստների այս սեփականությունը. հենց այստեղ էլ չքավորության հառաչն է լսվում...»։

Սակայն այս հանդարտությունը միայն արտաքին էր։ Յեթե կառավարությունն ու նրա մոտիկ շրջանակները հաղթեցին բանվորա-արհեստավորական ապստամբությանը, այդ գլխավորապես նրա համար, վոր այդ կռվում կառավարական զորքերին միանում էր ազգային գվարդիան։ Բայց, ինչպես արդեն ասել ենք, բուրժուազիայի ֆինանսական շրջանների տիրապետությունը կամաց կամաց կառավարության դեմ էր հանում բուրժուազիայի մնա-



ցած խմբերը, իսկ 1840 թվին նա բավական համարձակ ոպոզիցիոն ույժ էր։

Այս ոպոզիցիայի ձախ թևը կազմում էին հեղափոխական հասարակապետականները, վորոնք գաղտնի կազմակերպությունների կորիզն էին կազմում։ Նրանք առնվում էին մանր բուրժուազիայի ամենաչքավոր խավերից, չքավոր ինտելլիգենցիայից և գիտակից արհեստավորներից ու բանվորներից։ Նրանց մեջ կոմմունիստական աշխարհայացքի մի խմբակ կար, վորի ղեկավարը Բլանկին էր։ Նրանցից շատերը, ինչպես արդեն գիտենք, գոյություն ունեցող հարաբերությունների վորոշ փոփոխություններ էին ուզում, սակայն իրենք մանր բուրժուա-սեփականատերեր լինելով, պնդում էին մանր սեփականությունը պահպանելու վրա։ Նրանք պահանջում էին, վոր կառավարությունը միջամտի բանվորների և կապիտալիստի հարաբերություններին. «Բանվորները,—գրում էին նրանք—այժմ մասնավոր կապիտալից են կախված. անհրաժեշտ է, վոր նրան ոգնության գա պետությունն՝ իր ավելի հզոր ռեսուրսներով... Մենք պնդում ենք, վոր ի նկատի առնելով արդյունաբերական զարգացումը, վարկերն ազգայնացվեն»։

Քայքայված մանր բուրժուազիայի համար վարկերի այս ազգայնացումը շատ բնորոշ յերևույթ է։ Դրամի բացակայությունից նա ամենից շատ է տուժում, վորովհետև այդ դրամը նրան անհրաժեշտ է՝ նյութեր և գործիքներ գնելու։ Այդ պատճառով էլ նրա թշնամին՝ վաշխառուն ու խոշոր գնորդը կապում, կաշկանդում էր նրա վարկը։ Այս խմբակն իր գաղափարները տարածում էր «Ռեֆորմա» լրագրի միջոցով։ Նրա առաջնորդն էր հռչակավոր հռետոր Լեդրյու-Ռոլլենը։

Միջին բուրժուազիան և ունևոր ինտելլիգենցիան խմբվել էին ավելի չափավոր հասարակապետականների և «Նացիոնալ» լրագրի շուրջը։ Նրանք թշնամաբար էին վերաբերվում տնտեսական կյանքի վորևէ փոփոխությանը։ Նրանց պահանջը միությունների ազատությունից և միջնորդ դատարաններից դենը չէր անցնում։

Խոշոր արդյունաբերությունը, վոչ ֆինանսական բուրժուազիան, իր ներկայացուցչությունն ուներ պատգամավորների պալատում և այստեղ ֆրակցիաներ ուներ ձախ կենտրոնը և դինաստիկական ձախը։ Նա դինաստիկական էր կոչվում, վորովհետև կողմնակից էր, վոր գահը մնա ներկայումս թագավորող տոհմին։ Նա ձգտում էր իշխանության հասնել՝ առանց տիրող կարգը փոխելու։ Այս խմբակները կողմնակից էին վորոշ զիջումների, հա-

սարակաց կարծիքին և ընտրական ցենզը մինչև 100 ֆրանկ իջեցնելուն: Չափավոր հասարակապետականների ցանկությունն եր, վոր այն բոլոր ազգային գվարդիականները, վորոնք կարող եյին զինվել ու հագնվել իրենց հաշվով, ընտրական իրավունք ստանան: Իսկ հասարակապետական հեղափոխականներն ընդհանուր ընտրական իրավունք եյին պահանջում:

Կառավարությունն այս պահանջներին խուլ եր: Ցենզն իջեցնելու անհրաժեշտության մասին արած բոլոր դիմումներին կառավարության գլուխ Գիզոն պատասխանում եր. «Հարստացե՛ք, աշխատեցե՛ք և դուք ընտրողներ կդառնաք»: Իսկ ընդհանուր ընտրական իրավունքը նրա աչքում «անհեթեթ սխալ եր, վոր ամեն արարածի թույլ եր տալիս քաղաքական իրավունքներին մասնակցելու»:

Հուլիսյան միապետության քաղաքականության մեջ մի կողմ ել կար, մի կողմ, վոր նրան ատելի յեր դարձնում մանր և միջին բուրժուազիայի համար: Լուի-Ֆիլիպը և նրա կառավարությունը շատ շուտ մոռացան իրենց հեղափոխական ծագումը: Ինչպես արդեն գիտենք, կառավարությունը վո՛չ միայն չեր պաշտպանում ուրիշ յերկրներում առաջացող հեղափոխական բռնկումները, այլ և ինքը շտապով սկսեց խաղեր սարքել սև հարյուրյակային Ավստրիայի հետ և ամենուրեք պաշտպանել բռնակալներին:

Ամենից շատ յերկյուղ կրելով ներքին գործերի մեջ առաջ գալիք բարդություններից, նա անսովոր կերպով պատրաստակամ եր Անգլիայի պահանջների հանդեպ:

Պատերազմի և ներքին բարդությունների, այն ել վո՛չ միայն հեղափոխական պատերազմների, այլ և ընդհանրապես պատերազմների վախը բացատրվում եր նրանով, վոր ամեն տեսակ ներքին դժվարություն շատ վատ եր անդրադառնում պետական արժեթղթերի և բորսայի դրության վրա. այսինքն այն բոլորի վրա, ինչ վոր այնքան կարևոր եր ֆինանսների և դրամական տուզերի համար:

Այս բոլորը չափազանց վիրավորական եր մանր բուրժուազիայի համար, վոր գերված եր հեղափոխական և Նապոլեոնյան պատերազմների հուշերով, ուստի նրա ոպոզիցիոն վերաբերմունքը կառավարության նկատմամբ գնալով ավելանում եր:

Քառասնական թվականներից ապստամբական բռնկումները դադարում են, և մասսաները խուլ թշնամանք են թաքցնում իրենց հոգու խորքում՝ դեպի տիրող իրավակարգը:



Հենց այդ ժամանակից ել աշխատավոր մասսաների ավելի առաջադեմ ներկայացուցիչներն սկսում են նկատելի կերպով հետաքրքրվել այն խնդրով, թե ինչպե՞ս փոխել հասարակական իրավակարգը, վոր իրենց ոգտին լինի: Այն ժամանակ այս հարցին սոցիալիզմի շատ ուսուցիչներ են պատասխանել, սակայն դրանցից ամենահեղինակավոր Լուի Բլանը և Պրուդոնն են:

Լուի Բլանը յելնելով մրցակցական պայքարից, վոր հալումաշ եր անում ժամանակակից հասարակությունը, պայքար, վոր նրա կարծիքով միատեսակ վնասակար եր թե՛ բուրժուազիայի, թե՛ բանվորների համար, նրան արմատախիլ անելու համար պահանջում եր «աշխատանքը կազմակերպել», այսինքն վոչնչացնել արտադրական միջոցների մենաշնորհը կապիտալիստների դասակարգի կողմից և այդ ամենը հանձնել բանվորական արտադրողական ընկերություններին: Լուի Բլանն այն կարծիքի յեր, թե այդ ընկերությունները ժամանակին կընդգրկեն արտադրության բոլոր ճյուղերը, ուրեմն և յերկրագործությունը:

Այս ընկերությունների մեջ պիտի մտնեյին բանվորներն ու ձեռնարկատերերը, վորոնք պիտի ստանային իրենց հոցրած կապիտալի տոկոսները: Բայց վորովհետև այդ ասոցիացիան կազմելու համար բանվորները հարկավոր դրամական միջոցներ չունեյին, դրանց ել պիտի ոգներ պետությունը, վորն այդ նպատակով կարող եր իր ձեռքն առնել բանկերն իրենց միջոցներով:

Լուի Բլանի քարոզած ուսմունքն ամբողջովին գտնվում եր զարգացման այն մակարդակի վրա, վորին հասել եր ֆրանսիական կապիտալիզմը: Մինչ այդ խոշոր արդյունաբերության հարվածների տակ մեռնում եր մանր արհեստը, բանվորները վոչնչանում եյին աշխատանքի ծանր պայմաններից, սակայն վո՛չ բանվոր դասակարգում, վո՛չ ել կապիտալիզմում դեռ չեյին ստեղծվել այն ելեմենտները, վորոնցով կարելի լիներ ապագա հասարակության զարգացումը նախագուշակել: Այս պատճառներով Լուի Բլանը բոլորովին սխալվում եր կարծելով, թե այդ նոր հասարակությանն անցնելով շահագրգռված են վո՛չ միայն պրոլետարիատն, այլ և բուրժուազիան, և թե պետությունը կհամաձայնի իր վրա վերցնել այդ նոր հասարակությունը կազմակերպողի դերը: Լուի Բլանը չի հասկանում բանվորական շարժման դերը և չի տեսնում հեղափոխական ճանապարհով իշխանություն ձեռք գցելու անհրաժեշտությունն, իր հույսը դնելով դեմոկրատիայի և ընդհանուր ձայնատվության վրա:

Պրուդոնը, հակառակ Լուի Բլանին, ուշադրություն եր դարձնում վո՛չ թե աշխատանքը, այլ վարկը կազմակերպելու վրա, վոր շատ լավ կհամապատասխաներ քայքայվող մանր բուրժուազիայի պետքերին ու շահերին։ Հայտարարելով՝ «սեփականությունը գողություն ե» լոզունգը, նա թշնամի չեր միայն խոշոր սեփականությանը. ընդունում եր մանր սեփականության անսասանելությունը, և առավելագույն ատելությունն եր տածում դեպի կոմմունիստները։ Արտադրական միջոցները համայնացնելուն Պրուդոնը բացասաբար եր վերաբերվում։ Նա կարծում եր, թե հեղափոխության նպատակը լինելու չե «բուրժուազիայի և պրոլետարիատի կազմալուծումը մի նոր միջին դասակարգում»։ Պրուդոնը դեմ եր նաև պետության միջամտությանը բանվորի և կապիտալիստի փոխհարաբերությունների մեջ. վո՛չ մի արժեք չեր տալիս բանվորական շարժմանը և անհանդուրժելի չեր համարում բանվորական գործադուլները։ Չնայելով այս բոլորին, նրա ուսմունքը մեծ ժողովրդականություն եր գտել այդ ժամանակի պրոլետարական շրջաններում, վորովհետև դրա մեջ մանր բուրժուական և արհեստավորական էլեմենտներ շատ կային։ «Փոխադարձ սպասարկման», ձրի վարկի և մանր սեփականությունը պահպանելու քարոզ—ահա թե ինչն եր դեպի Պրուդոնը տանում արհեստավորներին և արհեստավորական հոգեբանություն ունեցող բանվորներին։

II

Մասսաների խուլ անբավականությունը և ընդհատակյա կազմակերպությունների աշխատանքը յերբեմն ընդհատվում եյին, դրսևորվելով մահափորձերով՝ Թագավորի դեմ։ Սրանից օգտվելով կառավարությունն, ավելի յեր վոլորում խստությունների պտուտակը։ Միաժամանակ աշխատում եր պոչատել պարլամենտական ոպպոզիցիան։ Ոպպոզիցիան ել այս պայմաններում, չնայելով իր չափավորությանը, հարկադրված եր լինում հասարակաց կարծիքին զիջելու։ Նրա պատգամավորներն սկսեցին ստորագրության թերթիկներով բանկետներ, հասարակական ճաշեր սարքել, ուր քաղաքական ճառեր եյին արտասանվում։

Ճիշտ քառասնական թվականների վերջերին հանգամանքներն այնպես դասավորվեցին, վոր պարլամենտական ձախերի սերմերն սկսեցին պարարտ հողի վրա ընկնել և այնպիսի ծիլեր տալ, վոր կերևի իրենք պարլամենտականներն ամենից քիչ կսպասեյին։

Ֆրանսիայում 1846 թվին կարտոֆիլը մի ինչ վոր հիվանդությունից փչացավ, վորի շնորհիվ առանց այն ել հարկերի ծանրության տակ ճզմված գյուղացիության դրությունը վատթարացավ. նույն վիճակն ուներ քաղաքի չքավոր դասը, վորի միակ կերակուրը կարտոֆիլն եր։ Իսկ հաջող 1847 թվին Ֆրանսիայում ինչպես և ամբողջ Յեվրոպայում արդյունաբերական տագնապ եր։

Տագնապը, խիստ հարվածեց ինչպես բանվորներին, այնպես ել մանր բուրժուազիային, մանավանդ Փարիզի բանվորներին ու արհեստավորներին։ Սրա շնորհիվ մթնոլորտն այնքան շիկացավ, վոր սկզբում անմեղ բանկետային կամպանիան, վորի նպատակն եր ընդարձակել ընտրական իրավունքը, բոլորովին այլ բնույթ ընդունեց։ Հեզահամբույր պարլամենտականների փոխարեն բանկետներին սկսեցին յերևալ ձախ հասարակապետականները, վորոնք կրակոտ ճառեր եյին արտասանում։

Այդ բանկետները 1848 թ. սկզբներում այնպիսի բնույթ ստացան, վոր կառավարությունը հարկադրված յեղավ նրանց դեմ միջոցներ ձեռք առնել։ Ճիշտ այդ ժամանակ ել սկսվեց իտալական ապստամբությունը *։

Հենց այդ ժամանակ ել Ֆրանսիայում այնպիսի դեպքեր տեղի ունեցան, վորոնք նպաստեցին հասարակության հեղափոխականացմանը. կառավարությունը խայտառակվեց պաշտոնյաների մի չափազանց աղմկալի դատավարությամբ։ Այդ պաշտոնյաները մեղադրվում եյին ամենաամոթալի արարքներում՝ հսկայական կաշառակերության մեջ։

Յերբ փետրվարին արգելվեց արդեն նշանակված մի բանկետ և յերբ պարլամենտական ոպպոզիցիան այն ե, ուզում եր կուլ տալ այդ դեղահատը, փարիզյան մասսան—արհեստավորները, բանվորները և ուսանողները, բանկետ նշանակված որը շարժվեցին պատկառելի ցույցով։ Վոստիկանության հետ ընդհարում տեղի ունեցավ և հեղափոխական շարժումն սկսվեց։

Այս ընդհարումները, վորոնք առաջ ել հաճախ եյին տեղի ունենում, այս անգամ խիստ կատաղի բնույթ ստացան. սակայն բազմության մեջ, վոր կռվում եր զինվորների և ժանդարմների դեմ, իհարկե վոչ մի ոպպոզիցիոներ պատգամավոր չկար։ Նրանք բավականացան անարժեք մեղադրանքներ կազմելով կառավարության հասցեյին, վորոնցով հանդես յեկան պալատում։ Իսկ

* Իտալիան այդ ժամանակ բաժանված եր բազմաթիվ մանր պետությունների և փաստորեն գտնվում եր Ավստրիայի իշխանության տակ։

յերբ շարժումը շատ հեռու գնաց, յերբ Փարիզի փողոցներում հսկայական ճակատամարտ սկսեց տեղի ունենալ, օպպոզիցիայի առաջնորդները, վախեցած իրերի յոլքից, փորձեցին կանգնեցնել հեղափոխական հոսանքը։ Նրանք մի կոչ բաց թողեցին, վորում հայտնում եյին, թե իրենք նշանակված են նախարարներ, թե զորքերին հրամայված ե չկրակել և այլն։ Բայց կանգնեցնել հեղափոխությունն այլ ևս անկարելի յեր։ Ազգային գվարդիան, վոր ըստ մեծի մասին միջին բուրժուազիայից եր կազմված, վոչ մի տեղ չպաշտպանեց պետական զորքերին, ուստի սրանց դիմադրությունը կոտրվեց և Լուի-Ֆիլիպպին մնաց միայն գահից հրաժարվել։

Բուրժուազիան նորից եր մտածում հեղափոխության իսկական գլուխ բերողներին զանց առնել. սակայն բարրիկադային մարտիկների մի բազմություն պատգամավորների պալատը խուժելով, Լեդրյու-Ռոլլենին հարկադրեց կարդալ ժամանակավոր կառավարության ցուցակը։ Պահանջը կատարվեց ընդհանուր իրարանցման և աղմուկի մեջ։ Այս չափազանց խայտաբղետ ցուցակին՝ քաղաքային վարչության մեջ, վոր լցված եր բացառապես բանվորներով, ավելացրին այդ ժամանակ ամենատարածված և ժողովրդականություն վայելող սոցիալիստական տեսության հեղինակ Լուի Բլանին և ընդհատակյա կազմակերպությունների գործիչ բանվոր Ալբերին։ Սա կառավարության նիստին յեկավ ուղղակի այն արհեստանոցից (կոճակների), վորտեղ աշխատում եր, իր բանվորական վերնաշապիկով։ Սա առաջին դեպքն եր, յերբ իսկական պրոլետարը կառավարության մեջ եր մտնում...

Իհարկե կառավարության մեջ մի պրոլետարի լինելն այդ կառավարությունը պրոլետարական չդարձրեց։ Ընդհակառակն՝ իր կազմով նա բուրժուական եր. նրա մեծամասնությունը չափավոր հասարակապետականներից եր, այսինքն միջին բուրժուազիայի ներկայացուցիչներից։ Մանր բուրժուազիան նրանում յերկու ներկայացուցիչ ուներ, վորոնցից մեկը Լեդրյու-Ռոլլեն եր, իսկ պրոլետարիատը, վոր «սոցիալական» (այդպես եյին ասում այդ ժամանակ) հասարակապետության մասին եր յերազում, ներկայացված եր Լուի Բլանով և Ալբերով։

Յեվ այսպես, թեպետ բուրժուազիան չկարողացավ կատարելապես հաղթել աշխատավորներին, սակայն այս վերջիններն ել վճռական հաջողություն չունեցան։ Հենց առաջին մոմենտից նրա և կառավարության մեջ տարաձայնություններ առաջացան։

Ամենից առաջ՝ բանվորներն ուզում եյին անմիջապես հասարակապետություն հայտարարել. կառավարությունը տատանվում եր. նրա ձախ մասը պնդում եր այդ ակտի վրա, իսկ աջը՝ հակառակ եր. այդ պատճառով ել կառավարական դեկլարացիան միայն հասարակապետական ձևի նախապատվության մասին եր խոսում։

Բարրիկադային մարտիկներն այս նոր կառավարությանը տանել չկարողացան.—զինված ամբոխն անձնվեր հեղափոխական և սոցիալիստ Ռասպայլի առաջնորդությամբ ներկայացավ ժամանակավոր կառավարությանը և ժողովրդի ցանկացած հասարակապետության հայտարարումը պահանջեց։

Բանվորները «սոցիալական հեղափոխություն» եյին պահանջում և նրանց այս ցանկությունն արտահայտող խորհրդանշանը պիտի լիներ կարմիր դրոշակը՝ վորպես պետական դրոշակ։ Կառավարության բուրժուական մեծամասնությունը նախկին յեռագույն դրոշակի վրա յեր պնդում։ Վերջ ի վերջո վճռվեց ունենալ յեռագույն դրոշ՝ վրան կարմիր փողպատ։

Այս խորհրդանշանը շատ ճիշտ եր բնորոշում իրերի դրությունը. աշխատավոր մասսաների սոցիալական պահանջների բավարարումը մնաց վորպես կարմիր փողպատ՝ կպած յեռագույն բուրժուական հասարակապետությանը։

Բանվորները շարունակում եյին իրենց պահանջներն առաջադրել. նրանց ցանկածը Լուի Բլանի հայտարարած աշխատանքի իրավունքի իրագործումն եր. այսինքն՝ աշխատանք ունենալու և աշխատանք կազմակերպելու հնարավորություն ունենալը։ Բանվորների այս պահանջների հետևանքով կառավարությունը դեկրետ հրատարակեց, վոր ասում եր. «Կառավարությունն այսուհետև պարտավորվում ե աշխատանք տալ բոլոր քաղաքացիներին»։ Ի հարկե այս դեկրետը մի կատարելապես գիտակցական խաբեբայություն եր, վոր նպատակ ուներ՝ յետ պահել բանվորներին նոր կառավարության դեմ ելույթներ ունենալուց։

Այնուհետև բանվորները պահանջեցին, վոր աշխատանքի նախարարություն կազմակերպվի։ Կառավարության բուրժուական մեծամասնության աչքում այս պահանջի իրագործումը մի քայլ եր դեպի սոցիալական հանրապետությունը։ Չնայած բանվորական ցույցերին, Լուի Բլանի զիջողության շնորհիվ ամեն ինչ կոմպրոմիսի հանգավ։ Աշխատանքի նախարարություն չկազմվեց, այլ կազմվեց մի հանձնաժողով, վորը պիտի մշակեր աշխատավորների դրությանը վերաբերող խնդիրները։

Այս Լյուքսեմբուրգյան (այսպես եր կոչվում Լյուքսեմբուրգյան պալատում գտնվելու պատճառով) հանձնաժողովի կազմը՝

Լուի Բլանի և Ալբերի մասնակցությամբ, մի շատ ճարպիկ շախմատային քայլ եր, վոր անում եր կառավարության բուրժուական մասը: Սոցիալիստ Լուի Բլանը և պրոլետարիատի ներկայացուցիչ Ալբերին փաստորեն դուրս քշվեցին ժամանակավոր կառավարությունից: Նրանց վրա ահագին պատասխանատվություն եր ընկնում՝ հանդեպ բանվոր դասակարգի, մինչդեռ նրանց ձեռքը վոչ մի միջոց չեր տրվում՝ վորևե ձեռնարկում գործնականապես իրագործելու: Այնքան խոշոր անելիքներ ունեցող հանձնաժողովը վոչ ծառայողների շտատ ուներ, վոչ նախահաշիվ: Ընդհանրապես նա իսկական պետական հիմնարկ չեր:

Մի բան միայն ճիշտ ե՝ նրա ոգնությամբ բանվորներն առաջին անգամ հնարավորություն ստացան պաշտոնապես, կառավարության անդամի ներկայությամբ քննության առնել իրենց կարիքները: Ճիշտ ե՝ հանձնաժողովի աշխատանքների գործնական հետևանքը յեղավ տասժամյա բանվորական որի սահմանումը, բայց այս բոլորն «աշխատանքի կազմակերպումից» դեռ շատ եր հեռու: Նա այնուամենայնիվ մի շարք գործնական միջոցներ նշեց: Դերձակների և թամբագործների արտադրողական ընկերություններ կազմակերպվեցին, աշխատանք փնտրող բյուրո ստեղծվեց և բանվորական բնակարաններ կառուցելու նախագիծ մշակվեց, վորը նախագիծ էլ մնաց:

Բանվոր դասակարգին զիջումներ անելու հետ միասին՝ ժամանակավոր կառավարությունը ծածուկ նրա դեմ զենք եր սրում: Կառավարությունը Լյուքսեմբուրգյան հանձնաժողովի նախագծով ստեղծված բանվորական ընկերություններին զուգընթաց կազմակերպեց «ազգային արհեստանոցներ»: Այս միջոցով կառավարությունն աշխատում եր ազատվել գործազուրկներից և բանվորների մի մասին կերակրելով, նրանց պառակտել:

Բանվորներն այդ արհեստանոցներում զինվորական կարգապահության եյին յենթակա և բանում եյին ամենածանր՝ իրենց մասնագիտության հետ վոչ մի կապ չունեցող աշխատանքներում: Փարիզում մեծաքանակ արհեստավորներ կային, վորոնք պատրաստում եյին նուրբ մանր-մունր (безделушки) բաներ և արդուզարդի առարկաներ: Ազգային արհեստանոցներում սրանց քշում եյին հողային աշխատանքների:

Վորովհետև ազգային գվարդիան դադարել եր այլ ևս բացառապես բուրժուական յերկրապահներ լինելուց, ուստի կառավարությունը վորոշեց սեփական զինված ույժ կազմակերպել քաղաքի թափթփուկներից, լյումպեն-պրոլետարներից, գլխավորապես դեռահասներից, վորոնց քաշեցին դեպի այս «շարժական գվարդիան» գեղեցիկ տարազով և բարձր ռոճկով: Բուրժուական կառավարությունն այսպես եր վաղորոք պատրաստում այն զորախմբերը, վորոնցով հետագայում պիտի ճնշեր բանվորական ապստամբությունները:

Հետագա բոլոր դեպքերը ճակատագրորեն դեպի բանվորական ապստամբությունն եյին տանում: Ժամանակավոր կառավարությունն անկարող յեղավ վերջ տալ խոշոր ռեակցիոն ուժին՝ հողագործների և ֆինանսիստների ուժին: Ընդհակառակը՝ նա ստիպված եր հետին թաթերի վրա պարել նրանց առաջ և բոլոր ուժով հավատացնել, վոր գոյություն ունեցող հասարակապետությունը շատ ե կայուն: Այս նպատակով նա շտապեց ժամանակից առաջ վճարել պետական ռենտայի տոկոսները:

Սակայն չվստահանալով ձեռք բարձրացնել խոշոր բուրժուազիայի ստացվածքի վրա, կառավարությունը ձեռք մեկնեց չքավորության ունեցածին և բռնագրավեց խնայողական դանձարկղներում յեղած մանր մուծումները: Ի հարկե այս աշխատավորական կոպեկները չեյին կարող ուղղել պետության ֆինանսները, վորոնք բարձիթողի եյին արված վաշխառուների կառավարության ժամանակ: Միջոցներ փնտրելով, հեղափոխությունից դուրս յեկած կառավարությունը կրկին անթույլատրելի, հեղափոխությանը վնասող մի քայլ թույլ տվավ: Նա բոլոր հարկերը 45* սանտիմով ավելացրեց: Սրանով ուղղակի անտանելի մի ծանրություն եր ընկնում գյուղացիության ուսերի վրա, վորն առանց այն էլ քայքայված եր պետական տուրքերից և սարկացած վաշխառուների ձեռքում: Չարժի զարմանալ, վոր սրանից հետո գյուղացիությունն սկսեց մեծ թշնամանք տածել դեպի հասարակապետությունն ու հեղափոխությունը:

Այս պատճառով զարմանալու վոչինչ չկա, վոր բազմամիլիոն գյուղացիությունն ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ընտրված սահմանադիր ժողով ուղարկեց ամենաաչքի ընկնող սև հարյուրյակայիններին:

Բայց դեռ ժողովը գումարվելուց առաջ, հենց վոր կառավարության ռեակցիոն լինելը յերևան յեկավ, մի շարք յելույթներ տեղի ունեցան: Այդ յելույթներից մեկը կառավարությունն ոգտագործեց այն մտքով, վոր կարողանա Փարիզ վերադարձնել կանոնավոր զորքերը, վորոնք քաղաքից դուրս եյին գտնվում՝ փետրվարյան որերից սկսած:

* Սանտիմը հավասար ե 0,1 ֆրանկի:

Ինչ վերաբերում է Սահմանադիր ժողովին, պետք ասենք, որ նա հավանություն տվավ ժամանակավոր կառավարության արածներին, նրա փոխարեն գործադիր մարմին ընտրեց, ուր հաջողվ անցավ մանր բուրժուազիայի առաջնորդ Լեդրյու-Ռոլենը, իսկ Լուի Բլանը և Ալբերը սևացան։ Լուի Բլանի առաջարկն—ստեղծել աշխատանքի նախարարություն՝ մերժվեց, իսկ վորպես նախարարներ՝ ընդհանրապես չափավոր հասարակապետականներ անցան։

Թե ժամանակավոր կառավարության, թե սահմանադիր ժողովի ռեակցիոն լինելն ամենից ցայտուն կերպով յերևաց արտաքին քաղաքականության մեջ։ Լամարտինը, վոր ժամանակավոր կառավարության որով արտաքին գործերի վարիչն եր, շտապեց հավաստիացնել բոլոր պետություններին ֆրանսիական հանրապետության խաղաղասեր տրամադրությունների մասին և սկսեց քծնել ժանդարմ թագավոր Նիկոլայ I առաջ։ Ամբողջ Յեվրոպան շարժվեց։ Իտալիան ապստամբեց Ավստրիայի դեմ, Գերմանիան և Ավստրիան ցնցվեցին հեղափոխական ջղաձգումներից։ Լեհաստանը հուզվում եր և պատրաստ եր ապստամբելու . . .

Ի հարկե ռեակցիոն Սահմանադիր ժողովն ամենից քիչ եր մտածում յեվրոպական հեղափոխությանն ոգնելու մասին։ Սակայն Փարիզի բանվորներն ու արհեստավորներն այլ կերպ եյին մտածում։

Մայիսի 15-ին 150,000 հոգուց կազմած բանվորական ցույցը շարժվեց դեպի Ազգային ժողով։ Ամբոխի առաջ խոսեցին Ռասպայլը, Բարբեն և Բլանկին։ Վերջինը խոսում եր վոչ միայն արտաքին, այլ և ներքին գործերի մասին, պահանջում եր պայքարել գործազրկության դեմ և մատնանշում եր Ալբերին կառավարությունից հեռացնելու վրա։ Սակայն այս յելույթը բոլորովին անկազմակերպ եր։ Հենց վոր ազգային գվարդիայի բուրժուական մասը գուժեց վտանգի մասին, անյերևակայելի իրարանցում, շփոթ առաջացավ։ Ցույցը ցրեցին, իսկ առաջնորդները ձերբակալվեցին։

Բուրժուազիան, այդ թվում նաև մանրը, վրեժ առավ բանվորությունից՝ կրած վախի համար։ Հետապնդումներ ու ինքնագլուխ ձերբակալություններ տեղի ունեցան։ Փակվեցին բազմաթիվ հեղափոխական ակումբներ, վորոնք բանվորական ու արհեստավորական մասսաների վրա զգալի ազդեցություն ունեյին։ «Ակումբները կփակվեն, — հայտարարեց հասարակապետական Հարնյե Պաժեն, մենք նրանց կքայքայենք . . . Մենք ազնիվ և չափավոր հասարակապետություն ենք ուզում . . .»։



## III

Այս դեպքերից մոտ մի ամիս անց պրոլետարիատի և բուրժուազիայի մեջ նոր վճռական ընդհարում տեղի ունեցավ։ Անկասկած է, վոր բուրժուազիան պրոլետարիատի այս յելույթը պրովոկացիայի յենթարկեց։ Ուրիշ անուն չի կարելի տալ ազգային արհեստանոցները փակելու և նրանցում աշխատող 100,000-ից ավելի բանվորներին փողոց շպրտելուն։ Այդ փակումներից առաջ պարլամենտում և մամուլի մեջ յերկար ու բարակ կամպանիա յեր տարվում. կամպանիա՝ ուղղված «աշխատել չուզողների և ձրիակերների» դեմ, վորոնց համար եյին այդ արհեստանոցները։ Յերբ հողը բավական պատրաստ եր, արհեստանոցները փակեցին, իսկ բանվորներին առաջարկեցին կամ բանակ մտնել, կամ ինքնակամ հեռանալ Փարիզից։

Գործադիր հանձնաժողովի անդամը շատ կոպիտ ընդունելություն ցույց տվավ արհեստավորներից ուղարկած պատգամավորությանը։ Բանվորները զենքի դիմեցին։ Ապստամբների լոզունգն եր. «Հաց կամ արճիճ»։

Այդ ժամանակի պրոլետարներն ինչ գաղափարներով պայքարի մտան։

Նրանք ղեկավարող կազմակերպություն չունեյին, հասարակությունը սոցիալիստորեն վերակառուցելու վոչ մի միասնական ուսմունք չունեյին, վորի շուրջը կարողանային համախմբվել։ «1848 թ. սոցիալիզմը մնում եր վորպես ազատ ձգտում դեպի լավագույն վիճակ, վորպես հսկայական սրտառուչ բողոք... Նա դեռ իր ձգտումները չեր սիստեմավորել, նա հաղթվելու յեր դատապարտված»,—ասում եր ֆրանսիական սոցիալիզմի պատմաբան Պ. Լուին։

«Մենք դեմոկրատական ու սոցիալական հանրապետություն ենք պահանջում»,—գրում եյին ապստամբներն իրենց թռուցիկներից մեկում.—«մենք պահանջում ենք սոցիալական դեմոկրատական հանրապետություն, աշխատանքի ազատ ասոցիացիա՝ պետության աջակցությամբ»,—հայտարարում եր նրանց մի այլ թռուցիկը։

Փարիզի պրոլետարները վոչ միայն ծրագիր չունեյին, վորի իրագործման համար կարողանային կռվել, այլ և կռվի ծրագիր և այդ կռվում առաջնորդներ չունեյին։ Նրանց կռիվը գերհերոսական եր.—կանայք ու աղջիկները կռվում եյին իրենց ամուսինների ու յեղբայրների հետ միասին։ «Դուք սպանեցիք մեր ամուսիններին,—աղաղակում եյին նրանք՝ զինվորների սվիններին

վրա ընկնելով,—սպանեցե՛ք և մեզ...»: Առանձին քաջությամբ կռվում եյին Սեն-Անտուանի բանվորները. այդ թաղամասն էլ ամենից վերջին ընկավ—կռվի 5-րդ որը:

Կռվի սկզբում բուրժուազիան շտապեց թաքնվել զինվորական դիկտատուրայի թևի տակ.—ամբողջ իշխանությունը փոխանակ գործադիր հանձնաժողովին տալու, հանձնվեց բռի զինվոր Կավենյակին, վոր դիտմամբ թույլ տվավ, վոր ապստամբությունը մեծանա, վորպեսզի հետո ավելի մեծ արյունով ճնշի և վրեժ առնի Փարիզի բանվորներից ու արհեստավորներից այն պարտության համար, վոր զորքերը կրել եյին նրանցից՝ փետրվարին:

Այստեղ անհրաժեշտ ե ընդգծել նաև մանր բուրժուազիայի բռնած ընթացքը: Նա նորից խոշոր բուրժուազիայի գիրկը նետվեց: Նրա առաջնորդ Լեդրյու-Ռոլլենն իր ուժերը լարեց, վորպեսզի կարողանա վորքան կարելի յե ավելի շատ զորք մտցնել Փարիզ, իսկ ուսանողությունը զորքերի հետ միասին կռվում եր ապստամբների դեմ:

Յեթե սրան ավելացնենք նաև շարժական գվարդիայից այն լյումպեն-պրոլետարներին, վորոնք բանվորների դեմ կռվում եյին լարված կատաղությամբ, կտեսնենք, վոր փետրվարյան որերին պրոլետարիատի դեմ եյին դուրս յեկել բոլոր դասակարգերն ու բոլոր սոցիալական շերտերը: Յեվ պրոլետարիատն այս բոլորին միայնակ եր դիմադրում:

Պարտվածներին սոսկալի վիճակ եր սպասում: Զոհերի թիվը հասնում եր 10,000-ի՝ ապստամբած 40—50 հազարի ընդհանուր թվից:

Կալանավորեցին մոտ 14,000 հոգի և փարիզյան ամրությունների գնդանները քշեցին: «Զինվորների կատաղությունն այն աստիճանի յեր, վոր նույն իսկ գերիներին խմբերով եյին կոտորում ու հրացանազարկ անում: Ապստամբներին անվանում եյին կողոպտիչներ, գողեր, տաժանակրության արժանի վոճրագործեր: Ժողովի անդամներից վոմանք պատմում եյին, թե ինչպես բանտարկել են մի յերեխայի, վոր մոտ 10,000 ֆրանկ ուներ (վոսկով), ուրիշ անդամներ (որինակ ձախ հասարակապետական Ֆլոկոն) պատմածներին ավելացնում եյին, թե այդպիսի դեպքերը յեզակի չեն, նրանց թիվը շատ շատ ե»: Բացի դատով ու անդատ հրացանազարկ յեղածներից, բացի գողություններում ու թալաններում անհեթեթորեն մեղադրելուց, ապստամբներից շատերին անմիջական մահ եր սպառնում սպանիչ կլիմա ունեցող գաղութներում, ուր 4,300 հոգուց ավելի աքսորեցին:



Ռուս վտարանդի Հերցենը, վոր հուլիսյան ապստամբությունը ճնշելուն վկա յե յեղել, այսպես ե նկարագրում բուրժուազիայի հաղթանակի յերկրորդ որվա Փարիզը. «Չորս որ տևող սպանդանոցին հաջորդեցին հանգստություն և պաշարողական դրության հաշտություն. փողոցները դեռ շղթայված եյին, յերբեմն-յերբեմն կառքեր եյին յերևում. նենգամիտ ազգային գվարդիան՝ կատաղի ու բութ չարությամբ լցված, իր խանութներն եր պահպանում, սվիններով ու հրացանի կոթերով սպառնալով. շարժական գվարդիայի զվարճացող հարբած զինվորներն անցնում եյին քաղաքի ճեմելիքներով ու յերգում «մեռնել հայրենիքի համար...»: 16—17 տարեկան տղաները պարծենում եյին իրենց ձեռների վրա մակարդված մարդկային արյունով, քաղքենի կանայք դուրս վազելով իրենց խանութներից, նրանց վրա ծաղիկներ եյին գցում. այսպիսով վողջունում եյին հաղթողներին:

Կավենյակն իր կառքում մի ինչ վոր հրեշի յեր շրջեցնում, վոր տասնյակ ֆրանսիացիներ եր կոտորել: Բուրժուազիան իր հաղթանակն եր տոնում: Իսկ Սուրբ Անտոնիոսի թաղամասը դեռ ծխում եր. ռումբերի քանդած պատերը փլչում եյին, սենյակների ներքին բացվածքները քարի վերքերի եյին նման, ջարդված կահույքը ծխում եր, ջարդված հայելիների կտորները փայլփլում եյին: Իսկ բնակարանատերերն ո՞ւր եյին: Նրանց մասին վոչ վոք չեր մտածում... տեղ-տեղ ավազ եյին լցնում, սակայն արյունն այնուամենայնիվ տակից դուրս եր հոսում...»:

Ապստամբությունը ճնշելուց հետո՝ անորինակ ռեակցիա սկսվեց: Տասժամյա բանվորական որը վերացվեց, ուտելու մթերքների վրա նորեն տուրք դրին, պարտքերի համար նորից սկսեցին բանտարկել: Մի խոսքով՝ հրապարակի տերն ու տիրականը բուրժուազիան եր:

Պրոլետարիատին այսպես ջարդելուց հետո պարզվեց, վոր խոշոր բուրժուազիային պաշտպանելով, մանր բուրժուազիան ինքն իրեն համար հոր եր քանդել: Իր սեփականության համար կատաղի կռիվ մղելով պրոլետարիատի դեմ՝ նա իրոք դատարկ տեղի համար եր կռվել: Բանից դուրս յեկավ, վոր մանր բուրժուազիայի արհեստանոցը, կրպակը, նույն իսկ սեղանն ու մահճակալն այլ ևս նրանը չեն: Չնայելով, վոր գործերը սարսափելի կերպով կանգ եյին առել, և դա կապ ուներ դեռ նոր տեղի ունեցած ապստամբության հետ, խոշոր սեփականատերերն անխնա կերպով պահանջեցին արհեստանոցների, կրպակների ու մանր բնակարանների տերերից՝ վճարել իրենց բոլոր պարտքերը: Այդ ժամանակ մանր սեփականատերերի հայացքների արտահայտիչ

Պրուդոնն որենքի նախագիծ մտցրեց ժողով, սեփականատերերի մեջ հոժարկամ համաձայնություն կայացնելու մասին, բայց ժողովը ի հարկե մերժեց նախագիծը և պարտապաններին թողեց պարտատերերի լիակատար կամայականությանը։

Ժողովը սահմանադրություն մշակեց, վորից դուրս հանվեց աշխատանքի իրավունքը և նախագահին ահագին իշխանություն տվավ, վորովհետև նոր ապստամբությունից վախենալով, բուրժուազիան ուժեղ, միանձնյա գործադիր իշխանության մեջ եր ապաստան վորոնում։ Իսկապես ասած, այսպիսով հենց հասարակապետության գոյությունն եր սպառնալիքի տակ դրվում. և իրոք, այստեղ, վորպես նախազգուշացում, պիտի ծառայեր նոր սահմանադրության հիմունքներով Նապոլեոն I յեղբոր վորդի Լուի Բոնապարտին նախագահ ընտրելը։

Սա մի աննշան անձնավորություն եր, վոր յերկու անգամ փորձել եր Ֆրանսիայում հեղաշրջում առաջացնել և իշխանությունը ձեռք ձգել։ Այս փորձերի հետ զուգընթաց ծիծաղաշարժ մանրամասներ կային—մինչև ձեռնասուն ցինը, վոր պետք է Նապոլեոնյան արծիվը ներկայացներ, և մի կտոր միս՝ ամրացրած թեկնածուի գլխարկին, վորպեսզի այդ «արծիվը» ճախրեր նրա գլխին։ Այս փորձերի համար Բոնապարտն արտաքսվեց Ֆրանսիայից, իսկ հետո բանտ նետվեց, վորտեղից կարողացավ փախչել։ Անգործությունից նա գրեց «Չքավորության վերացումը» աշխատությունը, սակայն չարտիստների ապրիլյան յելույթի ժամանակ մտավ կամավոր վոստիկանության մեջ, վոր բուրժուական կարգերն են պաշտպանում։

«Հին յեփված քեֆչի,—ինչպես բնորոշել է նրան Մարքսը, նա ժողովուրդների կյանքի և նրանց ամենագլխավոր պետական արարքների վրա նայում եր վորպես ամենագռեհիկ կոմեդայի վրա, վորպես դիմակահանդեսի վրա, վորտեղ շքեղ զգեստները, բառերն ու նստվածքը (поза) լոկ դիմակ են՝ ամենացածրորակ անհամությունը ծածկելու...»։ Յեվ այս մարդն այժմ ամենաընդարձակ գործադիր իշխանության տեր է դառնում։ Նրա ընտրությամբ գյուղացիությունը հասարակապետությունից վրեժ առավ 45 սանտիմյան հարկի համար։

Գյուղացիների և մանր սեփականատերերի աչքում Նապոլեոնն ինչ վոր խորհրդավոր հմայք ուներ։ Հակահեղափոխական ագիտատոր-քահանաները նրանց վախեցրել եյին կարմիր ուրուականի—սոցիալիզմի բոլոր սարսափներով. սոցիալիստներին ներկայացրել եյին վորպես խլռղների, վորոնք ձեռք են բարձրացնում նրանց աննշան հողային ստացվածքի վրա։ Խավար գյուղացուց թվում եր, թե կրտսեր Նապոլեոնը կփրկի և կամրացնի իրենց փոքրիկ սեփականությունը, ճիշտ այնպես, ինչպես մեծ Նապոլեոնը ժամանակին, հեղափոխությունից հետո տերերի վրա հաստատեց հեղափոխության պրոցեսում խլած հողերը։



Շատ բանվորներ ևս ձայն տվին հօգուտ Բոնապարտի, այսպիսով վրեժխնդիր լինելով հասարակապետական թեկնածու, հունիսյան որերի դիկտատոր և հունիսյան սպանդանոցի կազմակերպող գեներալ Կավենյակին։

Մանր բուրժուազիան ևս իր ձայնը նրան տվավ, այսպիսով վրեժ առնելով խոշոր բուրժուազիայից, վոր մերժել եր փոխադարձ համաձայնությամբ վճարել պարտքերի խնդիրն՝ ըստ առաջարկության Պրուդոնի։

1849 թվի ամառը Որենսդիր ժողովը հավաքվեց։ Նրա կազմը կատարյալ սև հարյուրյակային եր։ Ամեն տեսակի խոշոր սեփականատերերն այնտեղ ներկայացված եյին կարգ ու կանոնի կուսակցության կողմից, վորում խոշոր դեր խաղում եյին նոր պրեզիդենտ Նապոլեոնի կողմնակիցները։

Բուրժուազիան ճնշելով բանվորների ապստամբությունը, այլ ևս հասարակապետականների կարիքը չեր զգում։ Այս ժողովումն եր ամենաուժեղ ձախ «լյառն», ինչպես ինքն եր իրեն անվանում՝ 1693 թվի հեղափոխականներին նմանելով։ «Լյառն» միացնում եր սակավաթիվ սոցիալիստներին և նոր ձախացած, պրոլետարիատի առաջ ունեցած իրենց մեղքերը մոռացած մանր բուրժուազիայի ներկայացուցիչներին։

1849 թ. հունիսի կեսերին «լյառն» հեղափոխական նոր փորձ կատարեց։ Նա պրեզիդենտին մեղադրեց սահմանադրությունը խախտելում։ Յեվ իսկապես, նա խախտել եր այն հոդվածը, վոր արգելում եր ուրիշ յերկրների հեղափոխությունը ճնշելու համար ֆրանսիական զորք ուղարկելը։ Զորքերն ուղարկված եյին ոգնելու հռոմեական պապին, վորին իր ապստամբած հպատակներն արտաքսել եյին Հռոմից։ Կաթոլիկ յեկեղեցու պետին ոգնական զորքեր ուղարկելով, Նապոլեոնը հույս ուներ շահել ռեակցիոներների և կրոնասեր գյուղացիների տրամադրությունը։ Այս փորձի ժամանակ ել մանր բուրժուազիան ինքն իրեն հավատարիմ մնաց.—նա սիրտ չարավ հենվել հեղափոխական բանվորների մնացորդների վրա. ասենք, այս վերջիններն ել տրամադիր չեյին հավատալ մանր բուրժուազիային, վոր մի քանի անգամ մատնել եր իրենց։ Հեղաշրջման փորձը, վոր պաշտպանություն չգտավ Փարիզի լայն մասսաների կողմից, կատարյալ անհաջողություն կրեց։ Կարգ ու կանոնի կուսակցությունը հաղթանա-

կեց։ Նորից խռովություններ սկսվեցին, նորից հետապնդումներն ու դատական պրոցեսները ծայր առան։

Ռեակցիան բարձրացրեց պրոլետարիատի վոգին, վոր հունիսյան պարտությունից հետո ուղղվել էր սկսել։ 1850 թ. տեղի ունեցող նոր ընտրություններին բանվորները ժողով ուղարկեցին սոցիալիստներին կամ վճռական հասարակապետականներին։ Այդ ժամանակ «կարգ ու կանոնի կուսակցության» մեջ մտած բուրժուազիան փոխեց ընտրական որենքը, վոչնչացնելով ընդհանուր ընտրական իրավունքը։ Յերեք միլլիոն չքավորներ, բանվորներ և արհեստավորներ զրկվեցին ընտրական իրավունքից։

«Լյառն» միության ջախջախվելը և բանվորների ընտրական իրավունքից զրկվելը խլեցին հանրապետության վերջին հենարանը։ Միապետական հեղաշրջում մտորելով, պրեզիդենտ Նապոլեոնը՝ նոր ընտրական որենք հրատարակելիս մի կողմ քաշվեց։ Նա հույս ուներ հետագայում դրանից շոշափելի օգուտ քաղել։ Զինվորականներին հաճոյանալ ուզելով՝ Նապոլեոնյան ավանդներով փետրավորվելով, իր շուրջը ժողովելով ամեն տեսակ բախտախնդիրների, վատնողների, վորոնք իրենց գործերը վորևե աֆյորայով ուղղելու հույս ունեյին, նա ապագա հեղաշրջման համար կողմնակիցների և համախոհների կադրեր ստեղծեց։

Զանազան տեսակ թափթփուկներից նա «Դեկտեմբերի 10-ի Ընկերությունը» կազմեց։ «Այս ընկերությունն,—ասում է Մարքսը,—հիմնված բարեգործական ընկերության անվան տակ, միավորում էր բոսյակների փարիզյան պրոլետարիատը, վորոնք գաղտնի սեկցիաներ եյին կազմել՝ բոնապարտական ագենտի գլխավորությամբ։ Իսկ ամբողջ միությունը բոնապարտական գեներալ էր գլխավորում։

Սնանկացած քեֆչիները՝ գոյության յերկդիմի աղբյուրով և յերկդիմի ծագումով, բախտախնդիրները, բուրժուազիայի այլասերված ժառանգները—թափառաշրջիկները, պաշտոնաթող զինվորները, ազատ արձակված բանտարկյալները, տաժանակիր աշխատանքից փախածները, սրիկաները, ծաղրածուները, գրպանահատները, թղթամոլները, բեռնակիրները, կավատները, հասարակաց տներ պահողները, խաղանենգները, բեռնակիրները, գրականագետները, մկրատ սրողները, պղինձ նորոգողները, հնոտի ժողովողները, աղքատները—մի խոսքով այստեղ եյին այն բոլոր անորոշ, սանձարձակ մասսան, վորին ֆրանսիացիք բ ո հ ե մ անունն են տալիս։ Ահա իրեն ազգակից այս մասսայից էր, վոր Բոնապարտը «Դեկտեմբերի 10-ի Ընկերությունը» կազմեց... ինչ վոր... բուրժուազիայի համար շարժական գվարդիան էր... նույնը



Բոնապարտի համար «Դեկտեմբերի 10-ի Ընկերությունն էր».—նա զինական ույժ էր՝ հատկապես նրան հարմարեցրած»։

Հեղաշրջումը տեղի ունեցավ 1851 թ. դեկտեմբերի 2-ին։ Ժողովի պատգամավորները բանտարկվեցին։ Ընդհանուր ընտրական իրավունքը վերականգնելու մասին Նապոլեոնը դեմագոգիկ թռուցիկ հրատարակեց։

Պարզվեց, վոր բուրժուական հասարակապետությունը պաշտպաններ չունի։ Բանվորները տեղից չշարժվեցին, վորովհետև ռեակցիոն հասարակապետությունը պաշտպանելում իմաստ չեյին տեսնում. առ այս նրանք չունեյին՝ վոչ զենք, վոչ առաջնորդ։ «Լյառն»-ի ներկայացուցիչները, վորոնք նրանց ապստամբության կոչեցին, այնպիսի պատասխան լսեցին, վոր նրանց ականջում վորպես դառն հանդիմանություն էր լսվում.—«Մենք զենք չունենք, 48 թվի հունիսին մեզ ամենիս զինաթափ արին. ամբողջ թաղամասում դուք մի զենք անգամ չեք գտնի»։

Ժողովի պատգամավորները, վորոնց բանտարկել էր իշխանություն հափշտակողը, ամենից քիչ եյին նմանում ազատության պաշտպանների ու նախանձախնդիրների։ Ամենից շատ նրանից եյին վախենում, թե մի գուցե իրոք՝ մասսաները վոտքի կանգնեն նրանց պաշտպանելու։ Իր պաշտպանության համար ժողովը նշանակել էր ազգային գվարդիայի մի վաշտ, վոր բացառապես խոշոր բուրժուազիայից էր բաղկացած։ Յերբ ամբոխը կանգնեցրեց պատգամավորներին բանտ տանող փակ կառքը, կառքի պատուհանից դուրս նայող պատգամավորները խնդրեցին՝ իրենց հանգիստ թողնել.—«Ա՛յ, տեսեք, ինչ մարդիկ են սրանք. դրանց հետ մենք անելիք չունենք»—արհամարհանքով ասաց կառքը կանգնեցնող բանվորներից մեկը։

Հեղաշրջումից մի տարի անցած՝ Նապոլեոնը Ֆրանսիայի կայսր հրատարակվեց և յերկրորդ հասարակապետությունը դադարեց գոյություն ունենալուց։ Ծնունդ առնելով փետրվարյան բարրիկադների վրա՝ նա վողջունվեց մարտնչող բանվորների և արհեստավորների կողմից՝ վորպես սոցիալական հանրապետություն. իսկ գերեզման իջավ՝ վորպես բուրժուական-ռեակցիոն։

Յեվ նրա այս եվոլյուցիայում, իհարկե, պատահական վոչինչ չկար։ Ֆրանսիայի 1848 թվի հեղափոխությունը պիտի թոթափեր բուրժուազիայի ֆրակցիաներից մեկը, վոր տիրապետող էր հուլիսյան միապետության որոք։ Այս ֆրակցիայի դեմ յելան բուրժուազիայի մյուս ֆրակցիաներն ու բանվորները։ Այստեղ բանվորները հանդես յեկան բուրժուազիայի, հատկապես իրենց տերերի կողքին. սրանց հետ միասին էլ—արդյունաբերողների

կողքին: «Այսպես հունիսյան օրերին, ասում է Մարքսը, բանվորները բուրժուական միապետություն նվաճեցին, ինչպես փետրվարյան օրերին նվաճեցին բուրժուական հասարակապետություն: Եվ ինչպես վոր հուլիսյան միապետությունն ստիպված յեղավ հանդես գալ վորպես միապետություն, շրջապատված հասարակապետական հիմնարկներով, այնպես էլ փետրվարյան հանրապետությունն իրերի անհրաժեշտ բերմունքով հանդես յեկավ իբրև հասարակապետություն, շրջապատված սոցիալական հիմնարկներով: Փարիզի պրոլետարիատն ստիպեց այդ զիջումն էս անել... Բուրժուազիայի հետ միասին բանվորները փետրվարյան հեղափոխությունը կատարեցին, բուրժուազիայի կողքին նրանք փորձեցին իրենց շահերը պաշտպանել: Այդպես էլ ժամանակավոր կառավարության մեջ, բուրժուական մեծամասնության կողքին, նրանք մի բանվոր տեղավորեցին»:

Այնուհետև Մարքսը պարզաբանում է, թե ընդհանրապես արդյունաբերական բուրժուազիան բավական թույլ էր, վորովհետև ինքը խոշոր արդյունաբերությունն էլ, ըստ հարկավորին, զարգացած չէր: Սրանով էլ բացատրվում է պրոլետարիատի թուլությունը, վորը թեպետ «Փարիզում հեղափոխության մոմենտում ուժ ու ազդեցություն ուներ, վորոնք նրան ավելի հեռու էյին հրում, քան թույլ էյին տալիս նրա միջոցները, մնացած Ֆրանսիայում նա կենտրոնացած էր ամբողջ յերկրում ցրված, առանձին-առանձին արդյունաբերական կենտրոններում և համարյա բոլորովին նսեմանում էր գյուղացիների և մանր բուրժուազիայի գերազանցության առաջ»:

Բուրժուազիան ամեն կերպ աշխատում էր ազատել հասարակապետությունը «սոցիալականության» այն սովերից, վոր ձգել էյին նրա վրա: Նա աշխատում էր այնպիսի հասարակապետություն ստեղծել, վոր ընդունելի լինի ռեակցիոն դասակարգերի համար, և հենց այդ դասակարգերի վրա յել հիմնվում է «ազնիվ հասարակապետություն» ստեղծելու գործում: Այստեղից էլ շատ դիմումն ամբողջ յերկրի կարծիքին, ընդհանուր ձայնատվություն, վորի հետևանքը յեղավ սև հարյուրյակային Սահմանադիր ժողովը:

Բայց բուրժուազիայի համար անկարելի յե ազատվել «սոցիալականության» անակնկալներից՝ առանց արյուն թողնելու: Այս պատճառով էլ հունիսյան սպանդանոցն է տեղի ունենում, վորը վերջնականապես սրբում է յերկրի յերեսից «սոցիալականության» այն կնիքը, վոր նրա դեմքին դրել էր պրոլետարիատը: Հունիսյան օրերից արդեն բուրժուազիան թագնվում է զինվորական դիկտատուրայի թևի տակ,

Հասարակությունն ու հասարակապետականներն այլ ևս պետք չեն բուրժուազիային, նա շատ հեշտ կարող է նրանց զոհել և իրոք, զոհում է, յերբ կարմիր ուրվականը նորից է ծառանում նրա աչքերի առաջ: Այս կարմիր ուրվականը նորից է ծառանում նրա աչքերի առաջ: Այս կարմիր ուրվականը բանվորական շարժման թեթևակի աշխուժացումն էր և Օրենսդրական ժողովի լրացուցիչ ընտրությունները, վորոնք սոցիալիստներ բերին՝ նրա նստարանների վրա նստելու:

Մանր բուրժուազիայի պարտությունը, վորին առաջնորդում էր «լյառ»-ը, զենքից ու առաջնորդներից զրկված պրոլետարիատի պասսիվությունը վոչնչացրին ամեն տեսակ կայուն հիմք՝ այդ հասարակապետության տակ: Կարմիր ուրվականն անհրաժեշտ էր դարձնում նորից զինվորական դիկտատուրային դիմելը՝ վոր Նապոլեոն III կայսրությունն էր: Բուրժուական հասարակապետությունը պաշտպաններ չուներ՝ վոչ հանձին հենց իրեն բուրժուազիայի, վոչ բանվորների, վոչ էլ մանր բուրժուազիայի: Նա ընկավ անփառունակ, ընկավ, վորպես ռեակցիոն հանրապետություն:

## V

# 1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

## I

*Ֆրանսիայի և Անգլիայի հետ համեմատած, Գերմանիան մինչև XIX դարի յերկրորդ կեսը տնտեսապես հետամնաց յերկիր եր։ Յեթե այդ յերկու պետություններում 30-ական թվականներին արդեն բուրժուական կարգեր եյին հաստատված, Գերմանիայում դեռ ամբողջովին տիրապետողն ազնվականությունն եր։ Ճիշտ ե՝ ֆրանսիական հեղափոխության ազդեցությունը նրան ել հասավ։ Այդ ազդեցությունը Գերմանիայի վրա գլխավորապես յերևաց այն պարտությունների միջոցով, վոր գերմանական զորքերը կրում եյին հեղափոխական, մանավանդ նապոլեոնյան զորքերից։*

*Հեղափոխության հասցրած այս հարվածների ազդեցության տակ Գերմանիայում շատ միջնադարյան հնություններ սկսեցին վոչնչանալ։ Վոչնչացավ գերմանական անդրջրհեղեղյան կայսրությունը. վոչնչացան հին ժամանակներից պահպանված մանր պետություններ (Նապոլեոնը վոչնչացրեց մոտ հարյուր տասնյերկու)։ Նույնիսկ մեռելային դրության հասած, լճացած պրուսական պետությունն ստիպված յեղավ փոքրիկ բարենորոգումների յենթարկվել, վորպեսզի կարողանա դիմագրավել նապոլեոնյան կայսրությանը։ Հենց այդ ժամանակ ել վերջացավ գյուղացիների անձնական կախումը, մուտ գործեց քաղաքային ինքնավարությունը և այլն։*

*Յերբ հասավ ժամը Նապոլեոնի հետ վերջին պայքարի, այսպես կոչված «ազատագրական պատերազմի», պրուսական թագավորն իր խոստումներով շատ առատ գտնվեց.—գյուղացիներին խոստացավ «կարգավորել» նրանց և ազնվականների հարաբերությունները, իսկ բուրժուազիային՝ ժողովրդական ներկայացուցչություն ստեղծել։ Իսկ յերբ ֆրանսիացիք վռնդվեցին՝*



*տված խոստումների մասին չմտածեցին անգամ։ Առաջադեմ բուրժուա գերմանացիները, վորոնք Գերմանիայի միացումն եյին յերազում, մեծագույն հիասթափման յենթարկվեցին։ Գերմանիան այդպես ել մնաց՝ 36 առանձին պետությունների բաժանված։*

*Ճիշտ ե, այս պետությունները պիտի միացած լինեյին և կազմեյին գերմանական դաշնակցությունը, սակայն նրա մեջ յերկու ուժեղ պետություններ եյին մտնում—Պրուսիան և Ավստրիան, վորոնք յարատև ախոյաններ լինելով՝ դաշնակցությունը զրկում եյին վորևե միացումից։ Դաշնակցության գործերը վճռում եյին պետությունների ներկայացուցիչները, վորոնք միության սեյմն եյին կազմում՝ Ֆրանկֆուրտում-Մայնի վրա։ Այս սեյմի գործունեյությունն արտահայտվում եր բացառապես ամենառեակցիոն գործերով և ազատության ամեն տեսակ արտահայտություններ խեղդելով։*

*Գերմանիայի այսպիսի կառուցվածքը հարմար եր միայն կալվածատեր ազնվականության համար և ձեռնտու միայն նրա շահերին։ Ինչ վերաբերում ե բուրժուազիայի շահերին՝ նրանք շատ ու շատ ուժեղ կերպով եյին տուժում։ Պետություններն իրարից սահմանագծված եյին մաքսային պատերով. նրանցից ամեն մեկն իր որենքները, սովորություններն ու դրամական սիստեմն ուներ։ Վորպեսզի «կարելի լիներ ապրանք տանել Համբուրգից Ավստրիա, Բեռլինից Շվեյցարիա, պետք եր կտրել, անցնել 10 պետություն, ծանոթանալ 10 մաքսային կանոնադրությունների հետ, 10 անգամ փոխադրական մաքս վճարել...»։*

*Թագավորական խոստումներից բան չստացավ նաև գյուղացիությունը։ «Կարգավորումն» այնպես կատարվեց, վոր միայն ունևորները կարողացան ազատվել՝ իրենց հողերի մեծ մասը (մի յերրորդը, յերբեմն ել կեսը) և մեծ գումարներ տալով. իսկ չքավորներն այնպես ել մնացին—կալվածատերերին յենթակա։ Մնացած ազգաբնակչությունն ել, վոր խանդավառությամբ նետվել եր այսպես կոչված «ազատագրական պատերազմի» գիրկը, նույնպես դատարկաձեռն մնաց։ Խոստացված ներկայացուցչության և առհասարակ վորևե ազատության մասին մտածելը մոռացան. ամեն ինչ յենթարկված եր վոստիկանական ճիպոտին, վորովհետև վոչ մի տեղ այնքան մեծ չեր «Սրբազան Դաշինքի» ազդեցությունը, վորքան հատկապես Գերմանիայում։ Նա բառի բուն նշանակությամբ խեղդվում եր ռեակցիայի ճիրաններում։*

*Գերմանիայի այսքան ուժեղ ռեակցիայի պատճառները միայն նրանում չեյին կայանում, վոր նա կողք կողքի յեր «Սրբազան Դաշինքի» գլխին կանգնած այնպիսի ռեակցիոն պետությունների*

հետ, վորպիսիք Ավստրիան և Ռուսաստանն եյին, այլ և Գերմանիայի տնտեսական յետամնացության մեջ։ Այս յետամնացությունն արմատացած եր դեռ XVI դարում։ Հատկապես այդ ժամանակ ել փոփոխության են յենթարկվում համաշխարհային առևտրական ճանապարհները, վորոնք այդ ժամանակից սկսած անցնում են վոչ թե գետերով ու ցամաքով, այլ ովկիանոսներով։ Այդ ժամանակ ել Գերմանիան դատապարտվեց մի յետամնաց անկյուն դառնալու, վորպիսին նա XIX դարի 20-30-ական թվականներին եր։

Պակաս դեր չխաղացին նաև այն բազմաթիվ պատերազմները, վոր Գերմանիայի տերրիտորիայի վրա մղում եյին ամենամեծ պետությունները։ Որինակ՝ այնպիսի կռիվներ, ինչպիսին յերեսնամյա պատերազմներն եյին, շատ յերկար ժամանակով կասեցրին Գերմանիայի տնտեսական զարգացումը։ Այս պատճառով ել այն ժամանակ, յերբ մեր հետազոտած շրջանում Անգլիայում ու Ֆրանսիայում խոշոր արդյունաբերական քաղաքներ գոյություն ունեյին, Գերմանիայի (Պրուսիայի) քաղաքներում ապրում եր միայն ազգաբնակության 28,5%, առ վոր մեծ քաղաքներում (10,000 ավելի բնակիչներով) յերկրի ամբողջ ազգաբնակության միայն 10,5%-ը։ Արդյունաբերությունը բացառապես մանր-արհեստային կամ տնային բնույթ ուներ։ 1816 թվին յուրաքանչյուր 100 ինքնուրույն արհեստավորին ընկնում եյին 56,2 յենթավարպետներ, իսկ 1840 թվին այս հարաբերությունն այնպես եր, ինչպես 100։ 70,1։ Այս պայմաններում հսկայական տնտեսական ույժ ներկայացնում եր ամենարեակցիոն դասակարգը—ազնվականությունը։

Ազնվականները կամ, ինչպես Գերմանիայում եյին նրանց անվանում, յունկերները գյուղացիների «ազատագրման» ժամանակ կարողացան մեծ հողեր ձեռք գցել, վորտեղ այժմ ընդարձակ տնտեսություններ եյին վարում։ Գյուղատնտեսական մթերքների սպառման համար XVIII դարի վերջում և XIX սկզբում շուկա կար։ Արդյունաբերական Անգլիան եր դա։ Բացի դեպի Անգլիա արտահանվող մեծաքանակ ցորենից, կալվածատերերին քիչ յեկամուտ չեյին տալիս նաև ողեքաշությունը, վոչխարաբուծությունը և ճակնդեղի արտադրությունը։ Վորովհետև պետական պաշտոնները հենց այս կալվածատերերն ել գրաված ունեյին, ուրեմն միանգամայն հասկանալի պիտի լինի, վոր ազնվականությունն ել այն ամենակարող դասակարգն եր, վոր տոն եր տալիս և՛ հասարակական, և՛ քաղաքական կյանքին։



Նրա ազդեցությունն ավելի ևս մեծ եր տնտեսապես Գերմանիայից ել յետամնաց Ավստրիայում։ Բայց 30-40-ական թվականներին տնտեսական այս խավարի մեջ սկսում ե պրոգրեսի թարմ հոսանք մտնել։ Կապիտալը ճանապարհ ե հարթում դեպի գերմանական արդյունաբերությունը։ Ամենից առաջ խոշոր ձեռնարկներ յերևում են տեքստիլ արդյունաբերության մեջ։ Արդյունաբերության զարգացումը և առևտրի աճումը պիտի սահման դնեյին Գերմանիայի բաժան-բաժան վիճակին։ Եվ իրոք, 1834 թ. ստեղծվում ե «մաքսային դաշինք»-ը, վոր ինն պետություն եր միացնում։

Միության տերրիտորիայի վրա 1846 թվին 314 բամբակ մանելու ֆաբրիկաներ կային՝ 8,000 մեխանիկական և 34,000 ձեռքի դազգյահներով։ Յեթե 1822 թվին ամբողջ Գերմանիայում միայն յերկու շոգեմեքենաներ կային, 1837 թվին նրանց թիվը՝ միայն Պրուսիայում հասնում եր 300-ի, իսկ 1847-ին—1139-ի։ Զգալի պրոգրեսս եր նկատվում նաև մետաղագործության մեջ։ Քառասնական թվականներին «Մաքսային դաշինք»-ի տերրիտորիայի վրա լեռնային արդյունաբերության մեջ աշխատում եյին 60,000 բանվորներ։

Իր տնտեսական զարգացմամբ, և հատկապես տեքստիլ և լեռնային արդյունաբերության զարգացմամբ, առաջին տեղը բռնում եր Հռենոսի (Րեյնի) շրջանը։ Նա ճորտատիրական վիճակից և այլ ֆեոդալական ճնշումներից ազատվել եր դեռ Նապոլեոնի ժամանակ, վորի իշխանության տակ ել գտնվում եր։ Մնացյալ ամբողջ Գերմանիայում տնտեսական զարգացման խոչընդոտ եյին հանդիսանում քաղաքական և հասարակական կենցաղի անշարժությունն ու պետության ձեռք առած ռեակցիոն միջոցները։ Ուստի պատերազմի առաջին քայլերի հետ գլուխ ե բարձրացնում նաև ոպոզիցիոն գյուղացիությունը։

Բուրժուազիային առաջին հերթին ներքին շուկա յեր հարկավոր, վոր չեր կարող գոյություն ունենալ, վորովհետև ազգաբնակության մասսաները, հանձին գյուղացիության, հարստահարվում եյին կալվածատերերից։ Նրան պետք եր նաև միջպետական սահմանների վոչնչացումը, վորոնք ճնշում եյին առևտուրը, այլ կերպ ասած—նրան անհրաժեշտ եր Գերմանիայի միացումը։ Նա պահանջում եր նաև արդյունաբերության և առևտրական գործարքների կատարյալ ազատություն. ինչպես որինակ՝ ակցիոներական ընկերություններ կազմելու ազատություն։ Ազնվապետական-բյուրոկրատական պետությունները սրան համաձայնել չեյին կարող։

Մյուս կողմից 30-40-ական թվականների բուրժուազիայում հետք անգամ չկար այն հեղափոխական և վճռական վոգու, վոր բնորոշ եր ֆրանսիական բուրժուազիայի համար՝ XVIII դարում։ Այս հանգամանքը նրանով ե բացատրվում, վոր գերմանական նորածիլ արդյունաբերությունն զգում եր կարիքն իր կառավարության հովանավորության, նրա կայուն իշխանության։

Նրա համար ահեղ նախազգուշացումն եր նաև՝ յեթե վոչ Գերմանիայում, գոնե Ֆրանսիայում և Անգլիայում արդեն իրենց ույժը ցույց տված պրոլետարիատը։ Այս պատճառով գերմանական բուրժուազիան մտածում եր վո՛չ այնքան պետությունների ու տիրող դասի—ազնվականության հետ կռվելու մասին, վորքան նրանց հետ համաձայնության գալու մասին։

Մենք հենց նոր հիշատակեցինք բուրժուազիայի վախի մասին բանվոր դասից։ Ի՞նչ եյին ներկայացնում իրենցից Գերմանիայի աշխատավորականները։ Մենք շատ լավ գիտենք, վոր փոքր արտադրությունից խոշորին անցնելը միշտ աշխատավորների դրության վատանալու հետ ե կապված։

Հանգամանքներն այդպես դասավորվեցին նաև Գերմանիայում։ Բանվորների և արհեստավորների դրությունը 30-40-ական թվերին սաստիկ ծանր եր։ Մեծ արդյունաբերական շրջաններում, ինչպես որինակ Սաքսոնիայում և Սիլեզիայում, գերմանացի ձեռնարկատերը հնարավորություն ուներ մրցելու արտասահմանյան արդյունաբերողի հետ միմիայն շնորհիվ այն աննշան աշխատավարձի, վորով բավականանում եյին գերմանացի բանվորները։ Սրան ավելացնենք նաև այն, վոր սիլեզյան բազմաթիվ քաթանագործներ դեռ ևս ճորտատիրական վիճակում եյին կալվածատերերից, վորոնք նրանց շահագործում եյին յերկու տակ՝ թե իբրև կալվածատերեր, թե իբրև ձեռնարկատերեր։ Չպիտի զարմանալ, ուրեմն, վոր 40-ական թվականների յերկրորդ կեսում հենց Սիլեզիան դարձավ հրապարակը ջուլհակ-բանվորների տարերային բունտի, վորն իհարկե արյունով ճնշվեց։

Խոշոր արդյունաբերության քայքայիչ աշխատանքն արհեստավորների շրջանում արդեն սկսվեց։ Այսպես, 1845 թ. Ելբերֆելդում հազար կոշկակար բանվորներից, վորոնք 400 յենթավարպետներ ունեյին, 50% աշխատանք չուներ։ Լեյպցիգում 1846 թվին 800 կոշկակարներից 8% բարեգործության հաշվին եր ապրում։

Յերբ սնանկացած արհեստավորը ֆաբրիկա յեր ընկնում (ավելի ճիշտ կլինի ասել՝ փոքրիկ ֆաբրիկա յեր ընկնում, վորովհետև ձեռնարկությունները շատ ել մեծ չեյին), նրան այդտեղ



աշխատանքի դժոխային պայմաններ եյին սպասում։ Դեռ 1826 թվին զինվորական աստիճանավորներից մեկը հայտնում եր կառավարությանը, թե գործարանական րայոններն այլ ևս նորակոչիկներ չեն տալիս զորքին—այնքան վատ եր այդ շրջանների ազգաբնակության ֆիզիկական վիճակը։ Բանվորական ուժի շահագործումը վոչնչով սահմանափակված չեր, վորովհետև առաջին որենքը, վոր ռեգլամենտի տակ եր դնում յերեխաների աշխատանքը, լույս տեսավ միայն 1854 թվին։

## II

«Ազատագրական» պատերազմից հետո, Գերմանիայի միակ հեղափոխական տարրն եր ուսանող յերիտասարդությունը և իր դիրքով նրան մոտ կանգնած՝ կրտսեր պրոֆեսուրան։ Հենց նրանց գլխին ել տեղացին բոլոր կառավարական հետապնդումները և հենց այս տարրերից ել կազմվեց ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունների շարքը։

Մի քանի հեղափոխական փորձերից հետո, վորոնք տեղի ունեցան 1820 թվի հեղափոխության ազդեցության տակ, կառավարական խստություններն ավելի ևս ուժեղացան։ Շատ հեղափոխական գործիչները հարկադրված յեղան փախչել հարևան Շվեյցարիա և Ֆրանսիա։ Այստեղ սկզբում վտարանդիների մեջ գերակշռողն ինտելիգենցիան եր։ Իր կազմով ինտելլիգենտական եր նաև «Արտաքսվածների միությունը»։

Յերեսնական թվականների կեսին արհեստավորներն ու յենթավարպետները լցնում են գաղտնի խմբակներն ու ընկերությունները, և Փարիզում կազմված «Անաչառների միության» մեջ արհեստավորներն արդեն գերակշռում եյին։ Սրանց տրամադրությունները սոցիալիստական և միջազգայնական եյին։ 1839 թվի հեղափոխությունը ճնշելուց հետո, յերբ վոչնչացան ֆրանսիական գաղտնի կազմակերպությունները, համարյա վոչնչացավ նաև այդ կազմակերպությունների հետ կապված «Անաչառների միությունը»։ Քառասնական թվականներին այդ միությունից միայն առանձին խմբակներ եյին մնացել։

«Անաչառների միության» գործունեությունը կապված ե Վիլհելմ Վեյտլինգի անվան հետ, վոր ստեղծողն եր առաջին սոցիալիստական ուսմունքի՝ գերմանական տեսակետից։ Վեյտլինգը, վոր իր դրությամբ աղքատ արհեստավոր եր, իր ուսմունքում այդ դասակարգի շահերն ել ցոլացնում եր։ Նա հավատում ե, վոր ավելի լավ որեր պիտի գան և այլ տեսակի, կոմմունիստական հասարակություն պիտի հաստատվի։ Նոր հասարակությունը չքա-

Մյուս կողմից 30-40-ական թվականների բուրժուազիայում հետք անգամ չկար այն հեղափոխական և վճռական վոգու, վոր բնորոշ եր ֆրանսիական բուրժուազիայի համար՝ XVIII դարում։ Այս հանգամանքը նրանով ե բացատրվում, վոր գերմանական նորածիլ արդյունաբերությունն զգում եր կարիքն իր կառավարության հովանավորության, նրա կայուն իշխանության։

Նրա համար ահեղ նախազգուշացումն եր նաև՝ յեթե վոչ Գերմանիայում, գոնե Ֆրանսիայում և Անգլիայում արդեն իրենց ույժը ցույց տված պրոլետարիատը։ Այս պատճառով գերմանական բուրժուազիան մտածում եր վոչ այնքան պետությունների ու տիրող դասի—ազնվականության հետ կռվելու մասին, վորքան նրանց հետ համաձայնության գալու մասին։

Մենք հենց նոր հիշատակեցինք բուրժուազիայի վախի մասին բանվոր դասից։ Ի՞նչ եյին ներկայացնում իրենցից Գերմանիայի աշխատավորականները։ Մենք շատ լավ գիտենք, վոր փոքր արտադրությունից խոշորին անցնելը միշտ աշխատավորների դրության վատանալու հետ ե կապված։

Հանգամանքներն այդպես դասավորվեցին նաև Գերմանիայում։ Բանվորների և արհեստավորների դրությունը 30-40-կան թվերին սաստիկ ծանր եր։ Մեծ արդյունաբերական շրջաններում, ինչպես օրինակ Սաքսոնիայում և Սիլեզիայում, գերմանացի ձեռնարկատերը հնարավորություն ուներ մրցելու արտասահմանյան արդյունաբերողի հետ միմիայն շնորհիվ այն աննշան աշխատավարձի, վորով բավականանում եյին գերմանացի բանվորները։ Սրան ավելացնենք նաև այն, վոր սիլեզյան բազմաթիվ քաթանագործներ դեռ ևս ճորտատիրական վիճակում եյին կալվածատերերից, վորոնք նրանց շահագործում եյին յերկու տակ՝ թե իբրև կալվածատերեր, թե իբրև ձեռնարկատերեր։ Չպետք զարմանալ, ուրեմն, վոր 40-ական թվականների յերկրորդ կեսում հենց Սիլեզիան դարձավ հրապարակը ջուլհակ-բանվորների տարերային բունտի, վորն իհարկե արյունով ճնշվեց։

Խոշոր արդյունաբերության քայքայիչ աշխատանքն արհեստավորների շրջանում արդեն սկսվեց։ Այսպես, 1845 թ. Ելբերֆելդում հազար կոշկակար բանվորներից, վորոնք 400 յենթավարպետներ ունեյին, 50% աշխատանք չուներ։ Լեյպցիգում 1846 թվին 800 կոշկակարներից 8% բարեգործության հաշվին եր ապրում։

Յերբ սնանկացած արհեստավորը ֆաբրիկա յեր ընկնում (ավելի ճիշտ կլինի ասել՝ փոքրիկ ֆաբրիկա յեր ընկնում, վորովհետև ձեռնարկությունները շատ ել մեծ չեյին), նրան այդտեղ



աշխատանքի դժոխային պայմաններ եյին սպասում։ Դեռ 1826 թվին զինվորական աստիճանավորներից մեկը հայտնում եր կառավարությանը, թե գործարանական րայոններն այլ ևս նորակոչիկներ չեն տալիս զորքին—այնքան վատ եր այդ շրջանների ազգաբնակության ֆիզիկական վիճակը։ Բանվորական ուժի շահագործումը վոչնչով սահմանափակված չեր, վորովհետև առաջին որենքը, վոր ռեգլամենտի տակ եր դնում յերեխաների աշխատանքը, լույս տեսավ միայն 1854 թվին։

## II

«Ազատագրական» պատերազմից հետո, Գերմանիայի միակ հեղափոխական տարրն եր ուսանող յերիտասարդությունը և իր դիրքով նրան մոտ կանգնած՝ կրտսեր պրոֆեսուրան։ Հենց նրանց գլխին ել տեղացին բոլոր կառավարական հետապնդումները և հենց այս տարրերից ել կազմվեց ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունների շարքը։

Մի քանի հեղափոխական փորձերից հետո, վորոնք տեղի ունեցան 1820 թվի հեղափոխության ազդեցության տակ, կառավարական խստությունները ավելի ևս ուժեղացան։ Շատ հեղափոխական գործիչները հարկադրված յեղան փախչել հարևան Շվեյցարիա և Ֆրանսիա։ Այստեղ սկզբում վտարանդիների մեջ գերակշռողն ինտելիգենցիան եր։ Իր կազմով ինտելլիգենտական եր նաև «Արտաքսվածների միությունը»։

Յերեսնական թվականների կիսին արհեստավորներն ու յենթավարպետները լցնում են գաղտնի խմբակներն ու ընկերությունները, և Փարիզում կազմված «Անաչառների միության» մեջ արհեստավորներն արդեն գերակշռում եյին։ Սրանց տրամադրությունները սոցիալիստական և միջազգայնական եյին։ 1839 թվի հեղափոխությունը ճնշելուց հետո, յերբ վոչնչացան ֆրանսիական գաղտնի կազմակերպությունները, համարյա վոչնչացավ նաև այդ կազմակերպությունների հետ կապված «Անաչառների միությունը»։ Քառասնական թվականներին այդ միությունից միայն առանձին խմբակներ եյին մնացել։

«Անաչառների միության» գործունեյությունը կապված ե Վիլհելմ Վեյտլինգի անվան հետ, վոր ստեղծողն եր առաջին սոցիալիստական ուսմունքի՝ գերմանական տեսակետից։ Վեյտլինգը, վոր իր դրությամբ աղքատ արհեստավոր եր, իր ուսմունքում այդ դասակարգի շահերն ել ցոլացնում եր։ Նա հավատում ե, վոր ավելի լավ որեր պիտի գան և այլ տեսակի, կոմմունիստական հասարակություն պիտի հաստատվի։ Նոր հասարակությունը չքա-

վորության առաջ բերած հեղափոխության հետևանքը պիտի հանդիսանա: Հետևաբար՝ Վեյտլինգը սոցիալիզմի վրա նայում է վորպես զուտ դասակարգային գործի վրա, վորում միայն չքավորությունն է շահագրգռված: Սակայն նա բնավ չեր հասկանում պրոլետարիատի նշանակությունը և իր հույսը դնում եր միայն աղքատների, գջլտվածների, նույնիսկ գողերի վրա՝ վորպես ժամանակի հասարակության ամենադժգոհ տարրերի վրա:

Պրոլետարիատի դերը չհասկանալում Վեյտլինգին չի կարելի մեղադրել: Դա պիտի բացատրել այն տնտեսական միջավայրով, վոր շրջապատում եր Վեյտլինգին: Չե՞ վոր նույնիսկ Ֆրանսիայում, էլ չենք խոսում Գերմանիայի մասին, իսկական արդյունաբերական պրոլետարիատը շատ եր փոքր: Վեյտլինգն այն համոզմանն եր, թե իրեն ժամանակակից իրավակարգից մարդկությունն անմիջորեն կանցնի կոմմունիստականին: Այս պատճառով նա բացասաբար եր վերաբերվում քաղաքական պայքարին՝ կապիտալիստական հասարակության սահմաններում:

Վեյտլինգի աշխատանքի արժանիքը նրանում է կայանում, վոր նա սոցիալիզմի մեջ առաջինը դասակարգային գործ տեսավ և հեղափոխական շարժումը կապեց նոր հասարակության ծնունդի հետ:

Վեյտլինգին, վոր ներկայացուցիչն եր չհասունացած արհեստավորական սոցիալիզմի, վիճակված եր բախվել պրոլետարական և գիտական սոցիալիզմի հիմնադիր Կարլ Մարքսի հետ: Այդ բախումը տեղի ունեցավ Բրյուսսելում՝ 1846 թվին. Մարքսն այդ ժամանակ՝ Բեռլինի արմատական և սոցիալիստական ինտելլիգենցիայի խմբակներում լինելուց հետո՝ խմբագիրն եր ամենաառաջադեմ բուրժուական թերթի, վոր հրատարակվում եր Հռենոսյան շրջանում: Մեր նկարագրած ժամանակ Մարքսի հայացքները կոմմունիստորեն կազմակերպված հայացքներ եյին դարձել: Նա արդեն այցելել եր Անգլիա և ծանոթացել չարտիստական շարժման հետ:

Բրյուսսելում նա փորձեց ստեղծել կամ վերականգնել գերմանական բանվորների և արհեստավորների խմբակները, «Անաչառների միության» մնացորդները: Նրա նպատակն եր այդ բոլորին մի կազմակերպության մեջ ժողովել: Սակայն Մարքսը չեր կարողանում հաշտվել, վոր գերմանական հեղափոխականորեն տրամադրված բանվորներն ու արհեստավորները Վեյտլինգի յետամնաց հայացքների ազդեցության տակ են գտնվում: Վեյտլինգի և Մարքսի ընդհարումը վերջացավ վերջինի հաղթությամբ:

Վեյտլինգի ազդեցությունը դերոյի հավասարվեց: Այնուհետև հաջողությամբ վերջացավ նաև Մարքսի գլխավոր աշխա-



տանքն, ինչպես նաև Ենգելսինը, վորի գործունեյությունն ընթանում եր Փարիզում: Գերման բանվորների և արհեստավորների բաժան-բաժան խմբակները միացան, և ծնունդ առավ «Կոմմունիստների միությունը»:

Միությունն իրեն նպատակ եր դրել «բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի տիրապետության հաստատումը, վոչընչացումը հին քաղաքացիական հասարակության, վորի հենակետը դասակարգային հակասություններն են, հիմնումը նոր հասարակության, վոր մասնավոր սեփականություն չպիտի ունենա*:

Միության համար վորպես ծրագիր գրվեց «Կոմմունիստական Մանիֆեստը», վոր թեզիսների ձևով կարդացվեց և ընդունվեց 1847 թվի համագումարում: Իսկ լրիվ կերպով նա գրվեց 1848 թվին, այսինքն այն ժամանակ, յերբ հեղափոխական վորոտի դղրդյունը ցնցում եր ամբողջ Յեվրոպան և Գերմանիան:

## III

Ֆրանսիական 1848 թ. հեղափոխությունը շատ շուտ արձագանք գտավ Գերմանիայում: Դեռ հեղափոխությունից էլ առաջ պրուսսական բյուրոկրատական ու յունկերական կառավարությունն ստիպված յեղավ յերկրպագության գնալ իր բուրժուազիային: Այս քայլի պատճառը շատ պրոզայիք եր. կառավարությունը մնացել եր առանց փողի, իսկ բուրժուազիան հանձն եր առնում փող տալ միայն այն պայմանով, վոր վաղուց տրված, բայց մինչև որս չիրագործված խոստումը կատարվի—ժողովրդական ներկայացուցչությունը մերժվի:

Կառավարությունը ժողովրդական ներկայացուցչության տեղ աշխատում եր նրա սուրրոգատը հրամցնել, այսինքն պարլամենտի փոխարեն՝ գոյություն ունեցող լանդտագների միություն ստեղծել, ուր գերակշռողն այնուամենայնիվ ազնվականությունը կլիներ: Բայց ազնվականությունն էս, վոր սկսել եր խոշոր գյուղատնտեսական աշխատանք տանել և հացահատիկների, բրդի, սպիրտի և վուշի առևտուր անել, նույնպես վորոշ յերաշխիքի կարիք եր զգում աբսոլյուտիզմի դեմ, ուստի կառավարության դեմ արտահայտվեց: Միացյալ լանդտագը հրաժարվեց կառավարությանը փող տալ, ուստի և արձակվեց:

* Մարքսն ու Ենգելսն իրենց կազմակերպությունը «կոմմունիստական» անվանեցին վոչ պատահական կերպով: Դրանով նրանք ուզում եյին ցույց տալ, թե սոցիալիստների հետ ընդհանուր վոչինչ չունեին: Իսկ այդ ժամանակ սոցիալիստներ անվանում եյին զանազան ուտոպիստական ուսմունքների հետևորդներին, վորոնք ժխտում եյին դասակարգային կռիվն ու հեղափոխությունը:

Այն, ինչ բուրժուազիան չկարողացավ ստանալ խաղաղ միջոցներով, ստորին դասակարգերը ձեռք բերին հեղափոխական ճանապարհով։ Գերմանիայում, ինչպես և ամբողջ Եվրոպայում, 1847 թ. ճգնաժամերի տարի էր, ուստի փարիզյան դեպքերի մասին հասած լուրերը կայծեր հանդիսացան՝ ընկած բռնկվող նյութերի մեջ։ Հարավային Գերմանիայի մանր պետություններում շարժումն սկսվեց փետրվարի վերջին։ Կառավարություններն ամեն տեղ վախեցան և բուրժուական նախարարներ հրավիրեցին։

Սակայն՝ թե այս նախարարների, թե գերմանական հեղափոխության վիճակը կախված էր այն դեպքերից, որոնք տեղի կունենային խոշոր պետություններում—Ավստրիայում և Պրուսիայում։ Եվ ահա, երբ հեղափոխությունը բռնկվեց հակահեղափոխության բնում—Վիեննայում և ռեակցիայի կոլոսը—Մետերնիխի կառավարությունը թղթե տնակի պես ընկավ, Բեռլինում էլ իրարանցում տիրեց։ Ամբոխն շտապեց ժողովվել հասարակական տեղերում, որից բեռլինյան բուրժուազիան, որ առաջ տրտնջում էր կառավարության դեմ, այժմ սոսկաց։ Բուրժուական թերթերից մեկը վախով գրում էր. «այս ժողովները կարգին և բարեկիրթ ժողովրդի կամքը չեն արտահայտում», և թե այդ հավաքույթներում, կազմված «զանազան տականքներից ու տհաս մարդկանցից, կանդ չեն առնում նույնիսկ բոլոր խելահաս մարդկանց կյանքին ու սեփականությանն սպառնալու առաջ...»։

Բուրժուազիայի ներկայացուցիչների պատգամավորությունները պալատ գնալով՝ խնդրեցին քաղաքացիական ազատություններ հաստատել և միացյալ լանդտագը նորից հրավիրել։ Կառավարությունը պատրաստ էր այդ ընդունելու, իսկ բուրժուազիան սկսվող մասսայական հուզումների ազդեցության տակ կարող էր դրանով բավարարվել։

Բայց այստեղ դեպքեր տեղի ունեցան, որոնք անցքերի հետագա ընթացքը բոլորովին այլ հունի մեջ դրին։ Ըստ ամենայնի պատրաստված զինվորներն անմիտ ու դաժան հարձակում գործեցին անզեն ամբոխի վրա։ Ժողովրդի զայրույթն աննկարագրելի էր.—արհեստավոր, բանվոր ու զինվոր զենքի դիմեցին. վայրկենապես բարրիկադներ կանգնեցին։ Կռիվը բացառիկ կատաղի էր։ Փականագործ, յենթավարպետ, մետաղագործ, անասնաբույժ—ահա հերոսներն այս ճակատամարտի, որ մի ամբողջ ցերեկ ու գիշեր տևեց և վերջացավ ժողովրդի հաղթությամբ։ Թագավորն ստիպված եղավ զորքերը վերցնել և մի պրոկլամացիայով «սիրեցյալ բեռլինցիներին» դիմել։



«Տականքների և տհաս մարդկանց» տարած հաղթանակից բուրժուազիան օգտվեց. հենց նրա չափավոր մասից եւ նախարարներ նշանակվեցին։ Միացյալ լանդտագի փոխարեն պիտի հրավիրվեր Սահմանադիր ժողով՝ երկաստիճան ընտրությամբ։ Հեղափոխության բոլոր նվաճումները բուրժուազիան կարող էր ամրացնել միայն հեղափոխական մասսայի հետ դաշտն կռելով, բայց, ինչպես արդեն ասել ենք, նա կառավարության ուժեղ իշխանությունն ավելի գերադասեց և խուճապային կերպով վախեցավ բանվորներից։ Ուստի բուրժուական նախարարները համաձայնության եկան ոչ թե հեղափոխության, այլ կառավարության հետ։ Համաձայնությունը վերաբերում էր նոր սահմանադրություն ստեղծելուն, որի ժամանակ նախարարներն ամեն կերպ աշխատեցին մնալ օրինական հողի վրա, խույս տալով այն ամենից, ինչ որ թեկուզ ամենահեռավոր կերպով հեղափոխություն էր հիշեցնում։

Երբ պրուսական Սահմանադիր ժողովը հավաքվեց՝ միանգամայն համապատասխան ընտրական սիստեմին, որի հիման վրա հրավիրվել էր, և շնորհիվ ընտրողների անգիտակցության պարզվեց, որ կազմված է ամենաչափավոր և կառավարությանը հնազանդ տարրերից։ Նա էլ չէր կարող հեղափոխական ճանապարհով գնալ։ Ավելին՝ նա չէր կարող գյուղացիությանը կապել հեղափոխության հետ, որովհետև չէր ցանկանում ձեռք բարձրացնել ազնվականության իրավունքների և եկամուտների վրա։

Թե ինչ էր ներկայացնում այդ ժողովը, երևում է նրանից, որ հրաժարվեց ճանաչել բարրիկադային մարտիկների ծառայության արժեքը, որոնց քաջության շնորհիվ ինքը գոյություն էր առել։ Երբ բեռլինյան մասսաները բուրժուազիայի ապերախտության մասին իմացան, ընկան զինանոցի վրա ու զենքերը գրավեցին։

Սրանից հետո ժողովը բնավ սիրտ չարավ մասսաների վրա հիմնվել։ Ռեակցիան տապալող մասսաների և ազատամիտ բուրժուազիայի մեջ տարաձայնությունը Վիեննայում էլ առաջացավ։ Այստեղ, շնորհիվ պրոլետարիատի համարյա կատարյալ բացակայության, հասարակության ամենահեղափոխական տարրը ուսանողությունն էր, որ ուսանողական լեգիոններ կազմակերպեց։ Զարմանալի չէ, որ ազատամիտ բյուրոկրատները, որոնք հեղաշրջումից հետո կառավարության մեջ էին հայտնվել, տեսնելով բուրժուազիայի և հեղափոխական մասսաների անհամաձայնությունը, հանդգնություն ունեցան արձակել հեղափոխական կազմակերպությունը և ցրել ուսանողական լեգիոնը։ Բայց երկու

անգամ վոտքի յելած ազգաբնակչության ապստամբության միջոցով խանգարեց այս ռեակցիոն վորոգայթները: Սրանից հետո արքայական պալատը փախավ ամբողջ Ավստրիայի ամենայետամնաց ու ռեակցիոն տեղը—Տիրո՛լ, իսկ բուրժուազիան կատարելապես վհատվեց պալատի և ունևորների ծլկելով՝ նա մնաց առանց յեկամուտների և առանց պատվիրատուների: Սահմանադիր ժողովի հրավիրելը բուրժուազիայի սիրտն անհուն բերկրանքով լցրեց, վորովհետև նա դրանում հեղափոխության վերջանալը, լրացումն եր տեսնում: Այդ ժամանակ կառավարությունն իր դրությունը կայուն զգաց, վորովհետև այլ ևս վոչինչ չեր տեսնում և վերադարձավ Վիեննա: Այստեղ նա իր քայլն անգործներին տրվող նպաստը խլելուց սկսեց: Բանվորները բողոքեցին. բուրժուական յերկրապահ զորքն ընկավ բանվորների անզեն ցույցի վրա. բանվորներից շատերն սպանվեցին: Սրանով հակառեակցիոն ֆրոնտի միությունը վերջնականապես վոչնչացավ:

Սրանից խրախուսված, կառավարությունը վորոշեց հեղափոխության դեմ ավելի խիստ կռիվ սկսել և առաջին հերթին դարձավ դեպի ապստամբած վենգրիացիները: Այդ ժամանակ Վիեննայում նոր հեղափոխական յելույթ տեղի ունեցավ: Վիեննացիք հասկացան, վոր վենգերների դեմ ուղղած հարվածը լոկ առաջին քայլն ե՝ հեղափոխության բոլոր նվաճումները վոչնչացնելու գործում, և ամենից առաջ սահմանադիր կառավարություն հաստատելու դեմ:

Պալատը յերկրորդ անգամ փախավ—այս անգամ արդեն գերմանացիներին ատող, խավար և ռեակցիոն սլավոնների թևի տակ, և Վիեննան թողնվեց ինքն իր բախտին:

Ի հարկե՝ մոտիկ անցյալում բանվորական ցույցը բուրժուազիայի ձեռքով ցրելուց հետո այլ ևս վոչ մի համաձայնություն՝ հասարակության տարբեր խավերում և նրանց գործունեության համերաշխություն չեր կարելի սպասել: Բանվորները չեյին հավատում բուրժուազիային, սա յել վախենում եր բանվորներից: Ճեմարանական լեգիոնի ուսանողները շատ վատ ուսանողներ եյին՝ թեպետ հեղափոխական հափշտակությամբ տարված: Սրանք դեպքերը լավ չեյին ըմբռնում:

Մի կետ ևս կար, վոր գերմանական հեղափոխության մեկ հանգույց եր հանդիսանում: Այդ կետը Ֆրանկֆուրտն եր Մայնի վրա: Մենք չենք մոռացել, վոր բոլոր առաջադեմ գերմանացիների յերազը Գրմանիայի միացումն եր: Յեվ Բեռլինում ու Վիեննայում կատարված դեպքերից հետո համա-գերմանական պարլամենտը հավաքվեց Ֆրանկֆուրտում Մայնի վրա: Նրա կազմը



ծայրահեղ բուրժուական եր, իսկ ձախ թևը կազմում եյին փափկամորթ ու շատախոս ազատամիտները: Այս պարլամենտը յերկար շաբաթներ ու ամիսներ նվիրեց գերմանական ժողովրդի դեկլարացիայի քննությանը, վոր բաղկացուցիչ մասն եր ապագա կայսերական, այսինքն համագերմանական սահմանադրության: Այս շատախոս ժողովն ամենից քիչ այնպիսի ռեալ ուժի մասին եր մտածում, վորով կարելի լիներ հետագայում ստիպել առանձին թագավորներին՝ ընդունել այդ սահմանադրությունը: Առայժմ նա ընտրեց ավստրիական իշխաններից մեկին՝ վորպես ժամանակավոր կառավարիչ՝ գոյություն չունեցող գերմանական կայսրության: Այս բուտաֆորական կառավարիչն անմիջապես բուտաֆորական պալատ ու նույնպիսի յել նախարարություն կազմեց:

Մինչդեռ Ֆրանկֆուրտի պարլամենտին բաժին ընկավ լուծել ամենադժվարին միջազգային խնդիրներ, վոր առաջադրել եր հեղափոխությունը: Հարևան Լեհաստանը հուզված եր: Նա ձգտում եր ազատվել Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրիայի լծից: Դանիային յենթակա գերմանական շրջանները նրա դեմ ապստամբել եյին:

Իսկական հեղափոխականների, սակավաթիվ գիտակից բանվորների և ինտելիգենտների համար ակնհայտնի յեր, վոր Գերմանիան իր հեղափոխությունը կարող ե ամրացնել միայն ամենառեակցիոն հարևանի—Ռուսաստանի դեմ կռվում, հետևաբար պետք եր պաշտպանել յերևան յեկող լեհական ապստամբությունը: Սակայն այդպիսի վորոշում ձեռնտու չեր՝ վոչ ազնվական-բյուրոկրատիկ նախարարությանը: Ուստի բավականացան միայն դանիացիներին պատերազմ հայտարարելով և սրանց դեմ ապստամբած գերմանական շրջաններ՝ Շլեզվիգն և Հոլշտեյնը պաշտպանելով:

Դանիայի դեմ պատերազմը յելք տվավ հեղափոխական-հայրենասիրական տենչերին և բազմաթիվ կամավորներ թռան դեպի Յուտլանդիա՝ դանիացիների դեմ կռվելու: Իսկ պրուսական կանոնավոր զորքերը գործում եյին շատ դանդաղ, ամեն տեղ բառի բուն նշանակությամբ վնասելով, թշնամու ձեռքը տալով կամավորական կորպուսը և ապստամբների խմբերը, վերջն ել ժամանակավոր հաշտություն, զինադադար կնքեցին դանիացիների հետ, յերբ ապստամբները հաղթել եյին սրանց, այսինքն ճիշտ այն ժամանակ, յերբ այդպիսի բան ամենից քիչ պետք եր սպասել:

Ֆրանկֆուրտի պարլամենտն այս զինադադարը հաստատելու թուլությունն ունեցավ: Ֆրանկֆուրտի ժողովրդական մասսաների զայրույթն այս առթիվ այնքան մեծ յեղավ, վոր իսկույն

ապստամբություն պայթեց։ Իսկ պառլամենտն իր դավաճան քաղաքականությամբ նպաստեց կառավարական զորքերին՝ ճնշելու այս խռովությունը։ Սրանից անմիջապես հետո պարտություն կրեց նաև ապստամբությունը Բադենում—ամբողջ Գերմանիայի այս ամենաարդյունաբերական և ամենաառաջադեմ շրջանում։

Այս բոլոր պարտություններից ավելի կարևորը Փարիզի պրոլետարիատի ջախջախվելն էր՝ հունիսյան օրերին։ Այս հանգամանքը վերջնականապես խրախուսեց ամբողջ Յեվրոպայի ռեակցիային և դրդեց նրան՝ հարձակման դիմելու։ Ռեակցիայի հարվածների տակ առաջին ընկնողը յեղավ Վիեննան։

Ավստրիական կառավարությունը շատ վարպետ կերպով օգտագործեց այն ազգայնական թշնամանքը, վոր կրծում էր առանց այն էլ ավստրիական պետության հետ թույլ կապված ժողովուրդներին։ Նա ավելի յետամնաց ժողովուրդներին թունավորում էր ավելի առաջադեմների նկատմամբ՝ խորվատներին վենգերների դեմ, չեխերին գերմանացիների դեմ, ռուսիններին լեհերի դեմ։

Այս ճանապարհով կառավարությունը կարողացավ նկատելի ույժ կենտրոնացնել հեղափոխական Վիեննայի դեմ։ Գազազած և մարզված կանոնավոր զորքերին Վիեննան կարող էր հակադրել միայն ուսանողների ու արհեստավորների անկանոն ու անկազմակերպ հերոսությունը։

Վիեննայի առմանը զուգակցեցին ռեակցիոներների համար սովորական գազանություններն ու կատաղի վրիժառությունը՝ պարտվածներից։ Նրան օգնության չեկան վոչ վենգերները, վորոնք կռիվ եյին տանում ավստրիական կառավարության դեմ, վոչ էլ վորևե քայլ արավ ֆրանկֆուրտյան պառլամենտը։ Այն ինչ Վիեննայի անկումն առաջին քայլն էր վենգերական հեղափոխությունը խեղդելու և ապագայում Ֆրանկֆուրտի պատգամավորների բուտաֆորական ժողովը ցրելու։ Ընդգծենք, վոր այս պառլամենտի ձախերի ներկայացուցիչ, ամբողջ ժողովի լավագույն հռետոր Բլյումը, վոր իբրև ներկայացուցիչ էր ուղարկվել ապստամբած քաղաքը, ապորինի կերպով գլխատվեց ավստրիական գլխավոր հրամանատարի կողմից։

Ռեակցիայի հաջորդ հաղթանակը նրա սարսափելի վրեժն էր պրուսական ժողովից։ Հենց վոր պրուսական թագավորը Վիեննայի գրավման լուրն առավ, հրաժարեցրեց բուրժուական նախարարներին, իսկ հենց վոր ժողովը դիմադրության առաջին փորձն արավ, նրա նիստերը փոխադրեց յետամնաց ու խուլ Բրանդենբուրգ քաղաքը և Բեռլին գցեց քառասուն հազարանոց



մի բանակ, վորը մինչ այդ Դանիայում էր գտնվում։ Քաղաքացիական յերկրապահ զորքը զինաթափ արվեց՝ առանց նրա կողմից վորևե դիմադրության, իսկ ժողովը, վորին վռնդում եյին զինվորները, մի շենքից մի ուրիշն էր անցնում, առ այդ ժողովի անդամները շարունակ աղաչում եյին ժողովրդին՝ հանգիստ մնալ։ Իսկ յերբ այս խաղը ձանձրացրեց կառավարությանը՝ նա ժողովն արձակված հայտարարեց։ Վերջինս սրա դեմ ավելի լավ բան չգտավ, քան յեթե առաջարկել քաղաքացիներին՝ ձեռնպահ մնալ հարկ վճարելուց։ Մի խոսք՝ այս ժողովը մեռավ նույնքան անփառունակ, վորքան և անփառունակ էր նրա գոյությունը։

Բայց այնուամենայնիվ այս ժողովի ճակատագիրը կարևոր էր հեղափոխության ամբողջ ընթացքի համար։ Նա կարող էր միացման կենտրոն դառնալ բոլոր հեղափոխական ուժերի համար և այս դեպքում էլ նրա դիմադրության նշանակությունը նույնիսկ պարտվելու դեպքում պակաս չէր լինի։ «Պարտությունն, ասում է Ենգելսը—համառ կռվից հետո—պակաս հեղափոխական նշանակություն ունեցող փաստ չէ, քան դյուրությամբ ձեռք բերած հաղթանակը...»։ «Դուցե,—ասում է դարձյալ նա,—ժողովը և Բեռլինի ազգաբնակությունը նույն վիճակն ունենային, ինչ վոր ունեցան՝ Փարիզը հունիսին և Վիեննան հոկտեմբերին, բայց նա կընկներ փառքով և դեպքերն ապրած ուղեղներում վրեժի պահանջ կթողներ, վոր հեղափոխական ժամանակներում ամենահզոր խթաններից մինն է՝ դեպի յեռանդուն և ուժգին աշխատանքը»։

Ինչպես Վիեննայի անկման՝ այնպես և Բեռլինի ժողովի ցրման ժամանակ Ֆրանկֆուրտը բավականացավ միայն բանաձևեր ընդունելով և կոմիսարներ ուղարկելով։ Այդ կոմիսարներից մեկը վերադառնալով Բեռլինից, ուր նա ժողովի ցրմանը ներկա չէր յեղել, զեկուցեց պառլամենտին, թե հիրավի կառավարության ձեռք առած միջոցը միանգամայն ուղիղ էր, վորովհետև վերջերս Բեռլինի փողոցներում յերևացին «թափառաշրջիկ մարդիկ՝ վտանգավոր տեսքի»—նշան անարխիստական յելույթների մերձեցման...

Մինչդեռ՝ իբրև մարտյան հեղափոխության ժառանգ մնացել էր միայն ֆրանկֆուրտյան պառլամենտը, վորի թույլ ուսերին էլ մնացել էր հեղափոխական պայքարի ամբողջ ծանրությունը։ Իսկ նա կարծես մոռացել էր իր հեղափոխական ծագումը։ Նույնիսկ այն ժամանակ, յերբ այլևս վոչ մի կասկած չէր մնում նրա մոտակա անկման, նա մի բանաձև հանեց, վոր միայն և միայն այն էր ասում, թե «գերմանական միության վսեմ գաղափարի

իրագործմանը վտանգ է սպառնում», և վերջացնելով կայսրության սահմանադրության մշակումը՝ ստեղծված միապետական վոգով, այդ սահմանադրության հիման վրա կայսր ընտրեց՝ վոչ ավել, վոչ պակաս, այլ պրուսական թագավորին։ Իսկ այս վերջինը չեր ցանկանում կայսերական թագ ընդունել հեղափոխական հիմնարկության ձեռքից, ինչպես իրեն եր թվում։ Այստեղից էլ ընդհարում սկսվեց պարլամենտի և պրուսական կառավարության մեջ։

Պրուսական կառավարությունը 1849 թվի ապրիլի վերջին հայտարարեց սահմանադրությունն անիշխանականության արգասիք և Ֆրանկֆուրտի մոտ զորք կենտրոնացրեց։ Մյուս գերմանական պետությունները հետևեցին նրա օրինակին։

Այնպիսի դրություն ստեղծվեց, յերբ միապետական և չափավոր սահմանադրության պաշտպանությունը միակ հեղափոխական լոզունգն եր դարձել։ Այս պատճառով էլ հարավ-գերմանական պետությունների մանր բուրժուազիան պատրաստ եր կռվելու այդ սահմանադրության համար։ Բայց միայն մանր բուրժուազիան չեր, վոր դուրս յեկավ նրան պաշտպանելու։ Բնազդորեն զգալով րեակցիայի գալը, լայն մասսաները վոտքի յելան։ Գերմանիայի հարավում «գյուղացիք հավաքվում եյին հազարներով. նրանք խանդավառության մեջ եյին»։

Այժմ Ֆրանկֆուրտի ժողովը կամ նրանից մնացած ձախերը (վտանգի ազդեցության տակ պարլամենտում մնացել եյին համարյա միայն ձախերը, մնացած պատգամավորները աստիճանաբար լքել եյին պարլամենտը) պիտի վորոշեյին՝ հենվել մասսայական շարժման վրա։ Վոտքի յելան հարավ-գերմանական պետությունները, ապստամբեց Դրեզդենն ու արտաքսեց թագավորին։ Վյուրտեմբերգում թագավորին ստիպեցին՝ ընդունել սահմանադրությունը։ Բադենում ժամանակավոր կառավարություն հիմնվեց։ Հարավ-գերմանական պետություններում շարժման այսպիսի թափը բացատրվում ե նրանով, վոր նրանց մանր բուրժուազիան բանվորական յելույթի սպառնալիքի տակ չեր և ազնվականության ու կառավարական բյուրոկրատիայի հետ համաձայնության գալու կարիք չեր զգում, այս պատճառով մի փոքր ավելի հեղափոխական եր, քան հյուսիսային Գերմանիայի բուրժուազիան։

Ֆրանկֆուրտի պարլամենտն այս վերջին շանսն էլ աչքաթող արավ։ Ժողովի համարյա միակ հեղափոխական Վոլֆի առաջարկը — որենքից դուրս հայտարարել կայսրության կառավարչին — մերժվեց, և ժողովը շարունակեց թղթե բանաձևեր հանել։



Նա քաջություն չունեցավ ապստամբ հարավի վրա հենվելու։ Նա ժամանակը կորցնում և հալվում եր, վորովհետև պատգամավորները շարունակում եյին հեռանալ նրանից։ Այդ ժամանակ հարավային Գերմանիան ցնցվում եր վերջին պայքարի ջղաձգություններում։ Վերջ ի վերջո պայքարի ծանրությունն այստեղ էլ ընկավ քաղաքային արհեստավորների և գյուղական չքավոր ազգաբնակության վրա, վորովհետև «հենց վոր զինված ապստամբությունը լուրջ տագնապի հասցրեց, մանր բուրժուաները սոսկացին սարսափելի դրության առաջ, վորի մեջ ընկնում եյին. սարսափ ժողովրդի առաջ... սարսափ իշխանության առաջ (վոր այժմ նրանց ձեռքն եր անցնում), և ամենից առաջ՝ սարսափ հետևանքների առաջ, վոր պիտի առաջանային հենց նրանց համար, նրանց հասարակական դիրքի համար, նրանց սեփականության համար» (Ենգելս)։

Մանր-բուրժուական առաջնորդները, վորոնք դեպքերի բերումով պատասխանատու պաշտոնների եյին հասել, «վոչ միայն ապստամբությունը թողին նրա անխնամ, ուրեմն և անարդյունք ինքնագործունեությանը, այլ և իրենց ուժից յեկածն արին, վորպեսզի շարժման ամբողջ եներգիան խլեն, ներքուստ ուժասպառեն նրան և կորստյան հասցնեն» (Ենգելս)։

Մինչև վերջին վայրկյան ֆրանկֆուրտյան շատախոսները (մնացել եյին մոտ 150 հոգի) սիրտ չեյին անում ապստամբությամբ բռնված գավառներն ընկնել, վորպեսզի համագերմանական պարլամենտի անունից գոնե մի փոքր ույժ տային հարավ-գերմանական շարժմանը։ Միայն այն ժամանակ, յերբ գործն անհույս կերպով տանուլ եր տրված և վճռված եր պրուսական և վյուրտեմբերգյան սվիններով, պարլամենտականները շարժվեցին դեպի Բադեն։ Բայց արդեն ամեն ինչ վերջացած եր, հեղափոխությունն անհույս կերպով հաղթված եր և վորևե բան փրկելն այլևս անկարելի յեր։

IV

Գերմանիայի արհեստավորներին ու բանվորներին մենք տեսանք կռվելիս Բերլինի բարրիկադների վրա, արյունաքամ լինելիս հարավային Գերմանիայի դաշտերում, բայց «խելառ 1849 թիվը», ինչպես հետագայում նրան գերմանացի ֆիլիստերներն անվանեցին, միայն աշխատավորների այս հերոսությամբ չեր, վոր նշանակելի դարձավ։ Հեղափոխության և քաղաքացիական կռվի փոթորիկներում նրանք իրենց մասսայական կազմակերպություններն ստեղծելու առաջին փորձերն արին։

Այս թվականի գերմանական բանվորական շարժումը կապված է Ստեֆան Բորնի անվան հետ։ Արհեստով տպագրող, նա մի ժամանակ ապրեց Փարիզում, ուր լինում էր Ենգելսի ազդեցության տակ գտնվող խմբակներում։ Հեղափոխության հենց առաջին բռնկումների ժամանակ նա յերկաց Բեռլինում և ամենաաչքի ընկնող մասնակցությունն ունեցավ դեպքերին՝ ղեկավարելով արհեստավորների ու բանվորների առաջին ժողովները։ Այստեղ նա հրատարակել սկսեց «Ժողովուրդ» թերթը։ «Այս լրագիրը,—գրում եր առաջին համարում նրա խմբագիր Բորնը,—պիտի պաշտպանի վորոշ դասի՝ բանվոր դասակարգի շահերը, վորոնք գտնվում են հարստահարվածի դրության մեջ և վարձվում են ի սեր մի կտոր հացի»։

Բորն անհրաժեշտ եր գտնում, վոր բանվորներն ոգնեն բուրժուազիային՝ կառավարության հետ մրա տարած կռվում, ինչպես նաև անհրաժեշտ եր համարում, վոր բանվորները բոլորովին ինքնուրույն քաղաքական ու տնտեսական մարմիններ կազմակերպեն։ Բորնի այս գաղափարի իրականացումն եր «Ընդհանրական բանվորական յեղբայրությունը»։ Այս միության բերան «Յեղբայրությունը», վոր հրատարակվում եր Լեյպցիգում, իր համարներից մեկում գրում եր. «Սոցիալիզմը մեզ սովորեցնում է, թե սոցիալական խնդիրը լոկ համապարփակ դասակարգային պայքարի արտահայտություն է։ Ահա թե ինչու չպիտի լսել այն մարդկանց, վորոնք աշխատանքի և կապիտալի շահերի ներդաշնակության մասին են խոսում»։

Միությունը բանվորական համագումարներ եր հրավիրում, վորին մասնակցում եյին Գերմանիայի խոշոր արդյունաբերական կենտրոնների ներկայացուցիչները։ Քաղաքական, տնտեսական և արհեստակցական պայքար մղելու նպատակով՝ առաջին համագումարը վորոշեց «Բանվորական յեղբայրություն» կազմել և պնդել աշխատանքի որենսդրություն կազմելու, հարկային սիստեմի բարեփոխությունն ապահովելու, ձրի դպրոցների, աշխատանքի նախարարություն կազմելու և բանվորական ընկերությունների պետական պաշտպանության վրա։ Բացի դրանից՝ համագումարն ստորին աստիճանի բանվորական շարժման համար այնպիսի պայմաններ առաջարկեց, ինչպես օրինակ՝ արգելել չսովորածներին պարապել այնպիսի արհեստով, վոր տեխնիկական ճարպկություն է պահանջում։

Այնուհետև համագումարը վարպետի կոչում ստանալու պայմաններ մշակեց, այլ և բանվորներին իրենց աշխատավարձից կատարած յետգրումներով հողամասեր ձեռք բերելու մասին պլան կազմեց՝ նման Օ'Կոննորի պլանին։

Այս՝ վոչ այնքան էլ հասուն ծրագրային փորձերից անհամեմատ ավելի կարևոր եյին այն կազմակերպչական ձևերը, վորոնք մշակված եյին գերմանական բանվորական շարժման հենց առաջին քայլերի ժամանակ։ «Յեղբայրությանը» գլխավորում եր գերմանական բանվորական կազմակերպությունների կոմիտեն՝ «հենված տեղական ու շրջանային կոմիտեների լայն սիստեմի վրա...»։ Տարիուկեսից հետո «Յեղբայրությունը» 250 կազմակերպություն եր միավորում մի քանի հազար անդամներով։ «Յեղբայրությունը» համագումարներ եր հրավիրում, ագիտացիան եր ղեկավարում և կապ հաստատեց Մարքսի ու Ենգելսի հետ։

Յերբ «Յեղբայրությունն» սկսեց իր ազդեցությունը տարածել հարավային Գերմանիայի վրա, ստիպված յերավ գործ ունենալ ավելի յետամնաց (իրենց վոգով) կազմակերպությունների հետ։ Այդ կազմակերպություններում խիստ զգացվում եր Մարլոյի ազդեցությունը։ Այս վերջինն արդեն անհետացման դատապարտված արհեստավոր մասսաների կուռքն ու պաշտամունքն եր։ Մարլոն միջնադարյան համքարական դրությունը վերականգնելու մասին եր յերազում։ Նրան հետևող արհեստավորներն էս համագումար կազմեցին Ֆրանկֆուրտում։ Այստեղ նրանք «առանց արդյունաբերության ազատության» արդյունաբերական ծրագիրը կազմեցին, ինչպես նաև, հենց այնպես, ի միջի այլոց մտածեցին «սոցիալական խնդիրը լուծել»։ Այս փոքրիկ «տերերի» համագումարի համար բնորոշն այն եր, վոր յերբ յենթավարպետները թույլտվություն պահանջեցին համագումարին ներկա լինելու՝ արհեստավորները մերժեցին։ Նրանք ստիպված յեղան իրենց առանձին համագումարն ունենալու։ Մարլոն յերկուսումն էլ հանդես յեկավ։

Բորնի և Մարլոյի մեջ 1849 թվի հունվարին հրապարակական գիտական վեճ տեղի ունեցավ։ Այստեղ Մարլոն կատարյալ պարտություն կրեց և հարավ-գերմանական կազմակերպությունները միացան «Յեղբայրությանը»։

«Յեղբայրության» այսպիսի հաջողությունն անկարող եր կասեցնել հեղափոխության ընդհանուր խորտակումը։

«Յեղբայրությունն» ընկավ ռեակցիայի հարվածների տակ։ Սակայն նրա աշխատանքն իզուր չանցավ. նա հող պատրաստեց այն կազմակերպության համար, վոր հետագայում ստեղծեց Ֆերդինանդ Լասսալը, իսկ այնուհետև՝ նաև գերմանական սոցիալ-դեմոկրատիան։

Հեղափոխության ժամանակ ի՞նչ եր անում ամենագիտակից հեղափոխականների խմբակը—«Կոմմունիստների դաշինքը»: Միանգամայն հասկանալի յե, որ այս միությունը, իբրև փակված ընդհատակյա կազմակերպություն, անարժեք եր դարձել: Ուստի փաստորեն նա լուծվեց, իսկ անդամները ցրվեցին ամբողջ Գերմանիայում և «ամենից առաջ հայտնվեցին այնտեղ, ուր պետք եր շարժել, խթանել բուրժուական դասակարգը՝ պաշտպանելու այն իրավունքները, որոնք անհրաժեշտ եյին պրոլետարիատին՝ քաղաքականորեն կազմակերպվելու համար»: Միության անդամները «մեկ-մեկ» վերադարձան Գերմանիա, որպեսզի այստեղ գործ տեսնեն՝ որպես հեղափոխական շարժման թթխմորներ: Այսպիսով բաժան-բաժան յեղած, «Կոմմունիստական միությունը բանվոր դասակարգի ազատագրական կռվի համար նախապատրաստական դպրոց դարձավ. համարյա ամենուրեք, ուր գերմանական պրոլետարիատն իր աշխարհայացքը պարզելուն է հանգել, գտնում ենք, որ շարժիչ ույժ հանդիսացել են «Կոմմունիստների միության» անդամները:

Այս տեսակետից շատ ցուցադրելի յե իրեն՝ Մարքսի աշխատանքը: Նա աշխատում եր Հռենոսյան շրջանում, որ Գերմանիայի ամենաարդյունաբերական և ամենահարուստ շրջանն եր և պրոլետարիատի աչքի ընկնող կադրեր ուներ: Բայց որովհետև այստեղ հենց առաջին օրերում ոչ մի պրոլետարական կազմակերպություն չկար, Մարքսին վիճակվեց օգտագործել գոյություն ունեցող դեմոկրատական կազմակերպությունը: Այստեղ էլ նա խմբագրում եր «Նոր Հռենոսյան Լրագիրը», որի եջերում նա հենց այդ դեմոկրատական կազմակերպության գործունեությունն եր քննադատում:

Այն ծրագիրը, որ այդ ժամանակ Մարքսն եր պաշտպանում, ի հարկե պրոլետարիատի ծրագիրը չեր, բայց նա այդ ժամանակ գոյություն ունենալու իրավունք ունեցող ծրագրերից ամենից արմատականը, ամենից ձախն եր: Նա հանգում եր Գերմանիայի միացմանը, ընդհանուր ընտրական իրավունք մտցնելուն, ժողովրդի համայնական սպառազինմանը, դատավարության ձրի լինելուն, ընդհանուր անվճար ուսման, ամեն տեսակ ճորտատիրական կարգերի մնացորդների ոչնչացման և բանկերի, արտադրության միջոցների, ամեն տեսակ հանքերի, պետական կալվածների ազգայնացմանը, ինչպես նաև յեկեղեցին պետությունից բաժանելուն:

Յերբ բուրժուազիայի դավաճանությունն ակնհայտնի դարձավ և յերբ Քյոլնում բանվորական կազմակերպություն առաջ



յեկավ՝ Մարքսն ու Ենգելսը թողին բուրժուական կազմակերպությունն ու կապվեցին բանվորության հետ: «Մենք գտնում ենք, հայտարարեցին նրանք դրա հետ, որ դեմոկրատական միությունների այժմյան կազմակերպությունն իր մեջ շատ այլազան տարրեր ե պարփակում, որ նա խոչընդոտ ե գործի նպատակներին: Մենք կարծում ենք, որ նախապատվությունը պիտի տալ բանվորական դաշինքների սերտ ու կուռ կազմակերպություններին և միատեսակ տարրերին»:

Սակայն հենց այդ ժամանակ էլ պրուսական ժողովը ցրեցին, ռեակցիան ուժեղացավ, թերթը փակվեց, և Մարքսը, որպես օտարահպատակ, ստիպված յեղավ շտապ թողնել Քյոլնը: Իսկ Ենգելսը միության այլ անդամների հետ միասին անցավ հարավ, ուր վերջին հեղափոխական պայքարը տեղի ուներ: Համակայսերական սահմանադրության օգտին մղված կռվում իր ունեցած մասնակցության մասին Ենգելսը հետագայում գրում եր. «Յես պարտավոր եյի շարժման մեջ այն տեղը գրավել, որ միայն կարող եյին գրավել «Նոր Հռենոսյան Լրագրի» աշխատավորները՝ զինվորի տեղ...»: Յեվ Ենգելսն իրոք որ, լավագույն առաջնորդներից մեկի—Վիլլիխեյի ադյուտանտի պաշտոնն եր կատարում:

«Նոր Հռենոսյան Լրագիր»-ը խմբագրելը Մարքսի յերախտագիտության արժանի գործն եր, որովհետև այստեղ նա ցույց եր տալիս ու անարգանքի յեր գամում բուրժուա ազատամիտների բոլոր սխալներն ու կեղծ քայլերը և նշում եր հեղափոխական իսկական ճանապարհներն ու իսկական հեղափոխական տակտիկայի քայլերը: «Նոր Հռենոսյան Լրագիրը» զարմանալի հստակությամբ ու ըմբռնումով նշում եր հեղափոխական շարժման ճոճանակի յուրաքանչյուր տատանումը: «Հռենոսյան Լրագիրը» ցույց եր տալիս Պրուսիայի նախարարի դավաճան դերը, փորձում եր մտրակելով գործի կոչել պրուսական ժողովը, մանավանդ նրա ձախ մասը: Նա անարգում եր բուրժուա նախարարների կոմպրոմիսն ազնվականների հետ, ասելով. «այս հակասական, յերկճակատ խնդրին ձգտելը՝ բուրժուազիայի դեռ ես չիրականացած տիրապետությանը ռեակցիա յե սպառնում»:

Մարքսը ցույց եր տալիս դեպի գյուղացիությունն ունեցած վերաբերմունքի անթույլատրելիությունը, այն վերաբերմունքի, որ գլխատում եր հեղափոխությունը: «Գերմանական բուրժուազիան անպատկառ կերպով մատնում ե գյուղացիությանը,—գրում եր Մարքսը,—այն գյուղացիությանը, որ նրա ամենահուսալի դաշնակիցն ե... առանց որի օգնության նա ազնվականության առաջ անզոր կլինի»:

Մարքսը ջերմ պաշտպան եր հեղափոխական կռվի, վորը միայն կարող եր ազատել և՛ Գերմանիան, և՛ ամբողջ Յեվրոպան ռուսական ռեակցիոն ցարիզմի լծից: «Այժմ, յերբ գերմանացիք նետում են իրենցից սեփական ստրկական լուծը,—գրում եր «Հռենոսյան Լրագիրը»,—պետք փոխվի նաև նրանց արտաքին քաղաքականությունը, այլապես՝ ինչպես ուրիշ ժողովուրդների յենք շղթայել, նույնպես կշղթայենք նաև մեր սեփական, յերիտասարդ, դեռ նոր միայն ծնվող ազատությունը... Միայն պատերազմը Ռուսաստանի հետ հեղափոխական Գերմանիայի պատերազմ կհանդիսանա, միայն այդպիսի պատերազմով Գերմանիան կլվանա անցյալի մեղքերը, կդառնա առնական և կհաղթի իր սեփական ինքնակալներին»:

Յերբ հունիսյան որերին Փարիզի պրոլետարիատը հաղթվեց, «Հռենոսյան Լրագիրը» իր ուժով և հեղափոխականությամբ ցնցող մի հոդված նվիրեց: «Դեմոկրատիկ մամուլի առավելությունը նրանումն ե կայանում, գրում եր նա, վոր պլեբեյների սպառնալից մռայլ ճակատը դափնիով պսակե. նրանց մաշում, քայքայում ե սովը, դատապարտում ե մամուլը. բժիշկները նրանց ձգել են. ազնիվները նրանց գողեր, հրդեհաձիգներ, տաժանակիրներ են անվանում. նրանց կանայք ու յերեխաներն անսահման կարիքի յեն դատապարտված, նրանցից լավագույնները ծովից դենն են աքսորված...»:

Հեղափոխության խեղդումից հետո, «Կոմմունիստների միության» նախկին անդամները ժողովվեցին Լոնդոնում: Հեղափոխության խորտակման րոպեներին Մարքսն ու Ենգելսն այն կարծիքի եյին, թե հեղափոխական շարժման զարգացման մեջ լոկ ժամանակավոր արգելք ե առաջացել: Սակայն դիտելով Յեվրոպայի տնտեսական վիճակում 1850 թվին առաջացած լավացումը, նրանք համոզվեցին, վոր հեղափոխական ալիքը վերջնականապես ե ընկեր: Մարքսի և Ենգելսի այսպես արտահայտած համոզմունքի հողի վրա՝ վերանորոգված «Կոմմունիստների միության» մեջ պառակտում առաջ յեկավ. անդամների մի մասն ուզում եր անցնել ռունտային գործունեության և այսպիսով նորից կենդանացնել ու նորից վոտքի կանգնեցնել հեղափոխությունը: Նրանք նույնիսկ սկսեցին դրամական հանգանակություն կազմակերպել այն ծախսերի համար, վորոնք կապված եյին իրենց վոտքի տակ վոչ մի հող չունեցող այդ փորձերի հետ. Ի հարկե՝ Մարքսը կտրականապես դեմ արտահայտվեց «եմիգրացիայի այս հեղափոխական ցնորքներին»: Միության մեջ յերկու ֆրակցիա առաջացավ, վորոնցից յուրաքանչյուրի գոյությունը կարճ յեղավ: «Այն ֆրակցիան, վոր սկսեց աննպատակ կերպով հեղափոխություն խաղալ՝ դրանից ել ընկավ», իր գոյությունը կարճելով 1853 թվի սկզբին: «Մյուս ֆրակցիան կործանվեց կոմմունիստների Քյոլնյան դատավարությամբ, վոր պրուսական թագավորի հրամանով մի պրովոկատոր եր սարքել: Դատավարությունը վեց շաբաթ տևեց և վերջացավ 1852 թ. ձմեռը, առ վոր 11 մեղադրվողներից 7-ը բանտարկության դատապարտվեցին: Սրանից հետո միության մնացորդները ցրեցին, վորովհետև ցամաքի հետ նրա բոլոր կապերը կտրվեցին և այդպիսի ընկերության գոյությունն առժամանակ համարվեց (Մերինգ):

V

Ինչպես Ֆրանսիայում, այնպես ել Գերմանիայում 1848 թ. հեղափոխությունը հետևանք եր առաջին հերթին արդյունաբերական ճգնաժամի, վոր սկսվեց Անգլիայում, իսկ հետո անցավ Յեվրոպա: Յերկրներից յուրաքանչյուրում, վորին հեղափոխությունը դիպավ, այս տնտեսական պատճառը յուրատեսակ կերպով բեկվում և հատուկ քաղաքական հետևանքներ եր առաջ բերում: Անգլիան, վոր այդ ժամանակ արդեն ամբողջովին կապիտալիստական զարգացման ճանապարհն եր բռնել, 1848 թվականը յուր տեսակ եր ապրում: Անգլիական բուրժուազիան, վոր արդեն հաղթել եր հողատեր ազնվականությանը, վորպես վորոշ թշնամի ուժ դիմագրավում եր պրոլետարիատին, վորին միայն մի բան եր մնում—պայքար գոյություն ունեցող քաղաքական իրավակարգի դեմ, ինչպես նաև այդ իրավակարգի որոք տիրող դասակարգի — բուրժուազիայի դեմ: Անգլիական ճգնաժամից ծնունդ առած շարժումը պրոլետարական շարժում եր և նրան դիմադրելու յելավ ամբողջ բուրժուական հասարակությունը:

Ֆրանսիայում բուրժուազիան 1830 թ. արդեն իշխանության հասավ: Բայց այդ իշխանությունը վոչ թե ամբողջ բուրժուազիային եր պատկանում, այլ միայն նրա մի խմբին—ֆինանսական բուրժուազիային:

1848 թվին այս խմբակի դեմ յելավ միացած ամբողջ բուրժուազիայի և պրոլետարիատի միացած ուժը: Բայց այս միացած ուժերի տարած հաղթանակը յերկպառակություն առաջ բերեց հաղթողների շարքերում, վոր վերջացավ հունիսյան որերով: Այս որերին ինչպես Ֆրանսիայում, այնպես ել Անգլիայում պրոլետարիատի դեմ յելան բոլոր սեփականատեր դասակարգերը:

Վերջապես 1848 թվի հեղափոխությունը Գերմանիայում և Ավստրիայում տիպիկ հեղափոխություն եր, այսինքն՝ մի հեղա-

փոխություն, որը նպատակ եր դրել ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք անհրաժեշտ եյին կապիտալիզմը զարգացնելու և ֆեոդալիզմի ու ճորտատիրության բոլոր մնացորդները վոչնչացնելու համար։ Բայց... գերմանական ազատամիտ բուրժուազիային վիճակված չեր հեղափոխությունը մինչև վերջ տանել. այս հեղափոխության թափը նրան ավելի յեր վախեցնում, քան հին կարգը, վորի հետ կռվում եր հեղափոխությունը։ Այս կարգի տապալումը նրան իր սեփական կործանման նախանշան եր համարվում. ազնվականության սեփականության և արտոնությունների վրա հարձակվելը՝ նրա աչքում բուրժուազիայի սեփականության և արտոնությունների վրա հարձակվելու սկիզբն եյին։

Այս պատճառներից դրդված՝ բուրժուազիան լավագույն դեպքում չեզոք եր մնում, իսկ վատագույն դեպքում՝ ուղղակի հեղափոխության թշնամիների կողմն եր անցնում։ Փողոցներում, բարրիկադների վրա կռվում եյին արհեստավորների ու բանվորների մասսաները, ասենք՝ վերջիններիս թիվը այնքան ել շատ չեր. Նրանց հետ մեկտեղ կռվում եր նաև մանր-բուրժուական ուսանող-յերիտասարդությունը։

Այս վերջինս՝ բանվորական մասսայի յետամնացության շնորհիվ հաճախ ղեկավարի դերում եր հանդես գալիս. իսկ ուր բանվոր դասակարգը շատ թե քիչ գիտակից եր, ինքն եր յերեվում առաջնակարգ դիրքերում, առաջնակարգ պաշտոններում։

Հեղափոխության անհաջողության ամենագլխավոր պատճառներից մինն այն եր, վոր այդ հեղափոխությունն արհամարհեց գյուղացիության շահերը։ Ինչպես արդեն ասել ենք, բուրժուազիան սիրտ չեր անում ձեռք բարձրացնել այն իշխանության վրա, վոր ուներ ազնվականությունը գյուղացիության նկատմամբ, ուստի այս վերջինները շուտով յետ եյին մնում հեղափոխությունից կամ ուղղակի ռեակցիայի բանակն եյին անցնում։ Մարքսն այս հանգամանքը շատ լավ հասկացավ ու հաշվի առավ։ «Դիմում կոմմունիստների միությանը» աշխատության մեջ, գրված 1850 թվին, Մարքսը գծում ե այն քայլերը, վոր հետագայում հեղափոխական դասակարգը—պրոլետարիատը պիտի կատարեր՝ գյուղացիության նկատմամբ։

Այդ քայլերը պիտի հանգեն բոլոր ֆեոդալական պարտավորությունների վոչնչացման՝ առանց փրկանքի և բոլոր խոշոր հողային կալվածների ազգայնացմանը։ Միայն այս ճանապարհով կարելի յեր կապել գյուղացուն հեղափոխության հետ, նրան դարձնելով հեղափոխական դասակարգի—պրոլետարիատի դաշնակիցը։ Այս «դիմում»-ի մեջ Մարքսն ուրիշ ցուցմունքներ



ես անում եր, վորոնք յերբեմն ուղղակի մարգարեության բնույթ են կրում։ Նա ասում ե, թե հաջորդ հեղափոխության ժամանակ բուրժուական դեմոկրատիան կհաղթի՝ դաշնակցած բանվորների հետ, և 1848 թ. դասերի հիման վրա ցուցմունքներ ե տալիս, թե այդ պայմաններում ինչպես պիտի վարվի պրոլետարիատը։ Ամենից առաջ անհրաժեշտ կլինի կազմել ինքնուրույն պրոլետարական կուսակցություն—իսկ այնուհետև՝ պրոլետարական զինված ույժ—բանվորական գվարդիա։ Նոր պաշտոնական պրոլետարական կառավարությանը զուգընթաց պրոլետարները պիտի ստեղծեն իրենց հեղափոխական-բանվորական կառավարությունը՝ «համայնքների կառավարության, բանվորական ակումբների, թե բանվորական կոմիտետների ձևով»։ Պրոլետարիատի ուսուցչի այս հանճարեղ դիտողությունները վոչ պակաս հանճարեղ կերպով կարողացավ հասկանալ և կյանքում կիրառել ռուսական հեղափոխական պրոլետարիատը և նրա առաջնորդ Լենինը։ Յեվ ինչ եյին ներկայացնում իրենցից բանվորական ներկայացուցիչների խորհուրդները, յեթե վոչ Մարքսի նշած բանվորական հեղափոխական կառավարությունը։ Մի՞թե ռուսական պրոլետարական հեղափոխությունն ստիպված չեղավ զինվել բուրժուական դեմոկրատիայի դեմ և մի՞թե նա չամրացավ գյուղացիության հետ կապած դաշինքով, դաշինք, վոր կապվեց ճորտատիրական բոլոր մնացորդների և հողային խոշոր սեփականությունն ազգայնացնելու հիման վրա։

## VI

# ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(I Ինտերնացիոնալ).

## I

Հազար ութ հարյուր քառասունութ թվի հեղափոխության նախօրյակին Մարքսի տված լոզունգը—«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք», իրականանալ սկսեց միայն 16 տարուց հետո—60-ական թվականների սկզբում: Այդ ժամանակ առաջ յեկավ և գործել սկսեց Բանվորների Միջազգային Ընկերությունը:

Բանվոր դասակարգի այս միջազգային ընկերության առաջ գալը պատրաստվեց Յեվրոպայի տնտեսական ու քաղաքական կյանքի յերևույթներով. յերևույթներ՝ տեղի ունեցան մեկուկես տասնյակ տարիների ընթացքում, վորոնք հոսեցին 1848 թ. հեղափոխությունից հետո: Հիշում ենք, վոր հեղափոխական շարժման ալիքի անկումից հետո Մարքսն ու Ենգելսը համոզված եյին, թե նա շուտով պիտի նորից բարձրանա: Սակայն նրանք շատ շուտ հասկացան իրենց այդ յենթադրության սխալ լինելը: Յեվրոպայի կայունացած տնտեսական վիճակը հեռացնում եր բանվոր դասակարգի նոր հեղափոխական յելույթների հնարավորությունը: Իրոք՝ 1849—57 թվականները վո՛չ միայն քաղաքական ռեակցիայի տարիներ եյին, այլ և մինչև այդ ժամանակը գոյություն չունեցած տնտեսական վերելքի տարիներ եյին: Վաթսունական թվականների սկզբներին Յեվրոպան ուժեղ թափով առաջ գնաց դեպի խոշոր կապիտալիստական արտադրություն:

Խոշոր արդյունաբերության աճման հետ՝ աճում է նաև աշխատանքի բաժանումն առանձին յերկրների մեջ և ամրանում են տնտեսական կապերը նրանց մեջ: Այժմ այդ յերկրներից ամեն մինն այլ ևս չի բավականանում իր ունեցած մթերքների մշակումով. այժմ «խոշոր արդյունաբերությունը՝ կտրված ազգային հողից, արդեն կախումն ունի համաշխարհային շուկայից, աշխատանքի միջազգային բաժանումից...»:

Իբրև այս դրության հետևանք, զարմանալի կերպով ավելանում է առևտրի շրջանառությունը. այսպես 1800—1850 թվականները յեվրոպական առևտրի շրջանառությունը յերկու և կես անգամից ավելի բարձրացավ:

Այս տնտեսական վերելքն առանձնապես վերաբերում եր Անգլիային: Բարածուխի հայթայթումն այս յերկրում 10,000,000 տոննից (1800 թ.) բարձրացավ մինչև 92,000,000 տոնն (1864 թ.), թուջի հալքը 1,390,000 տոննից (1840 թ.)՝ 4,767,000 տոննի (1864 թվին): Բայց ավելի զարմանալին բամբակի արդյունաբերության աճումն է: Այս ընազավառում Անգլիան հիրավի ամբողջ աշխարհի ֆաբրիկան դարձավ. յեթե 1832 թվին Անգլիայում 9,000,000 իլիկ կար, 1885 թվին նրանց քանակն արդեն 40,000,000 եր: Արդյունաբերության զարգացման հետ զարգանում է նաև յերկաթուղիների ցանցը: Մեծանում է բանկերը մուծած կապիտալը, հսկայական մեծության է հասնում առևտրի շրջանառությունը: Մի խոսքով 60-ական թվականների սկզբին Անգլիան դառնում է յեվրոպական արդյունաբերական աշխարհի հեգեմոնը, միահեծան տերը: Յեվ ո՞վ էլ պիտի լիներ նրա մրցակիցը: Նույնիսկ ցամաքի ամենաառաջադեմ յերկիրը—Ֆրանսիան՝ նրանից յետ եր մնում: Այնուամենայնիվ Ֆրանսիայում ևս, թեպետ դանդաղ թափով, քան Անգլիայում, նկատելի յե դառնում կապիտալիստական հարաբերությունների աճումը: Ճիշտ է՝ Ֆրանսիայի մանր արդյունաբերությունը չափազանց աշխույժ է յերևում: Բայց շոգին ու մեքենան այստեղ էլ են անհեղ կերպով արշավում և նրանց ճնշման տակ արհեստը՝ թեպետ դանդաղ կերպով, դիրք դիրքի հետևից է թողնում... Աճում է մեծ քաղաքների ազգաբնակությունը, մեծանում է քաղաքի ազգաբնակության տոկոսը, ընդարձակվում է յերկաթուղիների ցանցը:

Տնտեսական զարգացմամբ ուշացած Գերմանիան ևս 50-կան թվականներին կապիտալիստական զարգացման ռելսերի վրա յե ընկնում և, կարծես աշխատելով կորցրած ժամանակը յետ բերել, իր տնտեսական զարգացման մեջ առաջ է գնում ուժգին թափով: Յեթե նրա ռելսային ճանապարհների յերկարությունը 1840 թ. 469 կիլոմետրի յեր հավասար, 10 տարուց հետո Գերմանիայի յերկաթուղային ցանցը 5,800 կիլոմետր եր: Հսկայական առաջադիմություն է նկատվում նաև գերմանական վարկային հիմնարկությունների գործունեյության, փայատիրական ընկերությունների աճման մեջ և այլն: Այսպես՝ յեթե 1850 թվին ամբողջ

Գերմանիայում հիմնվել է միայն 38 ակցիոներական ընկերություն,
1851-ից մինչև 1871 թ. այդ թիվը հասավ 253-ի...

Ինչպես արդեն հիշել ենք, աճող խոշոր կապիտալիստական
հարաբերությունների հիմքի վրա զանազան պետությունների
տնտեսական շահերի սերտ միջազգային կապ է ստեղծվում: Կա-
պիտալիստների, տարբեր յերկրների բուրժուազիայի մեջ յեղած
կապերի աճմանը զուգընթաց՝ նման կապեր են աճում ու մեծա-
նում այդ յերկրների, գոնե յեվրոպական գլխավոր պետություն-
ների, բանվորների մեջ: Շահերի միասնականության գիտակցու-
թյունը բանվորների մեջ էլ ավելի ու ավելի յե ամրանում: Յեվ
յերբ չարտիզմի ժամանակ հեղափոխականորեն տրամադրված
բանվորների այդ գիտակցությունն իր իրագործումը գտավ «Յեղ-
բայրական դեմոկրատների» նման միջազգային կազմակերպու-
թյունների ծնունդ առնելում, 60-ական թվականներին միանալու
այդ ձգտումն արտահայտվեց Բանվորների Միջազգային Ընկե-
րության կամ, ինչպես սովորաբար անվանում ենք, Առաջին Ին-
տերնացիոնալ ստեղծելով:

Բանվոր դասի այս առաջին՝ իսկապես վոր միջազգային
կազմակերպության, ստեղծողը յեղավ յեվրոպական յերկու առա-
ջադեմ յերկրների—Ֆրանսիայի և Անգլիայի բանվորությունը:
Բանվորների միջազգային կազմակերպության յերևան գալը հե-
տևանք եր վոչ միայն ընդհանուր տնտեսական բնույթի յերե-
վույթների, այլև այնպիսի հանգամանքների ու յերեվույթների,
վորոնք տեղի ունեցան Յեվրոպայի զանազան յերկրների բանվոր
դասի կյանքի ու գործունեյության մեջ:

Մենք գիտենք, վոր 50-ական թվականների տնտեսական
բարգավաճումը և վտարանդիության ալիքի աճումն անկարելի
դարձրին հեղափոխական չարտիզմի վերածնունդն Անգլիայում:
Մենք հիշում ենք, թե հեղափոխական չարտիստներն ինչպես դա-
ռըն կերպով եյին գանգատվում արհեստակցական միություն-
ների—տրեդ-յունիոնների հաշտարար դերից: Բայց ներկայումս
հենց այդ տրեդ-յունիոններն էլ Անգլիայի բանվորական շարժման
բնորոշ ձևն են հանդիսանում: Այս կազմակերպությունների նոր
տիպ է ստեղծվում: Յերեսնական թվականների փորձերը, վորոնց
նպատակը համապարփակ արհեստակցական կազմակերպություն-
ներ ստեղծելն եր, վաղանցուկ բաներ եյին՝ անպետք միջոցնե-
րով: Չարտիզմի փոթորկոտ շրջանից միությունները դուրս յեկան
փշրված և բաժան-բաժան յեղած, բաժանված ըստ առանձին ար-
հեստների և առանձին տերրիտորիաների: Սակայն այժմ, յերբ
կապիտալիզմի աճելուն զուգընթաց նաև կապիտալիստական ձեռ-



նարկությունների համակենտրոնացումն է տեղի ունենում*,
բաժան-բաժան յեղած մանր արհեստակցական կազմակերպու-
թյուններն այլ ևս անպետք են դառնում, ուստի սկսում են լուծ-
վել կամ, ինչպես ասում եյին, զանգվել (амальгамироьаться) ավե-
լի խոշոր արհեստակցական միությունների մեջ: Այդպիսի զանգ-
ված տրեդ-յունիոններից առաջինը մեքենայաշինական բանվոր-
ների միությունը յեղավ:

Բայց նույն իսկ այսպիսի խոշոր արհեստակցական միու-
թյունները, իսկ մանրերն ավելի ևս, 50-ական թվականներին
այնպիսի կազմակերպություններ եյին, վորոնք բացարձակ կեր-
պով հեռու եյին ամեն տեսակ հեղափոխական վոգուց: Ներկա-
յումս նրանց գործունեյության նպատակը դառնում է՝ անմիջա-
կան լարելավումն իրենց անդամների դրության, հիվանդության
կամ մահվան դեպքում նպաստ տալը, բանվորների առօրյա մանր
շահերի պաշտպանությունը՝ նրանց վարձողների հետ ընդհարվե-
լու դեպքում: Արդյունաբերության բարգավաճումը նպաստում է
արհմիությունների այսպիսի խաղաղ գործունեյության հաստա-
տելուն: Բացի սրանից, անհրաժեշտ է ընդգծել, վոր արհեստակ-
ցական կազմակերպությունները կային, զանգված արհմիություն-
ները ծնունդ եյին առնում գլխավորապես վորակյալ բանվորների
շարքերում: Իսկ վոչ վորակյալ բանվորների մեծ մասը շարու-
նակում եր խպառ անկազմակերպ մնալ...

Հիսնական թվականներից մի շարք դեպքեր են տեղի ունե-
նում, վորոնք մեծ աշխուժացումն են առաջ բերում յեվրոպական
յերկրների բանվորական շարժման մեջ:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հա-
մառորեն հերթական դարձրեց բուրժուական հեղափոխություն-
ների ավարտման խնդիրը, վոր ժառանգություն եր մնացել 48
թվից: Այս պատճառով 50-ական թվականների սկզբից մինչև
71 թվականի ժամանակաշրջանը վորոշ իմաստով հեղափոխական
շրջան է: Ճիշտ է, վոչ մի տեղ գործը հեղափոխական բռնկում-
ների չեր հասնում, բացի Իսպանիայից և Լեհաստանից, բայց
անկասկած է, վոր այդ ժամանակի ազգայնամիավորող պատե-
րազմները, Միացյալ Նահանգների ստրկության դեմ կռիվը և

* Բամբակագործական արդյունաբերության մեջ համակենտրոնացումն
այսպես կատարվեց.

| | 1858 թ. | 1861 թ. | 1868 թ. |
|---|---|---|---|
| Ֆաբրիկաների թիվը | 2,210 | 2,887 | 2,549 |
| Դազգյահների » | 298,847 | 399,992 | 379,329 |
| Իլիկների » | 28,010,217 | 30,387,000 | 30,004,000 |

վերջապես լեհական ապստամբությունը բուրժուական հեղափոխությունների վորոշ ձևեր եյին։

Մյուս կողմից՝ արտադրության կապիտալիստական ձևը միշտ նոր և նոր յերկրներ եր ընդգրկում, իր ազդեցության շրջանը քաշելով ինքնուրույն մանր արտադրողների նորանոր կադրեր։ Այսպիսիներին նա արդյունաբերական կապիտալի ստրուկներ եր դարձնում և դատապարտում եր վերապրելու արդյունաբերական զարգացման առաջին ետապների բոլոր սարսափները։ Համարձակ կարելի յե պնդել, վոր օրինակ Բելգիայի նման յերկիրը 60-կան թվականներին այնպիսի շրջան եր ապրում, վոր դրանից առաջ՝ 30-40 թվականներին ապրել եր Անգլիան։

Անշուշտ՝ այս բոլոր հանգամանքները մեծապես աշխուժացնում եյին բանվորական շարժումը և նպաստավոր պայմաններ եյին դառնում Բանվորների Միջազգային Ընկերության առաջ գալու և գործունեյության զարգացման համար։

Բացի դրանից՝ կապիտալիզմի աճումը դեռ այդ սիստեմի հատուկ հակասությունների վոչնչացում չեր նշանակում. ճգնաժամերը շարունակում եյին ցնցել կապիտալիստական աշխարհը և հենց 50—71 թվականների ընթացքում Յեվրոպայի գլխով մի քանի այդպիսի ճգնաժամեր անցան, վորոնցից առաջին տեղը բռնում եր 1857 թվականի ճգնաժամը։

Այս ճգնաժամի հետ եվ կապված է շինարարության բանվորների գործադուլի առաջ գալը։ Այս գործադուլի հետևանքն եր՝ մի կողմից այս բանվորների զանգված միության առաջ գալը, մյուս կողմից՝ Արհեստակցական Միությունների Խորհրդի ստեղծվելը՝ Լոնդոնում։ Յերեսնական թվականների փորձից հետո՝ սա առաջին փորձն եր, վորի նպատակն արհեստակցական կազմակերպությունները միացնելն եր։

Հիսնական թվականների ճգնաժամը Ֆրանսիայում ևս արձագանքեց։ Բանվորական շարժումն այստեղ ևս աշխուժացավ. շարժվեցին սոցիալիստական խմբակները. սրանց մեջ առաջին հերթին պրուդոնիստները։ Յեթե Անգլիայում նոր տրեդ-յունիոնիզմի գաղափարներում՝ խաղաղ պայմաններ և վորակյալ բանվորների տրամադրություններ եյին ցոլանում, Ֆրանսիայում 60-ական թրականների պրուդոնիզմում անդրադառնում են ֆրանսիական մանր արհեստավորների և Փարիզի համար այնքան բնորոշ պերճանքի առարկաների արտադրությամբ զբաղվող վորակյալ բանվորների տրամադրությունները։ Կազմակերպել փոխադարձ ոգնության կոմիտեներ, ձրի վարկեր, փոխադարձ ապա-



վորման * փոխանակություն, քաղաքական կռվից հրաժարվել և սեփական դրությունը միայն տնտեսական միջոցներով բարելավելու ցանկություն՝ առանց ամբողջական կապիտալիստական ձևի դեմ յելնելու — ահա թե ուր եյին հանգում այդ ժամանակի պրուդոնիստների յերազները։ Նապոլեոն III կառավարությունը տեսնելով բանվորների արթնանալը ռեակցիայի քնից, վոր նրանց համակել եր 1848 թ. հեղափոխությունից հետո, փորձեց իր կողմը քաշել բանվորներին և սկսեց նրանց աչքերին թոզ փչել։ Այդպիսի քաղաքականության նշաններից մինն եվ կառավարության հաշվով Լոնդոնի Համաշխարհային ցուցահանդեսին բանվորների ներկայացուցիչներ գործուղելն եր։ Արդյունաբերական կապիտալիզմի աճման շրջանի համար այսպիսի ցուցահանդեսներ կազմելը շատ բնորոշ յերևույթ է հանդիսանում. և իրոք՝ 1848 թ. սկսած սա արդեն յերրորդ ցուցահանդեսն եր։ Այսպիսի ցուցահանդեսներն ապացույց եյին, թե բուրժուազիայի միջազգային կապերը վորքան եյին ամրացել։ Բայց այդ ցուցահանդեսները վորոշ չափով նպաստում եյին նաև բանվոր դասակարգի միջազգային կապի ամրացման։

Յերբ Նապոլեոն III կառավարությունը վորոշեց դրամ բաց թողնել վորպես ճանապարհի ծախս ֆրանսիացի բանվորներին՝ ծանոթանալու այն տեխնիկական կատարելությունների հետ, վորին հասել եյին նրանց անդրլամանշյան յեղբայրները, մյուտյուելիստները, ֆրանսիական բանվորների և արհեստավորների այդ ավելի ազդեցիկ խմբակը, վորոշեց ոգտագործել այդ հանգամանքն այն պայմանով, վոր պատգամավորների ընտրությունը կատարվի ազատ կերպով, արհեստանոցներում։ Ընտրված պատգամավորությունը բաղկացած եր գլխավորապես մյուտյուելիստներից, վորոնք Անգլիա հասնելով, գլխավորապես ֆրանսիական վտարանդիների կամ ուրիշ ոտարահպատակների հետ եյին տեսնվում։ Այս բանը բացատրվում է նրանով, վոր անգլիական տրեդ-յունիոնները չափազանց անփույթ եյին վերաբերվում դեպի կապտիչ (узурпатор) Նապոլեոն III կառավարության փողերով ուղարկված պատգամավորությանը։

Սակայն շուտով մի նոր դեպք տեղի ունեցավ, վոր Ֆրանսիայի և Անգլիայի բանվորներին դեպի մերձեցում հրեց։ Յեվրոպայում բամբակի սարսափելի սով սկսվեց.—հետևանք Ամերիկայի միջյերկրային կռվի, վոր սկսվել եր հարավային նահանգներում

* Այստեղից եվ այդ ժամանակի պրուդոնիստներն իրենց անունն ստացան — մյուտյուելիստներ՝ ֆրանսիական mutuel բառից, վոր փոխադարձ է նշանակում։

ստրկությունը վոչնչացնելու համար: Այդ ժամանակ ամբողջ Յեվրոպային բամբակ տվողներն այս նահանգներն էյին: Բամբակ չլինելու պատճառով բոլոր բամբակագործական ֆաբրիկաները կանգ առան, շատ բանվորներ փողոց ընկան՝ առանց մի կտոր հացի: Ֆրանսիայում և Անգլիայում, վորպես կառավարական համարյա կատարյալ անտարբերության հակակշիռ, իրենք բանվորներն օգնության կոմիտեներ են ստեղծում, վորոնք իրար հետ հարաբերության մեջ են մտնում: Այսպիսով ամերիկյան սևամորթների ապստամբության կռիվը նպաստեց Յեվրոպայի վարձու բանվորների միջազգային կապին:

Այս պատերազմը յեվրոպական բանվորական շարժման վրա մի այլ ճանապարհով ևս անդրադարձավ: Անգլիական հասարակությունը և անգլիական բուրժուազիայի մեծ մասը թշնամաբար էյին տրամադրվել դեպի հյուսիսային նահանգները, վորոնք կռվում էյին ճորտերի ազատության համար, վորովհետև բամբակ մատակարարող հարավայինների շահերը շատ սերտ էյին կապված անգլիական արդյունաբերողների,—այդ բամբակը գործածողների շահերի հետ: Այս պատճառով անգլիական բուրժուազիան ու կառավարությունն առանց քաշվելու կողմնակից էյին, վոր ստրկությունը պահպանվի հարավային նահանգներում: Անգլիական բանվորներն՝ ընդհակառակը, թեպետ և տուժում էյին բամբակի սովից, վոր պատերազմի արդյունքն էր, համարյա ամբողջապես հյուսիսայիններին պաշտպան դուրս յեկան, վորոնք կռվում էյին ստրկության դեմ: Բազմամարդ միտինգներ էյին հրավիրվում, ողջույններ էյին ուղարկվում հյուսիսային նահանգների նախագահ Լինկոլնին և այլն:

Հյուսիսայիններին ցույց տված իրենց այս համակրանքով պրոլետարները ցույց տվին, վոր իրենք սկզբունքային թշնամի էյին ամեն տեսակ ճնշման,—վորտեղ և ինչ ձևով էլ նա արտահայտված լինի: Պրոլետարական տրամադրությունների այս կողմն ավելի ևս ցայտուն արտահայտություն ունեցավ, յերբ ցարական Ռուսաստանը լեհական ապստամբությունն էր ճնշում: Դեպի ցարական զորքերի ձեռքով վոչնչացող լեհերը տածած համակրանքի պոռթկումը միատեսակ ուժեղ էր՝ ինչպես Փարիզի արհեստանոցներում, այնպես էլ Անգլիայի ֆաբրիկաներում: Այս պատճառով, յերբ անգլիական բանվորներն իրենց կառավարության վրա ճնշում գործ դնելու նպատակով—վորպեսզի Լեհաստանի օգտին միջամտել տան—միտինգ հրավիրեցին և ֆրանսիական բանվորներին ևս հրավեր ուղարկեցին, վերջիններս այդ հրավերը խանդավառությամբ ընդունեցին: Միտինգը կազմվեց 182 թվին և



թեպետ նա իր անմիջական ուղիղ նպատակին չհասավ (վոչ Անգլիան, վոչ Ֆրանսիան չպաշտպանեցին Լեհաստանին և լեհական հեղափոխությունն արյունախեղդ յեղավ), բայց և այնպես բանվոր դասի միջազգային կապերի նոր ամրապնդումն առաջ բերեց: Յեվ ըստ յերևույթին այս միտինգից հետո յել միտք հղացավ՝ այդ կապերը պահպանելու համար ավելի մշտական մարմիններ ստեղծել: Այս միտինգից շատ չանցած, ֆրանսիական և անգլիական բանվորների նոր միտինգ կազմվեց: Այդտեղ մի կոմիտե կազմվեց, վոր ֆրանսիական բանվորներին ուղղելիք ադրեսը պիտի գրեր:

Իսկապես վոր ադրեսը գրվեց: Այդտեղ յեվրոպական պետությունների քաղաքականությունը բնորոշվում էր վորպես բռնություն, «իսկ ներկայումս ուժով ի չարը գործ դրումներին վերջ դնելուն վորպես միջոց», ֆրանսվական բանվորությունը հրավիրվում էր «ժողովուրդների յեղբայրություն կազմելու»: Այնուհետև ադրեսն այդ յեղբայրությունը բացատրում էր վորպես բանվորների համար անհրաժեշտ միջոց՝ իրենց գործնական առօրյա նպատակներն իրականացնելու համար: «Ժողովուրդների յեղբայրությունը,—կարդում ենք այդ ադրեսում,—անհրաժեշտ է բանվորների շահի տեսակետից: Վորովհետև ամեն անգամ, յերբ փորձում ենք բարելավել մեր վիճակը՝ բանվորական օրը կարճելով կամ օրավարձը բարձրացնելով, կապիտալիստներն սպառնում են մեզ ֆրանսիական, բելգիական և գերմանական բանվորներ գործի կանչելով, վորոնք կարող են կատարել մեր աշխատանքն ավելի պակաս օրավարձով: Դժբախտաբար այս սպառնալիքը հաճախ է իրագործվում: Այստեղ, իհարկե, ցամաքի մեր ընկերների չար կամքի մեղքը չէ, այլ բացառապես վարձու բանվորների մեջ յեղած կանոնավոր կապերի բացակայությունը...»:

Ֆրանսիական բանվորների պատասխանն այնքան էլ շուտ չստացվեց: Նապոլեոն III կայսրությունն արդեն տատանվում էր: Ֆրանսիական բանվորների քաղաքական շահագրգռվածությունն արթնացել էր, նրանք առաջին անգամ փորձեցին մասնակցել ընտրական կամպանիային: Այս դեպքերի աղմուկի մեջ ֆրանսիական բանվորները տասն ամսից հետո հազիվ կարողացան անգլիացիներին պատասխանել: Այդ պատասխանը լսելու համար նորից միտինգ հրավիրվեց: Միտինգը կայացավ Լոնդոնի ս. Մարտինի դահլիճում 1864 թվի սեպտեմբերի 28-ին: Միտինգ կազմողները, որանց թվում նաև շինարար բանվորների առաջնորդ Կրեմերը, միտինգի հրավիրեցին նաև Կարլ Մարքսին, վոր 1848 թ. հեղափոխությունը ջարդվելուց հետո ապրում էր Լոն-

դոնում վորպես վտարանդի։ «Կոմմունիստական միության» իր նախկին ընկերների միջոցով, վորոնք զանազան զբաղմունքի բանվորներ եյին, Կարլ Մարքսը կապվել եր անգլիական պրոլետարների հետ։ Նրա անունը հայտնի յեր անգլիական բանվորներին։ Դրանով ել պիտի բացատրել նրա հրավերը։ Յերբ կարդացվեց ֆրանսիացիների ադրեսն, ուր ասված եր, թե բոլոր յերկրների բանվորները պետք ե «միանան և անխորտակելի արգելք դնեն իրերի դրությանը, վոր սպառնում ե մարդկությունը բաժանել՝ սոված ու գազանացած մասսաների և դրամական տուզերի վոհմակի», դրանից հետո վորոշվեց բանվորների միջազգային կոմիտետ ստեղծել։ Մարքսն այդ կոմիտետի անդամ ընտրվեց։

Թեպետ Մարքսը միայն հրավիրված եր և նրա անունը վերջինն եր կոմիտետի անդամների թվում, սակայն նա վոգին ու ղեկավարը դարձավ նոր կազմակերպության, վորը Բանվորների Միջազգային Ընկերություն անունն ընդունեց։

## II

Այս կոմիտետը, վորին հանձնված եր բանվորների նոր միջազգային կազմակերպություն ստեղծելու աշխատանքը, կազմված եր չափազանց տարբեր տարրերից—անգլիացի, իտալացի, գերմանացի, ֆրանսիացի—և ցոլացնում եր այդ յերկրների տնտեսական զարգացման տարբեր աստիճանները և հեղափոխական շարժումը բնորոշող կարծիքները, հայացքներն ու տրամադրությունները։ Նույնիսկ միևնույն յերկրի ներկայացուցիչները—անգլիացիք տարբեր խմբավորումների բաժանվեցին։ Այստեղ կարելի յեր հանդիպել և՛ արհեստակցական միությունների կողմնակիցների, և՛ Ռոբերտ Ովենի կողմնակիցների, և՛ չարտիստների։ Ավելի միաձույլ եյին գերմանացիները, վորոնք նախկին «Կոմմունիստների միության» անդամներն եյին։

Վերջ ի վերջո Մարքսին հանձնվեց նոր ընկերության ծրագրի ու կանոնադրության նախագիծ կազմելը։ Պիտի ասել, վոր նրան շատ մեծ խնդիր բաժին ընկավ։ Մարքսը պետք ե կարողանար՝ առանց իր հայացքներից վորևե բան զոհաբերելու, խնամքով վերաբերվել բոլոր հայացքներին ու կարծիքներին, հաշտեցնել բոլորին, առանց վոչ վոքի խրտնեցնելու և սկզբունքային խնդիրներում վոչ մի կոմպրոմիս անելու։ Յեվ Մարքսն այդ փայլուն կերպով կատարեց։

Սահմանադիր ադրեսը կամ այլ խոսքով մանիֆեստը, վոր գրեց Մարքսը, սկսվում եր բանվոր դասակարգի դրության բնու-



թագրումով։ Համաձայն մանիֆեստի՝ այդ դրությունը, չնայած տնտեսական զարգացման ամբողջ առաջադիմությանը, մնում եր չափազանց ծանր։ Վարպետորեն ոգտվելով թվական տվյալներից և նախարար Գլադստոնի պարլամենտական ճառի մեջբերումներով Մարքսը հաստատում եր, վոր բուրժուազիայի հարստության աճմանը զուգընթաց՝ հասարակության հակադիր բևեռում աղքատության ու տառապանքի կուտակումն ե կատարվում։ Լուսաբանելով 1848 թ. հեղափոխության ջախջախումից հետո բանվոր դասակարգին համակած անտարբերության պատճառները, մանիֆեստի հեղինակը կանգ ե առնում բանվոր դասակարգի վերջերս ձեռք բերած հաղթությունների վրա։

Առաջին հաղթանակ—տասժամյա բանվորական որվա նվաճում։ Նա կարևոր ե վո՛չ միայն նրանով, վոր բանվորներին ֆիզիքական ու բարոյական այլասերումից ազատեց, այլ և նրանով, վոր սկզբունքային հաղթանակ եր բուրժուական քաղաքատնտեսության վրա, վոր տարավ պրոլետարական քաղաքականությունը։ Սա հաղթանակն եր բանվորական ձգտումների «դեպի արտադրական այն ձևը, վոր բանվոր դասակարգի քաղաքատնտեսության եյությունն ե կազմում», և վորի համար բնորոշ ե հանդիսանում «ամբողջ հասարակության վերահսկողությունը տնտեսական յերևույթների վրա...»։

Բանվոր դասակարգի յերկրորդ նվաճումը կոոպերատիվներն են։ Դրանց գլխավոր արժանիքը նրանում ե կայանում, վոր ցույց տվին, թե «հարստությունների արտադրողականությունը բնավ չի պահանջում, վոր աշխատանքի գործիքները վորևե մեկի մենաշնորհը կազմեն և սրա միջոցով դառնան բռնության ու ստրկացման զենքեր՝ բանվորների նկատմամբ, այլ և նրանում, վոր ցույց տվին (կոոպերատիվները), թե «աշխատավարձի համար յեղած աշխատանքը—նման ստրկի կամ ճորտի աշխատանքին, արտադրության անցողակի ու ստորին ձև ե, վորին վոչնչանալ ե վիճակված՝ արտադրության ասոցիատիվ ձևի առաջ..»։

Մյուս կողմից ել մանիֆեստը հաստատում եր, վոր անցած շրջանի ամբողջ փորձը ցույց տվավ, թե վո՛րքան ել լավ լինի կոոպերատիվ սկզբունքը, վորքան կոոպերատիվ արտադրությունը «կմնա փոքրիկ խումբ բանվորների ջանքերի սահմանում, նա բնավ չի կարող կանգնեցնել մենաշնորհի արագ զարգացումը, վոչ ել կազատագրի բանվորական մասսաներին...»։ «Բանվորներին ազատելու համար կոոպերատիվ արտադրությունը պիտի ծավալվի ամբողջ յերկրում, հետևաբար նրա զարգացումը պիտի պաշտպանվի պետության բոլոր ուժերով ու միջոցներով...»։ Իսկ

այդ դեպքում «բանվորի առաջին պարտքն է իր համար քաղաքական ույժ նվաճել»: Դրա համար էլ հենց հիմա «բանվորական կուսակցությանը քաղաքական կազմակերպություն տալու ջանքեր էր առաջ գալիս»: «Այս կուսակցությունը հաջողության մի էլեմենտ ունի—իր թիվը»: Սակայն այս էլեմենտն այն ժամանակ միայն բանվորին պայքարում գերակշռություն կտա, երբ նրանք կուռ կերպով միացած կլինեն և մի ղեկավար նպատակ կունենան: Անցյալի փորձը ցույց տվավ, որ ամեն անգամ, երբ բանվորները մոռանում էին այն եղբայրական կապերը, վորոնք նրանց պիտի շաղկապեն, նրանք պատժվել են «իրենց բոլոր ձեռնարկումների ընդհանուր պարտությամբ»:

Բացի դրանից՝ բանվորների համերաշխությունն ուրիշ հիմնավորումն էլ պիտի ունենա: Նրա նպատակը պիտի լինի՝ պայքարը միջազգային բռնության քաղաքականության դեմ: Հենց բանվորների միջամտությունն էր, վոր թույլ չտվավ անգլիական կառավարությանը՝ խառնվել ամերիկական ներքին պատերազմին՝ հօգուտ ստրկատերերի: Բոլոր յեվրոպական պետությունների անտարբերությունը, վորով նրանք տեսնում էին, թե ինչպես ցարական Ռուսաստանը խեղդում է Լեհաստանին, «բանվորներին ցույց տվավ, վոր անհրաժեշտ է թափանցել իրենց պետությունների քաղաքագիտական գաղտնիքների խորքը, բոլոր ուժով դիմադրել նրանց և առանձնակի ջանքերի անհաջողության դեպքում մի ընդհանուր բողոք կազմել պետությունների հանցավոր մտադրությունների դեմ»:

Այսպիսով իր ընթերցողին մեծ հմտությամբ ու վարպետությամբ մոտեցնելով այն մտքին, թե միանգամայն անհրաժեշտ է բանվոր դասակարգի միջազգային համերաշխություն հաստատել՝ մանիֆեստը վերջանում էր նույն կոչով, վորով վերջանում էր դրանից 16 տարի առաջ գրած «Կոմմունիստական Մանիֆեստը»—«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Մանիֆեստը—Մարքսի գրականական ու քաղաքական հանճարի այս վարպետ արտադրությունը—լոկ մի ներածություն էր բանվորների Միջազգային Ընկերության ծրագրի, վոր նրա հմուտ գրչին էր պատկանում:

Բանվորների Միջազգային Ընկերության ծրագիրը սահմանում էր, վոր բանվոր դասի ազատագրումը դառնա իրեն՝ բանվոր դասի գործը, վոր բանվորության ազատագրման համար մղված կռիվը դասակարգային արտոնությունների ու մենաշնորհի պայքար չի նշանակում, այլ կռիվ՝ հավասար իրավունքների և



պարտականությունների համար, ինչպես նաև ամեն տեսակ դասակարգային տիրապետության վոչնչացման համար:

«Վոր արտադրության, այսինքն կյանքի աղբյուրի մենաշնորհավոր տիրապետողին տնտեսապես յենթարկված լինելը գլխավոր պատճառն է ամեն տեսակի ստրկության, սոցիալական կարիքի, հոգեկան ստորացման և քաղաքականապես ստորադրյալ վիճակի:

«Վոր այս պատճառով բանվոր դասի տնտեսական ազատագրումը մեծ նպատակ է, վորին պիտի յենթարկված լինի ամեն տեսակ քաղաքական շարժում՝ վորպես միջոց:

«Վոր այս մեծ նպատակին հասնելու համար գործադրվող բոլոր միջոցները մինչև որս անհաջող են մնացել, վորովհետև յուրաքանչյուր յերկրի աշխատանքի զանազան ճյուղերի բանվորների մեջ համերաշխություն չկա, բացակայում է նաև յեղբայրական դաշինքը զանազան յերկրների բանվոր դասի մեջ:

«Վոր բանվոր դասի ազատագրումը միայն տեղական կամ ազգային խնդիր չէ, այլ հատուկ խնդիր է, վոր ընդգրկում է այն բոլոր յերկրները, ուր ժամանակակից հասարակություն գոյություն ունի, խնդիր, վոր կարող է լուծվել միայն ավելի առաջադեմ յերկրների փոխադարձ, գործնական և տեսական աջակցությամբ:

«Վոր ավելի արդյունաբերական յերկրներում բանվոր դասերի շարժման վերսկսումը նոր հույսեր է առաջացնում, դրա հետ միասին հանդիսավոր կերպով նախազգուշացնում է հին սխալների կրկնությունից և հարկադրում է, վոր դեռ ես բաժան-բաժան մնացած ուժերը ձգտեն միանալ»:

Այս բոլոր առաջբերումներն այն սկզբունքներն էին, վորոնց հիման վրա սուրբ Մարտինի դահլիճի միտինգում ընտրած կոմիտեն պիտի բանվորների Միջազգային Ընկերության սկիզբը դներ: Այնուհետև ծրագիրն ասում էր, թե բանվորների Միջազգային Ընկերության կոմիտեի անդամները հայտարարում են, վոր «այս Միջազգային Ընկերությունն, ինչպես և նրան հարող բոլոր ընկերություններն ու անձինք արդարությունն ու բարոյականությունը հիմք պիտի ընդունեն ինչպես իրենց մեջ յեղած փոխհարաբերությունների, այնպես և դեպի ուրիշներն ունեցած վերաբերմունքի՝ անկախ ցեղից, կրոնից ու ազգությունից»: «Նրանք մարդու պարտականությունն են համարում՝ մարդու և քաղաքացու իրավունք ձեռք բերել վո՛չ միայն իրենց համար, այլ և ամեն մարդու, վոր իր պարտականություններն էր կատարում: Չկան պարտականություններ առանց իրավունքների և չկան իրավունքներ առանց պարտականությունների...»:

Ցեթե այն կանոնները, վորոնք պարունակվում են մեր առաջ բերած ծրագրի առաջին մասում, մինչև որս էլ վո՛չ մի կասկած չեն կարող հարուցել յուրաքանչյուր հեղափոխական մարքսիստում, և դրանց մեծ մասը հետագայում մտան մարքսիստական կուսակցությունների ծրագրերի մեջ, ապա այդ ծրագրի յերկրորդ մասը ճիշտ այն գիջումն է, վոր արավ Մարքսը կազմակերպչական կոմիտեի մեջ մտնող զանազանակերպ տարրերին: Այսպես, վորպեսզի կարելի լինի բավարարել պահանջներն այն ֆրանսիացի վտարանդիների, վորոնք դեռ ևս XXIII դարի հեղափոխությամբ դերված եյին, այս ծրագրի մեջ մտավ մարդու և քաղաքացու իրավունքների մասին յեղած դարձվածքը: Ծրագրի այն տեղը, ուր իրավունքների և պարտականությունների մասին է խոսվում, մտել է՝ բավարարելու իտալացիների հայացքներին, վորոնց առաջնորդը Մածինին եր: Սրանք իդեալիստական տեսակետի վրա եյին կանգնած և գտնում եյին, վոր ամեն մարդու հոգում իրավունքի և պարտականության զգացում կա: Դրա փոխարեն առաջին մասում մենք տեսնում ենք հին և անգլիացիների համար չարտիստներին հասկանալի քաղաքական կռվի ֆորմուլը՝ վորպես միջոց բանվորների սոցիալական ազատագրման համար: Անգլիացիներին ծանոթ այս ֆորմուլը տվյալ դեպքում այստեղ պետք եր՝ հակադրելու ֆրանսիական մյուտյուելիստների հայացքներին, վորոնք ժխտում եյին քաղաքական կռիվը:

Այս կանոնների նկատմամբ, վորոնք հակառակ եյին Մարքսի հայացքներին, բայց անհրաժեշտ եյին, վորպեսզի կարելի լինի նոր կազմակերպության հետ կապել բանվորական շարժման զանազան էլեմենտները, ինքը Մարքսը գրում եր, թե նա «այս բոլորն այնպես է տեղավորել, վոր վոչ մի վնաս չկարողանան տալ»:

Կազմակերպվող ընկերության նպատակն եր միացումը բոլոր յերկրներում գոյություն ունեցող ընկերությունների, վորոնք ձգտում են «բանվոր դասի պաշտպանությանը, զարգացմանը և կատարյալ ազատագրմանը»: Ընկերության գլուխ պիտի անցներ Գլխավոր Խորհուրդը, վոր ընտրվում եր տարեկան կոնգրեսներում: Ընկերության անդամները տեղերում կազմում եյին սեկցիաներ, սեկցիաները ֆեդերացիաներ՝ ֆեդերալ խորհուրդների գլխավորությամբ: Սահմանադիր մանիֆեստն ու ծրագիրը՝ մշակված կոմիտեի կողմից, պիտի հաստատվեյին մերձավոր կոնգրեսում:

Բայց առաջիկա տարում կոնգրեսը հրավիրել չհաջողվեց· վորոչ տեղերում բանվորական շարժումը դեռ շատ անկազմակերպ



եր, ուստի բավականացան միայն նախապատրաստական կոնֆերանս հրավիրելով Լոնդոնում: Այս կոնֆերանսի աշխատանքի գլխավոր նյութն եր՝ զանազան յերկրների բանվորական շարժման մասին զեկուցումներ լսելը և առաջիկա կոնգրեսի օրակարգ կազմելը: Կոնֆերանսին ներկա եյին Անգլիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և Բելգիայի ներկայացուցիչները:

Առաջին կոնգրեսը հնարավոր յեղավ հրավիրել միայն 1866 թ. սեպտեմբերին: Նիստերի տեղը Ժնևն եր: Այստեղ վառ կերպով յերևաց զանազան յերկրների բանվորական շարժման զարգացման աստիճանների ամբողջ տարբերությունը: Այն ժամանակ, յերբ ֆրանսիական մյուտյուելիստները, վորոնք ֆրանսիական պատգամավորների մեծամասնությունն եյին կազմում, աշխատում եյին կապիտալիզմի զարգացմանն իրենց զուտ արհեստավորական հայացքները հակադրել, Անգլիայի պատգամավորները, հետևելով Մարքսի ցուցմունքներին, կատարելապես ընդունում եյին, վոր անկարելի յե յետ պտտել տնտեսական զարգացման անիվը: Դեռ ադրեսը և նոր կազմակերպության ծրագիրը հաստատելիս՝ ֆրանսիացիք ցույց տվին իրենց համքարային սահմանափակ մտայնությունը: Այսպես, նրանք պահանջում եյին, վոր ընկերության անդամ կարողանան լինել միայն ֆիզիքական աշխատանքով պարապողները: Յերբ քննության դրվեց միջազգային փոխադարձ ոգնության և աշխատանքի ու կապիտալի պայքարի հարցերը, մյուտուելիստները գործադուլներին դեմ դուրս յեկան և պահանջեցին կազմակերպել արտադրողական ընկերություններ, վորոնք, նրանց կարծիքով, պիտի նպաստեյին աշխատավարձի «աշխատանքից յեկամուտ դառնալուն»:

Կանանց աշխատանքի հարցում պրուդոնիստները կտրականապես դեմ արտահայտվեցին կնոջն արտադրողական աշխատանքի մեջ քաշելուն, վորովհետև «կնոջ կոչումն ընտանիքն է»: Նույն իսկ հակառակ կոնգրեսի վորոշման—պահանջել ութժամյա բանվորական որ, յերկու շվեյցարացի պատգամավորներ վորպես նորմա առաջադրեցին տասժամյա բանվորական որը:

Բայց շվեյցարացիների և ֆրանսիացիների բոլոր արհեստավորական տրամադրություններին Գլխավոր Խորհրդի անդամները հակադրում եյին Մարքսի կազմած զեկուցումները: Այսպես արհմիությունների հարցում հաստատվեց Մարքսի կազմած փայլուն զեկուցումը, վորտեղ, հակառակ մյուտյուելիստների, վորոնք դեմ եյին աշխատանքի պայքարին կապիտալի դեմ, և տրեդ-յունիոնների, վորոնք արհմիությունների վրա նայում եյին վորպես այնպիսի մարմինների, վորոնք պիտի մասնակի կերպով թեթևաց-

նեն բանվորի դրությունը, բանվորների արհեստակցական կազմակերպությունները հանդիսանում էին վորպես վարձու աշխատանքի և կապիտալի դիկտատուրայի սիստեմը վերակազմող մարմիններ:

Անչափահասների և յերեխաների աշխատանքի խնդրում միանգամայն նորմալ համարվեց նրանց արտադրական աշխատանքի մեջ քաշելը, սակայն մատնացույց արվեց, վոր կապիտալիստական հարաբերությունների ներկա շրջանում այդ յերևույթը միայն չարիք է: Ի նկատի ունենալով, վոր մայր ցամաքի վրա դեռ նոր է տեղի ունեցել Ավստրո-Պրուսական պատերազմը, կոնգրեսը պետք է կանգ առներ պատերազմի հարցի վրա: Նա այդ յերևույթների նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտեց բողոքելով արտաքին քաղաքականության բռնի ձևերի դեմ և կողմնակից լինելով մշտական զորքի վոչնչացման, վորին պիտի փոխարինե ժողովրդական միլիցիան:

Ժենևի կոնգրեսն այն նշանակությունն ունեցավ, վոր միջազգային բանվորական շարժման մեջ վորոշ եռանդ ընդգծեց: Նրա ընդգծած բանաձևերը բանվոր դասի պահանջներն էին առաջադրում, վորոնք հետագայում մարքսիստական բանվորական կուսակցությունների ծրագրի մեջ մտան: Առաջին կոնգրեսից հետո Ինտերնացիոնալի նշանակությունն անչափ բարձրացավ: Բանվորական մասսաներն սկսեցին դեպի նա ձգտել: Բանվորների Միջազգային Ընկերության առաջին կոնգրեսն իր վրա դարձրեց նաև բուրժուական մամուլի և առաջադեմ բուրժուազիայի ուշադրությունը: Այսպես, հայտնի բնագետ Բյուխները և փիլիսոփա Լանգեն իրենց վողջույններն ուղարկեցին նրան: Ի նկատի ունենալով, վոր առաջին կոնգրեսի անդամների մեծամասնությունը մյուտյուելիստներն էին կազմում, բուրժուական թերթերն առանձին թշնամանք չհայտաբերեցին դեպի նա՝ Ինտերնացիոնալը չափազանց անմեղ ու խաղաղ կազմակերպություն թվաց: Փարիզյան մի թերթ հանդիսավոր կերպով հավաստացնում էր, թե Ժենևի կոնգրեսը «ձևական ժխտումն է կոմմունիզմի և անհատի իրավունքների պաշտպանությունը...»: «Մի կողմ ձգելով հին ցնորքները, գրում էր այս թերթը, սոցիալիզմը մյուտյուելիզմ դարձավ»:

Բայց բանվորներն ավելի լավ էին հասկանում նոր կազմակերպության նշանակությունը, վորն իր գոյության վերջին տարիներում ցուցադրեց իրեն՝ վորպես բանվոր դասակարգի մարտական մարմին:

Հազար ութհարյուր վաթսուն և վեց թվին Յեվրոպայով նոր ճգնաժամ անցավ, վոր բանվորների դրությունն զգալի կերպով



վատացրեց: Սրա հետևանք հանդիսացավ գործադուլների ալիքը, վոր ամբողջ Յեվրոպան բռնեց: Ինտերնացիոնալն, ինչպես կարող էր, ոգնում էր բանվորին՝ նրա պայքարում կապիտալի դեմ: Այսպես, Գլխավոր Խորհուրդն ոգնում էր Փարիզի գործադուլավոր անագապղնձագործներին (бронзовщик), նրանց ոգտին ոգնություն ստանալով տրեդ-յունիոններից և ուրիշ սեկցիաներից: Բանվոր դասակարգի միջազգային այս համերաշխությունն ստիպեց ձեռնարկատերերին զիջել և գործադուլավորների պահանջները բավարարել: Այս պատճառով էլ, յերբ Լոնդոնի դերձակները գործադուլ արին շնորհիվ Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի աշխատանքի՝ ոգնություն ստացան մայր ցամաքից: Ինչպես այս, այնպես և անգլիական զամբյուղագործների գործադուլի ժամանակ Ինտերնացիոնալը հաջողեցրեց դեմ կենալ մայր ցամաքից ոտարերկրյա բանվորներ բերելուն:

Այս դեպքերի ազդեցության տակ Ինտերնացիոնալի կողմնակիցների թիվն աճում էր: Ֆրանսիայում շարունակ նորանոր սեկցիաներ էին ծնունդ առնում: Բելգիայում գործադուլների շնորհիվ, վորոնց զուգընթաց էին բանվորների դաժան հրացանազարկություններ, միքանի բանվորական միություններ միացան Ինտերնացիոնալի բրյուսելյան սեկցիային: Ինտերնացիոնալի սեկցիաներ յերևացին նաև հեռավոր Իտալիայում: Բայց չնայելով իր թվական ուժերի աճմանը, Ինտերնացիոնալը դեռ շատ հեռու յեր գաղափարական տոկունություն (выдержанность) ձեռք բերելուց: Այս տեսակետից ուշագրավ է նրա յերկրորդ կոնգրեսի աշխատանքը, վոր տեղի ունեցավ Լոզանում՝ 1867 թվի սեպտեմբերին: Կոնգրեսին մասնակցում էին 71 պատգամավորներ: Մեծամասնությունը Ֆրանսիացիներ ու շվեյցարացիներ էին, անգլիացիք թվով քիչ էին, ուստի պրուդոնիստական գաղափարները բավական վառ կերպով էին հրապարակ գալիս: Այսպես՝ մյուտյուելիստներն առաջարկեցին ժողովրդական բանկ հիմնել՝ բանվորներին ձրի վարկ տալու նպատակով: Բայց հենց այս կոնգրեսում էլ նրանք առաջին անգամ բավական զգալի հարված ստացան: Պետության դերին վերաբերող հարցը քննելիս, կոնգրեսը, մենաշնորհները վոչնչացնելու նպատակով, անհրաժեշտ դատավ փոխադրական միջոցներն ընդհանրացնել: Այսպիսով նա ընդհանրապես սեփականությունն ընդհանրացնելու սկզբունքը սահմանեց: Մյուտյուելիստների համար պակաս անհաճո չեր նաև կոնգրեսի այն վորոշումը, վոր հայտարարում էր, թե բանվորների սոցիալական ազատագրումն անբաժանելի յե նրանց քաղաքական ազատագրումից և ուրեմն քաղաքական ազատություններ

սահմանելն առաջին և անպայման անհրաժեշտ միջոցն ե հանդիսանում։

Յեվրոպայի դրությունը հերթական եր դարձնում պատերազմի հարցի քննությունը։ Հենց նոր եր վերջացել ավստրո-պրուսական պատերազմը, վորից Ավստրիան ջարդված դուրս յեկավ և յեվրոպական մթնոլորտը նորից լցվեց զենքի շաչյունով։ Ավստրիան ընկճող Պրուսիայի և Ֆրանսիայի հարաբերությունները չափազանց լարվեցին։ Նապոլեոն III կառավարությունն զգալով, վոր ներքին գործերում իր վոտքերի տակի հողն սկսել ե տատանվել, ուզում եր իր դրությունն ամրացնել մի վորևե խոշոր հաջողությամբ արտաքին քաղաքականության մեջ։ Այս պատճառով Նապոլեոն III մեկ ավանտյուրայի դիմեց արևադարձային Մեկսիկայում, մեկ ել փորձեց Լյուքսեմբուրգը գրավել։

Ահա այս պատճառներով պատերազմի խնդիրը պիտի քննվեր Ինտերնացիոնալի յերկրորդ կոնգրեսում։ Կոնգրեսը վորոշեց «միանալ խաղաղության կոնգրեսին... և յեռանդով պաշտպանել նրան այն բոլոր ձեռնարկներում, վորոնք կձգտեն վոչնչացնել մշտական զորքերը և պահպանել խաղաղությունը...»։

Իսկապես՝ Ինտերնացիոնալի կոնգրեսի պատգամավորությունն այցելեց խաղաղության կոնգրեսին։ Թեպետ այս կոնգրեսը հրավիրելու միտքը զուտ բուրժուական եր, բայց և այնպես Ինտերնացիոնալի պատգամավորությունը նրա խանդավառ ընդունելությանը հանդիպեց։

Ինտերնացիոնալի II և III կոնգրեսների միջև անցած ժամանակամիջոցում առաջինի ազդեցությունը շարունակում եր աճել։ Չնայելով, վոր Ֆրանսիայում Ինտերնացիոնալի փարիզյան սեկցիան ավերման յենթարկվեց Նապոլեոնի զորքերի կողմից, այդ սեկցիայի ավելի յեռանդուն անդամները դատի տրվեցին, այնուամենայնիվ Ինտերնացիոնալի ժողովրդականությունն աճում եր Ֆրանսիայում։ Հենց այն հալածանքն ել, վորով Նապոլեոնի զորքերն ընկան այս՝ սկզբում այնքան անմեղ համարված, իսկ այժմ վտանգավոր ճանաչված հիմնարկության վրա, լայն մասսաների ուշադրությունը հրավիրեց դեպի Ինտերնացիոնալը։ Այժմ սա վտանգավոր եր ճանաչվում, վորովհետև II կոնգրեսի բերանով արտահայտվեց հոգուտ քաղաքական կռվի։ Գեղեցիկ ագիտացիոն միջոցներ եյին նաև այն փայլուն ճառերը, վոր արտասանում եյին դատի տրված ինտերնացիոնալիստները։ Հենց այս հետապնդումներն ել ինտերնացիոնալիստներին ազատեցին այն կասկածներից, վոր իբր թե նրանք մոտ են կառավարու-



թյանը։ Այս մեղադրանքը յեռանդով թափում եյին նրանց վրա բլանկիստ-հեղափոխականները, դժգոհ մյուտյուելիստների չափավոր լինելուց, վորոնք այդ ժամանակ ֆրանսիական սեկցիաներում գերակշիռ տեղ եյին բռնում։

Գործադուլային ալիքը Յեվրոպայում ավելի ու ավելի յեր ուռճանում։ Բանվոր դասակարգի այդ ժամանակի բազմաթիվ գործադուլային յելույթներից պիտի ընդգծել Ժնևի շինարար բանվորների գործադուլը։ Ինտերնացիոնալի միջամտությունն այնպես վախեցրեց ձեռնարկատերերին, վոր բանվորների բոլոր պահանջները բավարարեցին։ Այս հանգամանքների շնորհիվ Ինտերնացիոնալի հեղինակությունը Շվեյցարիայում զարմանալի կերպով բարձրացավ, կողմնակիցների թիվն ել ավելացավ։

Ինտերնացիոնալն ուժեղ կերպով աճում եր նաև Բելգիայում, վոր նույն շրջանում եր ապրում, ինչ ապրեց Անգլիան՝ 30—40 թվականներին։ Արդյունաբերական կապիտալիզմն ու խոշոր արդյունաբերությունը յեռանդով ճանապարհ եյին հարթում իրենց համար, քայքայելով մանր արդյունաբերողին և ծանր, յերբեմն անել դրության մեջ դնելով բանվորին, վոր արդեն խոշոր արտադրության ամուր և ուժեղ ձեռքերումն եր։ Բանվորը փորձեց դիմադրել.—գործադուլները տարերային կերպով բռնկվեցին և փոթորկոտ բնույթ եյին կրում․ կառավարությունն անցավ ձեռնարկատերերի կողմը և զինված ուժի դիմեց։

Քաղցած ամբոխի նկատմամբ իր դաժանությամբ անմիտ մի հրացանազարկությունից հետո Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհուրդը կոչ հրատարակեց՝ ոգնելու այս զազանային վարմունքի զոհերին։ Ինտերնացիոնալի կոչին արձագանք տվին անգլիական բանվորները։ Սրա հետևանքով Ինտերնացիոնալի նոր սեկցիաներ սկսեցին ծնունդ առնել ինչպես խոշոր քաղաքային կենտրոններում, այնպես և Շարլերուայի լեռնային—արդյունաբերական շրջանում։

Ինտերնացիոնալը վորոշ հաջողություն ունեցավ նաև Գերմանիայում․ բանվորական ընկերությունների միությունը, վոր գործում եր Հարավային Գերմանիայում՝ Մարքսի բարեկամ և հետևող Լիբկնեխտի ղեկավարությամբ, իր Նյուրենբերգյան համագումարում ընդունեց Ինտերնացիոնալի հիմնական վորոշումները։ Ինտերնացիոնալի ազդեցությունը հետո Ավստրիա ևս անցավ։

Ինտերնացիոնալի յերրորդ կոնգրեսը ժողովվեց Բրյուսելում 1868 թվին, ներկա եյին 99 պատգամավորներ։ Դրանց մեծ մասը բելգիացիներ եյին․ իսկ մյուս ներկայացուցիչներից պիտի

հիշել այնպիսի յերկրներից յեկածներին, վորոնք առաջին անգամ եյին ներկայացուցիչներ ուղարկում Ինտերնացիոնալ — Իսպանիան և Իտալիան:

Վորովհետև գրությունը Յեվրոպայում շարունակում եր յերկյուղ ներշնչել, ուստի պատերազմի խնդիրը կոնգրեսում քննվող կենտրոնական հարցերից մինն եր: Նրա ընդունած բանաձևը հաստատում եր, թե «պատերազմներին վերջ կարելի յե դնել միայն սոցիալական վերակազմությամբ» և հայտարարում եր, թե «կոնգրեսն իր ամենայեռանդուն բողոքն և արտահայտում պատերազմների դեմ», նրա սկսվելու դեպքում խորհուրդ տալով աշխատավորներին «աշխատանքը դադարեցնել». այդ աշխատավորները «վոգևորված համերաշխության գաղափարով, կպաշտպանեն ժողովուրդների այդ կռիվը պատերազմի դեմ»:

Ամբողջ Յեվրոպայում հետզհետե բարձրացող ու ծավալվող գործադուլային ալիքը գործադուլների խնդիրն եր հրամայաբար առաջադրում:

Այն ժամանակի պայմաններում նույն իսկ չափավոր մյուտյուելլիստներն ստիպված եյին խոստովանել, վոր գործադուլներն «անխուսափելի միջոց են այն սրբազան պատերազմում, վոր հանուն իրենց իրավունքների մղում են աշխատավորները»:

Իր բանաձևում կոնգրեսը հաստատում եր, վոր թեպետ գործադուլն աշխատավորության ազատագրման միջոց չե, բայց ժամանակակից պայմաններում նա անհրաժեշտ ե, ուստի աշխատավորությանը հանձնարարվում ե «դիմադրության ընկերություններ» կազմակերպել:

Դեռ գործադուլի խնդիրը քննելիս, մյուտյուելլիստները վորոշ պարտություն կրեցին: Ավելի վճռական հարված հասավ նրանց, յերբ քննվում եր սեփականության ընդհանրացնելու խնդիրը: Հատուկ հանձնաժողովի զեկուցման համաձայն կոնգրեսը 30 ձայնով 5-ի դեմ և 15-ի ձեռնպահությամբ անհրաժեշտ համարեց ազգայնացնել հանքերը, շախտերը, յերկաթուղային ու հեռագրական գծերը, այլ և անտառներով ու գյուղատնտեսական կուլտուրաներով բռնված հողերը:

Վերջին կետը պրուդոնիստների ուժեղ դիմադրությանը հանդիպեց և վորովհետև կոնգրեսի անդամների մեջ վեճը խմորյեռ (брожение) առաջ բերեց, ուստի վորոշվեց այդ խնդիրը յերկրորդ անգամ քննել՝ հերթական կոնգրեսում:

Միանգամայն հասկանալի յե, վոր սեփականության ընդհանրացնելու հարցի շուրջն այդպիսի համառ ու կատաղի պայքար բորբոքվեց: Ընդունելով խոշոր սեփականության ընդհան-



րացնելու անհրաժեշտությունը, Ինտերնացիոնալն իր վրա վորոշ ու վճռական կերպով կոմմունիստական կնիք դրավ և այսպիսով անդառնալի կերպով թողեց Պրուդոնի և նրա կողմնակիցների թեորիաները: Յեվ թեպետ մեքենաների գործածության ազդեցության մասին յեղած բանաձևը մշակելիս պրուդոնիստների գաղափարները նորից հրապարակ յեկան, բանաձև, վորում ասված եր փոխադարձ վարկ կազմակերպելու մասին, վորպեսզի աշխատավորությունը կարողանա տիրանալ մեքենաներին,—այնուամենայնիվ մյուտյուելլիստների ազդեցությունն արդեն խախտվել եր և հետագայում ավելի ևս պակասեց:

«Անմիջորեն գործնական նշանակություն չունենալով, ասում ե Ինտերնացիոնալի մի պատմագիր, հողային սեփականության խնդիրը հսկայական գաղափարական նշանակություն ձեռք բերեց, և գլխավորապես Ֆրանսիական Ինտերնացիոնալի այն մասի համար, վորում պայքարի պահանջը խախտեց դեպի Պրուդոնն ունեցած անպայման հավատը:

III

Յերրորդ կոնգրեսով ավարտվեց Ինտերնացիոնալի գործունեության առաջին շրջանը. շրջան, վորի բնորոշ առանձնահատկությունն եր պայքարը պրուդոնիզմի դեմ: Այս պայքարն, ինչպես տեսանք, տանում եյին անգլիացիք, կամ Մարքսի ղեկավարությամբ աշխատող Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչները. առ այս պիտի ասել, վոր III կոնգրեսում անգլիացիների հետ եյին նաև բելգիացիք: Սակայն հետագա դեպքերը ցույց տվին, վոր դա յերիտասարդ պրոլետարիատի զուտ տարերային ձգտումն եր դեպի կոմմունիզմ, և վոր ամենից սակավ նրա վրա պետք եր հույս դնել՝ վորպես հավատարիմ դաշնակիցների, այն պայքարում, վոր Մարքսը նորից պիտի սկսեր մի այլ ավելի սարսափելի և ավելի ուժեղ հակառակորդի հետ: Այս նոր ու սարսափելի թշնամին, վորի աշխատանքը խորտակման հասցրեց Ինտերնացիոնալը, բակունիզմն եր, վորի յելույթը տեղի ունեցավ IV կոնգրեսում—1869 թվին Բազելում:

«Ինտերնացիոնալն,—ասում ե III և IV կոնգրեսների միջև յեղած շրջանը բնորոշող մի պատմագիր,—արագ զարգանում եր՝ շնորհիվ իր գործոն պրոպագանդայի և կողմնակիցների անխոնջ յեռանդի, բազմաթիվ գործադուլների, միտինգների, լրագրության, մանիֆեստների: Իր ուժեղ կազմակերպությամբ և նոր անդամներ ձեռք բերելու ձևերով՝ նա անընդհատ ընդարձակում եր իր ազդեցության շրջանը և մեծացնում կողմնակիցների թիվը»:

Չի կարելի այս հատվածում Ինտերնացիոնալի ամենազորության և ուժի վորոշ չափազանցում չտեսնել: Յեվ ինչպես Ինտերնացիոնալի բարեկամներն, այնպես էլ մանավանդ հակառակորդները նրա ուժն ու ռեսուրսները շատ ու շատ եյին չափազանցում:

Բուրժուազիայի համար նա ամենուրեք եր և անըմբռնելի. բանվորները նրանում հզոր պաշտպան եյին տեսնում: Կապիտալիստների հետ վորոշ ընդհարում ունենալիս՝ նրանք ասում եյին. «Այ, սպասեցեք, կգա Ինտերնացիոնալը, նա ձեզ ցույց կտա»: Իսկ IV կոնգրեսի նախորյակին ևս Ինտերնացիոնալը շարունակում եր իր զարգացման մեջ առաջադիմել: Դրա համար հանգամանքները շարունակում եյին նպաստավոր մնալ, գործադուլները չեյին ընդհատվում: Նույն իսկ Անգլիայում գործադուլավորների հետ կռվելու համար զորքի օգնությանը դիմեցին, և տրեդ-յունիոնների բիրմինգամյան համագումարն Ինտերնացիոնալը բանվորների իսկական պաշտպան հրատարակեց...»:

Ֆրանսիայում Բիսմարկի ածխահատների գործադուլը զորքերի կողմից կրակ բանալ առաջացրեց, վորի հետևանքը յեղավ բանվորների հեղափոխական տրամադրության բարձրացումը: Ինտերնացիոնալին հարող սեկցիաների անդամների թիվը Բելգիայում հասավ մինչև 60·000-ի: Գերմանիայում Բեբելի և Լիբկնեխտի ղեկավարած միություններից կազմված սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն իր անդամներին հանձնարարում եր Ինտերնացիոնալի մեջ մտնել: Քաղաքական կուսակցությունների մասին գոյություն ունեցող պետական դաժան օրենքներն անկարելի եյին դարձնում կոլլեկտիվ կերպով Ինտերնացիոնալի մեջ մտնելը:

Ավստրիայում ևս Ինտերնացիոնալի կողմնակիցների թիվը հազարներով կարելի յեր հաշվել. այստեղ ևս օրենքն այդ բանը դժվարացնում եր: Շարժումն ընդգրկեց նաև փոքրիկ Հոլանդիան, վորտեղ Ինտերնացիոնալի ժողովրդականությունն ամրացավ՝ շինարար բանվորների գործադուլին նրա ցույց տված պաշտպանության շնորհիվ: Սկսեցին կապեր հաստատել նաև նոր աշխարհի հետ:

Համենայն դեպս՝ Ինտերնացիոնալի դրությունն արտաքուստ շատ փայլուն եր: Յեվ ինչպես արդեն ասել ենք, շատ պատկառելի տպավորություն թողեց նաև IV կոնգրեսը, վորին ներկա եյին 75 պատգամավորներ՝ Ֆրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից,



Ավստրիայից, Բելգիայից, Յապոնիայից, Իտալիայից, Շվեյցարիայից և Միացյալ Նահանգներից:

Ի նկատի ունենալով Ինտերնացիոնալի այս աճումն, անհրաժեշտ եր նրա կազմակերպչական կառուցվածքն ամրացնել, այս պատճառով էլ Բազելի կոնգրեսը կողմնակից յեղավ, վոր Գլխավոր Խորհրդի իշխանությունն ավելանա և կոնգրեսների միջև յեղած ժամանակամիջոցում նոր սեկցիաներ ընդունելու յեղանակը կանոնավորվի:

Հողային սեփականությունը համաձայնեցնելու մասին իր ընդունած բանաձևով կոնգրեսը յերկրորդ անգամ հաստատեց Ինտերնացիոնալի անջատումը պրուդոնիզմից. կոնգրեսը մի անգամ ևս, այն էլ ավելի վճռական կերպով, արտահայտվեց դիմադրական ընկերություններ կազմելու օգտին:

Սակայն ուժի և գաղափարական հասունության այս փաստերի հետ միասին այս կոնգրեսում յերևացին Ինտերնացիոնալի ապագա հիվանդության նախանշանները. հիվանդություն, վոր նրան գերեզման տարավ: Բազելի կոնգրեսում առաջին անգամ հանդես յեկավ Բակունինը և քննության դրեց ժառանգելու իրավունքը վոչնչացնելու հարցը:

Բակունինի հայացքներին հակադրվեցին Գլխավոր Խորհրդի, այսինքն Մարքսի հայացքները, վորոնց հիման վրա ժառանգելու իրավունքը, վոր վոչ թե պատճառ, այլ միայն տնտեսական իրավակարգի արդյունք է, ինքնին կվերանա սոցիալական վերակազմության հետևանքով, վոր պիտի վոչնչացնի արտադրական միջոցների մասնավոր սեփականությունը: Իսկ անցողակի շրջանում, այն շրջանում, յերբ պրոլետարիատը բավական հզորացած կլինի, ժառանգելու իրավունքը միանգամայն խելացի միջոց կարող է համարվել և կնպաստի սոցիալական ազատագրման նպատակներին:

Թեպետ վո՛չ Գլխավոր Խորհրդի բանաձևը, վո՛չ Բակունինի բանաձևը բացարձակ մեծամասնություն չշահեցին, սակայն կոնգրեսի մեծամասնությունը հօգուտ Բակունինի բացատրության արտահայտվեց: Մարքսիստական և բակունինցիների գաղափարների առաջին ընդհարումը վերջացավ առաջինների պարտությամբ: Սա ահավոր և ցավալի նախազգուշակություն եր:

Հաջորդ շրջանում Բակունինի ազդեցությունն Ինտերնացիոնալական բանվորական շրջանի վրա ավելի ու ավելի աճեց: Բակունինն, ինչպես և Մարքսը, 40-ական թվականներին Բերլինի արմատական խմբակներում հեգելյան դպրոց անցած լինելով, ակտիվ կերպով, ինչպես և Մարքսը, մասնակցեց 1848 թվի հեղափոխությանը:

Հարավ գերմանական ապստամբությանը մասնակցելով, նա, ապստամբությունը ճնշվելուց հետո, ձերբակալվեց և բանտ նետվեց՝ նախ Ավստրիայում, ուր նստել էր պատին գամված, այնուհետև Ռուսաստանում՝ Պետրո-Պավլովսկի բանտում: Այստեղից նա աքսորվեց Սիբիր, վորտեղից փախավ Ամերիկա, իսկ 60-ական թվականների սկզբում հայտնվեց Յեվրոպայում:

Ինտերնացիոնալը հիմնելու տարին՝ Բակունինը հանդիպեց Մարքսին, վորին ճանաչում էր 40-ական թվականներից և վորին իր կատարյալ աջակցությունը խոստացավ՝ Ինտերնացիոնալն ստեղծելու գործում:

Սակայն նա իր խոստումը չպահեց: Նա անցավ Իտալիա, վորտեղ մի քանի տարի անցրեց՝ կապ պահելով մի քանի բուրժուա-դեմոկրատական մարմինների հետ և մասնակցելով խաղաղության բուրժուական լիգային, վորի կոնգրեսներից մեկի մասին մենք արդեն խոսել ենք:

Միայն 1868 թվին նա իր կապերը խզեց լիգայից, դուրս յեկավ նրանից և իր բարեկամների հետ միասին կազմեց «Սոցիալական Դեմոկրատիայի Միությունը»:

Բակունինյան նոր կազմակերպությունն իրեն վորպես ծայրահեղ հեղափոխական կազմակերպություն ցուցադրեց: Իր ծրագրի առաջին կետում նա հայտարարում էր իր անդամների անկրոնության մասին, կրոնը գիտությամբ փոխարինելու մասին, աստվածային արդարադատությունը մարդկային արդարադատությամբ փոխարինելու մասին: Հաջորդ կետերը խոսում եյին դասակարգերի քաղաքական, տնտեսական և սոցիալական հավասարեցման մասին, այլ և ժառանգելու իրավունքը վոչնչացնելու մասին, վոր Բազելի կոնգրեսում այնքան անզոր կերպով պաշտպանում էր Բակունինը:

Ամեն տեսակ քաղաքական գործունեյություն, վորի անմիջական և ուղիղ նպատակը բանվոր դասակարգի հաղթանակը չէր, մերժվում էր, իսկ պետության մասին հաստատապես ասվում էր, վոր սա ազատ յերկրագործական և արդյունաբերական ասոցիացիաների համաշխարհային միության մեջ լուծվելու ճանապարհի վրա յե գտնվում:

Ինքը միությունը կառուցված էր հին դավադրական մարմինների տիպով: Նրա անդամների մասսայից ընտրվում էր գլխիկը—«ինտերնացիոնալական յեղբայրները», վորին ստորադաս եյին այսպես կոչված ստորին վորակավորման հեղափոխականները—«ազգային յեղբայրները»: Հաջորդ աստիճանը մնացած անդամների ամբողջ մասսան—ինքը միությունն էր, վոր կես-



լեգալ, կես անլեգալ կազմակերպություն էր: Սրա հետ միասին գերագույն մարմնի գոյությունն անհայտ էր մնում ստորադաս մարմինների անդամներին, իսկ ինքը Բակունինը դիկտատորական լիազորություններ ուներ:

Յեթե Մարքսի հայացքները մշակվում եյին տնտեսապես ամենահարուստ յերկրի—Անգլիայի տնտեսական կյանքը դիտելու հետևանքով, յեթե սրա շնորհիվ նա պարզ կերպով պատկերացնում էր դասակարգային կռվի դերն ու նշանակությունը և կապիտալիստական հասարակության մեջ այդ պայքարի դրոշակակրի—պրոլետարիատի դերն ու նշանակությունը, այլ և այն նշանակությունը, վոր այդ պրոլետարիատի համար ուներ քաղաքական կռիվը և քաղաքական իշխանությունը ձեռք գցելը—պլանաչափ կերպով նախապատրաստած և նույն ձևով էլ իրագործած, Բակունինը, յելած տնտեսապես հետամնաց մի յերկրից, Յեվրոպան տեսած միայն 1848 թ. սուր հեղափոխական ճգնաժամի մոմենտում, անծանոթ ռեակցիայի տարիներին և տնտեսական վերելքին, վոր անցրեց բանտում ու աքսորում, չէր հասկանում պրոլետարիատի նշանակությունը և թերագնահատում էր գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական իրավակարգի կայունությունը:

Ճիշտ է, հենց Բակունինի Յեվրոպայում յերևալու մոմենտին յեվրոպական կապիտալիստական աշխարհը 60-ական թվականներին նորից յեռ ու զեռի մեջ էր: Գոյություն ունեցող ճգնաժամն ավելացրեց աշխատավորների հեղափոխական վոգին, նորից ցնցումներ եյին հասունանում, վորոնք կապ ունեյին ազգային միավորումների հետ, Նապոլեոն III կայսրությունը ցնցվել ու ամեն ուղղությամբ ճեղքվածքներ էր տալիս, բայց այդ ժամանակ կապիտալիստական աշխարհի այս բոլոր ժամանակավոր հիվանդությունները Բակունինը նրա մոտալուտ և վերջնական անկման նշաններ էր համարում:

Ծնունդ լինելով Ռուսաստանի—այնպիսի յերկրի, ուր հեղափոխական գաղափարը կողմնակիցներ ուներ միայն նիհիլիստորեն տրամադրված ուսանող յերիտասարդության մեջ՝ այլատիճան ու չքավոր, իսկ հեղափոխական շարժումն յերևան էր գալիս միայն գյուղացիական բունտում,—Բակունինը «հավատում էր միայն գյուղացիական աշխարհին և հանդուգն յերիտասարդների դրագեա աշխարհին»:

Նրա հայացքները վորոշ չափով արտացոլում եյին «կապիտալի արշավից ավերված գյուղացիության բնազդն ու տարերային բողոքը»: Իր նամակներից մեկում բնորոշելով իրերի դրությունն

Հարավ գերմանական ապստամբությանը մասնակցելով, նա, ապստամբությունը ճնշվելուց հետո, ձերբակալվեց և բանտ նետվեց՝ նախ Ավստրիայում, ուր նստել էր պատին գամված, այնուհետև Ռուսաստանում՝ Պետրո-Պավլովսկի բանտում: Այնտեղից նա աքսորվեց Սիբիր, որտեղից փախավ Ամերիկա, իսկ 60-ական թվականների սկզբում հայտնվեց Եվրոպայում:

Ինտերնացիոնալը հիմնելու տարին՝ Բակունինը հանդիպեց Մարքսին, որին ճանաչում էր 40-ական թվականներից և որին իր կատարյալ աջակցությունը խոստացավ՝ Ինտերնացիոնալի ստեղծելու գործում:

Սակայն նա իր խոստումը չպահեց: Նա անցավ Իտալիա, որտեղ մի քանի տարի անցրեց՝ կապ պահելով մի քանի բուրժուա-դեմոկրատական մարմինների հետ և մասնակցելով խաղաղության բուրժուական լիգային, որի կոնգրեսներից մեկի մասին մենք արդեն խոսել ենք:

Միայն 1868 թվին նա իր կապերը խզեց լիգայից, դուրս եկավ նրանից և իր բարեկամների հետ միասին կազմեց «Սոցիալական Դեմոկրատիայի Միությունը»:

Բակունինյան նոր կազմակերպությունն իրեն վրա ծայրահեղ հեղափոխական կազմակերպություն ցուցադրեց: Իր ծրագրի առաջին կետում նա հայտարարում էր իր անդամների անկրոնության մասին, կրոնը գիտությունով փոխարինելու մասին, աստվածային արդարադատությունը մարդկային արդարադատությամբ փոխարինելու մասին: Հաջորդ կետերը խոսում էին դասակարգերի քաղաքական, տնտեսական և սոցիալական հավասարեցման մասին, այլ և ժառանգելու իրավունքը վերացնելու մասին, որ Բազելի կոնգրեսում այնքան անզոր կերպով պաշտպանում էր Բակունինը:

Ամեն տեսակ քաղաքական գործունեություն, որի անմիջական և ուղիղ նպատակը բանվոր դասակարգի հաղթանակը չէր, մերժվում էր, իսկ պետության մասին հաստատապես ասվում էր, որ սա ազատ երկրագործական և արդյունաբերական ասոցիացիաների համաշխարհային միության մեջ լուծվելու ճանապարհի վրա է գտնվում:

Ինքը միությունը կառուցված էր հին դավադրական մարմինների տիպով: Նրա անդամների մասսայից ընտրվում էր գըլխիկը—«ինտերնացիոնալական եղբայրները», որոնք ստորադաս էին այսպես կոչված ստորին վարակավորման հեղափոխականները—«ազգային եղբայրները»: Հաջորդ աստիճանը մնացած անդամների ամբողջ մասսան—ինքը միությունն էր, որ կես լեգալ, կես անլեգալ կազմակերպություն էր: Սրա հետ միասին գերագույն մարմնի գոյությունն անհայտ էր մնում ստորադաս մարմինների անդամներին, իսկ ինքը Բակունինը դիկտատորական լիազորություններ ուներ:



Եթե Մարքսի հայացքները մշակվում էին տնտեսապես ամենահարուստ երկրի—Անգլիայի տնտեսական կյանքը դիտելու հետևանքով, եթե սրա շնորհիվ նա պարզ կերպով պատկերացնում էր դասակարգային կռվի դերն ու նշանակությունը և կապիտալիստական հասարակության մեջ այդ պայքարի դրոշակակրի—պրոլետարիատի դերն ու նշանակությունը, այլ և այն նշանակությունը, որ այդ պրոլետարիատի համար ուներ քաղաքական կռիվը և քաղաքական իշխանությունը ձեռք գցելը—պլանաչափ կերպով նախապատրաստած և նույն ձևով էլ իրագործած, Բակունինը, յելած տնտեսապես հետամնաց մի երկրից, Եվրոպան տեսած միայն 1848 թ. սուր հեղափոխական ճգնաժամի մոմենտում, անծանոթ ռեակցիայի տարիներին և տնտեսական վերելքին, որ անցրեց բանտում ու աքսորում, չէր հասկանում պրոլետարիատի նշանակությունը և թերագնահատում էր գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական իրավակարգի կայունությունը:

Ճիշտ է, հենց Բակունինի Եվրոպայում յերևալու մոմենտին յեվրոպական կապիտալիստական աշխարհը 60-ական թվականներին նորից յեռ ու գեռի մեջ էր: Գոյություն ունեցող ճըգնաժամն ավելացրեց աշխատավորների հեղափոխական վոգին, նորից ցնցումներ էին հասունանում, վորոնք կապ ունեին ազգային միավորումների հետ, Նապոլեոն III կայսրությունը ցնցվել ու ամեն ուղղությամբ ճեղքվածքներ էր տալիս, բայց այդ ժամանակ կապիտալիստական աշխարհի այս բոլոր ժամանակավոր հիվանդությունները Բակունինը նրա մոտալուտ և վերջնական անկման նշաններ էր համարում:

Ծնունդ լինելով Ռուսաստանի—այնպիսի երկրի, ուր հեղափոխական գաղափարը կողմնակիցներ ուներ միայն նիհիլիստորեն տրամադրված ուսանող յերիտասարդության մեջ՝ այլատիճան ու չքավոր, իսկ հեղափոխական շարժումն յերևան էր գալիս միայն գյուղացիական բունտում,—Բակունինը «հավատում էր միայն գյուղացիական աշխարհին և հանդուգն յերիտասարդների դրագետ աշխարհին»:

Նրա հայացքները վորոշ չափով արտացոլում էին «կապիտալի արշավից ավերված գյուղացիության բնազդն ու տարերային բողոքը»: Իր նամակներից մեկում բնորոշելով իրերի դրությունն

Իտալիայում, Բակունինն ասում է. «Այստեղ ապպարմակությունն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական, կատարյալ հեղափոխական, այսինքն, հուսահատ վիճակում է»: Համապատասխան նրա այս հայացքներին, որոնցից երևում է, թե հուսահատությունը հեղափոխության է հավասար, այս վհատված տկլորները, «չքավոր պրոլետարիատն» էլ, ինչպես Բակունինն է նրան անվանում, հենց նա է, «որի մեջ է կայանում ապագա սոցիալական հեղափոխության ամբողջ խելքն ու ուժը»:

Մարքսի ուսմունքում Բակունինը տեսնում էր միայն բանվոր դասակարգի վերնախավերի հայացքների արտահայտությունը, որոնք «զգալի աշխատավարձի շնորհիվ բուրժուաներից տարբերվում են միայն իրենց դիրքով, բայց ոչ յերբեք՝ մտքերի ուղղությամբ»: Այս պատճառով պլանաչափ կերպով հեղափոխություն պատրաստելու մարքսիստական քարոզին (15, 20, 50 տարեկան բանվորները պետք է ներքին ու միջազգային կռիվ տանեն ո՛չ նրա համար, որ ներքին պայմանները փոխեն, այլ նրա համար, որ հենց իրենց փոխեն), Բակունինը խռովությունն էր հակադրում, որովհետև նրա կարծիքով «ամեն տեսակ խռովություն, որքան էլ նա անհաջող լինի, միշտ օգտակար է»: Նա գտնում էր, որ «առանձնակի խռովությունները վերջ ի վերջո կմիանան, կդառնան միասնական ընդվզում, ժողովրդական ապստամբություն, որ ամեն ինչ կխորտակի»:

Կռիվ քաղաքական իշխանության համար, այդ իշխանության բռնագրավումն, այս բոլորը Բակունինի աչքում աններելի օպպորտյունիզմ էր. պետք է ամեն ինչ ավերել, իսկ նորն ինքն իրեն կստեղծվի:

Հենց այն յերկրներն էլ, ուր հասարակական բազմաթիվ սոցիալական խավեր կային, որոնց իր քարոզով դիմում էր Բակունինը,—Իտալիան, Շվեյցարիան, Իսպանիան, նրա կողմնակիցների գլխավոր կադրերն էյին տալիս: Իրոք, հենց այս յերկրներում կապիտալիստական հարաբերություններն այնքան էլ զարգացած չէյին, բայց կապիտալն արդեն իր ուղին էր գցել՝ ավերելով գյուղացուն ու մանր արհեստավորին: Որքան՝ շնորհիվ կապիտալիստական հարաբերությունների անզարգացած լինելու ինտելիգենցիան տեղ չէր գտնում իր ուժերը կիրառելու, այնքան էլ «գրագետ յերիտասարդները» նետվում էյին հանդուգն կոչվածների շարքերը և կատաղի հեղափոխականներ էյին դառնում: Պակաս չէր Բակունինի կողմնակիցների թիվը նաև Բելգիայում, ուր թեպետ կապիտալիստական իրավակարգը դիրք դիրքի հետևից էր գրավում, բայց պրոլետարիատը դեռ նոր էր միայն կորզել իր մանր ինքնուրույն արտադրողի, արհեստավորի և գյուղացու դրությունից:

Անկասկած Պրուդոնի հայացքներն ուժեղ կերպով ազդում էյին Բակունինի աշխարհայացքի վրա: Բայց յեթե առաջինը մանր սեփականատերերի շահերի արտահայտիչն էր, որոնք դեռ հույս ունեյին պահպանել իրենց ինքնուրույնության և մանր սեփականության մնացորդները, Բակունինն արտահայտում էր շահերը մանր սեփականատերերի, որոնք հուսահատված ու զայրացած, այլ ևս հույս չունեյին պահպանելու իրենց անկախությունն իբրև արտադրողների: Այստեղից էլ առաջ էր գալիս նրանց անսովոր հեղափոխականությունը, ամեն տեսակ քաղաքական կռվի՝ այդ անթույլատրելի կոմպրոմիսի կատարյալ ժխտումն, անցքերի վրայից ցատկելու ցանկությունը:

Որ Բակունինի հայացքները մանր բուրժուական էյին, ցույց է տալիս նրա հիմնած միության պահանջը՝ դասակարգերը հավասարեցնելու, ինչպես նաև ժառանգելու օրենքը վոչնչացնելու մասին: Չէ՞ որ «հարուստ ու աղքատ դասակարգերը մի միջին դասակարգում լուծելու» մասին Պրուդոնն էր ուսուցանում, իսկ ժառանգելու օրենքը սահմանափակել բոլոր մանր-բուրժուական ռեֆորմատորների համար խոշոր կապիտալի աճող կուտակման դեմ պայքարի միջոցներից մեկն էր:

Հազար ութհարյուր վաթսունութ թվին Բակունինն իր միության ծրագիրն ուղարկեց Մարքսին, որին բացի դրանից մի բարեկամական նամակով ևս դիմեց: Այդ նամակում նա գրում էր. «Յես ուրիշ հասարակություն չեմ ճանաչում, բացի բանվորների աշխարհից: Այժմ իմ հայրենիքը պիտի լինի Ինտերնացիոնալը, որի հիմնադիրներից մեկը դու յես հանդիսանում. դու տեսնում ես, թանգագի՛ն բարեկամ, որ դեռ քո աշակերտն եմ, և յես պարծենում եմ դրանով»:

Բակունինը խնդրում էր Ինտերնացիոնալի մեջ ընդունել իր կազմած միությունն՝ ամբողջ կազմով, որին Գլխավոր Խորհուրդը վոչ մի կերպ չէր կարողանում համաձայնել:

Մարքսն ըստ արժանույն գնահատեց բակունինյան միության խառնափնթոր ծրագիրը և հետագայում իր մի բարեկամին գրած նամակում բնորոշում էր որպես «ամեն տեղից քաշած, բերած խառնուրդ և մանկական այբբենարան»: Էնգելսին ուղղած նամակում այս ծրագրի «դասակարգերը հավասարեցնելու» մասին արած պահանջը բնորոշում էր որպես նոր բառերով արտահայտած միտք «կապիտալի և աշխատանքի ներդաշնակության» մասին: Այս բոլորի հիման վրա Բակունինի միությանն առաջար-

Իտալիայում, Բակունինն ասում է. «Այստեղ ազգաբնակությունն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական, կատարյալ հեղափոխական, այսինքն, հուսահատ վիճակում է»: Համապատասխան նրա այս հայացքներին, որոնցից յերևում է, թե հուսահատությունը հեղափոխության է հավասար, այս վհատված տարրերը, «չքավոր պրոլետարիատն» էլ, ինչպես Բակունինն է նրան անվանում, հենց նա է, «որի մեջ է կայանում ապագա սոցիալական հեղափոխության ամբողջ խելքն ու ույժը»:

Մարքսի ուսմունքում Բակունինը տեսնում էր միայն բանվոր դասակարգի վերնախավերի հայացքների արտահայտությունը, որոնք «զգալի աշխատավարձի շնորհիվ բուրժուաներից տարբերվում են միայն իրենց դիրքով, բայց ոչ յերբեք՝ մտքերի ուղղությամբ»: Այս պատճառով պլանաչափ կերպով հեղափոխություն պատրաստելու մարքսիստական քարոզին (15, 20, 50 տարեկան բանվորները պետք է ներքին ու միջազգային կռիվ տանեն ո՛չ նրա համար, որ ներքին պայմանները փոխեն, այլ նրա համար, որ հենց իրենց փոխեն), Բակունինը խռովությունն էր հակադրում, որովհետև նրա կարծիքով «ամեն տեսակ խռովություն, որքան էլ նա անհաջող լինի, միշտ օգտակար է»: Նա գտնում էր, որ «առանձնակի խռովությունները վերջ ի վերջո կմիանան, կդառնան միասնական ընդվզում, ժողովրդական ապստամբություն, որ ամեն ինչ կխորտակի»:

Կռիվ քաղաքական իշխանության համար, այդ իշխանության բռնագրավումն, այս բոլորը Բակունինի աչքում աններելի օպպորտյունիզմ էր. պետք է ամեն ինչ ավերել, իսկ նորն ինքն իրեն կստեղծվի:

Հենց այն յերկրներն էլ, ուր հասարակական բազմաթիվ սոցիալական խավեր կային, որոնց իր քարոզով դիմում էր Բակունինը,—Իտալիան, Շվեյցարիան, Իսպանիան, նրա կողմնակիցների գլխավոր կադրերն էին տալիս: Իրոք, հենց այս յերկրներում կապիտալիստական հարաբերություններն այնքան էլ զարգացած չէին, բայց կապիտալն արդեն իր ուղին էր գցել՝ ավերելով գյուղացուն ու մանր արհեստավորին: Որքան՝ շնորհիվ կապիտալիստական հարաբերությունների անզարգացած լինելու ինտելիգենցիան տեղ չէր գտնում իր ուժերը կիրառելու, այնքան էլ «գրագետ յերիտասարդները» նետվում էին հանդուգն կոչվածների շարքերը և կատաղի հեղափոխականներ էին դառնում: Պակաս չէր Բակունինի կողմնակիցների թիվը նաև Բելգիայում, ուր թեպետ կապիտալիստական իրավակարգը դիրք դիրքի հետևից էր գրավում, բայց պրոլետարիատը դեռ նոր էր միայն



կորզել իր մանր ինքնուրույն արտադրողի, արհեստավորի և գյուղացու դրությունից:

Անկասկած Պրուդոնի հայացքներն ուժեղ կերպով ազդում էին Բակունինի աշխարհայացքի վրա: Բայց յեթե առաջինը մանր սեփականատերերի շահերի արտահայտիչն էր, որոնք դեռ հույս ունեյին պահպանել իրենց ինքնուրույնության և մանր սեփականության մնացորդները, Բակունինն արտահայտում էր շահերը մանր սեփականատերերի, որոնք հուսահատված ու զայրացած, այլ ևս հույս չունեյին պահպանելու իրենց անկախությունն իբրև արտադրողների: Այստեղից էլ առաջ էր գալիս նրանց անսովոր հեղափոխականությունը, ամեն տեսակ քաղաքական կռվի՝ այդ անթույլատրելի կոմպրոմիսի կատարյալ ժխտումն, անցքերի վրայից ցատկելու ցանկությունը:

Որ Բակունինի հայացքները մանր բուրժուական էին, ցույց է տալիս նրա հիմնած միության պահանջը՝ դասակարգերը հավասարեցնելու, ինչպես նաև ժառանգելու օրենքը վոչնչացնելու մասին: Չէ՞ որ «հարուստ ու աղքատ դասակարգերը մի միջին դասակարգում լուծելու» մասին Պրուդոնն էր ուսուցանում, իսկ ժառանգելու օրենքը սահմանափակել բոլոր մանր-բուրժուական ռեֆորմատորների համար խոշոր կապիտալի աճող կուտակման դեմ պայքարի միջոցներից մեկն էր:

Հազար ութհարյուր վաթսունութ թվին Բակունինն իր միության ծրագիրն ուղարկեց Մարքսին, որին բացի դրանից մի բարեկամական նամակով ես դիմեց: Այդ նամակում նա գրում էր. «Յես ուրիշ հասարակություն չեմ ճանաչում, բացի բանվորների աշխարհից: Այժմ իմ հայրենիքը պիտի լինի Ինտերնացիոնալը, որի հիմնադիրներից մեկը դու ես հանդիսանում. դու տեսնում ես, թանգագի՛ն բարեկամ, որ դեռ քո աշակերտն եմ, և յես պարծենում եմ դրանով»:

Բակունինը խնդրում էր Ինտերնացիոնալի մեջ ընդունել իր կազմած միությունն՝ ամբողջ կազմով, որին Գլխավոր Խորհուրդը ոչ մի կերպ չէր կարողանում համաձայնել:

Մարքսն ըստ արժանույն գնահատեց բակունինյան միության խառնաշփոթ ծրագիրը և հետագայում իր մի բարեկամին գրած նամակում բնորոշում էր որպես «ամեն տեղից քաշած, բերած խառնուրդ և մանկական այբբենարան»: Ենգելսին ուղղած նամակում այս ծրագրի «դասակարգերը հավասարեցնելու» մասին արած պահանջը բնորոշում էր որպես նոր բառերով արտահայտած միտք «կապիտալի և աշխատանքի ներդաշնակության» մասին: Այս բոլորի հիման վրա Բակունինի միությանն առաջար-

Իտալիայում, Բակունինն ասում է. «Այստեղ ազգաբնակությունն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական, կատարյալ հեղափոխական, այսինքն, հուսահատ վիճակում է»: Համապատասխան նրա այս հայացքներին, վորոնցից յերևում է, թե հուսահատությունը հեղափոխության է հավասար, այս վհատված տկլորները, «չքավոր պրոլետարիատն» էլ, ինչպես Բակունինն է նրան անվանում, հենց նա յե, «վորի մեջ է կայանում ապագա սոցիալական հեղափոխության ամբողջ խելքն ու ույժը»:

Մարքսի ուսմունքում Բակունինը տեսնում եր միայն բանվոր դասակարգի վերնախավերի հայացքների արտահայտությունը, վորոնք «զգալի աշխատավարձի շնորհիվ բուրժուաներից տարբերվում են միայն իրենց դիրքով, բայց վոչ յերբեք՝ մտքերի ուղղությամբ»: Այս պատճառով պլանաչափ կերպով հեղափոխություն պատրաստելու մարքսիստական քարոզին (15, 20, 50 տարեկան բանվորները պետք է ներքին ու միջազգային կռիվ տանեն վո՛չ նրա համար, վոր ներքին պայմանները փոխեն, այլ նրա համար, վոր հենց իրենց փոխեն), Բակունինը խռովությունն եր հակադրում, վորովհետև նրա կարծիքով «ամեն տեսակ խռովություն, վորքան էլ նա անհաջող լինի, միշտ ոգտակար է»: Նա գտնում եր, վոր «առանձնակի խռովությունները վերջ ի վերջո կմիանան, կգտնեն միասնական ընդվզում, ժողովրդական ապստամբություն, վոր ամեն ինչ կխորտակի»:

Կռիվ քաղաքական իշխանության համար, այդ իշխանության բռնագրավումն, այս բոլորը Բակունինի աչքում աններելի ոպպորտյունիզմ եր. պետք է ամեն ինչ ավերել, իսկ նորն ինքն իրեն կստեղծվի:

Հենց այն յերկրներն էլ, ուր հասարակական բազմաթիվ սոցիալական խավեր կային, վորոնց իր քարոզով դիմում եր Բակունինը,—Իտալիան, Շվեյցարիան, Իսպանիան, նրա կողմնակիցների գլխավոր կադրերն եյին տալիս: Իրոք, հենց այս յերկրներում կապիտալիստական հարաբերություններն այնքան էլ զարգացած չեյին, բայց կապիտալն արդեն իր ուղին եր գցել՝ ավերելով գյուղացուն ու մանր արհեստավորին: Վորքան՝ շնորհիվ կապիտալիստական հարաբերությունների անզարգացած լինելու ինտելիգենցիան տեղ չեր գտնում իր ույժերը կիրառելու, այնքան էլ «դրադետ յերիտասարդները» նետվում եյին հանդուգն կոչվածների շարքերը և կատաղի հեղափոխականներ եյին դառնում: Պակաս չեր Բակունինի կողմնակիցների թիվը նաև Բելգիայում, ուր թեպետ կապիտալիստական իրավակարգը դիրք դիրքի հետևից եր գրավում, բայց պրոլետարիատը դեռ նոր եր միայն



կորցնել իր մանր ինքնուրույն արտադրողի, արհեստավորի և գյուղացու դրությունից:

Անկասկած Պրուդոնի հայացքներն ուժեղ կերպով ազդում եյին Բակունինի աշխարհայացքի վրա: Բայց յեթե առաջինը մանր սեփականատերերի շահերի արտահայտիչն եր, վորոնք դեռ հույս ունեյին պահպանել իրենց ինքնուրույնության և մանր սեփականության մնացորդները, Բակունինն արտահայտում եր շահերը մանր սեփականատերերի, վորոնք հուսահատված ու զայրացած, այլ ևս հույս չունեյին պահպանելու իրենց անկախությունն իբրև արտադրողների: Այստեղից էլ առաջ եր գալիս նրանց անսովոր հեղափոխականությունը, ամեն տեսակ քաղաքական կռվի՝ այդ անթույլատրելի կոմպրոմիսի կատարյալ ժխտումն, անցքերի վրայից ցատկելու ցանկությունը:

Վոր Բակունինի հայացքները մանր բուրժուական եյին, ցույց է տալիս նրա հիմնած միության պահանջը՝ դասակարգերը հավասարեցնելու, ինչպես նաև ժառանգելու որենքը վոչնչացնելու մասին: Չե՞ վոր «հարուստ ու աղքատ դասակարգերը մի միջին դասակարգում լուծելու» մասին Պրուդոնն եր ուսուցանում, իսկ ժառանգելու որենքը սահմանափակել բոլոր մանր-բուրժուական ռեֆորմատորների համար խոշոր կապիտալի աճող կուտակման դեմ պայքարի միջոցներից մեկն եր:

Հազար ութհարյուր վաթսունութ թվին Բակունինն իր միության ծրագիրն ուղարկեց Մարքսին, վորին բացի դրանից մի բարեկամական նամակով ևս դիմեց: Այդ նամակում նա գրում եր. «Յես ուրիշ հասարակություն չեմ ճանաչում, բացի բանվորների աշխարհից: Այժմ իմ հայրենիքը պիտի լինի Ինտերնացիոնալը, վորի հիմնադիրներից մեկը դու յես հանդիսանում. դու տեսնում ես, Թանգագի՛ն բարեկամ, վոր դեռ քո աշակերտն եմ, և յես պարծենում եմ դրանով»:

Բակունինը խնդրում եր Ինտերնացիոնալի մեջ ընդունել իր կազմած միությունն՝ ամբողջ կազմով, վորին Գլխավոր Խորհուրդը վոչ մի կերպ չեր կարողանում համաձայնել:

Մարքսն ըստ արժանույն գնահատեց բակունինյան միության խառնափնթոր ծրագիրը և հետագայում իր մի բարեկամին գրած նամակում բնորոշում եր վորպես «ամեն տեղից քաշած, բերած խառնուրդ և մանկական այբբենարան»: Ենգելսին ուղղած նամակում այս ծրագրի «դասակարգերը հավասարեցնելու» մասին արած պահանջը բնորոշում եր վորպես նոր բառերով արտահայտած միտք «կապիտալի և աշխատանքի ներդաշնակության» մասին: Այս բոլորի հիման վրա Բակունինի միությանն առաջար-

կում էր ինքնացրման յենթարկվել, իսկ նրա սեկցիաներին՝ մտնել Ինտերնացիոնալի մեջ առանձին առանձին: Բակունինն ու միությունը համաձայնեցին և արտաքուստ յենթարկվեցին Գլխավոր Խորհրդի պահանջին:

Շուտով համայնվրոպական մասշտաբով դեպքերն այնպիսի բնույթ ընդունեցին, վոր Բակունինի միության ամբողջ գործը յերկրորդական տեղ բռնեց: Յեվրոպայի գլխին այնքան յերկար ժամանակ կախված պատերազմը պայթեց՝ Պրուսիայի և Նապոլեոնյան Ֆրանսիայի մենամարտի կովի ձևով: Ինտերնացիոնալը, վորպես բանվոր դասակարգի կազմակերպություն, այս չափազանց կարևոր անցքի հանդեպ պիտի այս կամ այն ձևով արտահայտվեր:

Վորպես զինվորական ընդհարման վճռական թշնամիներ արտահայտվեցին ամենից առաջ Ինտերնացիոնալի տեղական կազմակերպությունները: Ֆրանսիական ինտերնացիոնալիստները կոչ հրատարակեցին պատերազմի դեմ: Այդ կոչում նրանք հայտարարում եյին, վոր զինական ընդհարումը «միայն կզորացնի բռնակալությունը՝ Հռենոսի այս և այն կողմերում»:

Ինտերնացիոնալի Բեռլինի անդամները Ֆրանսիացիներին պատասխանեցին՝ հայտնելով, վոր «իրենց սրտերում ազգային թշնամության նշույլ անգամ չկա», և թե իրենք «միայն ուժի յենթարկվելով են մտնելու ռազմական ավազակախմբերը»:

Գլխավոր Խորհուրդն էլ կոչ բաց թողեց, վորով մեղադրում էր թե՛ Բոնապարտին, թե՛ պրուսական կառավարությանը՝ պատերազմ հրահրելու մեջ: «Այն ժամանակ, ասված էր այդ կոչում, յերբ պաշտոնական Ֆրանսիան և պաշտոնական Գերմանիան յեղբայրասպան կովի մեջ են մտնում, գերմանական և ֆրանսիական բանվորները խաղաղ ու յեղբայրական դիմումներ են փոխանակում: Միայն այս փաստը, վոր պատմության մեջ իր նմանը չունի, թույլ է տալիս մեզ հույս դնել ավելի փայլուն ապագայի վրա: Նա ցույց է տալիս, վոր տնտեսապես սնանկ և քաղաքականապես անխելք հին հասարակության հակառակ՝ ծնունդ է առնում մի նոր հասարակություն, վորը միջազգային խաղաղություն է բերելու: Վորովհետև նրա որոք ազգային հիմունքը միշտ նույնը կլինի—աշխատանքը»:

Պատերազմի դեմ ուղղած բողոքին այնպիսի յերկրների սեկցիաներ էլ միացան, վորոնց պատերազմն անմիջորեն չէր դիպչում—Շվեյցարիան, Իսպանիան, Իտալիան:

Բայց յեթե 1914 թվին Յերկրորդ Ինտերնացիոնալը բավական ույժ ունենալով, հարկավոր չափով կամք չունեցավ, վոր կարողանար դիմադրավել զինվորական ընդհարմանը, I Ինտերնացիոնալը պատերազմը կասեցնելու բավական մեծ ցանկություն ունենալով, փաստորեն չկարողացավ այդ անել, վորովհետև բաժան-բաժան էր, թույլ կազմակերպված և առանց հաստատուն հիմքի, ուստի բավականացավ միայն սկզբունքային դեկլարացիաներով:

Յերբ պատերազմական գործողությունների արագ ընթացքում Ֆրանսիական զորքերը ջարդվեցին, Նապոլեոն III կայսրությունը վերջացավ, իսկ գերմանացիք, վորոնք պատերազմի սկզբում միայն Ֆրանսիական հարձակումներից պաշտպանվողներ եյին ձևանում, շարունակեցին իրենց հարձակումն, այս անգամ արդեն հասարակապետական Ֆրանսիայի հետ կովելով,—Ինտերնացիոնալը յերկրորդ կոչ հրատարակեց:

Մարքսը, վոր այս կոչի հեղինակն էր, ցույց էր տալիս այն կործանարար հետևանքները, վոր ամբողջ Յեվրոպայի համար կունենար Պրուսիայի հաղթանակը: Նա նախորոք ցույց էր տալիս, թե Ֆրանսիական տերրիտորիայի մի մասը բռնի կերպով Պրուսիային միացնելը, վորին ձգտում էր Պրուսիան և վորին նա հասավ, Ֆրանսիային ցարական Ռուսաստանի գիրկը կնետի, իսկ Գերմանիային կդնի նոր պատերազմի սպառնալիքի առաջ՝ Ֆրանսիայի հետ, վորին կպաշտպանի Ռուսաստանը: Մարքսի ձեռքով գրված այս կետերը, հիրավի, մարգարեական հանդիսացան: Համաշխարհային պատերազմի դեպքերն ամբողջովին հաստատեցին Մարքսի նախագծած պատկերը:

Մանիֆեստը վերջանում է Ինտերնացիոնալի սեկցիաներին ուղղած հետևյալ դիմումով. «Թող բոլոր յերկրների սեկցիաները բանվոր դասին ակտիվ գործունեյության կոչեն: Յեթե նրանք իրենց պարտքը չկատարեն, յեթե նրանք պասսիվ մնան, ներկա սարսափելի պատերազմը միայն նախանշան կլինի ավելի ահռելի միջազգային ընդհարումների և բոլոր յերկրներում նոր հաղթանակ կտա սրի, հողի և կապիտալի տերերին՝ բանվորների նկատմամբ»:

Ինտերնացիոնալի շատ սեկցիաներ պաշտպանեցին Գլխավոր Խորհուրդը, բողոքելով Ելզաս-Լոտարինգիայի գրավման դեմ, համակրանք հայտնելով ֆրանսիական հասարակապետությանը և պահանջ դնելով, վոր նրա հետ պատվավոր հաշտություն կնքվի:

Ֆրանսիայում ռազմական դեպքերը ճակատագրորեն բերին մարտի 18-ի ապստամբությունը և փարիզյան կոմմունայի հռչակումը: Թեպետ փարիզյան արհեստավորների և բանվորների այս ապստամբության մեջ Ինտերնացիոնալի անդամներն առան-

ծին ղեկավարող դեր չկատարեցին, բայց և այնպես Գլխավոր Խորհուրդը կատարելապես համերաշխ գտնվեց ապստամբ կոմմունարների հետ։ Այս պատճառով Ինտերնացիոնալի անդամ Տոլենը, վոր դավաճանել էր բանվորներին ու վերսալցիների* կողմն անցել, արտաքսվեց Ինտերնացիոնալից, իսկ կոմմունարների պաշտպանությունն Ինտերնացիոնալի պարտությունը յեղավ։ Մարքսը Ֆրանսիայի քաղաքացիական կռվի առթիվ հրատարակած իր փայլուն կոչերում Կոմմունայի դեպքերի պատմական գնահատականն էր տալիս։ Նրա համար Փարիզյան Կոմմունան պրոլետարիատի ապագա դիկտատուրան էր ավետում։

«Փարիզի բանվորները, գրում էր Մարքսը, իշխանությունն իրենց ձեռքն առնելով՝ ցույց տվին, վոր պրոլետարիատը չի կարող առանց այլև այլի օգտագործել իշխանության հին բուրժուական ապարատը. նա պիտի նոր իշխանություն ստեղծի, և Փարիզի բանվորներն ստեղծեցին այդ. դա Կոմմունան էր»։

Մարքսի աչքում Կոմմունան մինչև օրս գոյություն ունեցող բուրժուական պետության բոլոր ձևերի ժխտումն էր. նա ճնշվածի դիկտատուրայի ձևն էր՝ ճնշողի հանդեպ...

Իր մասնավոր նամակներից մեկում Մարքսը խոնարհվում էր կոմմունարների հերոսության, նրանց ճկունության և ինքնազոհության առաջ։ Ընդունելով Կոմմունայի կատարած բոլոր սխալները, վոր կոմմունարների ապստամբությունը պրոլետարական կուսակցության («մեր կուսակցության»—գրում էր Մարքսը) փառահեղ քաջագործությունն է՝ հունիսյան հեղափոխության ժամանակից հետո։ «Կոմմունարների ապստամբության մոմենտից, գրում էր Մարքսը, բանվոր դասակարգի պայքարը կապիտալիստների և նրանց շահերը ներկայացնող պետության դեմ նոր փուլի մեջ է մտնում»։

Բայց վորքան էլ մեծ լիներ Փարիզյան Կոմմունայի նշանակությունը, այնուամենայնիվ նա ջարդ կրեց, ռեակցիայի ուժերը հաղթանակեցին, իսկ սա չէր կարող չազդել միջազգային բանվորական շարժման դրության և բանվորների միջազգային կազմակերպության վրա։

Յեվ իսկապես. Ֆրանսիան խեղդվեց բանվորների արյունով։ Պետական սարսափելի տեռորը չեղյալ դրության հասցրեց բանվորական շարժման անցյալում ձեռք բերած հաջողությունները։

Գերմանիայում հենց նոր ծնունդ առած սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդներ Լիբկնեխտն ու Բեբելը բանտարկվեցին՝ կոմմունարներին հայտնած համերաշխության համար։ Մայր ցամաքի պատերազմը թեպետ կողմնակի կերպով Անգլիային էլ դիպավ, սակայն անգլիական բանվորական շարժման վրա նրա ազդեցությունն այնքան էլ աննշան չեղավ։ Այս պատերազմը, վոր մայր ցամաքի յերկու տնտեսապես ամենազարգացած յերկրների պայքար էր, անգլիական բուրժուազիայի համար շատ շահավետ յեղավ։ Նա զրկվեց իր վտանգավոր մրցակիցներից և շուկայի կատարյալ տերը դարձավ։ Անգլիական ձեռնարկատերերի գրպաններն անհագին վաստակ էր թափվում. այդ բանը հնարավորություն էր տալիս նրանց՝ այդ վաստակից մի աննշան մասը հանել բանվոր դասակարգի վերնախավերին, այսինքն բանվորների այն շերտերին, վորոնք մտած էյին տրեդ-յունիոնների մեջ։ Հենց այդ ժամանակ էլ վոչնչացան շատ հին օրենքներ, վորոնք այդ տրեդ-յունիոնների գործունեյությունը ճնշում էյին։ Այս բոլորն ազդեց Ինտերնացիոնալում գտնվող բանվորական առաջնորդների տրամադրության վրա։ Նրանց աչքում Ինտերնացիոնալը կորցրեց իր նախկին նշանակությունը, վոր նրանց համար ամենից առաջ գործնական խնդիրներ վճռելում էր կայանում. ինչպես, որինակ, ձեռնարկատերերի դեմ ունեցած պայքարի ամենասուր մոմենտներում օտարյերկրա բանվորների ներխուժմանն արգելք հանդիսանալը։ Դեպի Փարիզյան Կոմմունան ունեցած իր հարաբերության մեջ Ինտերնացիոնալի յերևան բերած ռադիկալիզմը վախեցնելով հեռացնում էր նրանից բանվորական շարժման չափավոր առաջնորդներին. իրենց կապերն ամբողջովին չխզելով Ինտերնացիոնալից, հետզհետե հեռանում էյին նրանից։

Ինտերնացիոնալի մյուս սեկցիաները քայքայվում, մաշվում էյին ներքին սարսափելի թշնամանքից. Կոմմունայի կրած պարտությունն ուժեղացնում էր Ինտերնացիոնալի մեջ յեղած կենտրոնաձիգ ուժերի գործունեյությունը, իսկ կրած պարտության շնորհիվ գազազած, ջղայնացած ու հուսահատված կոմմունար վտարանդիների ու փախստականների սեկցիաներից շատերում յերևալն ավելի ևս բորբոքում էր այդ թշնամանքն ու պայքարը, վոր սեկցիաների ներսում կար։

Մենք տեսանք, թե Կոմմունայի գործունեյությունից Մարքսն ինչ յեզրակացություններ էր անում։ Իսկ Բակունինի հետևողները Մարքսի յեզրակացություններից բոլորովին տարբեր յեզրակացություններ էյին անում։ Կոմմունայի ապստամբության հետ կապված անցքերն ավելի ևս խորացրին այն թշնամանքը, վոր տածում էյին դեպի ամեն տեսակ քաղաքական գործունեյություն։

* Կառավարությունն ու Ազգային Խորհուրդը գտնվում էյին Վերսալում Փարիզի մոտ, վորտեղից կռվում էյին ապստամբների դեմ։

Նրանք Կոմմունան իրենց խռովարարական ու անիշխանական հայացքների արտահայտիչն էին համարում, և Բակունինը քարոզում էր նրան հետևելու անհրաժեշտությունը՝ զանազան քաղաքներում կոմմունաներ ստեղծելով:

«Յես Փարիզյան Կոմմունայի կողմնակից եմ, գրում էր Բակունինը և այդ՝ հատկապես նրա համար, որ համարձակ էր և շատ պարզ կերպով ժխտում էր պետությունը»:

Դրությունը նրանով ևս սրվեց, որ ռազմական անցքերի հետևանքով Ինտերնացիոնալի հերթական կոնգրեսը ժամանակին չհրավիրվեց: Նրա փոխարեն 1871 թ. սեպտեմբերին Լոնդոնում կոնֆերանս հրավիրվեց: Նրա քննությանը յենթակա ամենագլխավոր հարցը Ինտերնացիոնալում հասունացող պառակտման խնդիրն էր: Քանի որ բակունինիստների հետ ունեցած տարաձայնության հիմնական կետը քաղաքական կռվի հարցն էր, կոնֆերենցիան այդ խնդրի նկատմամբ պարտավոր էր իր վերաբերմունքն արտահայտել:

Գլխավոր Խորհրդի և Մարքսի դեմ ունեցած իրենց պայքարում բակունինիստները մեղադրում էին Մարքսին՝ Ինտերնացիոնալի ծրագիրը կեղծելում: Այս մեղադրանքին հիմք ծառայում էր այն հանգամանքը, որ քաղաքական պայքարի մասին յեղած հայտնի կետում, ֆրանսերենի թարգմանելիս, նապոլեոնյան ոստիկանության խստություններից խուսափելու համար՝ բաց էին թողնված «որպես միջոց» բառերը: Այս պատճառով կոնֆերանսի ընդունած բանաձևը պարզ կերպով ընդգծում էր քաղաքական պայքարի նշանակությունը պրոլետարիատի համար: «Ուշադրության առնելով, ասում էր այդ բանաձևը,—անսանձ ռեակցիան, որ բռնությամբ ճնշում է բանվորների ազատագրական շարժումը և բիրտ ուժով ցանկանում է պահպանել դասակարգերի բաժանված լինելու վիճակը և դրանից բղխող տիրապետությունըն ունևոր դասերի, որ պրոլետարիատն անհրաժեշտորեն քաղաքական կուսակցություն պիտի կազմի, որպեսզի կարողանա ապահովել սոցիալական հեղափոխության հաղթանակն ու նրա վերջնական նպատակը—դասակարգերի վոչնչացումը, որ տնտեսական պայքարի միջոցով արդեն ձեռք է բերված բանվորական ուժերի միացումը և այս հանգամանքը բանվոր դասակարգի ձեռքում մի հզոր լծակ պիտի դառնա շահագործողների քաղաքական տիրապետության դեմ մղված պայքարում, կոնֆերենցիան հիշեցնում է Ինտերնացիոնալի բոլոր անդամներին, որ բանվոր դասակարգի մարտական պլանում նրա տնտեսական շարժումն ու քաղաքական գործունեությունն իրար հետ միացած են անքակտելի կերպով»:



Մենք հիշում ենք, որ Բակունինն իր ժամանակին համաձայնեց ցրել իր միությունը և միայն այդ պայմանով էր, որ այդ միության սեկցիաներն ընդունվեցին Ինտերնացիոնալի մեջ: Այժմ Գլխավոր Խորհրդի համար ավելի ու ավելի պարզվեց, որ ինքը զոհ է դարձել Բակունինի խաբեբա քաղաքականության: Ըստ յերևույթին միությունը շարունակել է գոյություն ունենալ նաև Ինտերնացիոնալում՝ որպես անլեգալ կազմակերպություն, նպատակ ունենալով ներսից պայթեցնել Ինտերնացիոնալը: Այս պատճառով կոնֆերանսը մի բանաձև ընդունեց, որով Ինտերնացիոնալի ներսում ուրիշ կազմակերպությունների գոյությունն արգելվում էր:

Բակունինիստներն իրենց պարտված չճանաչեցին: Կոնֆերանսից հետո Ինտերնացիոնալի սեկցիաների մեջ կռիվը նոր ուժով բորբոքվեց: Բակունինի կողմնակիցներն այլ ևս չէյին թաքնվում. Գլխավոր Խորհրդի դեմ իսկական կռիվ սկսեցին՝ մեղադրելով նրան կոնֆերանսի կազմը կեղծ կերպով դասավորելում: Շուտով էլ այն սեկցիաների համագումար հրավիրվեց, որոնք համակարծիք էին բակունինիստներին:

Այդ համագումարում անիշխանական սեկցիաների ֆեդերացիա ստեղծվեց: Այս նոր «Յուրյան ֆեդերացիան» դիմեց Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներին մի կոչով, որի մեջ ասված էր Գլխավոր Խորհրդի անբարոյականացման մասին, որ արդյունք էր նրա անդամների իշխանության գլխին յերկար մնալու. ասված էր նաև, թե ինչպես այդ Խորհրդի անդամներն անվերջ փաթաթում են մի քանի գաղափարներ՝ որպես միակ ուղիղ միջոց. սակայն իրականում դրանք միայն մի փոքրիկ խմբակի հայացքներ են: Կոչը մեղադրում էր Գլխավոր Խորհրդի անդամներին՝ Ինտերնացիոնալը հիյերարխիական մի մարմին դարձնելու ցանկության մեջ և հայտարարում էր, թե այդպիսի նկատաումների դեմ պայքարելն իրենց պարտքն են համարում:

Բակունինն ու իր կողմնակիցներն այս կոչն Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներին ուղարկելով, միաժամանակ բոլոր հառավային յերկրներում կատաղի ագիտացիա սկսեցին Գլխավոր Խորհրդի դեմ: Այս ագիտացիան Ինտերնացիոնալի միասնականության համար՝ ինչպես հարավային ռոմանական յերկրներում, նույնպես և Բելգիայում շատ ցավալի արդյունք տվավ:

Ինտերնացիոնալի առաջիկա կոնգրեսն այս տարաձայնություններում վճռական դեր պիտի խաղար: Յերկու հակառակորդներն էլ յեռանդով պատրաստվում էին: «Խնդիրն Ինտերնացիոնալի մահին ու կյանքին էր վերաբերում». այս առթիվ գրում

էր Մարքսը։ Թե որքան մեծ նշանակություն էր տալիս նա այդ կոնգրեսին, երևում է նրանից, որ անձամբ ներկա եղավ կոնգրեսին և նրա աշխատանքներին մասնակցեց։

Կոնգրեսը ժողովվեց Հաագայում 1872 թվին։ Ներկա էին 65 պատգամավորներ։ Եվրոպական երկրներից բացի՝ ներկայացուցիչներ ունեին նաև Ավստրալիան և Ամերիկան։ Կոնգրեսի մասնակցողները հենց սկզբից բաժանվեցին մեծամասնականների —Գլխավոր Խորհրդի տեսակետի վրա կանգնածներ և բակունիստական փոքրամասնականներ։

Կոնգրեսը հաստատեց պրոլետարիատի քաղաքական կռվին մասնակցելու անհրաժեշտությունը։ Հակառակ բակունիստների, որ սեկցիաների կատարյալ ավտոնոմ լինելն էր պնդում, կոնգրեսը լիազորեց Գլխավոր Խորհրդին՝ կոնգրեսների միջև եղած ժամանակամիջոցում դադարեցնել ո՛չ միայն առանձին սեկցիաների, այլ և ամբողջ ֆեդերացիաների աշխատանքը։ Եվ վերջապես հատուկ հանձնաժողովի զեկուցումից հետո, որ քննել էր բակունիստական միության և իրեն Բակունինի գործունեության հարցը, կոնգրեսը վորոշեց Ինտերնացիոնալից վտարել ինչպես Բակունինին, նույնպես և նրա մի քանի կողմնակիցներին՝ Հիլյեմի գլխավորությամբ։

Եվ այսպես՝ այս կոնգրեսում հաղթանակը մնաց Գլխավոր Խորհրդի կողմը, սակայն դա խիկապես պիրրի հաղթանակ էր։ Այն մեծամասնությունը, որ ունեցան կոնգրեսում Գլխավոր Խորհրդի և Մարքսի կողմնակիցները, բնավ չէին արտահայտում այն երկրների աշխատավորության տրամադրությունները, ուր տարածված էր Ինտերնացիոնալի ազդեցությունը։ Այսպես օրինակ, Գլխավոր Խորհրդի կողմն էին ֆրանսիական վտարանդիների ներկայացուցիչները, սակայն նրանք ֆրանսիական բանվորական շարժումը չէին ներկայացնում, վորից կտրված էին, այլ միայն՝ իրենք իրենց։ Բոլոր հարավային երկրները, Բելգիան և Շվեյցարիան ամբողջովին բակունիստներին էին կողմնակից։ Անգլիական տրեդ-յունիոնիստները և նրանց առաջնորդներն ավելի ու ավելի էին գլորվում դեպի համաձայնողականությունը՝ խզելով կապն Ինտերնացիոնալից։ Բավական է մատնանշել, որ անգլիացիներից վոմանք Բակունինին էին պաշտպանում, համակիր լինելով առանձին սեկցիաների ավտոնոմ լինելու քարոզին։

Մարքսը հասկանում էր, որ Ինտերնացիոնալի դերը վորոշ չափով վերջացած է, բայց նա յենթադրում էր, որ նրան՝ այսպես ասած, պատվով պետք թաղել, և խլել բակունիստների ձեռ-



քից, միաժամանակ չձգել նրան ո՛չ անգլիական համաձայնողականների ձեռքը, ո՛չ էլ ուլտրա-հեղափոխական բլանկիստների, վորոնք Լոնդոնի վտարանդիների շրջանում ազդեցիկ էին։ Հենց այս նկատառումներից էլ յելնելով, Մարքսը կոնգրեսին առաջարկեց՝ վորոշում կայացնել Գլխավոր Խորհուրդը Նյու-Յորք տեղափոխելու մասին։ Մարքսի առաջարկն ուժեղ պայքարից հետո՝ ընդունվեց։ Այս վճռից հետո բլանկիստները դեմոնստրատիվ կերպով թողին կոնգրեսը, հայտնելով, որ դրանով Ինտերնացիոնալի խորտակումը տեղի ունեցավ։

Ըստ էության բլանկիստներն իրավացի էին և Ինտերնացիոնալը Նյու-Յորկ տեղափոխելուց հետո՝ նրա պատմությունն էլ վերջացավ։ Ճիշտ է, ձևականորեն նա յերկու տարի յել շարունակեց գոյություն ունենալ, բայց այդ գոյությունը միայն առերևույթ էր։

Ուստի 1874 թվին Ֆիլադելֆիայում կայացած Ինտերնացիոնալի կոնգրեսը՝ բացառապես ամերիկակ‥ն ֆեդերացիաների ներկայացուցիչներից բաղկացած, Ինտերնացիոնալը ցրելու բանաձև ընդունեց։ «Մենք ցրեցինք Ինտերնացիոնալի կազմակերպությունն,—ասված էր այս կոնգրեսի հրապարակած կոչում, ցրեցինք այնպիսի պատճառներով, վորոնք Եվրոպայի ժամանակակից քաղաքական դրությունից էր բղխում։ Բայց փոխարենը տեսնում ենք, թե ինչպես ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջավոր բանվորներն ընդունում ու պաշտպանում են կազմակերպության սկզբունքները։

Մեր ընկեր յեվրոպացի բանվորներին մի փոքր ժամանակ տանք՝ իրենց ազգային կազմակերպություններն ուժեղացնելու. և անկասկած շատ շուտով նրանք կկարողանան խորտակել այն պատնեշը, որ բաժանում է նրանց աշխարհի մյուսի մասի բանվորներից»։

Հաագայի կոնգրեսից հետո Բակունինի հետևողներն իրենց սեփական միջազգային կազմակերպությունն ստեղծեցին, վորի հիմքում դրված էր «բանվորական ֆեդերացիաների և սեկցիաների ավտոնոմիաներ և ինքնուրույնություններ» սկզբունքը։ Այս կազմակերպության գործունեությունը ղեկավարվում էր այն կանոններով, թե «ամեն տեսակ քաղաքական իշխանության վոչնչացում պրոլետարիատի առաջին պարտականությունն է. իսկ ժամանակավոր հեղափոխական իշխանություն կազմակերպելու ամեն տեսակ փորձ միայն խաբեբայություն է»։

Այս կազմակերպությունը մարքսիստական Ինտերնացիոնալից թեպետ ավելի փոթորկոտ, սակայն նրանից քիչ ավելի յեր-

կար պատմություն ունեցավ։ Նրա վերջին կոնգրեսը Վերվիե կոնգրեսն եր՝ 1877 թվին։

Ինչպես արդեն ասել ենք, Հաագայի կոնգրեսը I Ինտերնացիոնալի գործունեության վերջը կարելի յե համարել։ Մեր առաջ ծառանում ե բանվոր դասակարգի առաջին միջազգային կազմակերպության կործանման պատճառների հարցը։ Վերն արդեն ասել ենք, վոր I Ինտերնացիոնալը 60-ական թվականների զավակն եր, վորի համար բնորոշ են միանգամայն վորոշ քաղաքական ու տնտեսական պայմաններ։ Ամենից առաջ դա ավարտն եր բուրժուական հեղափոխությունների շրջանի։ Հետագայում ցույց ենք տվել, վոր հենց այս շրջանն ել արդյունաբերական հեղաշրջման ժամանակն եր շատ այնպիսի յերկրների համար, վորոնք իրենց զարգացմամբ յետ եյին մնացել։ Ինչ վերաբերում ե Անգլիային, պիտի ասենք, վոր 60-ական թվականները բանվոր դասի քաղաքական շահերի աշխուժացման, քաղաքական պայքարի և բանվորական կազմակերպությունների ապահովության համար մղված պայքարի տարիներ եյին։

Յերբ վորակյալ բանվորները, վորոնք մասսան եյին անգլիական տրեդ-յունիոնների անդամների, հետևաբար՝ Ինտերնացիոնալի անգլիական սեկցիայի, ձեռք բերին՝ ինչ վոր իրենց պետք եր՝ իրենց տրեդ-յունիոններն ապահովող ընտրական իրավունք և որենքներն, այնուհետև սկսեցին սառչել Ինտերնացիոնալից, վորը, Փարիզյան Կոմմունային ցույց տված պաշտպանության շնորհիվ, նրանց աչքում չափազանց հեղափոխական եր համարվում։

Ինչ վերաբերում ե Ֆրանսիային, ուր Ինտերնացիոնալի անդամների մասսան, ինչպես և Անգլիայում, վորակյալ բանվորներն եյին, պիտի ասել, վոր Փարիզյան Կոմմունայի կործանմանը հաջորդած արյունոտ խժդժությունները յերկար ժամանակով անկարելի եյին դարձնում բանվորական շարժման վորևե վերածնունդ։ Իսկ նորածիլ կապիտալիզմի յերկրներում, վորտեղ Ինտերնացիոնալը նորակազմ պրոլետարիատի մասսաների կազմակերպություն եր հանդիսանում, այն պրոլետարիատի, վորի կազմվելն արդյունք եր՝ նրա ամբողջական ստորադաս վիճակի հուսահատության դուռը հասած մանր բուրժուի իդեոլոգիայից և հոգեբանությունից, բակունիստներն եյին Ինտերնացիոնալը կործանողները, վոր հեղինակություն եյին վայելում։ Սակայն համաշխարհային բանվորական շարժման մեջ բակունիզմը միայն մի եպիզոդ եր. կապիտալիստական հարաբերությունների հետագա ամրապնդումը նրան արագ կորստյան դատապարտեց և նո-



րից հնարավորություն ստեղծեց, վոր բանվորական մասսաները դառնան դեպի իսկական բանվորական թեորիան—մարքսիզմը։

Այսպես վերջացրեց իր գոյությունը բանվոր դասակարգի առաջին միջազգային կազմակերպությունը։ Ութ տարի գոյություն ունենալով, նա կատարեց իր պարտքը՝ փոխարինել զանազան յերկրներում դեռ ևս գոյություն չունեցող բանվորական կուսակցությունների և այդ կուսակցությունների առաջ գալու համար հնարավորություն ստեղծել։ Այս եր պատմական իմաստը Բանվորների Միջազգային Ընկերության գոյության։

Իր նամակներից մեկում Ինտերնացիոնալի գնահատականը տալով, Մարքսը գրում ե. «Ինտերնացիոնալը հիմնվեց, վորպեսզի սոցիալիստական և կիսասոցիալիստական աղանդները փոխարինի բանվոր դասակարգի իսկական կազմակերպությամբ՝ նրա պայքարի համար»։ Իսկ Ենգելսն ի մի գումարելով Ինտերնացիոնալի գործունեությունը, գրում եր. «Նա (Ինտերնացիոնալը) պատկանում եր յերկրորդ կայսրության շրջանին, յերբ նոր արթնացած բանվորական շարժման ամբողջ Յեվրոպայում հետապնդման յենթակա լինելը թելադրում եր պրոլետարիատի համերաշխությունը և նրա միջամտությունը՝ ներքին քաղաքականությանը։ Դա մի վայրկյան եր, յերբ պրոլետարիատի ընդհանուր կոսմոպոլիտական շահերն առաջին գծի վրա եյին դրված. յերբ Գերմանիան, Իսպանիան, Իտալիան և Դանիան նոր եյին մտել, կամ նոր եյին շարժման մեջ մտնում…»։

Հին Ինտերնացիոնալն իր ժամանակն անց եր կացրել։ Իսկ հնի որինակով նոր տիպի կազմակերպությունը, այսինքն աշխարհի բոլոր պրոլետարական կուսակցությունների կազմակերպությունը բանվորական շարժման նկատմամբ միահամուռ հալածանք եր յենթադրել տալիս, ինչպես 1849—64 թվականներին եր։ Սակայն ժամանակակից բանվորական աշխարհի համար այլ ևս վոչ մի հալածանք սարսափելի չե։ Յես կարծում եմ, վոր հաջորդ Ինտերնացիոնալը, յերբ Մարքսի ուսմունքը մի քանի տարվա ընթացքում յուրացված կլինի՝ զուտ կոմմունիստական ե լինելու»։

Ենգելսի խոսքերը, գրված սրանից 50 տարի առաջ, մարգարեական են հանդիսանում։ Իսկապես Մարքսի ստեղծած I Ինտերնացիոնալի ռազմական և կոմմունիստական լոզունգների ժառանգը, ժառանգն այն ամեն արժեքավորի և լավագույնի, վոր գլուխ բերավ այդ Ինտերնացիոնալը, հանդիսանում ե III Կոմմունիստական Ինտերնացիոնալը։

## VII

# ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԱ

## I

Իր տեղում մենք ծանոթացանք այն պայմանների հետ, վորոնցում Ֆրանսիան դարձավ միապետություն, այսինքն Նապոլեոն III կայսրությունն առաջ յեկավ։ Բուրժուազիան իր սեփականությունը և գյուղացիությունն իր հողի պատառը կորցնելու վախից գահ բարձրացրին Նապոլեոնին. սա յել ցանկանալով ապադասակարգային միապետ դառնալ, իր կառավարության ժամանակ ամեն ջանք գործ եր դնում հենվել հասարակության ամենաայլազան խավերի վրա։ Բայց իրոք՝ Նապոլեոն III կառավարությունը կողոպտիչ ֆինանսական բուրժուազիայի շահերն եր ներկայացնում, այն բախտախնդիր բուրժուազիայի, վոր հարստանալու համար ամեն տեսակ արտա-տնտեսական միջոց եր գործ դնում. այն բուրժուազիայի, վոր իր գործարքներն իրականացնելու համար քաղաքական իշխանության կապերի կարիքն եր զգում։ Կապիտալիզմի շրջանում այս բուրժուազիան շարունակում եր «նախնական կուտակման» մեթոդներ կիրառել։

Փաստ ե, վոր Նապոլեոնի մտցրած սահմանադրությունը, վոր Նապոլեոն I սահմանադրության մի փոքրիկ կտորն եր, յերկրի քաղաքական կյանքը զերոյի հավասարեցրեց, վարչական կամայականությունն սպանեց ամեն տեսակ քաղաքական ազատություն։ Սակայն բուրժուազիան իրեն վարձատրեց տնտեսական բարգավաճումով։ Նապոլեոն III կառավարության ժամանած Ֆրանսիան տնտեսապես շատ առաջ գնաց։ Կապիտալի աճումն ու կենտրոնացումն՝ անցյալ շրջանի հետ համեմատած, զարգացման բարձր աստիճանի հասան։ 1851—1869 թվականներին Ֆրանսիայի հարստությունը կրկնապատկվեց։ Ֆրանսիայի 1866 թվի առևտրական շրջանառությունը հինգ անգամ ավելի յեր 1848 թվի



շրջանառությունից։ Շոգեշարժիչներ ունեցող ձեռնարկությունների թիվը 1840 թ. 3200 եր, 1852-ին՝ 6500, 1862-ին՝ 15,000, իսկ 1870-ին՝ 23,400։ 1840 թ. ձեռք եր բերված 3,000,000 տոնն քարածուխ։ 1862-ին՝ 10,000,000 տոնն, յերկաթ — 1840-ին՝ 245,000 տոնն, 1862-ին՝ 781,000 տոնն։

Կապիտալիզմի այս աճմանը, ինչպես արդեն ցույց ենք տվել, կապիտալի աչքի ընկնող խտացում եր համընթաց։ Ֆրանսիական բանկն աստիճանաբար կլանում եր բոլոր դեպարտամենտային բանկերը. հողային վարկի յերեք գլխավոր ընկերությունները ի մի ձուլվեցին, յերկաթուղային ցանցը, վոր ութ և կես անգամ աճել եր (1850 թ. 2000 կիլոմետր, 1870-ին 17,000 կիլոմետր), անցավ ընդամենը 10 ընկերությունների ձեռք— նախկին 42-ի փոխարեն։ Ընդհանրապես 1869 թվին բոլոր խոշոր ֆինանսական հիմնարկությունները և արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում եյին ընդամենը 180 հոգու, 20 միլլիարդ դրամագլխով։

Ֆինանսական սպեկուլյացիայի փարթամ, բայց թունոտ ծաղիկը բացվում եր զարմանալի փայլով։ Դեռ Ազգային ժողովի ժամանակ բորսային մասնագետ Ֆուլդան, կառավարելով ֆինանսական նախարարության գործերը, նպաստում եր ֆինանսական սպեկուլյացիայի (ажиотаж) զարգացմանը։ Այժմ ֆինանսական ձեռնարկություն դարձած արտաքին փայլի, զանազան ավանտյուրաների և պատերազմների քաղաքականությունն արտասովոր կերպով եր նպաստում ֆինանսական սպեկուլյացիայի զարգացմանը։ Անթիվ ֆինանսական ընկերություններն ու փայատիրական բանկեր եյին հիմնվում։

Բորսային խաղը խելառության եր հասնում, «վաստակի և սպեկուլյացիայի անհանգիստ վոգին տենդային արագությամբ ծավալվում եր ամենուրեք»։ Ինքը, պետության գլուխը—կայսրը վոսկե ձողերի վիճակախաղ սարքեց. հասարակությունը, վրա ընկած, 7 միլլիոն տոմսակ գնեց. հետագայում պարզվեց, վոր կեղծ տոմսեր են յեղել բաց թողնված։ Բորսային մասնագետները, փայատիրական ձեռնարկությունների տերերը, դրության տերն եյին։ Նրանք մասնակցում եյին բարձր պետական հիմնարկությունների նիստերին, նրանց պատճառով պատերազմներ եյին հայտարարվում, նրանց պաշտպանում եր կառավարությունը, նրանք ուղածին պես վարվում եյին մամուլի հետ՝ դարձնելով նրան իրենց պրեյս-կուրանտն ու ռեկլամը։

Ավելի վողբերգական եր մանր բուրժուազիայի վիճակը։ Մեքենային տեխնիկայի զարգացումը, կապիտալի խտացումը

մահացու կերպով ազդեցին մանր բուրժուազիայի դրության վրա։ Նրանք տանջվում եին ժամկետավոր պարտքերից, տառապում եին բորսային արժեքների հարատև տատանումներից, նրանք ավերվում ու ավելի անհուսալի կերպով եին խճճվում վաշխառուների և ֆինանսական տուզերի ձգած ամուր վոստայններում։

Սակայն մանր բուրժուազիան դեռ շատ եր բազմաթիվ՝ մանավանդ Փարիզում։ Նոր խոշոր արդյունաբերությունը հող եր գտնում գլխավորապես Ֆրանսիայի հյուսիս-արևելյան մասում։

Ճիշտ ե, Փարիզում ել եին ֆաբրիկաներ ու յերկաթուղային արհեստանոցներ բուսնում, սակայն նրանց պրոլետարիատը, վոր Փարիզի աշխատավոր ազգաբնակության միայն մեկ իններորդ մասն եր, համարյա ամբողջովին լուծվում եր գեղարվեստական արդյունաբերության և նրբին մանրունքներ պատրաստող արհեստավորների զանգվածում։

Բայց կապիտալի արհեստի այս ամրության վրա յել եր հաջող գրոհ գնում, արհեստավորներին նվազագույն ինքնուրույնություն թողնելով։ Կապիտալի ազդեցության տակ արհեստավորը խոշոր խանութի կամ տեր-գործատվի ստրուկն եր դառնում։

Բանվորը՝ թողնված տերերի կամայականությանը—զրկված միություններ կազմելու իրավունքից, գաղափար չունենալով աշխատանքի պաշտպանության մասին—անյերևակայելի տառապանքի յեր յենթակա։

Շարունակ տատանվող, մի դասակարգից մյուսին անցնող քաղաքականություն վարող կառավարությունը վերջերն սկսել եր բանվորներին ու արհեստավորներին սիրաշահել։ Այսպիսով նա ուզում եր ոգտագործել նրանց՝ բուրժուազիայի ոպպոզիցիոն շերտերի դեմ։ Մերթ կայսրն եր 500 ֆրանկ նվիրում բանվորական կոոպերացիային, մերթ կառավարությունն եր բանվորական փոխօգնության ընկերություն կազմակերպում, ընկերություններ, վորոնք գտնվում եին կայսերական գեներալների, կղերի ու ձեռնարկատերերի հովանավորության տակ։ Վերջապես 1864 թվին կառավարությունը վճռեց վերացնել Լե-Շապելյեի որենքը և թույլատրել բանվորական կազմակերպությունները։ Բայց բանվորական միություններ թույլատրելը և սինդիկալ պալատներ (արհեստակցական կազմակերպություններ) ստեղծելը, վոր տեղի ունեցավ 1868 թվին, չեր խանգարում կառավարությանը՝ գործադուլների ժամանակ հրացանի կապել բանվորներին և բանտարկել նրանց առաջնորդներին։ Սա ապացույց, եր վոր բանվորներին վոստիկանական ռեժիմում տված ազատությունները



դատարկ խոսքեր են միայն։ Գործադուլային շարժումն առաջ յեկավ պրոլետարիատի նյութական ծանր պայմանների շնորհիվ։ Թեպետ կայսրության որով բանվորի աշխատավարձը նույնիսկ ավելացավ, բայց խոշոր կենտրոններում ուտելեղենի արժեքը և բնակարանների վարձն ավելի ևս բարձրացավ։ Յեթե կայսրության գոյության ժամանակ աշխատավարձն ավելացավ 10—40 տոկոսով, դրա փոխարեն գյուղատնտեսական մթերքների գները բարձրացան 67 տոկոսով, իսկ բնակարանների վարձը՝ 70 տոկոսով։ Բանվորական որը լավագույն դեպքում 12 ժամ եր տևում, կնոջ աշխատանքի շնորհիվ վտարվում եր տղամարդու աշխատանքը. «Ծայրահեղ շահագործումը և ծանր աշխատավարձը այլասերեցին բանվոր դասակարգը և ծավալ տվին անառակությանը, պրոլետարի ընտանիքն ավերվում եր»։ «Խոստովանում եմ—գրում եր բանվորների դրության մասին մի բուրժուական գիտնական,—իրականությունն իմ բոլոր ամենամռայլ սպասածներից անցավ»։ Միանգամայն հասկանալի յե, վոր այսպիսի պայմաններում արհեստանոցների, գործարանների և ֆաբրիկաների հանգստությունը միայն արտաքուստ եր. հասկանալի յե նաև, վոր բանվորների դժգոհությունը նորից պիտի յերևար. ուստի 1848 թվին խեղդված բանվորական շարժումը 60-ական թվականներին նորից ե սկսում աշխուժանալ։ Կառավարությունն արտաքուստ սիրաշահելով բանվորներին և նրանց կազմակերպելով՝ թեպետ և իր հսկողության տակ, վորոշ չափով ինքն եր մեղավոր այդ աշխուժացման մեջ։ Պետք ե ասել, վոր Նապոլեոնյան ձգած կարթը միայն համեմատաբար անգիտակից բանվորներին վորսաց։

Վորպես բանվորական շարժման նոր ետապը բնորոշ փաստաթուղթ հանդիսանում ե «Վաթսունի Մանիֆեստը»։ Այդ մանիֆեստը յերևաց 1864 թվին, յերբ բանվորներն առաջին անգամ վորոշեցին ինքնուրույն կերպով թեկնածուներ դնել Որենսդիր ժողովի ընտրություններին։ Մանիֆեստն իրեն համար նպատակ ե դնում ապացուցել, վոր բանվորական ինքնուրույն թեկնածուներ դնելն որինական բան ե։ Մանիֆեստի կարծիքով՝ այն մարդիկ, «վորոնք իրենց ձեռքերից բացի ուրիշ սեփականություն չունեն», չնայած քաղաքական իրավունքների հավասարությանը, իրավազուրկ են, վորպես առանձին դասակարգ՝ իրենց շահերը պաշտպանելու կարիքն են զգում և այդ իրավունքների պաշտպանությունը չեն ուզում հավատալ բուրժուական հասարակապետականներին, վորովհետև «չեն ցանկանում բարերարվել, այլ կամենում են հավասար լինել»։

Ինչ վերաբերում էր դասակարգային կռվին և սոցիալական ռեֆորմներին, պիտի ասել, վոր մանիֆեստն այնտեղ շատ զգույշ է արտահայտվում և խաղաղ գործակցություն է քարոզում բուրժուազիայի հետ։ Առանց բանվոր դասակարգի աջակցության բուրժուազիան վոչ մի հաստատուն բան չի ստեղծել։ «Մեր ազատագրումն առանց նրա աջակցության յերկար տարիներ կարող է տևել», ասում են մանիֆեստի հեղինակները։ Նրանք աշխատում են հերքել, վորպես զրպարտություն, բանվորների կողմնակից լինելը կոմմունիզմին և ասում են—աշխատանքի ազատություն, վարկ, համերաշխություն—ահա իրենց յերազը»։

Ամբողջ մանիֆեստը կազմված էր Պրուդոնի ուժեղ ազդեցության տակ, վոր, ինչպես գիտենք, շարունակում էր մնալ կուռքն ավելի գիտակից բանվորների, վորոնք, ինչպես բանվորական շարժումների սկզբում միշտ լինում է, արհեստավորների միջավայրից էյին յելած։ Յեվ ազգաբնակության հենց այս խավերում էլ, մանր-բուրժուական հոգեբանություն ունեցող մարդկանց շրջանում, գլխավորապես խոշոր առևտրական կապիտալից շահագործված և դեռ ինքնուրույն փոքրիկ տերեր դառնալու հույսը չկորցրած արհեստավորների շրջանում էր, վոր պրուդոնիզմը մեծ ժողովրդականություն էր վայելում։ Պրուդոնիստների կամ մյուտյուելիստների հիմնական հայացքների հետ մենք արդեն ծանոթ ենք։ Գիտենք, վոր նրանք դեմ էյին արտահայտվում գործադուլներին, (մենք գործադուլն սկզբունքով ժխտում ենք, վորովհետև նրանք խելացի տնտեսական միջոց չենք համարվում—գրում էր նրանցից մեկը), ժխտում էյին քաղաքական պայքարը, թշնամաբար էյին վերաբերվում բանվորական կազմակերպություններում կանանց մասնակցությանը և, ինչպես տեսնում ենք «Վաթսունի Մանիֆեստից», ուզում էյին աշխատավորության դրությունը բարելավել կապիտալիստական հասարակության շրջանակներում՝ ժողովրդական բանկեր, կոոպերատիվներ հիմնելու միջոցով։

Բայց վորչափ ֆրանսիական բանվորական շարժման մեջ տիրապետող էյին պրուդոնիստներն, այնչափ էլ, ինչպես գիտենք, իրենց կնիքն էյին դնում I Ինտերնացիոնալի ֆրանսիական ֆեդերացիայի գործունեյության վրա։ Այս պատճառով Ինտերնացիոնալի ֆրանսիական ֆեդերացիան ֆրանսիական բանվորներին տանում էր Պրուդոնի գծած խաղաղ ճանապարհով—վարկի և կոոպերատիվների ճանապարհով։

Այս պատճառով Նապոլեոն III կառավարությունը զիջող էր դեպի Ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիաների գործունեյու-



թյունը և վերջինս ընթանում էր խաղաղ և համարյա բաց ու ազատ։ Բայց այն օրից, յերբ պրուդոնիստներն Ինտերնացիոնալի համագումարներում պարտություն պարտության հետևից կրեցին և Ինտերնացիոնալը հօգուտ բանվորական քաղաքական կռվի անհրաժեշտության արտահայտվեց, ֆրանսիական կառավարության վերաբերմունքը դեպի Ինտերնացիոնալի ֆեդերացիան սուր կերպով փոխվեց։ Այժմ ֆեդերացիայի գլխին հետապնդումների շարան է թափվում։ Յերկու դատավարություններ են հետևում մեկը մյուսին, վորոնք Ինտերնացիոնալի անդամների բանտարկությամբ են վերջանում։ Այս դատավարությունները միաժամանակ համարյա կործանեցին ֆրանսիական ֆեդերացիան. գոնե նրա ականավոր գործիչներից մեկը հայտարարեց III կոնգրեսում, թե «ֆրանսիական կազմակերպությունը» մեռավ։

Ֆրանսիական ինտերնացիոնալիստների նկատմամբ այսքան դաժան հարձակումն ամենից առաջ նրանով է բացատրվում, վոր ֆրանսիական կառավարությունը վախենում էր յերկրում հետըզհետե աճող բանվորական շարժումից։ Հենց 60-ական թվականների յերկրորդ կեսում էլ ազգաբնակության դժգոհությունը կառավարական ռեժիմից ու քաղաքականությունից ավելի ու ավելի յե աճում։ Այս անբավականությունը վորոշ շարժում է դառնում, վորը հետզհետե «մասսայական բնույթ է ստանում»։ «Սինդիկատային կամերաներն, արհեստավորական կազմակերպությունները կոոպերատիվային ընկերությունները, վորոնք մինչ այդ համարյա չեյին հետաքրքրվում Ինտերնացիոնալով—այժմ գործն իրենց ձեռքն են առնում և առանց նրան միանալու, գործում են նրա հետ մեկտեղ»։

Դրա հետ միասին սկսում են փոխվել նաև ֆրանսիական բանվորների հայացքները. նրանք թեքվում են դեպի աճող հեղափոխությունը։ Նրանցում Պրուդոնին հավասար ժողովրդականանալ են սկսում նաև ծերունի հեղափոխական Բլանկին ու Բակունինը։ Առաջինը կոմմունիզմին էր կողմնակից և դրան միանալու մեջ էր միայն տեսնում ազգաբնակության փրկությունը՝ սոցիալական անհավասարությունից և անարխիայից։ Բլանկին գտնում էր, վոր նոր հասարակակարգին կարելի յե անցնել միայն հեղափոխական հեղաշրջման, իշխանությունը գրավելու և անցողիկ շրջանում հեղափոխական փոքրամասնության կողմից կիրառվող դիկտատուրայի շնորհիվ։

Բանվորների պրուդոնիստորեն տրամադրված առաջնորդների և բլանկիստների մոտեցումը տեղի ունեցավ բանտում, ուր

առաջին անգամ ընկան՝ Ինտերնացիոնալը ցրելուց հետո։ Բակունինի և Բլանկիի ազդեցության տակ պրուդոնիստներն սկսեցին փոխել իրենց հայացքները և զգալի կերպով հակվել դեպի կոլեկտիվիզմը (այդպես եյին կոչվում այդ ժամանակ սոցիալիստական աշխարհայացքները)։

Բանվորների շրջանում տեղի ունեցած հեղափոխական շարժման աճման մասին արդեն խոսել ենք։ Վաթսունական թվականների վերջը հայտնի դարձավ արդյունաբերական ճգնաժամով, վոր բանվորների դրությունը վատթարացրեց։ Գործադուլներ սկսվեցին, վոր հարկադրված եյին պաշտպանել նույնիսկ պրուդոնիստները։ Նորից սկսեց աշխուժանալ Ինտերնացիոնալի աշխատանքը, վորի ժողովրդականությունը շարունակ մեծանում եր։ Սակայն նրա հաջողությունները այնքան էլ կայուն չեյին։ «Մենք հոգի յենք՝ առանց մարմնի», գրում եր նրանցից մեկը.—«մենք պիտի պատրաստ լինենք այդ որվա համար (հեղափոխության որվա), ասում եր մի ուրիշը,—յեթե չենք ուզում մի ավելորդ անգամ հիմարի դերում մնալ»։

Յեվ այդ որը մոտենում եր։ Նապոլեոն III կայսրությունը ճարճատում եր։ Կառավարությունը նախազգալով մոտալուտ անկումը՝ զիջումների գնաց ժողովրդի պահանջներին։ Այդ ժամանակ կառավարությունը հարկադրված յեղավ ոպոզիցիայի գրոհը և Որենսդիր Կորպուսում մամուլի հարձակումները տանել։

Բացի Որենսդրական Կորպուսի ոպոզիցիայի պարլամենտական ոպոզիցիայից, վոր միջին բուրժուազիայի զանազան խավերի շահերն եր մարմնացնում, բացի հեղափոխականորեն սոցիալիստորեն կամ պրուդոնիստորեն տրամադրված բանվորներից, գոյություն ուներ նաև իր վիճակից դժգոհ մանր բուրժուազիան։

Նրա ներկայացուցիչները կատաղի և վճռական հանրապետականներ եյին, վորոնք յերազում եյին ֆրանսիական հեղափոխության շրջանի մանր բուրժուազիայի վաղեմի վոսկե ժամանակների և Կոնվենտի դիկտատուրայի մասին։ Հաշվի չառնելով պայմանների տարբերությունը, այս հեղափոխական ռոմանտիկները մտածում եյին հարություն տալ այն հեղափոխության ձևերին, վոր կատարվել եր 80 տարի դրանից առաջ, ապրում եյին նրա մտքերով և խոսում եյին նրա լեզվով,—իրենց յակոբիններ յերևակայելով...։

Բայց կառավարությանը թշնամի հոսանքների մեջ վոչ համաձայնություն կար, վոչ էլ միություն։ Համաձայնություն չեյին յեկել՝ վոչ կռվի մեթոդների, վո՛չ էլ իրագործելու յենթակա խնդիրների մասին։ Վոչ մի կուսակցություն չկար, վոր իր վրա առներ շարժման ղեկավարությունը, նույնիսկ Ինտերնացիոնալի ֆեդերացիայում կարծիքների և հայացքների կատարյալ քաոս եր տիրում։ Նույնիսկ այն ամենակարևոր խնդրի շուրջը, թե տիրող իրավակարգին ինչպիսի՞ իրավակարգ պիտի փոխարինե, ամենատարբեր հայացքներ ու կարծիքներ եյին արտահայտվում։ Ինտերնացիոնալի ֆրանսիական ֆեդերացիայի ականավոր առաջնորդներից մեկն ինքն եր խոստովանում, թե ամբողջ կազմակերպությունը կատարելապես անպատրաստ ե հեղափոխական յելույթի համար։ «Մենք հասկացանք—գրում եր նա—մեր հեղափոխական անպատրաստությունը, մենք գտնում ենք, վոր մեզ դեռ մեկ, գուցե և յերկու տարվա ակտիվ պրոպագանդ ե պետք»։

II

Սակայն ֆրանսիական հեղափոխականներին այդքան ժամանակ չտրվեց։ Դեպքերը զարմանալի արագությամբ եյին հասունանում և մոտենում իրենց լուծմանը։ Նապոլեոնի կառավարությունն արտաքին քաղաքականության մեջ մի շարք ամենածանր անհաջողություններ կրեց։ Իր տատանվող գահը պահպանելու նպատակով Նապոլեոնը կռվի բռնվեց Պրուսիայի հետ։

Պատերազմը նրան անհրաժեշտ եր։ Նրա համար դա միակ միջոցն եր՝ Ֆրանսիան իր արքայատոհմի ձեռքում պահելու։ «Այս պատերազմն իմն ե, նա ինձ ե հարկավոր», ասում եր թագուհին, նրա կինը։ Նրա կարիքն ունեյին նաև բորսային սպեկուլյանտները, վորոնց կառավարությունն եր հանդիսանում կայսրությունը։ Նրանց կարծիքով բավական եր միայն «վեցշաբաթյա պատերազմական կամպանիա և կկենդանանար սպեկուլյացիան, վորով նրանք գոյություն ունեն»։ «Հարկադրված ենք անհաճո վայրկյաններ ապրել, ինչ վոր 50 հազար մարդ զոհաբերել, վորից հետո հորիզոնը կպարզվի և գործերը կվերսկսվեն»։

Պատերազմն անհրաժեշտ եր նաև Պրուսիային, վորովհետև Ֆրանսիային հաղթելով, նա իր ձեռքը կժողովեր ամբողջ Գերմանիան, վոր ինչպես գիտենք, 1848 թ. բուրժուական հեղափոխությունից հետո մնում եր առաջվա նման բաժան-բաժան։

Բայց կայսրության համար պատերազմը ճակատագրական յեղավ։ Ինչպես պարզվեց, ինքը կայսրությունը, չնայած իր յերևութական հզորությանը, լոկ թղթի տնակ եր, վոր պրուսական զրահապատ բռունցքի հենց առաջին հարվածից ընկավ։ Շարունակ զենքով սպառնացող այս պետությունը բոլորովին անպատրաստ դուրս յեկավ այն պատերազմի համար, վոր ինքն եր հրա-

հրել։ Ինքը կայսրը յոթանասուն հազար զորքով շրջապատվեց, փակվեց ու հետո յել գերի ընկավ պրուսացիների ձեռքը։

Կայսրի գերվելու լուրը Փարիզում հեղաշրջում առաջ բերեց։ Կայսերական տոհմը տապալվեց, և Ֆրանսիան յերրորդ անգամ հանրապետություն հայտարարվեց։ Բայց դարձյալ, ինչպես և 1848 թվին, նա բուրժուական հանրապետություն դարձավ։ Իշխանության գլուխ անցավ Որենսդիր Կորպուսի բուրժուական չափավոր ոպոզիցիան։ Նախկին խոստումներից ուժահատ յեղած բանվորներն ու հեղափոխական կազմակերպությունները չկարողացան գործի խառնվել։ Ինտերնացիոնալի ֆեդերացիան նոր եր ջարդվել յերրորդ դատական պրոցեսով, բլանկիստները հեղաշրջման վերջին անհաջող փորձից հետո կազմալուծված եյին. իսկ այդ փորձը հազիվ կես ամիս առաջ եր պարտվել։ Հեղափոխականների անպատրաստ լինելն այնքան մեծ եր, որ նրանցից մեկը, հենց որ հեղաշրջման լուրն առավ, բացականչեց. «մենք կորանք...»։

Հեղաշրջումը դարձյալ բուրժուազիայի ներկայացուցիչներին իշխանության տիրացրեց. այն բուրժուազիային, որ վախենում եր մասսաներից, թշնամի յեր մասսաներին և կատաղի թշնամի յեր սոցիալիզմին։ Նույն իսկ նոր ժամանակավոր կառավարության ամենաարմատական անդամ Գամբետտան այնպիսի հանրապետություն եր քարոզում, որ «համընթաց լիներ զբրկվածների դրության բարելավման և բարոյականության բարձրացման հետ, առանց վնասելու հարստություն և զարգացում ունեցողներին»։

Այժմ այս մարդկանց բաժին ընկավ փրկել Ֆրանսիան՝ դեպի նրա կենտրոն Փարիզն անընկճելի կերպով արշավող թշնամուց։ Փարիզը շուտով պաշարվեց պրուսացիների կողմից։ Նոր կառավարությունն «ազգային պաշտպանության կառավարություն» մեծագործ կոչումն առավ իր վրա, բայց այդ պաշտպանության գործում միայն անունով ել բավականացավ, որովհետև թշնամու հետ կռվելու ամենափոքր ցանկությունն անգամ չուներ։

Հարկ զգացվեց պաշարված Փարիզում զինել բանվորներին ու արհեստավորներին և մտցնել ազգային գվարդիայի մեջ։ Բանվորական այս յերկու հարյուրհազարանոց բանակը նոր կառավարության համար ավելի յեր սարսափելի, քան պրուսական զորքը։ Միայն այս պրոլետարական-արհեստավորական բանակի ոգնությամբ կարելի յեր հաղթել թշնամուն, սակայն այդպիսի հաղթանակը բուրժուազիայի համար մասսաների, հեղափոխության



հաղթանակ եր նշանակում։ Այս պատճառով ել «ազգային պաշտպանության կառավարությունը» դարձավ «ազգային դավաճանության կառավարություն»։ Փարիզցիներին սիրաշահելով «վո՛չ մի թիզ հող, մեր ամրություններից վո՛չ մի քար՝ թշնամուն» բարձրագոչ լոզունգներով, նա պրուսացիների հետ գաղտնի բանակցություն եր վարում. բավական չեր այդ, դեռ ազգային գվարդիան ել պարտությունների յեր ուղարկում։

Նոր կառավարությունն ուզում եր այս պարտություններով թուլացնել պրոլետարական բանակը և զսպել նրան։ Յեթե մեծ ճակատամարտում--ասում եր ժամանակավոր կառավարության անդամ Տրոշյուն—20 հազար մարդ ընկնի, Փարիզն անձնատուր կլինի. ազգային գվարդիան միայն այն ժամանակ կհամաձայնի հաշտվել, յերբ առնվազն տասն հազար մարդ կկորցնի»։

Յերեք անգամ «ազգային պաշտպանության կառավարությունը» տապալելու փորձ յեղավ, բայց յերեք անգամն ել անհաջող։ Յերրորդ փորձի պատճառը Փարիզում ստացված այն տեղեկությունն եր, թե մարշալ Բազենը մեծ բանակով անձնատուր ե յեղել։ Այս գեներալը, որ բոնապարտիստ եր, չցանկացավ հանրապետությունը պաշտպանել, անձնատուր յեղավ թշնամուն։ Յերրորդ փորձը տեղի ունեցավ 1871 թվի հունվարին՝ ազգային գվարդիայի այն անհաջող գրոհից (вылазка) հետո, որ կազմակերպեց հրամանատարությունը՝ գեներալ Տրոշյունի դեղատոմսով՝ գվարդիային պարտության մատնելու համար։

Այս բոլոր անհաջող հեղափոխական փորձերի ժամանակ կարիք եր զգացվում մի այնպիսի կազմակերպության, որ կարողանար ղեկավարել մասսաները, աշխատանք տաներ նրանց մեջ և վայելեր նրանց վստահությունը։ Բացի դրանից՝ ապստամբները պիտի վերացնեյին իրենց դրության մի քանի հակասությունները։ Ապստամբությունները տեղի եյին ունենում թշնամու հետ ամենալարված կռվի հայրենասիրական լոզունգով և միաժամանակ խախտելով քաղաքացիական խաղաղությունը. այդ ապստամբությունները թուլացնում եյին ինքնապաշտպանության ույժը, և հարկե՝ սրանից ոգտվողը կառավարությունն եր, որ տարածում եր, թե ապստամբները հակառակորդից կաշառված են։ Այս դրությունը հեշտացնում եր կառավարության հաղթանակը, իսկ սոցիալիստորեն տրամադրված հեղափոխական բլանկիստների այդ յելույթներին մասնակցելը նրանցից յետ եր քաշում բուրժուազիային, չնայելով, որ նա համակիր եր այն հայրենասիրական լոզունգներին, որոնց տակ տեղի եյին ունենում այդ ապստամբությունները։ Վերջին հաշվով այս փորձերն անխնա կերպով

ճնշում էին, իսկ ապստամբության առաջնորդներին կամ բանտարկում էին, կամ փախչել էին հարկադրում:

Սրանից հետո այլևս ժամանակավոր կառավարությանը ոչինչ չէր խանգարում հաշտություն կնքել պրուսացիների հետ: Իշխանությունը գլխավորող բուրժուազիան պիտի շտապեր որքան կարելի յե շուտ կատարել այդ քայլը, քանի դեռ իր ձեռքում ուներ բանակը՝ միակ ուժը, որով կարող էր ճնշել մասսաների կողմից որևէ ելույթի յուրաքանչյուր փորձ: Այս բանը շատ պարզ յերևում էր այն հեռագրից, որ ուղարկել էր մարշալ Բազենը պրուսական թագավորին. «Զինվորական վեճը, գրում էր քաջարի մարշալը, վերջացած է, և նորին մեծություն պրուսական թագավորը չի կարող նշանակություն չտալ այն ապարդյուն հաղթանակին, որ նա ձեռք կբերի խորտակելով այն միակ ուժը, որ միայն ընդունակ է ճնշելու անարխիան մեր դժբախտ յերկրում. նա (այդ ուժը—բանակը) կարգը կվերականգներ...»:

Կառավարությունը հաշտություն կնքելում այնքան էր շտապում, որ Ֆրանսիայի համար հաշտության ամենածանր ու ստորացուցիչ պայմաններ հանձն առավ: Յերկաթով ու ածուխով հարուստ Էլզաս-Լոտարինգիա և 5,000,000,000՝ ոսկով—ահա այն արժեքը, որով բուրժուազիան գնեց Ֆրանսիայի ներքին խաղաղությունը: Հաշտության այսպիսի պայմաններ ընդունելը ֆրանսիական բուրժուազիային հրում էր ուրիշ քայլերի՝ այդ ներքին կարգը կազմակերպելու գծով: Խաղաղություն կնքող բուրժուազիայի առաջ այն խնդիրը ծառացավ, թե իր ստորագրած հաշտության պայմաններն ում հաշվով պիտի իրագործվեն. այլ կերպ ասած՝ ում վրա պիտի ընկնեն պատերազմի և խայտառակ հաշտության ծախսերը: Բուրժուազիան ամենից առաջ շահագրգռված էր նրանում, որ պատերազմի և հաշտության բոլոր ծախսերը մասսաների վրա ընկնեն: Նրա համար պետք էր ուժեղ կերպով իր ձեռքն առնել իշխանությունը և ազատվել այն խոչընդոտից, որպիսին էր զինված և ազգային գվարդիան կազմող փարիզյան պրոլետարիատը:

Փարիզի պրոլետարներն ու արհեստավորները հերոսաբար տարել էին պաշարման բոլոր դժվարություններն ու ձախորդությունները, քաղցել, սառել և քաջությամբ կռվել էին պաշարված Փարիզի խրամատներում ու պատնեշների վրա: Այս բոլորի հետևանքն այն յեղավ, որ մի գեղեցիկ օր իմացան, թե այդ բոլորն իզուր է յեղել, թե Ֆրանսիան պարտված է, թե հաշտության խայտառակ պայմաններն ստորագրած են, և թշնամին հրճվում է: Նրանց վրդովմունքը սահման չուներ:



Բայց յեթե Փարիզը պատերազմ էր ուզում, ի հարկե, միայն հեղափոխական պատերազմ հասկանալով, բուրժուազիան և գյուղացիությունն այդ պատերազմը չէին ուզում: Համաձայն հաշտության պայմանի և այդ հաշտությունն ստորագրելու համար հապճեպ կերպով հրավիրած ժողովում տեղ էին բռնել վորակյալ սևհարյուրյակայինները և հեղափոխության կատաղի թշնամիները՝ ուղարկված պատերազմ չուզող գյուղացիների կողմից, որոնք նորից վախենում էին սոցիալիստների կարմիր ուրուականից: Ժողովը դիտմամբ ամենակարճ ժամանակում էր հրավիրվում, որպեսզի հաղորդակցության միջոցների խանգարված վիճակում, յերկրի մի նշանավոր մասի դեռ ևս թշնամու կողմից գրավված լինելու պատճառով՝ անհնար լիներ որևէ կերպ ընտրությունների պատրաստվել, նախընտրական ագիտացիա և առաջադեմ տարրերի կազմակերպված ելույթ կազմակերպել: Զգալի չափով սրանով էլ պիտի բացատրել նոր ժողովի հակա-հեղափոխական կազմը:

Սև հարյուրյակային «ռամիկների» այս ժողովն առաջին հերթին «գործադիր իշխանության գլուխ» ընտրեց Տյերին՝ «այս թզուկ հրեշին»—ինչպես բնորոշում է նրան Մարքսը, որ կես դարից ավելի հիացնում էր բուրժուազիային, որովհետև նրա դասակարգային փչացածության ամենագաղափարական արտահայտությունն էր հանդիսանում:

«Ռամիկների» ժողովն այնքան էր վախենում փարիզյան մասսաներից, որ սիրտ չարավ նիստեր ունենալ իր ավանդներով փառավոր Փարիզում, այլ գնաց Բորդո: Սա արդեն փոքր վիրավորանք չէր մայրաքաղաքի ազգաբնակչությանը: Ժողովը հետագայում սիստեմատիկ կերպով փարիզցիների պրովոկացիայի քաղաքականություն էր վարում:

Ժողովն առաջին հերթին շատ պարզ թշնամական տրամադրություն էր ցույց տալիս հասարակապետական ձևի կառավարությանը և խոսում էր Փարիզից մայրաքաղաքի կոչումը վերցնելու մասին. այնուհետև Փարիզի նահանգապետի և ազգային գվարդիայի հրամանատարի պաշտոններում սևհարյուրյակային գեներալներ նշանակել: Բոլոր լրագիրների վրա հարկ դրվեց, որով փաստորեն մամուլի ազատությունն էր ճնշվում. մոտիկ անցյալի հեղաշրջման անհաջող փորձերի հեղինակ Բլանկին և Ֆլուրանսը մահվան դատապարտվեցին:

Այնուհետև սև-հարյուրյակային ժողովը վորոշեց փարիզցիների նյութական շահերը հարվածել.—ազգային գվարդիականների խղճուկ ռոճիկը խլվեց՝ որ, ի նկատի ունենալով Փարի-

գում թագավորող գործազրկությունը՝ բանվորների և արհեստավորների գոյության միակ աղբյուրն էր։ Բայց այս էլ քիչ էր։ Բնակարանների վարձի և մուրհակներով յեղած պարտքերի վճարման ժամանակի յետաձգումը, վոր սահմանված էր պաշարման ժամանակ, հանկարծ վերացրվեց, և բուրժուազիան անխնա կերպով և առանց այլևայլության հաշիվ ներկայացրեց բանվորին, արհեստավորին, մանր խանութատիրոջն ու արհեստանոցի տիրոջը՝ վճարելու։ Փարիզցիք այս բոլորը տանում եյին ատամները սղմած և զսպված զայրույթով։

Այսպիսի լուռ ու զայրացկոտ Փարիզը շարունակում էր ահավոր ու վտանգավոր մնալ ժողովի բուրժուաների և կալվածատերերի համար։ Այս պատճառով Տյերը մարտի 10-ին մի հանդուգն փորձ արավ՝ փարիզցիներից զենքը խլել, այսինքն ցանկացավ հանել Փարիզից թնդանոթները, վորոնք գնված եյին մայրաքաղաքի բնակիչների հանգանակած դրամով և նույն իսկ Փարիզը հանձնելու պայմանագրով (պրուսացիների հետ) թողնված եյին ազգային գվարդիային, վորի կատարյալ սեփականությունն եյին կազմում։

Փարիզն այս բանը տանել չկարողացավ և՝ վորպես պատասխան Տյերի ու ժողովի այս նոր քայլի՝ մի մարդու պես վոտքի կանգնեց։ Թնդանոթները մնացին փարիզցիներին և ապստամբության սկիզբը դարձավ՝ նաև սկիզբն ու գոյությունը Փարիզյան Կոմմունայի։

III

Հազար ութհարյուր յոթանասուն մեկ թվականի մարտի 18-ի առավոտյան Փարիզն արթնացավ «Կեցցե Կոմմունա» վորոտագին կանչից։ Ի՞նչ էր ներկայացնում այդ Կոմմունան, ո՞վ կարող էր նրա առաջին ստեղծողն ու կազմակերպողը լինել։

Դեռ պաշարման ժամանակ Փարիզի ազգաբնակությունն, իր վստահությունը չվայելող կառավարությանը հակադրելու համար՝ սեփական կազմակերպություն ստեղծեց։ Փարիզյան 20 շրջաններում դիտողական կոմիտեններ ստեղծվեցին, վորոնք միանում եյին կենտրոնական կոմիտեում։ Այս կազմակերպությունը, վոր գլխավորապես բնակարանային և մթերքների գործն էր վարում, վո՛չ թե սոցիալիստների, այլ արմատական մանր բուրժուաների ձեռքումն էր։ Նրա նշանակությունն առանձնապես խոշոր չէր հետագա անցքերի ժամանակ։

Ավելի կարևոր էր 1871 թ. փետրվարին ստեղծված ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեի գործունեությունը։



Այս կոմիտեն ավելի դասակարգային էր, քան 20 շրջան-
ների կոմիտեը։ Վորքան ազգային գվարդիան իր մասսայով
բանվորներից ու արհեստավորներից էր կազմված, այնքան էլ
այդ կազմն անդրադառնում էր կենտրոնական կոմիտեյի կազմի
վրա։ Վորովհետև բանվոր-արհեստավոր մասսաների տրամադրու-
թյունը վորոշ չափով սոցիալիստական էր, ուստի սոցիալիստ-
ները նաև կենտրոնական կոմիտե անցան։

Կենտրոնական կոմիտեն իր գործունեությունը համաձայ-
նեցրեց Ինտերնացիոնալի ֆեդերացիայի հետ և նույնիսկ իր ժո-
ղովները նրա հետ միևնույն շենքի մեջ էր ունենում։ Մենք
պիտի հարց տանք, թե տեղի ունեցող անցքերում ինչ դեր էր
խաղում Ինտերնացիոնալը և ինչու նա իր ձեռքը չառավ այդ
անցքերի ղեկավարությունը։

Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհուրդը հաշվի առնելով
ֆրանսիական բանվորական շարժման թույլ ու բաժան-բաժան
վիճակը, այլ և շրջապատող պայմանների բարդությունը, Նապո-
լեոն III անկումից անմիջապես հետո՝ գրում էր ֆրանսիական
ֆեդերացիային. «Այժմյան ճգնաժամի պայմաններում նոր կա-
ռավարությունը տապալելը մեծ անխելքություն կլիներ...»։

Ուստի հետագայում էլ, յերբ հանգամանքներն զգալի կեր-
պով փոխվեցին, ֆրանսիական ֆեդերացիան՝ հաշվի չառնելով
այդ հանգամանքների փոփոխությունը, շարունակում էր հաշվել,
թե «Ինտերնացիոնալը... չպիտի ուղղակի կերպով խառնվի չա-
փազանց չճշտված անցքերին, այլապես նա իր գոյությունը
կվարկաբեկի...»։ Ինտերնացիոնալի մի քանի անդամներ կարծում
եյին, թե Ինտերնացիոնալը Ֆրանսիայում շատ է թույլ, վոր-
պեսզի կարողանա խառնվել անցուդարձին։ «Լոնդոնում, ասում
էր ականավոր ինտերնացիոնալիստներից մեկը, Ինտերնացիո-
նալն առաջնաստիճան քաղաքական ույժ է։ Թող Անգլիայում
սոցիալիստական շարժում բռնկվի,—դրա համար Ինտերնացիո-
նալը պատրաստ է։ Այսպե՞ս է արդյոք Ֆրանսիայում...»։ Մի
խոսքով՝ Ինտերնացիոնալի ֆրանսիական կազմակերպությունը
վճռել էր զարգացող, ծավալվող անցքերից հեռու մնալ։

Այսպիսով այս դեպքերը ղեկավարելու ամբողջ ծանրու-
թյունը մնաց ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեի
վրա։ Պրուսացիների հետ ունեցած զինադադարի ճգնաժամում,
յերբ կալի նոր տարերային բռնկումն կարելի յեր սպասել, կո-
միտեն զուսպ և հանգիստ դիրք բռնեց և այսպիսով կանխեց
հնարավոր ընդհարումն ու արյունհեղությունը։

Փարիզի արհեստավորա-բանվորական մասսայի մսից ու արյունից լինելով, այս կոմիտեն, վոր կազմված եր այդ մասսայի շարքային ներկայացուցիչներից, ամբողջապես նրա հայացքներն ու տեսակետներն եր ցոլացնում։ Բայց խոշոր ույժ լինելով հանդերձ, նա չեր հասկանում, վոր դեպքերը ճակատագրական կերպով յերկու դասակարգերի ընդհարումն են բերում։ Հեղաշրջումից միայն ութ որ առաջ ազգային գվարդիայի առանձին մասերի ժողովում այսպիսի ճառեր եյին լսվում. «Մենք ամենից քիչ կուզեյինք քաղաքացիների ցավալի և արյունոտ ընդհարումն իրար հետ»։ Այն ինչ՝ այդ ընդհարումները բոլորովին անխուսափելի եյին։

Ինչ վերաբերում ե մարտի 18-ի հեղաշրջմանը, պիտի ասել, վոր կոմիտեն չեր ղեկավարում նրան։ Այս հեղաշրջումը պատրաստվեց պաշարման անցքերի և հետագա շրջանի պայմանների ազդեցության տակ, ուստի բոլորովին տարերային կերպով կատարվեց։ Յերբ հեղաշրջումն արդեն կատարված եր, յերբ կառավարությունն ու կառավարական զորքերը Փարիզից փախան, իշխանությունը բնական կերպով պիտի անցներ աշխատավորության մեջ միակ հեղինակություն վայելող մարմնին, վոր վորոշ չափով իրեն արդեն ցույց եր տվել։ Դա ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեն եր։

Անցքերին մասնակցողներից մեկն այսպես ե բնորոշում ժամանակավոր կառավարությունը. «Քաղաքային տանը նիստ ուներ անանուն կառավարությունը՝ համարյա բացառապես հասարակ բանվորներից ու մանր աստիճանավորներից կազմված, վորոնցից 3/4 անուններն իրենց փողոցից կամ արհեստանոցից դենը վոչ վոքի հայտնի չեյին։ Տրադիցիան խախտված եր. ինչ վոր անսպասելի բան եր կատարվել. կառավարության մեջ տիրող դասերից վոչ մի ներկայացուցիչ չկար։ Հեղափոխություն պայթեց, վորի մեջ վոչ մի իրավաբան, վոչ մի լրագրող, վոչ մի գեներալ չկար։ Նրանց տեղերը գրավել եյին անփորձ բանվորը, կազմարարը, խոհարարը»։

Հազար ութհարյուր յոթանասուն թվի վերջերից սկսած Փարիզի բանվորական մասսաների համար սկսում ե ժողովրդականանալ Կոմմունա ստեղծելու միտքը, — ինքնուրույն քաղաքային համայնք՝ դեմոկրատիկ վարչությամբ, վոր փոխարինելու յեր անընդունակ ժամանակավոր կառավարությանը, իսկ այժմ ռեակցիոն ժողովին և նրա «գործադիր իշխանությանը»։

Պաշարման ժամանակ բանվորներն ու արհեստավորները Կոմմունայից վոչ միայն վճռական կռիվ եյին սպասում պրուսացիների հետ, այլ և «սպեկուլյանտների թագցրած մթերքների բռնագրավումն»։ «Կոմմունան Փարիզն ու հասարակապետությունը պիտի փրկի 1793 թվի հեղափոխության մեթոդներով». այսպես եյին մտածում հեղափոխականորեն տրամադրված բանվորները՝ հետևելով իրենց մեջ հեղինակություն վայելող բլանկիստներին։ Իհարկե Կոմմունայի հետ վորոշ սոցիալիստական ծրագիր չեր կապված. այդ ժամանակ այդպիսի ծրագիր գոյություն ել չուներ։ Բայց Կոմմունա հաստատելուն պես՝ մասսաներն սկսեցին մտածել բանվորական ասսոցիացիաներ հիմնելու, խոշոր արդյունաբերության, առաջին հերթին յերկաթուղիներն ազգայնացնելու մասին, և այլն։

Այժմ իշխանության գլուխ անցած կոմիտեն, կազմված փարիզյան աշխատավորության ներկայացուցիչներից, վճռում ե իրականացնել մասսաների այդ ցանկությունը և նրանց ցանկացած Կոմմունան ստեղծել։ Հարկ չկա ասելու, վոր կենտրոնական կոմիտեն ամբողջովին դեմոկրատական տեսակետի վրա յեր կանգնած և Կոմմունայի միտքը, վորպես դասակարգային կառավարության, նրան միանգամայն խորթ եր։ Ընդհակառակն՝ կոմիտեն կարծում եր, թե վորքան շատ մարդ ձայն տա Կոմմունայի ոգտին, նույնքան ամուր ու ավելի հեղինակավոր կլինի այս նոր կառավարությունը։

Այս պատճառով ել կենտրոնական կոմիտեն փորձում ե համաձայնության գալ վոչ միայն քաղքենի մանր բուրժուազիայի շրջանում հեղինակություն վայելող խմբերի ու կազմակերպությունների հետ, այլ և ուղղակի ժամանակավոր կառավարության նշանակած հակահեղափոխականների՝ Փարիզի առանձին շրջանի մերերի հետ։ «Շատ բան կախված ե նրանցից, թե ինչ քանակության ձայներ կհավաքենք. յեթե մեզ միանան մերերն ու պատգամավորները *, այդ դեպքում ամբողջ Փարիզը կմոտենա ընտրական տուփերին»։ «Յեթե ուզում ենք Ֆրանսիան մեր հետևից տանել, նրան չպիտի վախեցնենք»։

Այսպիսի նկատառումներով ղեկավարվելով, կենտրոնական կոմիտեն իր ուժերը լարեց, վորպեսզի համաձայնության գա բուրժուազիայի ներկայացուցիչների հետ, բայց այդ բանը ցանկանալն ավելի հեշտ եր, քան դրան հասնելը։ Պատգամավորներն ու մերերը կենտրոնական կոմիտեյի վրա նայում եյին վորպես

* Խոսքն այն պատգամավորների մասին ե, վորոնց ուղարկել եր Փարիզը հակա-հեղափոխական ժողովի. դրանցից շատերը դավաճանեցին փարիզցիներին՝ անցնելով ռեակցիայի բանակը։ Դրանց մեջ եյին 40-ական թվականների բանվորների կուռք Կուտի Տոլենը և Լուի Բլանը։

տարրինի կառավարության, իշխանությունը կապտողների վրա: Վերջին հաշվով այս բոլոր բանակցություններից, բացի Տյերի և Վերսայլ (Փարիզի մոտ) քաշված ժողովի համար կարճատև հանգըստից, ուրիշ վոչինչ դուրս չեկավ: Ընդհակառակն՝ Փարիզի թըշնամիներն այնքան հանդուգն եյին դարձել, վոր վճռեցին զինված յելույթ ունենալ և միայն այդ յելույթի անհաջողությունից հետո, այն էլ Վերսայլի կարգադրությանը յենթարկվելով, մերերը համաձայնեցին Կոմմունայի ընտրությունների կոչն ստորագրել:

Այդ ընտրություններին 230,000 մարդ մասնակցեց. Կոմմունայի Խորհրդի համար 90 հոգի ընտրվեց. մարտի 28-ին Կոմմունան պաշտոնապես հայտարարվեց:

Դեմոկրատորեն ընտրված Կոմմունայի Խորհուրդն իր կազմով պրոլետարական չեր: Նրա մեջ կային 32,5 տոկոս բանվորներ, 15 տոկոսից վոչ ավելի մանր աստիճանավորներ ու ծառայողներ, մոտ 5 տոկոս մանր ձեռնարկատերեր ու առևտրականներ և 39 տոկոս ազատ զբաղմունքի մարդիկ:

Ինչ վերաբերում է Կոմմունայի Խորհրդի անդամների հայացքներին ու կարծիքներին, պիտի ասենք, վոր նրանցում կարելի յեր հանդիպել և պրուդոնիստների ու Բլանկիի հետևողների, և վերջապես, յակոբինյան աշխարհայացքի դեմոկրատ հեղափոխականների: Կոմմունայի Խորհրդի անդամների մեջ 16 ինտերնացիոնալիստներ ես կային, վորոնք պրուդոնիստական հայացքների կողմնակիցներ եյին: Խորհրդի ընտրության ժամանակ դարձյալ աչքի ընկավ այդ ժամանակի բանվորական շարժման մեծագույն դժբախտությունը՝—բացակայությունը ղեկավարող մասսաների վստահությունը վայելող մի կուսակցության, վորը պարզ ու վորոշ ծրագիր և աշխատանքի պլան ունենար:

Այն մարդիկ, վորոնք Կոմմունայի՝ այդ նոր հեղափոխական կառավարության մեջ եյին ընկել, բնավ չեյին հասկանում այն դերը, վոր իրենք պետք է խաղային: Կոմմունայի անդամները շարունակում եյին ճառել ընդհանուր շահեր պաշտպանելու մասին և յերես դարձրին դասակարգային քաղաքականությունից: «Հատկապես չմոռանանք, գրում է այդ ժամանակի ամենաժողովրդական թերթերից մեկը, վոր Փարիզի նման մի քաղաքի ազգաբնակությունը զանազան տարրերից է բաղկացած: Արդարամիտ յեղեք դեպի բոլոր դասակարգերը, պաշտպանեցեք բոլորի շահերը»: Նույն թերթը, վորի խմբագիրը Կոմմունայի անդամներից մեկն եր, գրում եր. «Կապիտալիստների և աշխատողների մեջ դաշինք պիտի լինի, բայց այնպես, վոր վաստակի առյուծային բաժինն առաջիններին չմնա»:



Կոմմունայի կառավարական լրագիրը մարտի 30-ին այն միտքն եր հայտնում, թե այժմ «դասակարգերի հակատիրություն այլ ես գոյություն չունի»: Ինտերնացիոնալի ֆեդերացիան ես համերաշխությունից եր խոսում. «Համերաշխության բացակայությունը, հայտարարում եր իր թռուցիկներից մեկում, քաղաքացիական պատերազմ ծնելով՝ ընդհանուր քայքայումն առաջ բերեց. միայն ազատություն, հավասարություն և համերաշխություն ապահովելով կարելի յե նոր հիմունքների վրա հաստատված կարգ ու կանոնի և աշխատանքի նոր կազմակերպման ձգտել...»:

Այս բոլորն իհարկե, համաձայնողական, մանր բուրժուական ցնորքներ եյին, վորոնց համար բանվոր դասը դառն կերպով պիտի տուժեր:

## IV

Իր կազմով թե՛ սոցիալապես, թե՛ հայացքներով խայտաբղետ Կոմմունան պետք է անասելի դժվար պայմաններում դժվարագույն խնդիրներ իրագործեր: Մանր աստիճանավորները, լրագրողները, արհեստավորները կոչված եյին պետական մեքենայի մոտ և այդ բարդ մեքենան պիտի գործ դնեյին՝ առանց մասնագետների ցուցմունքների ու օգնության: Բարձր աստիճանավորական կազմը ս ա բ ո տ ա ժ ա յ ի ն նկատառումներով գործերը ձգած յերեսի վրա՝ փախել, մտել եր Տյերի և ժողովի թևերի տակ: Հիմնարկություններում մնացել եյին միայն ստորին ծառայողները: Սաբոտաժ եյին արել վո՛չ միայն բարձր աստիճանավորները, այլ և ինտելլիգենցիան—բժիշկներն ու պաշտոնատար անձինք լքել եյին հիվանդանոցները, բժշկական դպրոցի պրոֆեսորները դադարեցրին իրենց դասախոսությունները... Ծառայողները լքեցին փոստը, և Փարիզը մնաց կտրված ամբողջ աշխարհից: Կոմմունան բոլոր հիմնարկություններում ներկայացուցիչներ նշանակեց՝ շատ հաճախ հասարակ բանվորների, վորոնք իրենց յեռանդի, անկաշառության ու անձնվիրության շնորհիվ կարողացան կարգի բերել ու գործի գցել պետական մեքենան, համաշխարհային քաղաք Փարիզին նորից կյանք վերադարձնել: Փորագրիչ Տեյսը վերականգնեց փոստի աշխատանքը, ակնավաճառ Ֆրենկելը գլխավորեց աշխատանքի և փոխանակության կարևորագույն հանձնաժողովը:

Ռուս հեղափոխական Լավրովը, վոր Կոմմունայի ժամանակ Փարիզումն եր ապրում, ասում է. «Վորպես վարչագետներ և ընդարձակ քաղաքը կառավարելու գործը կազմակերպողներ, Փարի-

վի պրոլետարիատի ներկայացուցիչները վոչ միայն վատ չեյին, այլ կարծես յերբեմն լավ ել եյին սովորական հնամոլ աստիճանավորների ներկայացուցիչներից։ Գործնական ըմբռնումն, յեռանդը և հասարակության օգուտ բերելու ցանկությունն ամեն արգելք հեշտությամբ հաղթեցին»։ Կոմմունան կառավարական գործը կազմակերպեց բոլորովին նոր, մինչև այժմ չկիրառված սկզբունքներով։ Ամբողջ իշխանությունը կենտրոնացած եր ընտրված ներկայացուցիչների ձեռքում, և այսպիսով իշխանությունը գործադիրի և որենսդիրի բաժանելու հռչակավոր սկզբունքը, վորով այնքան փքվում եյին բուրժուական սահմանադրությունների կազմողները և վորը գործնականում միայն հսկայական կերպով ուժեղացնում է գործադիր իշխանությունը, փարիզյան Կոմմունայում գոյություն չուներ։

Կառավարչական գործի զանազան ճյուղեր ղեկավարելու համար Կոմմունան իր միջից 10 հանձնաժողովներ ընտրեց՝ յուրաքանչյուրը 5—8 հոգուց։ Այս բոլոր հանձնաժողովների գործունեյությունը պիտի միանար և համաձայնության գար Գործադիր Հանձնաժողովում՝ 7 հոգուց։

Բոլոր պաշտոնատար անձինք վորոշ ժամանակ անցնելուց հետո ընտրության և վերընտրության եյին յենթակա։ Ամենաբարձր ռոճիկը հավասարեցրած եր վորակյալ բանվորի ռոճկին— 6000 ֆրանկ (մոտ 2.300 ռուբլի) տարեկան։

Կոմմունան վոչնչացրեց մշտական զորքը և միակ զինվորական ույժ ազգային գվարդիան հայտարարեց։ Այս նոր զորքում սպայական կաստան՝ իր արտոնություններով, տեղ չուներ, ուստի կենտրոնական կոմիտեն հրամայեց հրամանատարական կազմի ընտրություն կատարել այն գումարտակներում, ուր այդ ընտրությունները չեյին կատարվել. գեներալական աստիճանը վոչնչացվեց՝ իբրև ազգային գվարդիայի դեմոկրատական կազմակերպության հետ «անհամատեղ»։

Կոմմունան ձեռք առավ նաև դատական գործի բարեփոխությունը՝ հիմք ընդունելով դատավորների ընտրովիությունը, յերդվյալների մասնակցությունը և պաշտպանության ազատությունը։

Կոմմունան յեկեղեցին բաժանեց պետությունից, դադարեցրեց պետական միջոցներից կրոնի օգտին գումարներ բաց թողնելը, բոլոր յեկեղեցական գույքերն ազգային սեփականություն հայտարարեց և դպրոցից հեռացրեց կրոնական խորհրդանշանները։ Նա ձեռք առավ դպրոցի բարեփոխության գործը, առանձին ուշադրություն դարձնելով սկզբնական կրթությանը։



Կոմմունան վերջացրեց հոգևորականության ազդեցությունը դպրոցում և հայտարարեց պարտադիր, աշխարհիկ և ձրի ուսման սկզբունքը։ Կոմմունան հարկադրված եր հանդիպել ուսուցիչների սաբոտաժին, վորոնք գլխավորապես հոգևորականներ եյին, ուստի ստիպված եր լուսավորության շենքը նորից կառուցել, ուսուցիչների կադր ստեղծել, մտածել դասավանդման մեթոդների մասին, վորի համար հատուկ հանձնաժողով ընտրեց։

Ժողովրդական կրթության գործով զբաղվելով, կոմմունարները հասան մինչև աշխատավորական դպրոցի մտքին և դասատուների ու արտադրանքի մեջ կապ հաստատելուն։

Կոմմունայի առաջին ակտերից մեկը Վերսալի զոհերին ոգնության գալն եր։ Տուժած ազգային գվարդիականներին այդ ոգնությունը ցույց տալու նպատակով, այլ և պատերազմում ընկած գվարդիականների կանանց, տարեկան կենսաթոշակ սահմանվեց, առ այդ գվարդիականի կնոջն ու յերեխային թոշակ նշանակվում եր անկախ այն բանից, թե այդ կինն ու յերեխան «որինակա՞ն եյին», թե «ապորինի»։

Ինչ վերաբերում է տնտեսական բնագավառի ձեռնարկումներին, պիտի ասել, վոր այստեղ Կոմմունան շատ քիչ բան կարողացավ անել։ «Այստեղ ազդեցություն ունեցան վոչ միայն ժամանակի սղությունը, այլ և Կոմմունայի մանր-բուրժուական կազմը և այն ցածր մակարդակը, վորի վրա եյին սոցիալիզմը և բանվորական շարժումը, վորոնք ժամանակ չունեցան հասարակական հարաբերությունների հեղաշրջման լայն և կանոնավոր ծրագիր առաջադրելու» (Ստեպանով)։

Իսկապես՝ այն ժամանակի ղեկավարող մամուլում սոցիալիստական միջոցների մասին ինչ կարելի յեր կարդալ. «Հավատացած յեղեք, բուրժուաներ և գյուղացիներ,—գրում եր թերթերից մեկը,—խոսքը նրա մասին չե, վոր ձեզ զրկենք ձեր նվաճումներից. դուք ձեր ունեցածին որինական կերպով եք տիրում։ Բայց մենք մեր իրավունքներն ենք պահանջում, ինչպես մի ժամանակ դուք ձերին հասաք։ Մեր նպատակն այն չե, վոր ձեր տեղը բռնենք, այլ այն, վոր ձեզ հետ միասին լինենք։ Մենք կարող ենք զուգընթաց գնալ... մենք խաղաղ ճանապարհով կը գնանք. գործելով նախ՝ համոզմունքով, ապա հենվելով որենքի վրա, կգնանք տնտեսական բալանսը վերանայելու և սոցիալական լիկվիդացիայի»։

Յեթե սրան ավելացնենք համերաշխության մասին յեղած խոսակցությունը, վոր այն ժամանակ շատ ժողովրդական եր, կհասկանանք, վոր Կոմմունան չեր կարող վճռական քաղաքակա-

նություն տանել՝ սոցիալական միջոցների բնագավառում։ Ընդհակառակը, նա շատ փափկանկատ եր մասնավոր սեփականության նկատմամբ։ Այդպես ել, ի հարկե, պետք եր սպասել այն միջավայրից յելած մարդկանցից, ուր դժվար եր սահմանագիծ անց կացնել իսկական պրոլետարի և աշխատանքի գործիքների մանր սեփականատիրոջ-արհեստավորի մեջ։ Գործերը ճիշտ այս պատկերն ունեին Փարիզում։

Այս եր պատճառը, վոր Կոմմունան չբռնագրավեց նույն իսկ տերերից լքված ձեռնարկությունները, այլ միայն հանձնեց բանվորական ընկերություններին այն պայմանով, վոր տերերի վերադառնալուց հետո՝ նրանց համապատասխան արժեք վճարվեր։

Թե պաշարման ժամանակ, թե դրան հաջորդող շրջանում փարիզյան չքավորությունը սաստիկ կարիքից դրդված՝ փոխատու դրամարկղներում գրավ եր դրել այն ամենը, ինչ վոր կարելի յեր գրավ դնել, Ուստի Կոմմունան վորոշեց վորոշ արժեքից ցած բոլոր գրավ դրած իրերը վերադարձնել։ Բայց նույն իսկ այս խնդիրը Կոմմունայի Խորհրդում շատ յերկար վեճեր առաջ բերեց։ Այդ վեճերի պրոցեսում հետևյալ բնորոշ մտքերն արտահայտվեցին. «Կործանել փոխատու դրամարկղները, կնշանակեր սեփականության վրա ձեռք դնել, մի բան, վոր յերբեք չենք արել։ Յես չեմ կարծում, թե այդպես վարվելը խելացի և խնայասիրական կլիներ»։ Նույն իսկ Կոմմունայի այնպիսի անդամ գտնվեց, վոր ասաց, թե լոմբարդը «որինական վաստակով ե սահմանափակվում»։

Ինչպես արդեն գիտենք, Փարիզի չքավորության և մանր բուրժուազիայի պարտքը շատ մեծ եր. և Կոմմունան այս հանգամանքի նկատմամբ անտարբեր մնալ չեր կարող։ Նա, հիրավի, բոլոր պարտքերը յերեք տարով հետաձգեց, վորով այնուամենայնիվ մեծագույն զգուշություն հանդես բերավ՝ պարտատերերի սեփականության նկատմամբ։

Անհրաժեշտ ե կանգ առնել Կոմմունայի բանվորական քաղաքականության վրա։ Այդ քաղաքականության ընթացք տվողը և իրականացնողը «աշխատանքի և փոխանակության հանձնաժողովն» եր, վոր համարյա ամբողջովին Ինտերնացիոնալի անդամ բանվորներից եր բաղկացած։ Վորքան այս վերջինների մեծամասնությունը համոզմունքով պրուդոնիզմի հողի վրա յեր կանգնած, այնքան ել պրուդոնիզմի ազդեցությունը նրանց գործունեության վրա շատ ուժեղ եր։ Այդ ազդեցության հետևությունը յերևում եր հանձնաժողովի առաջարկած խնդիրների չափավորությունից. «ուսումնասիրել բանվորների և տերերի մեջ



յեղած հարաբերությունների բնագավառի բարեփոխումները, մաքսային տարիֆների վերանայումը, հարկերի վերակազմումը և աշխատանքի վիճակագրության կազմակերպումը»։

Այս հանձնաժողովին ե պատկանում աշխատանքի պաշտպանությանը վերաբերող բոլոր դեկրետների հրատարակության պատիվը։ Առաջին հերթին Կոմմունան հրատարակեց փռներում գիշերային աշխատանքն արգելող դեկրետը։ Այդ դեկրետը պատասխան եր բուլոչնիկների միության համառորեն և վաղուց առաջադրած պահանջին։

Ինչպես գիտենք, բանվորները շատ եյին տուժում տերերի կամայականությունից, վորոնք հաճախ միանգամայն անմիտ և վոչ մի բանով չարդարացվող տուգանքներ եյին վերցնում։ Կոմմունան մի դեկրետ հրատարակեց, վոր տուգանքը և աշխատավարձից վորևե հանում կատարելն եր արգելում։

Կոմմունան գործազրկության դեմ պայքարի միջոցներ եր ձեռք առնում. աշխատանքի բորսա կազմակերպելով և հատուկ արհեստանոցներ ծրագրելով։ Զինվորական պատվերները կատարելու համար Կոմմունան պետական արհեստանոցներ ստեղծեց, վորտեղ աշխատանքն ավելի լավ եր վարձատրվում, քան մասնավոր արհեստանոցներում։

Վորովհետև դեռ բոլոր աշխատանքները չեյին կատարվում պետական արհեստանոցներում, այլ շատերը կապալառուներին եյին տրվում, Կոմմունան իր հսկողության տակ առավ բանվորների և այս կապալառուների փոխհարաբերության հարցը և ստիպեց վերջիններին՝ պահպանել ութժամյա բանվորական որը։

Չի կարելի չընդգծել, վոր Կոմմունան չլուծեց ութժամյա բանվորական որվա ընդհանուր կիրառման հարցը, չնայելով, վոր այդ խնդիրը դրել եր հանձնաժողովի Նախագահ Ֆրենկելը։

Այս խնդրում Կոմմունան Ինտերնացիոնալի հետևից եր գընում, վորը բանվորների համար ամենուրեք ութժամյա բանվորական որ սահմանելու անհրաժեշտությունը վաղուց եր վճռել։

Ընդհանրապես Կոմմունայի սոցիալ-տնտեսական գործունեության արդյունքը շատ համեստ պիտի համարել։ Սակայն չը պիտի մոռանալ, վոր բացի Կոմմունայի մանր-բուրժուական կազմից, վոր խոչընդոտ եր հանդիսանում նրա ձեռնարկումների վճռականությանը, Կոմմունայի գործունեությունը չափազանց կարճատև յեղավ և ընթացավ կատաղի պայքարի պայմաններում։

Միանգամայն իրավացի յեր նրա անդամներից մեկը, վոր ասում եր. «Իրականում՝ անցքերի շեշտակի ընթացքը և պայ-

-քարի բոլոր փոփոխությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը հնարավորություն չտվին քաղաքային խորհրդում նիստեր ունեցող ժողովին՝ թեկուզ ամենափոքրիկ սոցիալական ձևափոխման կոչել։ Սկզբից մինչև վերջ նայեցեք արձանագրությունները, դեկրետները, ձեռք առած միջոցները և դուք կհամոզվեք, վոր Կոմմունան նույն իսկ ժամանակ չունեցավ զբաղվելու առաջադրված սոցիալական խնդիրներից գոնե մեկի լուծումով»։

Հիրավի, Կոմմունան շատ քիչ ժամանակ ունեցավ. մարտի 28-ին նա հայտարարվեց, իսկ մայիսի 21-ին վերսալյան զորքերը Փարիզ խուժեցին։ Կոմմունան ապրեց միայն 64 օր։ Նրա այդ կարճատև գոյությունը մեր առաջ է դնում նրա այսքան վաղաժամ անկման պատճառների հարցը։ Իսկապես մենք գիտենք, վոր Կոմմունայի գործիչները մեծագույն յեռանդ, գործին անվերապահ նվիրվածություն, ազնվություն և անկաշառություն ցույց տվին։ Զինվորական կռվում նրանք քաջ եյին, արի ու անձնազոհ, և այնուամենայնիվ նրանց ղեկավարած Կոմմունան իր թշնամիների հարվածների տակ շատ շուտ ընկավ։ Վո՞րտեղ է սրա պատճառը։

V

Իր տեղում ցույց ենք տվել այն հաջողությունները, վոր յերկրորդ կայսրության որով ունեցավ ֆրանսիական կապիտալիզմը։ Այնուամենայնիվ՝ չնայելով, վոր այս հաջողությունները մեծ եյին, Ֆրանսիան Կոմմունայի նախորյակին դեռ խոշոր արդյունաբերական յերկիր չեր։

Յերկրի տնտեսական կյանքում մանր արհեստանոցի արդյունաբերությունը ըստ մեծի մասին դեռ պահպանում եր իր նշանակությունը։ Առանձնապես սա վերաբերում եր յերկրի կենտրոնին և Կոմմունայի գործունեյության տեղին — Փարիզին։ Կոմմունայի ապստամբության մասնակցած լինելու համար դատապարտվածների ցուցակում մենք տեսնում ենք, թե իրենց զբաղմունքի տեսակետից ինչ եյին ներկայացնում Փարիզի աշխատավորականները։ Ըստ մեծի մասին մենք այստեղ տեսնում ենք ատաղձագործների, կոշկակարների, ակնավաճառների, կարտոնագործների և այլն։ Ինչպես տեսնում ենք, սրանք իսկական ինդուստրիայի պրոլետարիատի ներկայացուցիչներ չեն, այլ արհեստավորներ կամ մանր տերերի մոտ ու տներում գործող աշխատողներ։

Փարիզի աշխատավորականների այսպիսի կազմից ել առաջ է գալիս նրանց ցրվածությունը, դասակարգային մի մարմին



կազմելու անընդունակությունը, տնտեսական մարմինները և ռազմական աշխատանքը ղեկավարող և հեղափոխական առաջնորդներ դառնալու ընդունակ մարդիկ տալը։ Հենց այս պատճառով ել ամբողջ շարժումը զարգանում եր մանր բուրժուական ինտելլիգենցիայի գաղափարական տիրապետության և ղեկավարության տակ, վոր բաժանված եր հաճախ իրար հետ անհաշտ բազմաթիվ ֆրակցիաների։ Պրոլետարիատի չհասունացած լինելը, վոր արդյունք եր արդյունաբերության դեռ չհասունացած դրության, բացատրում է Կոմմունայի կամ Կենտրոնական Կոմիտեի սխալները, տակտիկական սխալները, խճճվածությունը, կամ ավելի ճիշտ՝ ծրագրի կատարյալ բացակայությունը։ Հենց այստեղ ել գտնվում են արմատներն անթույլատրելի զիջողականության և համաձայնողականության, վոր իր գործունեյության ընթացքում յերևան եր բերում Կենտրոնական Կոմիտեն։

Մարտի 18-ի հեղաշրջումից հետո Կոմիտեն դրության կատարյալ տերը դառնալով, սիրտ չարավ արշավելու կազմալուծված Վերսալի վրա, չնայելով, վոր այդ հարձակումը միայն հաջողություն եր խոստանում։ Միանգամայն ճիշտ եր ասում Կոմմունայի անդամներից մեկը, թե՝ «Այն հեղափոխությունը, վոր առաջ չի գնում, հաստատ պարտության է դատապարտված»։ Սակայն Կենտրոնական Կոմիտեն այսպիսի նկատառումներով չեր առաջնորդվում։ «Վայրկյանը բաց եր թողնված, — այս առթիվ ասում է Մարքսը, — չեյին ուզում քաղաքացիական կռիվ սկսել, կարծես հրեշավոր ճիվաղ Տյերը, Փարիզը զինաթափ անելով, քաղաքացիական կռիվ չեր սկսել»։

Կենտրոնական Կոմիտեն, վոր ամբողջովին մանր բուրժուական դեմոկրատական յերազների ազդեցության տակ եր գտնվում, շտապեց իր ձեռքում հայտնված իշխանությունն «որինական և դեմոկրատական կառավարությանը» հանձնել։ Այստեղ նա յերկրորդ և անթույլատրելի սխալը գործեց։ Հետևանքը միայն այն յեղավ, վոր վոչ միայն Վերսալը ժամանակավոր հանգիստ—ժամանակ ունեցավ, վորի ընթացքում կարողացան բանակցել հակա-հեղափոխական ուժերի հետ, այլ և շատ կամ քիչ չափով դասակարգային կառավարության փոխարեն, իշխանության գլուխ անցավ իր կազմով խայտաբղետ Կոմմունան, վոր շատ ավելի պակաս միատարր եր, քան իշխանությունը նրան զիջող Կենտրոնական Կոմիտեն։

Կոմմունայի կազմի խայտաբղետությունը նրան սպանեց՝ հաճախ նրան թուլության ու անգործության մատնելով։ Ինչպես արդեն ասել ենք, հեղափոխական հոսանքների բոլոր ներկայա-

ցուցիչների մեջ ամենափոքր համաձայնություն անգամ չկար,
վոչ մի միություն չկար: Բլանկիստները, պրուդոնիստները, մանր
բուրժուական արմատական-յակոբինիստներն իրար ոձիքից էյին
բռնում և յուրաքանչյուր առիթի կռիվներ սարքում:

Կոմմունայի խորհրդի անդամների մեջ այս պայքարի ըն-
թացքում հետզհետե յերկու խմբավորումներ աչքի ընկան. փոք-
րամասնությունը՝ պրուդոնիստական-կոլլեկտիվիստական գունա-
վորումը և բլանկիստ-յակոբինյան մեծամասնություն: Իշխանու-
թյունը կազմակերպելու խնդիրը նրանցում անվերջ վեճեր էր
առաջ բերում: Պրուդոնիստները, վորոնք դեպի անիշխանություն
էյին թեքվում, ինչպես ամեն տեսակ պետական իշխանության
հակառակ էյին: Բլանկիստներն ու յակոբինները հեղափո-
խական դիկտատուրայի կողմնակիցներ էյին, առ այդ՝ վերջիններն
այդ դիկտատուրայի տակ հասկանում էյին 1793 թվի հեղափո-
խության ձևերն ու հիմնարկները: Յերկու հակառակ խմբերն
առանձնապես սուր ընդհարում ունեցան Հասարակական Փրկու-
թյան Կոմիտեյի հարցի շուրջը, վոր բարձրացավ Կոմմունայի
համար վրա հասած ծանր օրերում: Մեծամասնությունն այդ հիմ-
նարկության մեջ, վորի անունը նրա սրտին ու հոգուն այնքան
շատ բան էր ասում, Կոմմունային սպառնացող բոլոր չարիքնե-
րին դիմադրավող միջոց էր տեսնում: Մեծամասնության ներ-
կայացուցիչներից մեկն իր յելույթում շատ վառ կերպով ցույց
տվավ, թե հեղափոխական ռոմանտիկ-յակոբինների վրա բառերն
ինչ ույժ ունեցան: «Ոգտին եմ ձայն տալիս, ասաց նա, այն
պատճառով, վոր «Հասարակական Փրկություն» բառերն այն
շրջանին են վերաբերում, ինչպես և «Ֆրանսիական հեղափոխու-
թյուն», «Փարիզյան Կոմմունա» բառերը:

Յեթե այս վեճում մեծամասնության ներկայացուցիչներն
իրենց ցույց տվին վորպես հեղափոխական ռոմանտիկներ, վորոնք
չէյին հասկանում իրենց աշխատանքի միջավայրը, փոքրամաս-
նությունն անթույլատրելի բան կատարեց: Նա մեծամասնու-
թյանը դիկտատորության մեջ մեղադրելով, լրագրերում նրա
արարքների դեմ իր բողոքը հրատարակեց: Պետք հիշել, վոր հա-
սարակաց կարծիքին արած այս բողոքարկումը տեղի ունեցավ
պաշարման պայմաններում, թշնամու դեմ ամենալարված կռվի
շրջանում, յերբ այս վերջինը հնարավորություն էր ստանում
Կոմմունայում տեղի ունեցող տարաձայնություններին իրազեկ
լինելու: Դա լավագույն միջոցն էր՝ թշնամուն նոր ուժեր ներ-
շնչելու և սեփական շարքերում շփոթություն առաջ բերելու: Ան-
կարելի յե ըստ արժանույն գնահատել այն քայքայումը, վոր



պետի առաջ գար մարտիկ-կոմմունարների շարքերում կառավա-
րության մի մասի այդ հրապարակական մեղադրանքի ազդեցու-
թյան տակ՝ ստորագրած նույն այդ կառավարության ամենա-
աչքի ընկնող անդամների կողմից:

Հեղափոխական ռոմանտիկ-յակոբինները, վորոնք սիրահար
էյին էֆֆեկտավոր ֆրազների, ըստ մեծի մասին այդ ֆրազնե-
րով էլ բավականանում էյին: Թվում էր, թե նրանք, վոր իրենց
93 թվականի ահաբեկիչների ժառանգներ էյին համարում, Կոմ-
մունայի գաղտնի թշնամիների և հակահեղափոխության դեմ
հեշտ կարող էյին պայքար կազմակերպել:

Մինչդեռ՝ Կոմմունայի գործունեյության մեջ սրանից պա-
կաս հաջող կազմակերպված կողմ չկար: Կոմմունարները մինչև
Կոմմունայի գոյության վերջին րոպեն չկարողացան տերրորա-
կան գործողությունների անցնել: Խորհրդի անդամները բավա-
կանացան «բառերով դաժան, գործերով չափավոր» լինելով, ինչ-
պես Կոմմունայի գործիչներից մեկն ասաց նրանց մասին:

Մնում էր, վոր թշնամիները հենց Փարիզում դավադրու-
թյուններ կազմեյին: Վերսայլյան լրագրերը Կոմմունայի դեմ
պրոպագանդ էյին մղում հենց Փարիզում. Կոմմունայի գործիչ-
ների ժամանակակիցներից մեկն այսպես էր նկարագրում ստեղծ-
ված դրությունը. «Հանգամանքները սոսկալի էյին. կռիվներն
անընդհատ էյին, ամեն կողմից էյին. լրագրերը, վոր ամբողջա-
պես ցուրժուազիայի ձեռքում էյին, վերսայլցիների որգաններն
էյին և անդադար Կոմմունան վոչնչացնելու կոչ էյին անում.
մեր պարտությունները ծափահարում էյին, չարաբանում էյին
ազգային գվարդիականներին, նկարագրում էյին մեր զորաշար-
ժերը, ակնհայտնի կերպով դավադրություններ էյին կազմում
հակառակորդի հետ միասին...»: Յեվ այս պայմաններում Կոմմու-
նայի անդամներից շատերը գտնում էյին, վոր «մամուլը» հետա-
պնդելն անտրամաբան և զզվելի բան է»: «Այս բնագավառում,
ասում է նույն ժամանակակիցը, Կոմմունան բավական բան
արավ՝ ...հարձակումների առիթ տված լինելու համար, բայց
պակաս՝ լուրջ կերպով պաշտպանվելու համար: Արգելված թեր-
թերը հաջորդ որը նոր վերնագրով էյին լույս տեսնում: Հետա-
պնդված թերթերը զոհեր էյին ձևանում և բարձր սկզբունքների
անունով էյին բողոքում...»:

Կոմմունա՞յի ամբողջ տերրորիստական գործունեյությունը
հազվագյուտ անսխտեմ էր, անկանոն, զուրկ վորոշ գծից ու կամ-
քից: «Դիկտատուրայի, տերրորի մասին յեղած խոսքերը վորոշ
չափով դեկլարացիա էյին, տուրք՝ 1793 թվականի մասին յեղած

հիշողությունների. մեծամասնությունը, փոքրամասնության նման իր վոտների տակ դասակարգային հենարան չունենալով և ընդունակ չլինելով հեղափոխության համար միակ հնարավոր հենարան բանվոր դասակարգում գտնել կամ փնտրել, մինչև ապրիլի վերջը չկարողանալով իր մեջ վոչնչացնել համաձայնողական մանր բուրժուական ցնորքները» (Ստեպանով)։

Կոմմունայի համար ճակատագրական յեղավ այն, վոր չկարողացավ զինվորական գործը կազմակերպել։ Կոմմունան իր տրամադրության տակ հիանալի զինվորական նյութ ուներ—Փարիզի հեղափոխականներին, տրամադրված արհեստավորներին և բանվորներին, և նա չկարողացավ հարկավոր չափով օգտագործել այս նյութը։ Այդ ժամանակ տարածված անարխիստական հայացքների համաձայն կոմմունարները վոչ մի կերպ չեյին կարողանում վճռել՝ զինվորական դիսցիպլինան պե՞տք է վոր հարկադրական միջոցներով պահպանվի, թե՞ պիտի վստահել փարիզցիների խանդավառության ու հեղափոխականությանը, կարծես թե վորևե բանակ կարող է կառուցվել առանց կարգադրական կարգապահության։ Կոմմունան չկարողացավ դասակարգային բանակի հարց դնել։ Կոմմունայի հսկայական դժբախտությունը գործնական և գործին նվիրված գլխավոր հրամանատար չունենալն եր։ Առհասարակ զինվորական մասնագետների խնդիրը նրա համար, վորպես հրամանատարական կազմի ընտրության կողմնակցի, բոլորովին անլուծելի խնդիր եր։ Հրամանատարական կազմի ընտրությունը, վոր սքանչելի հեղափոխական միջոց է՝ թե՛ բանակը և թե հեղափոխության շնորհիվ քարուքանդ յեղած կարգապահությունը քայքայելու համար, հեղափոխության համար մղվող պայքարի սուր մոմենտներում միայն քայքայել կարող է հեղափոխական բանակը։ Նույնը պատահեց Կոմմունայի բանակում։ Ի լրումն դժբախտության՝ հրամանատարական կազմի գործունեյությունն ազատ չեր զինվորական մասերի ընտրովի մարմինների գործունեյությունից, վորոնք յերբեմն զորաշարժային կարգադրություններին եյին խառնվում։

Այս բոլորի հետևանքն այն հսկայական քաոսն եր, վոր տեղի ուներ զինվորական գործերում։ Կոմմունայի տրամադրության տակ յեղած պատկառելի թիվ ներկայացնող ազգային գվարդիայից 15—16,000-ից ավելի չեյին լինում ռազմաճակատների վրա։ Զինվորական մասերը հաճախ յերկար ժամանակ մնում եյին խրամատներում՝ առանց փոխվելու, այն ինչ ուրիշները թիկունքում եյին որ մթնեցնում։ Հաճախ զորամասերն իրենք եյին լքում կամ թե կռվի եյին բռնվում իրենց նախաձեռնությամբ։



Պահեստի զորամասերը կա՛մ չեյին գալիս, կա՛մ գալիս եյին շատ ուշ։ Անասելի վատ եր դրված խուզարկու բաժինը և պահակային ծառայությունը։ Այս բոլորը վերցրած բարձր հրամանատարական կազմի հաճախակի փոփոխության հետ միասին, ինչպես նաև Կենտրոնական Կոմիտեի անվճռականության հետ, վոր հրաժարվում եր հարձակողական տակտիկայից, նախավճռեց Կոմմունայի զինվորական պարտությունը։

Մենք արդեն գիտենք այն փափկանկատ վերաբերմունքը, վոր կոմմունարներն ունեյին մասնավոր սեփականության նկատմամբ։ Իհարկե նրանք—մանր բուրժուաները, բուրժուական ինտելլիգենտները և արհեստավորներն—այդ հարցում այլ կերպ ել լինել չեյին կարող։ Բայց մի վայրկյան յեղավ, յերբ նրանց այդպիսի վերաբերմունքը հավասարազոր եր Կոմմունային դավաճանելու։ Մենք այստեղ նկատի ունենք կոմմունարների վարմունքը ֆրանսիական բանկի նկատմամբ։ Այս բանկում ահագին քանակությամբ արժեքավոր իրեր կային. միայն հնչուն դրամը 77 միլ. ֆրանկ եր, պետական թղթադրամ՝ 900 միլլիոնի, իսկ թղթադրամ—166 միլլիոնի։ Ընդհանուր առմամբ բանկում 3 միլիարդի արժեքներ կային, վորից 1 միլիարդը կանխիկ դրամով։ Բացի նրանից, վոր այդքան հարստությանը տիրանալը կավելացներ Կոմմունայի ույժն ու միջոցները, այլ և բուրժուազիային պատկանող այս ահագին հարստության գրավումը, նույնիսկ գրավելու սպառնալիքը Վերսալյին անհամեմատ ավելի զիջող կդարձներ։ Մինչդեռ նման վոչ մի քայլ չարվեց։

Բանկը կատարելապես անձեռնմխելի մնաց։ Այս առթիվ Կոմմունայի ժամանակակիցներից մեկը մեզ ասում է. «Բոլոր լուրջ ապստամբություններն սկսվում եյին հակառակորդի գլխավոր յերակը—դրամարկղը հարվածելով։ Միայն կոմմունան դրանից հրաժարվեց։ Նա կրոնական պետքերի բյուջեն վերացրեց, սակայն կանգ առավ բարձր բուրժուազիայի առաջ, վորն իր ձեռքի տակ եր»։

Այս խնդրում բոլորովին այլ կարծիքի յեր կոմմունար Բելեն, վոր Կոմմունայի և բանկի մեջ յեղած հարաբերությունների վարողն եր։ Նա ասում եր. «Անհրաժեշտ է հարգել բանկն իր բոլոր արտոնություններով և ստացվածքով։ Պետք է վոր նա բարձր կանգնի իր անաղարտ կրեդիտով և արժեթղթերով, վորոնք հնչուն դրամի պիտի վերածվեն։ Սրանում շահագրգռված է ամբողջ Ֆրանսիան, ուրեմն նաև Վերսալը։ Բայց այդ չափով ել, նույնիսկ ավելի, Փարիզն է շահագրգռված, իսկ Փարիզի հետ նաև Կոմմունան։ Յեթե մենք ձեռնամուխ լինենք բանկը գրավելուն,

յեթե մենք գրավենք ազգային գվարդիայով, հնչուն ֆոնդին կարող եք տիրանալ, բայց դրա փոխարեն այնպիսի սոսկալի ճգնաժամ առաջ կգա, որի համար ամբողջ աշխարհը կլինի Փարիզի դեմ, իսկ Փարիզի ամբողջ հասարակությունը՝ Կոմմունայի դեմ։

Բելեյի հայացքները բացառություններ չեյին։ Կոմմունայի ֆինանսական գործերի ներկայացուցիչ Ժուրդն ևս գտնում եր, վոր Կոմմունայի համար «ֆրանսիական բանկը պահպանելը չափազանց կարևոր ե»։

Ավելի համարձակ առաջարկությունները՝ որինակ յերկաթուղային ընկերությունների սեփականությունը բռնագրավել, քաղաքից փախչող առևտրականների վրա ռազմատուգանք նշանակել, անվերապահ կերպով մերժվում են Կոմմունայի Խորհրդի կողմից։

Մայիսի 21-ին, այն որը, յերբ վերսայլցիք Փարիզ խուժեցին, կառավարական լրագրում հայտնի չե, թե ով եր լուր տվել, վոր իբր թե պիտի վոչնչացվեն բնոտաների ցուցակների ու Պարտքերի Մեծ Գիրքը։ Այս լուրը Կոմմունայի անդամների մեջ զայրույթի փոթորիկ առաջ բերեց...։

Կապիտալիստական հասարակության պայմաններում, տընտեսապես կախյալ վիճակում, վոր գոյություն ուներ վոչ միայն պետության նահանգների, այլև ամբողջ պետությունների մեջ, վորևե պետության մի քաղաքում կատարված հեղափոխությունը չեր կարող հաջողության հույս ունենալ։ Ի՞նչ արավ Կոմմունան, վորպեսզի կարողանա հեղափոխությունը Փարիզից դուրս ևս տարածել և ի՞նչ միջոցների դիմեց, վորպեսզի վոտքի հանի մյուս կենտրոններն ու բազմամիլլիոն գյուղացիությունը։ Այս տեսակետից նա ծիծաղելիության չափ շատ քիչ բան արավ։ Սոցիալիստ կին գրող Անդրե Լեոյի ձեռքով գրված թռուցիկն՝ ուղղած գյուղացիությանը, մի բացառություն եր։ Գավառների հետ կապ պահպանելու նպատակով համարյա վոչինչ չեր արվել։ Այս կամ այն մանիֆեստի հրատարակումն, առանձին եմիսարի գործուղումն, յերբեմն էլ ուղղակի շփումն այն անձանց հետ, վորոնք միջնորդներ եյին գավառների և Կոմմունայի մեջ—ահա թե ինչում եր կայանում Կոմմունայի ամբողջ գործունեյությունն այս չափազանց կարևոր բնագավառում։

«Պիտի վերջ տալ այդ ագենտներին» -բացականչեց Կոմմունայի ներկայացուցիչը, արտաքին հարաբերությունների վարիչը։ Ցավ այսպիսի միտք հայտնվում եր այն ժամանակ, յերբ հասարակապետականները շատ քաղաքներում քաղաքային ընտրություններին մեծամասնություն եյին ստացել, յերբ այդ ընտրված քաղաքային իշխանավորները Լիոն ժողոված, փորձում եյին ազդել Վերսայլի վրա՝ քաղաքացիական կռիվը դադարեցնելու մտքով։ Ցավ այդ ժամանակ Փարիզը կտրված եր գավառից, Փարիզը լուռ եր, անխոս։ Հարկ կա՞ այլ ևս ասելու, վոր խոշոր գավառական կենտրոններում (Լիոն, Մարսել, Տուլուզա և այլն) առաջացած առանձնակի հեղափոխական բռնկումներց ջարդվեցին առանձին-առանձին և Փարիզը Վերսայլի հետ ունեցած պայքարում մնաց միայնակ և այդ պայքարում էլ ընկավ։

## VI

Կոմմունարների գործած վրիպումների և սխալների ընդարձակ ցուցակը բացատրում ե մեզ նրանց արագ անկման պատճառները։ Բայց այս սխալներն, այս վրիպումները նրանք քավեցին վերջին արյունոտ շաբաթի հերոսությամբ, վոր տեղի ունեցավ վերսայլցիների Փարիզ խուժելուց հետո, այլ և այն արյունով, վոր թափեցին Կոմմունայի անկմանը հաջորդած սպիտակ տերրորի ժամանակ։

Բանի դեռ Կոմմունան ամեն կերպ աշխատում եր իրենից քաղաքացիական կռվի միտքը հեռացնել, Վերսայլն առանց քաշվելու և բաց կերպով նրան եր պատրաստվում՝ դրան համապատասխան էլ պատրաստելով գավառների ազգաբնակությունը։ «Ֆրանսիան համարձակ ու վրդովված,--գրում եր Տյերն իր հեռագիրներից մեկում, համախմբվում ե կառավարության և Ժողովի շուրջը, վորպեսզի ճզմի անիշխանական վիճակը, վոր դեռ փորձում ե կառավարել Փարիզը։

Ապրիլի սկզբին Տյերին հաջողվեց բավականաչափ զորք քաշել, վորպեսզի կարողանա ռազմական գործողություններ սկսել։ Այդ ժամանակ գավառ ուղարկած իր հեռագրում Տյերը, վորպես թե անցողակի կերպով, պատմելով՝ թե կոմմունարները կողոպտում են հասարակական դրամարկղները, հայտնում եր, թե իր տրամադրության տակ ե այժմ «ամենափայլուն բանակներից մեկը, վոր յերբևիցե ունեցել ե Ֆրանսիան»։

Այս բանակը Տյերը կարողացավ ստանալ պրուսսացիների հետ կատարած գործարքի շնորհիվ։ Ֆրանսիայում կարգը վերականգնելու համար նրանք 130,000 գերի վերցրած ֆրանսիական զինվորներ վերադարձրին։ Գերությունից վերադարձած այս զինվորներն իրենց հարազատների գրկում հանգիստ գտնելու փոխարեն նոր պատերազմի հանդիպեցին։ Նրանց զայրույթը կոմմունարների դեմ, վորոնց համարում եյին դրության հանցավորներ,

անսահման եր։ Կառավարությունն այդ զայրույթը հատուկ ագիտացիայով ուղղում եր։ Բացի դրանից՝ հակա-ագիտացիայից խուսափելու համար զինվորները փակված եյին պահվում զորանոցներում, նրանց ուժեղացրած սնունդ եյին տալիս և հարբեցնում եյին խմիչքով։ Հետևանքն այն յեղավ, վոր դեպի իր հակառակորդը վայրենությամբ լցված ու կույր ատելությամբ բռնված մի բանակ ստացվեց։

Յերբ ուժերն արդեն պատրաստ եյին, ապրիլի 1-ին սկսվեց գրոհը Փարիզի դեմ։ Հենց առաջին քայլերից վերսալցիք կատաղի վերաբերմունք ցույց տվին գերի ընկած կոմմունարների նկատմամբ՝ ծանակելով ու հրացանազարկ անելով նրանց։ Յերբ Փարիզի կոմմունարներն իմացան գերի ընկած ընկերների վիճակի մասին, Կոմմունայի անդամներից մեկը փորձեց առաջարկել ավելի խստացնել բանտարկված վերսալցի պատանդների վիճակը։ Այդ առաջարկը միաձայն, առանց առարկությունների, մերժվեց։

Կազմակերպված պլանաչափ հարձակմանը, սառնասրտորեն կազմակերպված գազանությանը Կոմմունան հակադրում եր անկարգ վոգևորություն, անպտուղ հերոսություն և ներկա հանգամանքների համար անմիտ մարդասիրություն։ Կանոնավոր ղեկավարությունից զուրկ ազգային գվարդիականները մեկ սարսափելի դիմադրություն եյին ցույց տալիս թշնամուն, մեկ էլ անսահման անտարբերություն ու իրենց պարտականությունների անթույլատրելի արհամարհանք եյին հանդես բերում։ Սրա հետևանքն այն յեղավ, վոր կոմմունարներն արագ կերպով ջարդվեցին, ու վերսալցիք Փարիզ մտան։ Դա կատարվեց մի լրտեսի շնորհիվ, վոր մայիսի 21-ին ամրություններից մեկի դռները բաց արավ։

Կոմմունայի ապստամբությունից վախեցած բուրժուազիան իր հատուցումը կատարելիս՝ բառի բուն նշանակությամբ գազանացել և մարդկային պատկերը կորցրել եր։ Նրա լրագրերը կոմմունարների մասին խոսելիս կատաղության փրփուր եյին ժայթքում։ «Կոմմունարների նկատմամբ վորս պիտի կազմակերպել», գրում եր մի լրագիր, պարտված թշնամիներին վիրավորելը մեզ չի ժպտում, բայց, ուղիղն ասած, միթե այդ անպիտանները թշնամիներ են։ Սրանք բանդիտներ են՝ իրենք իրենց մարդասիրության որենքներից դուրս դրած»։

«Մենք պետք ե—ձայնակցում եր յերկրորդ լրագիրը—պաշարենք թաքնվածներին (կոմմունարներին), ինչպես վայրի գազանների, գործելով անխնա՝ առանց զայրույթի, սակայն այնպիսի հաստատակամությամբ, վոր կարգին մարդը դնում ե իր պարտականությունը կատարելու մեջ»։



«Վարվեցեք այնպես, գրում եր կառավարական թերթը, ինչպես նման պայմաններում կվարվեր մեծ ու յեռանդուն ժողովուրդը. գերի չվերցնեք, թողեք, վոր քաջարի զինվորներն իրենց ընկերների վրեժն առնեն»։

Յեվ «կարգին մարդիկ իրենց պարտքն եյին կատարում», իսկ «քաջարի զինվորները վրեժ եյին առնում», նույնիսկ 1848 թվին հունիսյան սպանդանոցի սարսափներն խաղալիք եյին՝ Տյերի վերսալյան վանդալների յոթնորյա գազանությունների հետ համեմատած, վորոնք չեյին խնայում վոչ սեռ, վոչ հասակ, այլ պրոլետարների արյունով իրենց արյան ծարավն եյին հագեցնում...»։

Բուրժուազիան իր թշնամիներին միայն վոչնչացնելով չեր բավականանում. նա նրանց տանջանքների ու ամենազզվելի ծաղրանքի յեր յենթարկում։ Այս բանում կենդանի մասնակցություն եյին ընդունում «կարգին մարդիկ» և «լավագույն հասարակության» ներկայացուցիչները, աշխարհիկ տիկիններն ու որիորդները...»։

Յերբեք հայտնի չի դառնա, թե վորքա՞ն հազար կոմմունար սպանվեց մի շաբաթում՝ սկսած մայիսի 23-ից... Միայն գերեզմանատներում թաղելու թույլտվություն տրվել ե 17,000։ Բայց դատարանների մեծամասնությունը* ցուցակ չեր պահում, և հրացանազարկ յեղածներին թաղում եյին առանց ցուցակագրելու ու ձևականության՝ հսկայական փոսերում, քաղաքային սկվերներում ու բանտային խրամատներում։ Մի շաբաթում ընկածների ընդհանուր թիվը հաշվում են 30,200» (Ստեպանով)։

Դիակները կրելու համար փոխադրական միջոցները չեյին բավարարում, դիակները ժողովել չեյին հասցնում, նրանք «հանդիպում եյին ամեն տեղ—գրում եր մի լրագիր—և թափված եյին կույտերով՝ ինչպես աղբ...»։ Վերջ ի վերջո քայքայվող դիակների գարշահոտությունն ոդը վարակեց և համաճարակ եր սպառնում։ Այդ ժամանակ բուրժուական լրագրերն սկսեցին պահանջել՝ սպանությունները դադարեցնել, բացատրելով, վոր իրենց ուզածը վոչ թե ներումն ե վոճրագործներին, այլ միայն հետաձգում։

«Արդարամտության, կարգի, մարդկայնության և քաղաքակրթության գործը հաղթանակեց», հայտնում եր Տյերն ազգային ժողովին։ Նա դեռ յերկար ժամանակ շարունակում եր հաղթա-

* Դատապարտվածների նկատմամբ դատական կոմեդիա յեր կատարվում զինվորական հանձնաժողովների ձեռքով, վորոնց կատարած քննությունը մի քանի վայրկյան եր տևում։

նակել.—մասսայական ձերբակալությունները յերկու ամիս չեյին դադարում: Ոգոստոս ամսից գործն իրավաբանական տեսակետից մի փոքր ավելի վայելուչ եյին տանում, վորովհետև բանտարկվածների պատիժը ձևակերպում եյին: Բանտարկվածները մոտ 40,000 եյին, դրանցից մեղադրական վճիռ կայացավ 10,137-ի համար: Դատարանները գործում եյին դեռ 1873 թվին ել:

Մեղադրվողները դատավճիռներն ու մահն արիությամբ եյին ընդունում. «Յես պաշտպանվել չեմ ցանկանում—հայտարարեց կոմմունարուհի Լուիզա Միշելը. յես իմ կյանքը նվիրել եմ ծառայելու սոցիալական հեղափոխությանը, և պատրաստ եմ կրելու իմ բոլոր արածների պատասխանատվությունը՝ յես վոչ մի զիջում չեմ ընդունում»: Կոմմունայի, աննկատելի, բայց դիմացկուն անդամներից մեկը—կոշկակար Տրենկեն, դատի ժամանակ հայտնեց. «Համաքաղաքացիներն ինձ ուղարկեցին Կոմմունա: Յես կյանքս չխնայեցի: Յես բարրիկադների վրա եյի և չեմ ցավում, վոր ինձ սպանեն: Յես խռովարար եմ. այդ չեմ ժխտում»:

«Ստոյիկորեն հպարտ և դեպի մարդասպաններն արհամարհանքով եյին մեռնում վոչ միայն Կոմմունայի ղեկավարները Միլյերը. Վարլեն, Ռիգոն և Ֆերերն,—այդպես մեռնում եյին նաև հազարավոր անանուն հերոսներ, կանայք, տղամարդիկ, անչափահասներ» (Ստեփանով):

Կոմմունարների այսպիսի մահը «շփոթություն առաջ բերեց դահիճների շարքերում». «Պարտված ու վոչնչացած Կոմմունայի այսպիսի մահի մեջ նրանք իրենց համար սպառնալիք եյին զգում. սկսել եյին տեսնել, վոր նրանից հետո ինչ վոր բան է մնում, վոր կապրի, վորին չի կարելի վոչնչացնել՝ վոչ աքսորներով, վոչ հրացանազարկումներով» (Ստեպանով):

VII

Փարիզյան Կոմմունայի մասին շատ գրքեր են տպվել, նրան շատ աշխատություններ են նվիրված, բայց նրանց մեջ հազիվ թե ավելի հետաքրքիր գիրք լինի, քան այն գիրքն է, վոր գրել է ռուս հեղափոխական Լավրովը: Լավրովը, վորին պրոլետարական դիկտատուրայի մեր ժամանակի հակառակորդներն իրենց հոգևոր հայրն են համարում: Լավրովը Փարիզյան Կոմմունայի անցքերին վկա յեր, և գրելով նրա աշխատանքը—յեկել եր մի ամբողջ շարք «խրատական յեզրակացությունների», վորոնց լավ կլիներ, վոր ունկնդրեյին դեմոկրատիայի ժամանակակից պաշտպանները և դասակարգային դիկտատուրայի հակառակորդները:

Ահա թե ինչ եր գրում Լավրովը Կոմմունայի աշխատանքի պայմաններում անտեղի դեմոկրատիզմի առթիվ. «Յեթե հեղափոխությունը հայտարարեր իրեն վորպես պրոլետարիատի հեղափոխություն և անմիջապես բանվոր դասակարգի համայնք դառնար՝ իր շարքերն ընդունելով միայն նրանց, վորոնք կմտնեյին իր շարքերը սոցիալական հեղափոխության դրոշակի տակ, և իր շարքերից կտրուկ կերպով վտարելով պրոլետարիատին թշնամի տարրերին, այդ դեպքում մի կողմ կմնային բանվորական Կոմմունայի հայտ... յեթե Կոմմունան վասար իրավատիրական հավակնությունները... յեթե Կոմմունան պարդյունք լիներ վոչ թե ընտրությունների, վոր կատարեցին պաշտոնական քաղաքացիք, այլ բաղկացած լիներ բանվոր դասատահական քաղաքացիք, այլ բաղկացած լիներ բանվոր դասակարգի ներկայացուցիչներից, բանվոր դասի, վոր վճռեր տիրապետող դասերը ճզմել, իր ընտրածների համար դա առաջին խընդիր դարձներ, իսկ մնացած բոլոր խնդիրները յենթարկեր այդ առաջնակարգ խնդրին—աշխատանքի պայքարին կապիտալիզմի դեմ, այլ ևս վեճ չեր լինիլ Կոմմունայի Խորհրդի դիկտատուրայի մասին...»:

Նույնքան վճռական կերպով է արտահայտվում Լավրովը նաև տերրորի մասին՝ անհրաժեշտ սուր քաղաքացիական կռվի և լարված դասակարգային պայքարի պայմաններում: «Ներկա հասարակակարգում այն շահը, վոր ունի տիրապետող դասը, այնքան մեծ է, վոր նվազագույն հույս անգամ չպիտի լինի. թե ինքնակամ կզիջեն այդ շահը: Դա ուժով պիտի ձեռք բերել. մենք այդ պիտի գիտենանք և դրան պատրաստվենք: Յեվ միթե հասարակության մեջ իշխանություն ունեցողները յերբևիցե ինքնակամ զիջել են այդ իշխանությունը, առանց արյունով պաշտպանելու նրան»:

Հաղթական հեղափոխության հենց հաջորդ օրը պահանջ են դնում՝ հարկադրական վերաբերմունք դեպի թշնամի տարրը, դիկտատուրական վերաբերմունք դեպի նոր իրավակարգի թշնամիները: Հաղթական սոցիալական հեղափոխության մոմենտում պրոլետարիատն իր սոցիալական ու քաղաքական հաղթանակը պիտի զինված ուժով պաշտպանի: Ինչ վերաբերում է մամուլի ազատությունը սահմանափակելուն, վորին այնքան զգույշ եյին վերաբերվում կոմմունարները, Լավրովն ասում է. «Շատ պարզ եր, վոր պաշարված քաղաքում ճակատամարտի ժամանակ նվազագույն հնարավորություն անգամ չկար՝ թույլ տալ այն մամուլի գոյությունը, վոր սիստեմատիկ կերպով ամբաստանում եր ճակատամարտի անորեններին, Կոմմունայի գործերին...»:

Մենք բազմիցս մատնանշել ենք, վոր վորոշ ծրագիր և պայքարի վաղօրոք գծված տաքտիկա չունեցող կուսակցությունն աշխատավոր դասի համար միշտ ցավալի հետևանքներ է ունեցել. և դարձյալ Լավրովը միանգամայն պարզ և ճիշտ գնահատական է տալիս այն դերին ու նշանակությանը, վոր կխաղար այդ կուսակցությունը Փարիզյան Կոմմունան կյանքի կոչող հեղաշրջման ժամանակ, յեթե նա գոյություն ունենար։ «Անհրաժեշտ եր, որ այդ հեղաշրջման պլանն իր գլխավոր սկզբունքներով վաղօրոք մշակված լիներ, անհրաժեշտ եր, վոր պրոլետարիատի ներսում վաղօրոք կազմված լիներ այդ պլանով գործելու վորոշում ունեցող մի կուսակցություն. անհրաժեշտ եր, վոր պոռթկումի ժամին այդ կուսակցությունը շարժման գլուխ անցկացներ իր մտքի ներկայացուցիչներին՝ պատրաստ իրենց վրա վերցնելու պատասխանատվություն այն քայլի համար, վոր միշտ իր մեջ շատ առեղծվածային ու անճիշտ բան է պարունակում»։

Կոմմունարների գործած սխալներն ու պակասությունները շատ մեծ եյին։ Բայց, ինչ ել լիներ, դա բանվոր դասակարգի իշխանության անցնելու առաջին փորձն եր. առաջին փորձ՝ աշխատավորության դիկտատուրա սահմանելու՝ թեկուզ իրագործողներն այդ հասկացած ել չլինեին։ Ուստի միանգամայն իրավացի յե Մարքսը, յերբ ասում է. «Կոմմունայի մեծագույն գործը նրա սեփական գոյությունը, նրա աշխատանքներն եյին»։

Ընդունենք, վոր իրենք կոմմունարները չեյին հասկանում իրենց տարած պայքարի նշանակությունը. դրանով այդ պայքարի արժեքը չի պակսի։

Մի պատմաբան, Կոմմունայի մասնակցող ու ժամանակակից, այսպես է բնորոշում այդ պայքարի նշանակությունը. «Այս հերոսական քաջագործությունները, ամեն զբաղմունքի այս տղամարդիկ ու կանայք մի ամբոխ կազմած, ամբողջ աշխարհի բանվորության վողջույնը մեր պայքարին, ամբողջ բուրժուազիայի կոալիցիան՝ մեր դեմ, այս բոլորը միթե չեն ասում, թե այստեղ կռվում է հասարակապետության և նոր սոցիալական իրավակարգ ստեղծելու համար»։

Արդեն գիտենք, թե Մարքսն ինչպես եր գնահատում Կոմմունայի նշանակությունը. դա նրա համար բանվորական կառավարության առաջին նախագուշակն եր։ Նրա գոյացման մոմենտը պրոլետարական պայքարի պատմության մեջ նոր ետապի սկիզբն եր՝

«Կոմմունան — ասում է նա — աշխատանքի ազատագրման համար համարձակ պաշտպանն եր և՝ վերին աստիճանի ինտերնացիոնալ բնույթի։ Պրուսսական զորքի առաջ, վոր Ֆրանսիայի յերկու նահանգներ նոր եր միացրել Գերմանիային, Կոմմունան ամբողջ աշխարհի աշխատավորությունը միացրեց Ֆրանսիային»։

Ի հարկե, կոմմունարներն այն գիտակցությունը չունեյին, թե իրենք դասակարգային կառավարություն են դառնալու, սակայն անցքերի ընթացքը, նրանց զարգացումը հրում եյին Կոմմունային՝ այդպիսի կառավարություն դառնալու։ Այս տեսակետից չափազանց բնորոշ է կոմմունիստներից մեկի հայտնած միտքը դատական հիմնարկների բարեփոխման դեկրետի առթիվ։ Այդ դեկրետը յենթադրում եր դատաստանական նիստերին վորպես յերդվյալներ կանչել միայն ազգային գվարդիայի ներկայացուցիչներին։ Յեվ ահա, կարծես այդ ժամանակ ամենքից ընդունված դեմոկրատական սկզբունքներից կատարած շեղումն արդարացնելու համար կոմմունար Պրոտոն ասաց. «Մենք բոլոր քաղաքացիներին դիմել չենք կարող։ Տվյալ մոմենտում մենք կսահմանափակվենք ազգային գվարդիայով, վորոնց շարքերում ավելի զարգացած ու գործին նվիրված քաղաքացիներ կան»։ Այսպես, կամա-ակամա, կոմմունարներն ահեղ անցքերի ճնշման տակ ստիպված եյին լինում յերբեմն դիկտատուրայի դասակարգային քաղաքականության ճանապարհը բռնել։ Ճիշտ է, քաղաքական իշխանությունը գրավելով, պրոլետարիատը չկարողացավ օգտագործել այդ իշխանությունը՝ վորպես իր ազատագրման միջոց և յերկար ժամամանակ չեր ել հասկանում, թե իշխանությունն իր ձեռքումն է» (Ստեպանով)։

Պրոլետարիատին ճանապարհից հանողը վորոշ չափով այն խառնափնթորումն եր, վոր նրա գլուխն եյին մտցրել իր մանր բուրժուական ինտելլիգենտային ուսուցիչներն ու ղեկավարները։ Բայց քանի գնում, բուրժուական և մանր-բուրժուական տարրերն ավելի եյին յետ մնում բանվորա-արհեստավորական ապստամբությունից և այդ ապստամբությունն ավելի ու ավելի յեր պրոլետարական բնույթ ստանում։ Սակայն կոմմունարները ժամանակ չունեցան այդ պրոցեսը վերջնականապես ավարտելու, վորովհետև հեղափոխական Փարիզյան Կոմմունան կատաղի հակահեղափոխության հարվածների տակ չափազանց շուտ խորտակվեց։

«Բանվորների Փարիզն իր Կոմմունայով—ասում է Մարքսը, միշտ կտոնվի վորպես նոր հասարակության նախագուշակ։ Նրա նահատակները բանվոր դասակարգի մեծ սրտում իրենց համար արձան կանգնեցին։ Պատմությունը նրա դահիճներին հենց հիմա յե գամել անարգանքի սյունին, վորից վոչ մի ույժ նրանց այլևս պոկել չի կարող»։

# ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Փարիզյան Կոմմունայի պատմությամբ մենք վերջացնում ենք հեղափոխական շարժումների պատմությունը։ Կոմմունայի անկման մոմենտից—1871 թվից սկսած յեվրոպական բուրժուազիան խաղաղություն ու հանգիստ է վայելել։

Բուրժուական հեղափոխությունները բուրժուական պետություններ են ստեղծել։ Այնտեղ, ուր այդ հեղափոխություններն անավարտ են մնացել, նրանց գործն ավարտել են ազգային համախմբող պատերազմները։ Այդպես յեղավ Գերմանիայում։

Այժմ, բուրժուազիան իր ազգային պետություններում սարքված, կարող եր անարգել զարգացնել իր տնտեսական գործունեյությունը։ Կապիտալիզմը մտավ իր զարգացման նոր փուլը։ Համարյա Յեվրոպայի բոլոր յերկրներում կատարվեց մանր արտադրությունից մեծին անցնելը։ Տնտեսական կյանքի վորևե ճնշման չքացումը, իրեն՝ բուրժուազիայի իշխանության անցնելն անսովոր կերպով նպաստեցին արտադրական ուժերի զարգացմանը։

Կապիտալը նեղվում է ազգային պետության շրջանակներում։ Կապիտալներն իրենց սահմաններից դենն անցնելով, խճճում են ամբողջ աշխարհը կապիտալիստական հարաբերությունների ցանցով. հարաբերություններ, վորոնք տարածվում են Յեվրոպայի սահմաններից դուրս—Ասիայի, Աֆրիկայի վրա։ Կապիտալն ընդգրկում է գաղութները։

Մենք տեսանք, վոր բանվոր դասակարգը—«բուրժուազիայի գերեզմանահատը» — առաջին բուրժուական հեղափոխությունների շրջանում իր ձայնը յերկչոտ ու թույլ կերպով եր բարձրացնում։ Քանի գնաց, նա իր գոյության մասին ավելի վճռական կերպով հայտարարեց (1848 թ.) և վերջապես Փարիզյան Կոմմունայի ժամանակ, ինչպես և չարտիզմի տարիներում, փորձեր արավ պայքարի ինքնուրույն ճանապարհ դուրս գալ, վոր նրան տանելու յեր դեպի մի նոր աշխարհ, դեպի տնտեսական մի այլ իրավակարգ։ Յեվ այս փորձերում, վորքան կապիտալիզմի զարգացումը նպաստում եր դրան, պրոլետարիատն աշխատում եր իր միջազգային կազմակերպությունը—Բանվորների Միջազգային Ընկերությունն ստեղծել։ Վորքան էլ կարճատև եր այդ կազմակերպության—I Ինտերնացիոնալի գոյությունը, այնուամենայնիվ նա մի ետապ եր հեղափոխական շարժման պատմության մեջ։

Մենք տեսանք, վոր այդ կազմակերպության քայքայումը զուգադիպեց զանազան յերկրներում ու պետություններում ինքնուրույն բանվորական կուսակցություններ առաջ գալու մոմենտին։ Ահա հենց այս ինքնուրույն քաղաքական բանվորական կուսակցությունների գոյությունն է, վոր բանվորական շարժման պատմության նոր շրջանում առանձնահատուկ նշան է հանդիսանում։

Նրա մի այլ առանձնահատուկ նշանն էլ այն է, վոր հեղափոխական շարժումն այժմ բանվորական շարժում է դառնում, վորովհետև նա ամբողջովին ուղղված է բուրժուազիայի և բուրժուական իրավակարգի դեմ։ Չե՞ վոր բուրժուազիան ներկայումս տիրող դասակարգ է, ամեն տեղ նա հաղթել և իշխանության է հասել։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը՝ քաղաքական բանվորական կուսակցությունների կազմակերպվելը բանվորական շարժմանը մինչ այս չտեսնված ույժ ու թափ են տալիս. և միաժամանակ այդ շարժումը դադարում է հեղափոխական լինելուց։ Այս յերևույթի բացատրությունը կարելի յե գտնել ավելի զարգացած արդյունաբերական կապիտալիզմի շրջանին հատուկ գծերում։

Մանր արդյունաբերությունից վերջնականապես խոշորին անցնելը վորոշ չափով բարելավեց բանվոր դասակարգի հայտնի խավերի դրությունը։ Այնուհետև վրա յե հասնում իմպերիալիզմի շրջանը, յերբ բուրժուազիան շահագործում է տնտեսապես ավելի պակաս զարգացած յերկրների ազգաբնակությանը, վորի շնորհիվ ու ավելի շահ ստանալով, կարողանում է կաշառել բանվոր դասակարգի մի մասին։ Բայց իմպերիալիզմն ինքն իր մեջ իր ապագա անկման սաղմերն է պարունակում, հակասություններն ավելի ու ավելի յեն աճում, և բանվորական շարժումը նորից իր վաղեմի հեղափոխականությունն է ձեռք բերում։ Յեվ ահա XX դարի սկզբում, յերբ կապիտալիզմի զարգացման խաղաղ շրջանը վերջացավ, յերբ նա անխուսափելիորեն մտավ իր քայքայման փուլի մեջ, հեղափոխական փորձառություն ունեցող բանվոր դասակարգն օգտագործելով անցած շրջանների ամբողջ փորձը, իր թշնամի կապիտալի դեմ գործի յե դնում այն ձևերն ու միջոցները, վորոնք նա մշակել ու ստեղծել է իր զարգացման նախընթաց շրջաններում։

Гос. Библиотека

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երես

I VIII դարի վերջի Ֆրանսիական հեղափոխությունը . . 3

II 1830 թ. հեղափոխությունը Ֆրանսիայում. . . . . 50

III Չարտիստական շարժումն Անգլիայում . . . . . . 60

IV 1848 թ. հեղափոխությունը Ֆրանսիայում. . . . . 87

V 1848 թ. հեղափոխությունը Գերմանիայում . . . . 112

VI Բանվորների Միջազգային Ընկերություն (I Ինտերնացիոնալ) . . . . . . . . . . . . . . . . 136

VII Փարիզյան Կոմմունա . . . . . . . . . . . . . 172

Եզրափակում . . . . . . . . . . . . . . 208



ՀՀ Ազգային գրադարան
NL0405803

1 ռուբ. 40 կոպ.

С. МОНОСОВ
История революционных
движений
„ЗАККНИГА“

ЗАККНИГА

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՀԵՍՏՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ — ԶԱԿԿ
ԲԱԳՈՒ — ԱԴՐ
ՅԵՐԵՎԱ

9141
Մ-88